



248



# ՂՐԱՄՈՒԹԻՒՆ







ԽՈ  
ՏԱՐԵ

# Էջմիածին



ՊԱՇՏՈՆԱԿԱ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՎՑ  
Ս. ԷՋՄԻԱԾԻՒ

ԱԵԽԱՐՔԻ ՖԵՐ ԽՈԼՀՐԵԿԻ ՖԵՐ ԽՈՂԻ ՖԵՐ

1992



ՀՐԱՄԱՆԱԿ


S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

1931 ամիս

35-92





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՍՈՒՐՈՒՅՆ  
ԹԵՄ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՔԾԵԱԽԻՆ  
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱԻԱՏԱՅԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ  
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՌԵՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Քեօն

Կամօքն Աստուծոյ Ամենակալին Հայուստանեաց Սուարելական Սուրբ  
Եկեղեցին բազում տարիներից ի վեր օգևականն է, մշիթարիչը և դաս-  
տիարակը հայ հաստացեալ ժողովրդի որ ի Հայուստան և որ ի ափինս  
աշխարհի:

Վերջին տասնամեակներին, ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս էլ  
արտասահմանում, մեր Եկեղեցոյ զաւակները, տեղաշարժների հետևանքով,  
նոր բնակութիւն հաստատեցին աշխարհագրական տարրեր շրջաններում,  
որ մեր Եկեղեցին սկսեց կազմակերպել նոր Եկեղեցական համայնքներ և  
թեմեր:

Ահա նման պայմաններում- ասպեցական Գերմանիոյ մէջ ևս հետզինսէտ-  
անեց թիր հայ ազգաբնակչութեան, և կազմուեցին բազմաթիւ Եկեղեցական  
համայնքներ, հոգևոր հովանու և խնամքի ներքն կենտրոնական Երոպիոյ  
Հայրապետական բարեշան Պատուիրակին:

Այս օրերին սակայն արդէն անհրաժեշտութիւն է դարձել Գերմանիոյ  
հայ համայնքները կազմակերպել իրեն ինքնուրուց առանձին Եկեղեցական  
թեմ: Մայր Աթոռու Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, Մեր նախագահութեան  
ներքոյ, հաստատելով այս իրողութիւնը և ընդառաջելով Գերմանիոյ հայ

համայնքների վարչութեանց Անդկայացուցիչների 25 Դեկտեմբերի 1991-ին Քեօնում տեղի ունեցած ժողովի դիմումին, Մենք այսու Մեր հայրապետական կոնդակով հոչակում ենք կազմադրումը Գերմանիոյ Հայոց Եկեղեցական ինքնուրոյն թեմի, Կենտրոն ունենալով Քեօն քաղաքը և Աշամակում ենք Հոգեշնորի Տ. Գարեգին վարդապետ Պետքեանին որպէս թեմակալ առաջնորդ, կանոնական բոլոր իրաւասութիւններով, մաղթելով նրան լիակատար յաջողութիւն իր հոգնոր առաքելութեան ճանապարհին:

Յանձնարարում ենք Տ. Գարեգին Հայոց Սուրբին, որ անշապահ կազմի Թեմական Խորհուրդ և թեմական կանոնագրութիւն, Գերմանիոյ Հայ Առաքելական Եկեղեցու թեմի, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանոնական վերին իշխանութեան Անքրոյ:

Այս որախ առիթով լում ենք Մեր հայրապետական բարի մաղթանքները և օրինութիւնը նորահաստան թեմի առաջնորդ Տ. Գարեգին վարդապետին, Գերմանիոյ Եկեղեցական հայ համայնքների վարչութեանց յարգարժան անդամներին, հայկական Եկեղեցական համայնքներին, և մշակութային ու բարեսիրական միութիւններին և համայն մեր հաւատացեալ զաւակներին:

Թող բարին Աստուած քրիստոսակը Գերմանիոյ տարածքի վրայ անսասան և ծաղկեալ պահպանէ Գերմանիոյ հայոց թեմը իր Եկեղեցիներով ու բարեպաշտ ժողովրդով:

«Այսպէս լուատորեսց լոյս ձեր առաջի մարդկան որպէսզի տեսցեն զգործս ձեր բարին, և փառատորեսցն զՀայոց ձեր որ յերկինս է» ամէն: (Մատթ. Ե. 24):

Հայոց Դ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնդակ ի 31 Յունուարի  
1992 Փրկչական ամի,  
և ի տումարիս Հայոց ՌԵՆԱՍ  
ի մայրապան Մորոյ Էջմիածնի:  
Հմք. 1852



35-92

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Խաղաղ երկնքում անսպասելի կայծակի պէս շառաչեց Հայ Կաթողիկ Հովհաննես-Պետրոս Պատրիարքի «Վերադարձ Հայաստան» շրջաբերականը գրված միջնադարյան եկեղեցական սնամեջ վեճերի ոճով:

21-րդ դարի շեմին, մեր երկրի բաղաքական, տնտեսական և հասարակական ավելության ենթարկված այս պահին, «Հայրենիք վերադարձի» ինչպիսի արտառող հարձակում՝ ավելի անկայուն դարձնելու Հայրենիքի ներքին կանքը, ազգը բաժան-բաժան անելու այս անգամ եկեղեցական-կրոնական մակարդակի վրա:

Եվ որպեսզի ավելի հստակ հասկացվի մեր ամսագրի նախորդ (օգոստոս) համարում տպված «Մի դժբախտ թույժ շրջաբերական» խմբագրականի և մանավանդ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մեծի Տաճա Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի «Հայրական խոսք» խմասող, ստորև սպագրում ենք Հովհաննես-Պետրոս ԺԼ Պատրիարքի մոլորյալ շրջաբերականի այն հատվածները, որոնք հանդիսանում են հայ ժողովրդի և Եկեղեցու պատմության նենգափոխումը և ժխտումը Հայ Առաքելական Եկեղեցու և Ս. Էջմիածնի օրինականության և գոյության վավերականության:

Ահավասիկ մի քանի իրապես արտառող հատվածներ վերոբիշյալ շրջաբերականից:

«Ինչպէս Պատմութիւնը կը վկայէ, Հայոց Եկեղեցին ծնաւ որպէս անքածան մէկ մասնիկը Քրիստոսի Տիեզերական Եկեղեցին: Ան մինչեւ Ե-րդ դար, ծլաւ ու ծաղկեցաւ Տիեզերական Եկեղեցին հովանիխն տակ, ուր մը շակեց իր ուրոյն Ծէսը, Գրականութիւնը եւ կանգնեց իր Եկեղեցական կառոյցները:

Սակամ քաղկենողանական պայքարը պառակտեց Հայոց Եկեղեցին, բաժանեց Քրիստոսի անձեռագործ պարեգութը: Պատանական հալածանքներու սաստկացումով՝ Հայ Կաթողիկութիւնը տարտղնեցաւ, դարերու ընթացքին փոքրամասնութիւն դարձաւ, իր ներկայութիւնը միշտ պահպանելով հայրենի հողին վրայ:

Եվ ահա այսպիսի թշնամանքով Հայ Կաթողիկ Պատրիարքը ծրագրում է Հայաստան խումբ և «ժողովրդապետություններ հիմնել»:

Անա թե ինչու Ամենայն Հայոց Կարողիկոսը խորապես վշտացած, ատիպահ եղավ հետևալ հեռագիրը նույն Կարդինալ Ախիլէ Սիլվեստրինին, ի պաշտպանություն մեր Առաքելական ազգային Մայր Եկեղեցու:

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏԻՈՒԹԻՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ Ա. ՍԻԼՎԵՍՏՐԻՒՆԻ

### Հռոմ-Կատողիկան

Եղբայրական սիրով ստացանք Ձեր շնորհաւորական հեռագիրը և Ձեր քարի մաղթանքները ուղղուած մեր Առաքելական Մայր Եկեղեցին և մեր համեստ անձին:

Ցաւոք սրտի Ձեր հեռագիրը զուգադիպեց մի փաստաթուղթի, որ վերջերս մեր ձեռքը հասաւ, որ կոչում է «Վերադարձ Հայաստան» *encyclique* 7 Յունի 1992 թուակիր Յովինաննես Պետրոս Կաթողիկ հայոց Պատրիարքի ստորագրութիւնը կրող՝ հրապարակուած Պէտրոր, որով յայտարարուում է ի լոր աշխարհի թէ Հայ Առաքելական Եկեղեցին վաւերական քրիստոնեական Եկեղեցի չէ, այլ մի տեսակ հերետիկոս Եկեղեցի Քաղկեդոնի ժողովի հետևանքով:

Մենք այս արարքը գտնուում ենք թոլորովին հակաէկումենիկ դիրքաւորում և ամբողջապես թշնամական մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ:

Այս անսպասելի հրատարակութեան հետևանքով, հայ Կաթողիկ Եկեղեցու ներկայութիւնը Հայաստանում մենք գտնուում ենք անցանկալի և մերծելի:

Այսօր Մայր Աթոռում անդի ունեցած նպիսկոպոսական ժողովին մեր նախագահութեամբ, որին մասնակցեցին Հայաստանի և արտասահմանից 18 եպիսկոպոսներ ի գումա ունենալով Երուաղէմի հայոց Պատրիարք Թորգում արքեպիսկոպոս և Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ներկայացուցիչ Մեսորապ նպիսկոպոս, իրենց վրդովմունքը յայտնեցին Յովինաննես Պետրոս հայ Կաթողիկ Պատրիարքի Վերյիշեալ գրութեան նկատմամբ և որոշեցին անհրաժեշտ միջոցառումներով պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետինակութիւնը և արժանապատութիւնը հայ հաւատացեալ ժողովուրդի ի Հայաստան և ի սփիռու աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

### ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





## ՀԱՅՐ ԶԱԻԷՆ ԱՌՋՈՒՄԱՆԵԱՆ

Դ ոկտոբեր Աստուածաբանութեան  
Միացեալ Նահանգներ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Սիրելի Հայորդի,

Կը մօտենայ Հայաստանի քրիստոնէութեան դարձի 1700ամեակը, զոր ազգովին պիտի տօնենք 2001 թուականին: Հայ ժողովուրդը իր հոգեւոր և մտաւոր թագաւորութեանց տիրացաւ իր հարազատ մօրմէն՝ Հայաստանեայց Մայր Եկեղեցին, որ մեր ցեղային ժառանգութեան մէջ, հայ արիւնէն և հայ լեզուն եւոքը, ամենէն կենական դերը կատարած է մեր ժողովուրդի կեանքին մէջ, ահա 17 դարերէ ի վեր, մեր հայորենիքն ներս և ի սփիռս աշխարհի ցրուած հայութեան մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին հիմնուեցաւ 301 թուականին, եւր Հայաստան աշխարհ, առաջինը ազգերու մէջ, քրիստոնէայ դարձաւ ազգովին ու հիմնադրեց առաջին Եկեղեցին յանուն Ս. Էջմիածնի 303 թուականին: Անկէ 250 տարիներ առաջ արդէն քրիստոնէութինը գաղտնի կը քարոզուեր առաջին Առաքեալներու ձեռքով, Թաղէոսի և Բարթողիմէոսի, որոնք ողդակի առաքեալներն էին Յիսուսի Քրիստոսի, որոն պատճառաւ ալ մեր Մայր Եկեղեցին ճանչցուեցաւ որպէս Առաքեական Եկեղեցի, այսինքն սկսած երկու առաքեալներէն, որոնց քարոզութեան արգասիքին վրայ, յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ Գ. թագաւոր պետականացուցին քրիստոնէութինը Հայաստանի մէջ, Մայր Եկեղեցին եղաւ Հայաստանեայց Եկեղեցին, այսինքն Հայաստանցիներու Եկեղեցին, հիմնադրուած մեր Տիրոց Յիսուսի Քըրիստոսի հսկական ցուցմունքով, որ իշաւ Արարատեան դաշտ մեր հաստքի հօր Ս. Գրիգոր Լուսաւորիչ աղօթքներուն ընդմշչէն, ու ցոյց տուաւ այն վայրը ուր հայ ժողովուրդին մնայուն ովստավայրը պիտի կառուցուեր:

Այս եղաւ, որեմն, մնայուն կայքը հայ քրիստոնէութեան, դատևալով անաղարտ, հարազատ և բնիկ տունը հայութեան, հոգեւոր վերին իշխանութինն ու Մայրը հայաստանցի քրիստոնէայ ազգին, որմէ ծնան ու ծաղկեցան սերունդներ շարունակ: Անա, այդ նոյն Մայրը՝ Հայ Եկեղեցին, իր անցեալի փառքովն ու պատուվ կը պայծառանայ այսօր մեր ժողովուրդին մէջ, Հայաստանի իր հարազատ հողին վրայ, ուր պատութեան և անկախութեան շունչը նոր կեանք կը ներարկէ հայորդիներուն, հակառակ հոն մուտք գործած օտար և վճասակար աղանդառներուն, որոնք սրած իրենց ախորժակները Կ'ուզեն խել հարազատ հայորդիներդ իրենց հարազատ Մօրմէն՝

**Հայ Եկեղեցին:** Այդ փորձը սակայն ձախողած է անցեալին ու պիտի ձախողի համա և երկային, քանի որ աշխարհն ամբողջ գիտէ թէ Հայաստանեաց Մայր Եկեղեցին, հաստատուած իր մայր հողին վրայ 17 դարերէ ի վեր որպէս ազգային սուրբ հաստատողին, տուած է հայ ժողովուրդին ո՛չ միայն կրօնական խարիսս քրիստոնէական ընդհանուր Եկեղեցոյ ընտանիքին մէջ, այլ համա անոր հովանին տակ ազնուացուցած է ու ամրացուցած հայ ժողովուրդին ընտանիկան և մշակութային Կենցաղը:

Այս պատճառաւ, սիրելի Հայորդի, գիտցիր որ հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին նոյնացած են իրարու հետ մեր պատմութեան բովանդակ ընթացքին, մինչև այսօր: Անոնք որոնք հնացած են Հայ Եկեղեցին, դառնալով հոգմէադաւան կամ բոլորքական, կորած են իրենց կապը մեր հարազատ Մայր Եկեղեցին, ու իրենց հայեացքը շեղած Ս. Էջմիածնէն դեպի այլ ուղղութիւն: Խնչակս կարելի է զատուիլ և մանաւան զատել զաւակները Մայրենի Եկեղեցին, որ սկիզբէն արդէն նահատակութեամբ մկրտուեցաւ ու վերածննդեամբ մկրտեց իր որդիները Սուրբ Հոգոյ աւագանէն: Ցիշէ՛, Հայորդի, թէ ինչպէ՞ս Վարդանանք, Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Սահմակ Հայրապետի հարազատ ու անմիջական սերունդները, գոչեցին Պարսից արքունիքին դէմ, ըսկզոյ որ մեր Եկեղեցին մեր մայրն է, իսկ մեր հայրը՝ Սուրբ Աւետարանը: Այս է եղած հայ ժողովուրդին դաւանանքը դարերէ ի վեր ու կը մնայ նոյնը համա այսօր, ենոու օտարադաւան հոսանքներէ, վասնզի վաւրական պատմութեամբ, քրիստոսահիմն մեր Եկեղեցին չընդունիր որիշ այլ ոք քան միակ հիմնադիրը Հայ Եկեղեցոյ՝ նոյնինքն մեր Փրկիչը, շընդունիր որիշ այլ տեղ քան իր հարազատ Սուրբ Էջմիածնին:

Ցիշէ՛, Հայորդի, որ Հայ Եկեղեցոյ կապը հայ ժողովուրդին հետ անուրանալի և անխորտակնի իրականութիւն մըն է: Այս իրականութիւնն պատմական է և անխոցելի:

Հայեր իրենց գոյութիւնը պարտական կը համարին իրենց մօր, Հայ Եկեղեցին, քաջ գիտնալով որ ան օժտուած է խորունկ կրօնականութեամբ, հոգեւոր կենսական արժեքներով, Աւետարանի դասերով և մեր Հայրապետներու, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչև մեր Երեկայ Գահակալը՝ Վազգէն Սուաշինի խնկարոյ քարոզութեամբ:

Վերջերո, Հայորդի, հրապարակ եւալ Հայ Կաթողիկոսերու Հոգեւոր Տիրութիւնը մէկ «Թուղթ Ծրաբերական»ը Պէյրութէն, որ կը կարդանք որ անոնց «կարօտագին աշքերը կը սեւոնի սիխուրի անձայրածիր տարածութիւններէն անդին, դեպի Հայաստանի նորաբաց» իրենց առաքելութիւնը: Անոնք, զօրակոչի ենթարկած իրենց ափ մը հոգմէադաւան հոգեւորականները, յանոն. Հոռմի Կաթողիկ Եկեղեցոյ, ախորժակնին սրած, Կ'ովեն խուժել Հայաստան խանգարելու համար Հայաստանեաց Մայր Եկեղեցոյ աստուածանուածու գործը և մողուցնելու անոր հարազատ զաւակները, այն պատրուակներէն որ իրենց անտէր մնացած հօտը կ'ովեն հովուել:

Պիտի հարցնես, անշուշտ, որ երբ Հայ Կաթողիկոս իրենց Մայր Եկեղեցին լքեցին Արքահամ Արծիւեանի օրով 1740ին, ինչպէս կը հաստատէ «Թուղթ»ը, ինչ երեսով և ինչ համարձակութեամբ այսօր կը յանդիմին իրենց լքած հարեւնիքն ու անոր հարազատ Եկեղեցին «վերադառնալ», յայտնապէս իրենց հոգմէադաւանութիւնը քարոզելու համար այնուղ որ հիմնուեր է արդէն Հայ Եկեղեցին Արծիւեան 1500 տարիներ առաջ:

Հիմնական հարցը, Հայորդի, այս է որենին, թէ ե՞րբ է Հայ Կաթողիկոս ծննդեան տարին: Թուականն է 1740, երբ լիշեալ Արքահամ Արծիւեան

հայ եպիսկոպոսը «քանի մը քահանաներով եւ Կիլիկիոյ անունով» հոռմադայան կաթողիկոս հոչակուեցաւ, երբ խկոյն «անձամբ Հռոմ գնաց եւ Բենեդիկտոս ԺԴ Պապին Անրիկայացաւ իր թէ ամենայն հայոց կաթողիկոս ըլլար» (Օրմանեան, Հայոց Եկեղեցին, 78): Պապը գիտնալով հանդերձ անհիմ գործին խկութիւնը, իրեն հապատակողները քաջակերպու համար «իր կողմէ հայ կաթողիկ նոր պատրիարքութիւն կամ կաթողիկութիւն մը ստեղծեց 1742 թուականին, պաշտօնապէս և քան ամենայնի Հռոմի առողջին ենթարկեալ ըլլալու պայմանով» (անդ): Երբ այս կերպ է հայ կաթողիկներու ծնունդը, ճիշդ եւ միայն 250 տարեկան հոգեւոր իշխանութիւն մը, հեռու Հայաստանէն եւ խորած Ս. Էջմիածնէն, ենթակայ օստար, թէ իսկ պատկառելի Հռոմեական կաթողիկ Եկեղեցւոյ, ի՞նչպէս հաւատալ «անոր սշտագոյ Եկեղեցեանը Մեծ Հայքի շրջանի Գուգարք ու Տաշիրք» հահանգներուն մէջ, զորս «Թուղթ»ը Հայ Կաթողիկներուն սեփական կը դարձնէ պետքան անվագործն: Ի՞նչպէս հաւատալ պատմական այսպիսի կոպիտ անշղութիւններու, երբ այնքան հեշտորէն կը թոփն ու կ'անցնին Հայաստանեաց Եկեղեցւոյ իսկական պատմութեան երկարածից հանգրուաններուն վրայէն, որոնց վրայ Հայ Եկեղեցին իր դրոշը դրեր է առաքելական յաջորդականութեամբ, եւ ո՛չ թէ Արծիւեանի սնանկութեամբ, նայ հոդին, նայ ժողովորդին եւ հայ սիփորդին վրայ, կանոնական հիմունքով, իրական նորիապետական կարգով եւ պատմականորէն ճշդուած հայրապետներու շարքով ու բիրաւոր տաճարներու անլոելի զանգակատառներով:

«Վերադասնամբ», կ'ըսէ Հայ Կաթողիկներու Հոգեւոր Տէրը, «Վերադասնամբ Հայրենիք ստանձնելու մեր Ազգին հոգեւոր առաքելութիւնը»:

Լս' գիտցիր, Հայորդի, որ ճշմարիտ եւ անկեղծ վերադարձ Հայրենիք այդ կերպ չի կրնար ըլլալ, այլ միայն կարելի կ'ըլլայ պատուառ կերպով, այնպէս ինչպէս վերադարձաւ Մաղաքիա Վարդապէտ Օրմանեան 1879ին, որ լրեց հոռմադաստանութիւնը եւ կամովին ու լրի համոզմամբ իր քահանայական կարգով մտաւ Հայաստանեաց հարազատ Եկեղեցւոյ ծոցը, իր հետ վերադարձնելով 75 հոռմէադատան հայեր եւս Հայ Եկեղեցւոյ գիրքը, որ փայլեցաւ ան ու փայլեցու Մայր Եկեղեցին բացառիկ նույրումով, անկեղծ սիրով եւ մեծագործ արդիւնքներով: Այս կերպ վերադարձ միայն վայել է Հայ Կաթողիկներուն, եղէ կ'ուզեն մաս կազմել Հայրենիքի նորագոյն առաքելութեան՝ հովանիին ներքեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Հայորդի, այսրանով սակայն չի վերջանար Հայ Կաթողիկներուն զորակոչը: Անոնք «անեւսաճելի» կը գտնեն «ժամը որ շնորհաց ժամն է բոլորիս համար», կ'ըսէն, երբ պիտի արշաւեն Հայաստան որ «Առաքելութեան ամսայրածիր դաշտ մը բացուած է» եղեւ իրենց առջեւ, եւ որ «բազմահազար Հայ Կաթողիկներ» (տառասխալը իրենցմէ) իրենց կը սպասեն անհամբեր:

Հայ Կաթողիկներու այս նորագոյն իդք հետևանքն է անշոշտ Հռոմի Սրբազն Պապին ու Վատիկանին քաջակերպեան, առանց որ անոնք նախաձեռնարկ եղած ըլլան, սակայն առանց որոնց նայ հոռմէադատաններ ո-չինչ կրնան ընել: Հռոմի Յովիան Պողոս Բ Սրբազն Քահանայապէտը 1991 Հոկտեմբերին նոր միհան մը հաստատեր է Հայաստանի, Վրաստանի ու Արևելեան Երրուայի Հայ Կաթողիկներուն համար, զայն յանձնելով Վենետիկի Մսիհարեան հայրերէն Ներսէս Վրդ. Տէր ներսէսեանին: Նման կարգադրութիւն մը առանց Հայաստանի եւ Հայ Եկեղեցւոյ Պետի գիտութեան եւ հաւանութեան անշոշտ թէ խամճարում եւ ուսնագոյթին պիտի ստեղծեր, շփոր եւ բարդութիւն պիտի յառաջացներ Հայաստանի ժողովորդին ներս:

Այս բոլորով մեկնեղ, գիտցի՛ր, Հայորդի, որ մեր Վեհափառ Հայրապետը Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա թողարքած է ու հաւանած որ Մխիթարեան հայութեան ուժանք գային Հայաստան հովուելու այն փոքրարի կաթողիկութեալ ուրնեք Կ'ապրին Հիսուսային աւաններուն մէջ: Սակայն այս հայրական հոգածու թողտութիւնը շատ քիչ էր անոնց «անձայրածիր» ախորժակներուն համար: Ահա թէ ի՞նչպէս իրենց տրուած հայրական ձեռքը տարբեր ձեռնոցներով համբուրեցին անոնք աներախտագէտ ոգիով:

Հայորդի, Հայաստաննեայց Եկեղեցոյ պարտքն էր անշուշտ բողոք բարձրացնել այս տեսակ ինքնակոչ արշաւանքի մը դէմ, պահանջելով որ յսկոյն յետո կոչեն առնուած որոշումները, որուն հետևանքով, յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու Հայաստանի մեր ժողովուրդին, Ամերիկայի և Գանատայի Առաջնորդ երեք եպիսկոպոսներն ու Երուաղէմի ու Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքութեանց ներկայացուցիչները անձամբ Կատիկան գացին 1992 Հնկտեմբեր 27ին ու գրաւոր ազդու բողոքագիր մը յանձնեցին Կատիկանի Կարտինապալներուն, անոնց հետ իրենց պաշտօնական տեսակցութեան ընթացքին, որմէ ետք Հայ Եկեղեցոյ պատուիրակութիւնը ընդունուեցաւ հաւա Սրբազն Պապին կողմէ:

Հայ Եպիսկոպոսները հայս յայտնեցին որ Մայր Սրբոյի Եպիսկոպոսական ժողովը, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ընած էր Հայ Կաթողիկ Պատրիարքին «Թուղյա Ծրաբերական»ը և գուած շարք մը անձիշդ հաստատումներ, պատմականորէն սիալ և խեղաթիրեալ: Անոնք ուշադրութեանը յանձնած են Կատիկանին որ Հայ Կաթողիկներ իրաւուք չունին Հայաստան մտնելու սահմարձակորէն, իոն «առաքելութեան անձայրածիր դաշտ մը բացուած տեսնելով»: Այս, կը հասկնաւ Հայորդի, արդէն ինքնին անարդանք մըն է շարուուած Հայաստաննեայց Մայր Եկեղեցոյ երեւին:

Հայորդի, սորվեցոր ազգակիցիդ որ Հայ Եկեղեցոյ դաւանանքը Առաքելական է, որ միակ գլուխ և հիմն Կ'ընդունի գՔրիստոս, ինչպէս Աւետարանը կը բարողէ ու մեր Հայրերը կը բացարեն: Մեր Հայրապետներս ու թարգմանիչները, Վարդանանք ու Ուկեղարեան պատմիչ սուրբ մատենագիրները լիաբերան Աւետարանի հոգին և Քրիստոսի խօսքը աւանդեցին մեզի իրենց պարզութեամբն ու գետնութեամբը: Այս ճամբռվ, Սիրեջի Հայորդի, եկած հասած է Հայոց Եկեղեցին քեզի և Հայաստանի որդիներոդ: Զայն պէտք է պահպանէք բոլոր սրբով և հոգիով, կորովով և համոզումով:

Մի՛ մոռնար հաւա, Հայորդի, որ հայ Եկեղեցին, անաղարտ և մաքոր, է հաւա վառարանը հայ մշակոյթին: Հայ Եկեղեցին է որ խօսուած հայերէնը գրաւոր լեզուի վերածեց, հայացու Սաստածաշունչ Մատեանը, ստեղծեց Հայաստանի թմիկ և յատուկ ճարտարապետութիւնը, ձեւ ու կերպարանք տուա սրբազն երգեցողութեան և գեղարուեստի բազմադիմի ճիղերուն: Հայ Եկեղեցին, վերշապէս, եղաւ Հայ ժողովուրդին խաղաղութեան խորհրդանանիշը:

Այսպէս, ուրեմն, պիտի դիմենք դէպի մեծ դարադարձ Հայաստաննեայց Մայր Եկեղեցոյ այն խոր համոզումով որ Հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետութիւնը, հովաննին ներքեւ Մայր Սրբոյ Սուրբ Էջմիածնի, միակամ ու միասիրու, մասնակցութեամբը սիիւրի բովանդակ հայութեան, պիտի պահանջան լիաստակը մեր Մեծ Սուրբին՝ մեր հաւատրի Հօր՝ Սուրբ Գիգոր Լուսատրչի:

## ՈՉ-ԿԱԹՈՒՂԻԿԵ

Ֆրանսացիները Հայր Լորիգէօն ունին:

Այս տարօրինակ մարդը, եռանդուն կրօնաւոր մը, Բեղինակն է յանդուն կերպով խելաթիրուած ֆրանսական պատմութեան դասագրքի մը: Բայական ատեն այս յերիրուած դասագրքին վրայէն կ'ասանուէր պատմութեան դասը կերական վարժարաններու մէջ: Մեր մէջ Հայր Լորիգէօնները շատուոր են, ամբողջ միաբանութիւն մը կը ձևացնեն և Անդրիականի մէկ կղզեակին մէջ հաստատուած մեր եկեղեցական պատմութիւնը անդրայնական տոգորումներով սրբագրելու կ'աշխատին:

Սուածուց ի վեր չեմ անգիտեր որ Մխիթարեան միաբանութիւնը իր բանահրական հետազոտութեանց բով կամ անոնցմէ առաջ փրոփականտայի մունջ դիտումներ ունի և լուր իշճեր կը տածե:

Միայն գիտութեան սիրով վառուած վանականներ չեն ասոնք, այլ ճարպիկ ու հաշուագետ մարդիկ, որոնք պապականութիւնը տարածելու համար ազգային գրականութեան մէջ իրենց սուածած հեղինակութիւնը կը շահագործեն, և թիշ շատ հայ եկեղեցականի փակեղին նմանող իրենց գլուուածկոյթին տակ փաթերայի գլխարկներ կը կրեն:

Գիտէի, բայց մոոցեր էի այս ամէնք, եռք որ Քազմավեայի վերշին թիւն մէջ հետաքրքիր համակագիր մը, որ այդ միաբանութեան անդամներէն դորս մէկը ըլլալու չէ, պատարագէն վերջը մեր եկեղեցիներուն մէջ մաս բաժնելու սովորութեանը վրայ խօսելով, մեր եկեղեցին՝ ոչ-կաթուղիկէ եկեղեցի, և հայ պապական եկեղեցին ոչ-ազգային եկեղեցի անուանելէ չի քաշուիր:

Ուրեմն միեւնոյն մարդիկն են ասոնք, նոյն մարդիկը, որոնք ատեն մը հերձուածող ու հերեւտիկոս կը կոչէին զմեզ և մեր եկեղեցին ուոք կոխելու կը փախնային՝ դժոխք չերթալու համար, մարդիկ, որ Լուսաւորչին պապական հայ մը ըլլալու առասպելին պատմական ճշմարտութեամ զոյն մը տալու համար շատը չեն խնայած, և որոնք բան գործ ըրած են տարածել ամէն տեղ՝ թէ հայ Եկեղեցին պապական եկեղեցի մըն էր ատենով և անկէ անշատուողները մենք ենք, լուսաւորչականներս, զատ ու տարրեր եկեղեցի մը կազմելով, մինչդեռ իինքն ազգային եկեղեցին անդծ պահած են միշտ, և Թատթիւֆին պէս չեն քաշիր հրապարական մնայի ըստէլ.

C'est à vous d'en sortir, vous qui parler en maître. (1)

Հարկաւ ողբալի բան մըն է որ անորազեննականութիւնը մեր ամենէն հոփրական էութեան վրայ ալ հարձակի, մեր եկեղեցոյն տիրանալու ճիգեր

ընէ, և ամբողջ միաբանութիւն մը իր դարեւոր աշխատութիւնը այս ամուլ ու ծիծաղեկի ճիգերուն յատկացնէ:

Հոռմէականութիւնը մեր մէջ առջի անզամ մուտ գտնելուն պատմութիւնը ժամանակակից բան մըն է, և շատ եւ դառնալու պէտք չունինք այս առթիւ եղած բոլոր շփոթութիւնները մտքի առջև բերելու համար: Ծառ կանուն է դեռ այս նորեններուն համար մեր ազգային Եկեղեցին իրենց սեփականացնելը և Հայր Լորիգէօի պատմութիւններով չէ որ մեր Եկեղեցին վաղեմի ինքնագույն գոյութիւնը պիտի ուրացով:

Բայց որքան ալ անզօր են այս շանքերը ու արգահատեկի նայուած մո հիւահիրեկէ սելի բանի մը անարժան՝ հարկաւ կը մնայ (2) մեր սրտերուն մէջ մեր Եկեղեցոյ համար ոչ-կաթուդիկէ Եկեղեցի ըսելու պէս խօսքերու վիրատրանքը: Ե զոր պիտի առարկեն որ կրօնական դաւանանքին կ'արգիլէ Վեճետիկի վարդապետները կաթողիկէ ճանշնալ մեր Եկեղեցին. ուղափառը փրեմք են և իրենք պիտի մնան ու մենք՝ հերձուածող ու հերեւուիկու: Թող ադակս ըլլայ, քանեւորդ դարուն լուսաւորութիւնը չենք կրնար անարգել այն աստիճան որ կրօնական վեճի մը բռնուինք ասոր կամ անոր នեն: Հաւասարնեութիւնը եսավէս պապական Եկեղեցին յատուկ առարկանութիւն մըն է և պէտք է որ իրը մնայ:

Ե եթէ մեր Եկեղեցոյն համար Բազմավեպի գործածած լեզուն մատանիշ ըրինք մեր ընթերցողներուն՝ միամն լիշեցնելու համար է անոնց թէ Վեճետիկի միաբանութիւնը այն յետամնաց ու կաշկանդեալ միտքերու օրունն է, որոնց նմաններուն համար իրաւամք ըսած են.

Il n'ont rien appris, rien oublie. (3)

Սրբելք, 16 Օգոստոս 1898

Երկրի Ժողովածու

1. C'est à vous d'en sortir, vous qui parler en maître.


Դո՞ւք պէտք է կլէք այս տունէն, դո՞ւք, որ տիրոջ պէս կը խօսիք:


2. Կը մնայ—Բնագիրին մէջ՝ կը մնան:

3. Il n'ont rien appris, rien oublie.

—Բա՛ն չեն սրբած, բա՛ն չեն մոռցած:

Ակնարկութիւն՝ Յեղափոխութենէն եւր Ֆրամսա վերադարձող ազնուականներուն, որոնք չեն ուզեր Ակատի ունենալ երկրին մէջ առաջ նկած փոփոխութիւնները:





## ՀԵՐՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻՑ


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ընդ Ամիսագահովոթեամ Վեհափառ Հայրապետի 13 Նոյեմբերի Ահատում ծանօթանալով և ընարկելով «ԱԶԳ» թերթում 4 Նոյեմբերի թուու լոյս տեսած պրճ. Երանե Ազատեանի «Նոր խօսք» յօդուածը, հաստատեց, որ յօդուածի անտեղեակ հեղինակը պարզապէս զո՞ւ է զնացել անձիշտ ու անարգական տուեալների, որոնք վերագրում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Մայր Աթոռին Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանին և Հայատառանի ու Միացեալ Նահանգաց մեր եկեղեցիների հոգևորականութեան:

Իսկ ինչ վերաբերում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, վերջին երեք տարիների բարյօք յարաբերութիւններուն, յօդուածում ցայօք արտայայտում է ո՞չ թէ միասնութեան, համերաշխութեան և գործակցութեան ոգին, այլ ուղիղ ընդհակառակը: Գերագոյն Հոգևոր Խորհուրդը գտնում է, որ վերատին արծարծել հարցեր որոնք յառաջացած էին մեր եկեղեցոյ ծոցում սովորական իշխանութեանց շրջանում, այժմ բոլորովին անտեղի են և վճասարել:

Մեր այս դժուար օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը մահու կենաց պայքար է մղում յանուն իր ազատ գոյատևման, երբ մեր Հանրապետութեան նախագահի հրամանով ստեղծուել է Համահայլական Հիմնադրամի կազմակերպութիւնը, որին հրամիրուել են մասնակցել Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Հայ Առաքելական Եկեղեցոյ ծոցում և Յուրապետական Աթոռների ու թեմերի միջն, անհրաժեշտ է ամրապնդել միասնական գործընթաց և համերաշի ու շինարար աշխատակցութիւն: Այս է պահանջում մեզանից թէ մեր Մայր Եկեղեցոյ կոչումը, թէ մեր մարտնչող Մայր Հայրենիքի շահը, որ վեր է ամէն բանից:

Սուր օրերս դիանու պիտի հրապարակի ճշգրիտ տուեալներ վերջին երեք տարիների ընթացքում Մայր Աթոռին և մեր ներքին թեմերի ծասալած գործունեութեան մասին եկեղեցաշխնական, կրօնական քարոզչութեան, սուրբ գրական գրականութեան հրատարակման ու տարածման և աղէտեալներին և Արցակի բնակչութեան դրամական մեծագումար օգնութիւններ բաշխելու և այլ հոգևոր ու հայրենանուէր իրագործումների մասին:


ԴԻՒՍՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4 օրերին ուստավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Մեծի Տաճի Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը: Նորին Սրբությունը Ս. Էջմիածին էր ժամանել՝ խորհրդակցելու Ամենայն Հայոց Հայրապետի հետ Մայր Հայրենիքում ազգային-հոգևոր կյանքին առնչվող հարցերի մասին և մասնակցելու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձութերի խորհրդակցական ժողովին: Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետը և Մեծի Տաճի Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը հաւաստիացրին, որ ձեռք-ձեռքի տված միասնաբար պիտի օժանդակեն Հիմնադրամի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը ինչպես Հայաստանում, այնպես և Սփյուռքի գաղթօջախներում:





**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ  
(1 նոյեմբերի 1992 թ.)**

**ՄՐՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱԳԱՅԹՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԻՐԻ ՀՈՂԻ ՎՐԱ**

Առաջին խոսք, սրբազնագոյն այս պահին, ես վեր եմ առաքում դեպի մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս, ի խորոց սրտի փառք և գոհություն ընծայելու նրան, նրա Տան սուրբ սեղանի առաջ իմ կյանքումը մի անգամ ևս ծննադրելու, աղոթելու Մայր Աթոռի այս Մայր տաճարի մեջ և փառք տալու Աստծոն, որ Կենդանի և առողջ է պահում մեր հայրենիքը, հակառակ այն ծանր պայմաններին, որոնց միջից է անցնում մեր ժողովորդը Մայր Հայաստանի մեջ: Եվ այս առիթով մեկ անգամ ևս հայցում եմ Աստծոց, որ առողջությամբ, վաս կենդանությամբ և բեղուն գործունեությամբ զորացնի մեր բոլորի սիրեցյալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և իմ ամենասիրելի հոգևոր եղբայր՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Կազգեն Ա. Կաթողիկոսը: Թող նրա տարիների իմաստությունը լոյս դառնա մեր ժողովորդի համար և թող Աստված զորացնի նրան Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանությամբը, Հոգևոր Գերագույն Խորիրդով և հոգևոր ճնշարանով և բոլոր հոգևորական և աշխարհական աշխատակիցներով, որ առավել ևս հասագայթի Սրբություն Սրբոց Էջմիածնին համացն հայ ժողովորդի կյանքում ի Մայր Հայաստան և ի Սիլիոս աշխարհի:

«Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ. Ամէն»:

«Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիք, զի նորա զԱստուած տեսցեն».

«Երանի նրանց, ովքեր սրտով սուրբ են, որովհետև նրանք պիտի զԱստուած տեսնեն»:

Սիրելի հավատացյաներ, երեխ, շարայթ օր, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հիշատակը «ամենայն սրբոց, հնոց և նորոց, լալտից և անլալտից»:

Մեր Եկեղեցին մեր ժողովորդի իմացման և կյանքին մեջ մի անգամ ևս արձարձեց և զորացրեց այն գիտակցությունը, որ բրիստոնեական հավատքը

սուրբ հավատը է և սրբացնող հավատը է: Եվ նրանք, ովքեր իրենց սրբացնությունը սուրբ չեն կարող լինել, չեն կարող զԱստված տեսնել:

Սրբությունը քրիստոնեության ամենեն հանկուցից, գրավիչ, սերշնչող բառերից մեջն է: Ասում ենք, մեր Տիրոց ուստութիս հետևելով՝ «Հայր մեր, որ յերկինս ես, ՍՈՒՐԲ Եղիշի անոնք քո», քո անոնք մեր մեջ սուրբ պահովի, որ մեզ սրբացնի: Ապա տեսնում ենք, որ Հիսուս եքք լեռ բարձրացավ և իր այլքան զորեալ և հոգիները գրավող քարոզը խոսեց, որ կոչվում է «Եկան Քարոզ»: «Երանելների» շարքը, որը անվանվում է «Փոքրիկ Ավետարան», իմացես Խրիմյան Հայրին է ասել այդ քարոզի համար. «Մարգարիտը երկանից արքայության», այնուհետ, այդ «Եկան քարոզ»-ի մեջ եքք են առ ասեց. «Երանի՛ հոգուվ աղքատաց, երանի՛ սգատրաց, երանի՛ իաղաղաբարաց», այդ «Երանելներ»-ի շարքում ասաց. «Երանի նրանց, ովքեր սուրբ են սըրտով, որովհետև նրանք զԱստված պիտի տեսնեն»: Երբ Վերշին Ընթրիքից հետո զգում էք, որ պիտի մեկներ այս աշխարհից՝ խաչի և Գողգոթայի ճանապարհով, եքք իր աշակերտներն իրար մոտ էին հավաքվել նրանց մտերժական, քայլ խորագոյն բառերով խոր ուղղեց և դարձավ իր Հորն Երկնալին ու ասաց. «Հայր, ՍՈՒՐԲ արա զսոս ճշմարտությամբ քով»: Իր առարյալների համար խնդրեց Սատոնն, որ սուրբ ամի նրանց: Ապա մենք կարդում ենք Սատվածաշնչում այն սրանչելի խորքը, որ Սաղմոսաց հեղինակ արքա մարգարեն Դափիթն է ասել. «Յամենայն ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց ՍՈՒՐԲ արա զիս Տեր»: «Եմ ամեն ժամանակի, ամեն վայրկանի աղոյքը այս է, ով, Տեր, որ իմ մեղքերից ինձ սրբիր, սուրբ արա»: Որովհետև մեղքը, անսրբությունը մարդուն հոգեկան չաշչարանքին, սերքին տագնապին աղբյուրն է: Սրբությունն այս վիճակն է, որի մեջ մարդ ինքն իրեն մեջ զգում է Սատոն ներկայությունը: Ինչպես մարդը լուսն է տեսնում արեգակի շողերով, այնպես սուրբ է զգում Սատոնն իր մեջ զգալով: Նս ով իր մեջ ունի Սատոն ներկայության գալափարը, զգացումը, ձգտումը՝ նա անպայման սրբության հանապարհին վրա գտնված կլինի իր կանոնը:

Սիրելիներ, առհասարակ մեր ժողովրդի մեջ սիսալ գաղափար է տարածված: Մենք կարծում ենք, որ սրբությունը մի անմատչելի բարձունք է: Ո՞վ կարող է սուրբ լինել: Միայն բացառիկ անձինք, միայն նրանք, ովքեր եկեղեցին ճանաչում են բարձրագույն սաստիճանի սովորական մարդկանցից վեր մի անձ: Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մատիկոնյան, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհակալի, Ս. Հակոբ, Ս. Գևորգ, Ս. Սարգիս և ուրիշներ: Բայց պեսը է մի անգամ միշտ փոխել ուրբնումը: Ամեն քրիստոնյան սրբության է կոչված, և ինչպես ո՞չ որ կարող է կատարալ լինել, քայլ չի կարող սրբության չգտնել, այնպես էլ ո՞չ որ պեսը է իրեն թոյլ տա սրբության զգուստովը չապրիլ իր կանոնը, մեր մարդկային տկարությանց և մեր մարդկային կարելիությանց սահմանների մեջ: Ժամանակին, Ս. դարում, եքք նոր էր քրիստոնեություն քարոզվում, քրիստոնյաներին սուրբ էին կոչում: Սուրբ ազգ ասում էին սրբերը եկին, սրբերը գնացին: Նրանք ճանաչվեցին որպես սրբության ճանապարհի մեջ գտնվող և ճառաչացող մարդիկ:

Եվ դարձյալ այն ուրբնումը, որ սրբությունը մի հեռավոր, վերնախավագային իրականությունն է, երկնքի և երկրի միջև տեղ է գրավում: Սրբության այն գաղափարը ճիշտ չէ: Սրբությունը ոչ թե բան մը չինենուն մեջն է, այլ բան մը լինելու մեջ է: Այլ խորպակ պարզ իասեն. Կրավորական մոտեցումով սուրբ ըլլալը չէ քրիստոնեական հասկացողությամբ սրբությունը. ոչինչ անե-

լը չէ սրբությունը, քաշվել վաճրում մի քարայրում և այնուհետ ինք իրեն միայն ապրել. սուկ, Աերանձնական կյանքով աղոթքով չէ միակ ճանապարհը սրբության: Սրբությունը ավելի ուժական, Աերգործական հասկացողությամբ կյանքի երևոյց է: Խնաշես ասել է Ֆրանսիայի Ակադեմիայի անդամներից մեկը, պատմաբան, փիլիտուիս և գրագետ. «Ես չեմ համբուրի այն ձեռքերը, որոնք մաքոր են, որովհետև ձեռնոցների մեջ են պահվել. ես համբուրում եմ այն ձեռքերը, որոնք ցեխի մեջ են խրվել, ժողովրդին ծառայելու մեջ են աղտոտվել, բայց աղոտը չի թափանցել ձեռքերի մեջ, մնացել է ձեռքերի երեսին: Եվ երբ չորանում է ցեխը, կեղտը՝ ձեռքն ավելի մաքոր է երևում, ավելի սպիտակ»: Ուրիշ խոսքով՝ սրբությունը, սուրբ լինելը առանձնանալ, հեռանալ, զատկել, անջատվել չի հշանակե: Սրբությունը ճառագայթում է Աստծո մարդոց կյանքի մեջ: Ես սրբությունը անձի մը համար համեմատում եմ այն պատկերին, այն հկարին, որ մինչև միայն, սուկ պատառ չէ, ոչինչ ըլլալ չէ սրբությունը, մաքոր ըլլալ չէ այն իմաստով, որ ոչինչով պիտի ինք իրեն իրագործի այդ անձը: Սրբությունը այդ ճերմակ պատառի վրա անձին, հավատքին, սիրուն ճառագայթում է գիծերով, գոյներով, այն համադրություններով, այն մթնոլորտով, որ պատկերին կյանք կտա և գեղեցիություն:

Ժամանակը և տարածությունը մեզ տրված պատառն է: Մարդկային կարողություններն Աստված մեզ է տվել, բայց այդ կարողությունները մենք մեր մեջ պահելով ոչինչ չենք կարող լինել և ոչինչով հավատարիմ լինել Աստծուն և մեր մարդ լինելու կոշումին: Ամեն մարդ Աստծոն աչքի առաջ իր հկարը պիտի գծի, և երբ հկարը սրբության գծերով լինի, այն ատեն է, որ Աստծոն շնորհին և Աստծոն արքայության կարժանանանք: Մենք այն պես պիտի անենք մեր քրիստոնեական կյանքում, որ սրբությունը դառնա մեզ համար ձգում: Եվ այդ սրբության ձգումն է, որ առող, բարյականորեն տոկուն, մաքոր, ազնիվ և պատվաքեր կղարձնի մի անձի և մի ազգի:

Եկեք հիմա հարց տանք մենք մեզի: Խնչո՞ւ համար մեր հայրերն այսքան սրբեր են ճանաչել և սրբության գաղափարը պասպահ ներշնչողական ուժի են վերածել մեր ազգի պատմության մեջ:

Սուրբ ենք Ս. Եկեղեցի, սուրբ Խաչ, սուրբ Ավետարան, սուրբ Էջմիածին, սուրբ Գիրք, սուրբ Աքոռ, մեկ խոսքով նվիրականագույն բառը մենք հատկացնում ենք այն բոլորին, որ մեր ժողովրդի գերագույն արժեքներն են: Եվ ինչու ենք ասում երբեմն «մեր հայրենիքի սուրբ հողին մատաղ լինենք»: Սուրբ բառը գերագույնն է մարդկային լեզվի մեջ, ամենեն ազնիվ, ամենեն ընտիր բառերից մեկը: Մենք այդ բառն ենք գործածում այդ բոլորի համար, որոնք նվիրականագույնն են մեր գիտակցությանը և հաստատումին:

Մեր ժողովուրդը շատ սուրբեր ունի, սուրբերի տոնենք ենքներ, բայց թույ տվեք ձեր բոլորին ասել, որ մենք անուններն ենք պահում, անձերն ենք մուռանում: Ս. Հակոբի տոնը կգա, մեզնից ո՞վ կկարդա Ս. Հակոբի վարքը, ո՞վ կանդրադառնա այդ սրբի մեծությանը, ներշնչողական ուժին: Բայց գնում ենք մեր տների մեջ խրամանք ենք սարքում, եթե մեր անունը Հակոբ լինի, կամ Սարգիս լինի, կամ Գևորգ լինի կամ մի ուրիշ սրբի անուն: Մենք սրբերի անունները զարդի ենք վերածել, հապարտության առիթ ենք դարձրել. Ս. Գրիգոր Լուսավորիչ ենք սառում, Ս. Մեսրոպ Մաշտոց ենք ասում և սակայն նրանց գաղափարը, հավատքը, զոհողության ոգին, այն բոլորը, որ նրանց սուրբ են արել, այդ բոլորը մեր կյանքի մեջ չենք փոխադրում: Այս է մեր հանցանքը, որ ատոր է խոստվանենք, պետք է սրբագրենք:



Մանավանդ պայօք եռ «ամենայն սրբոց, հնոց և նորոց, յայտից և անյայտից» տոնել ենք Եղուս մեր եկեղեցու մեջ: Եվ իմ մտքովս հիմա անցնում են այցքան-այցքան անուններ մեր պատմոթյան մեջ, որոնք սակայն չեն ճանաչվել, չեն սրբադավել, բայց սրբությունն ապրել են իրենց կյանքում: Անձանտը անհայտ սուրբեր, որոնք ժողովրդի կյանքի մեջ հավատքն են պահել, և որոնց անունները չեն արձանագրվել մեր տոմարնեում: Եթե նրանք չինենիմ մենք ի՞նչ կարող էինք լինել: Ես այնպես եմ զգում, որ մեր զյուղում, որտեղ մեծացել եմ, այնպիսի մարդիկ և կանայք եմ տեսել, որոնք սուրբ կյանք էին ապրում և նրանք ներշնչեցին մյուսներին: Բայց նրանց մասին չի գրվել և չի գրվելու: Բայց մենք պայօք պետք է ծովակի գանք մեր հոգիներում, աղոթենք, որ Աստված մեզ դրանց հետ հաղորդության մեջ պահի և նրանց սրբությունը մեր կյանքի մեջ ներարկի:

Մենք կարող ենք, սիրելիք, մեր հայրերը սուրբ հրամագլխի վերածել, բայց առև դրամագրուսի գաղափարով դրանց հետ չպետք է վերաբերվել. նրանց պետք է մեր կյանքի մեջ փոխարինել, մենք նրանց նոգու մեջ փոխադրվենք. թող Կենդանի կապ լինի սրբերի և մեր մեջ, որպեսզի սրբությունը ճառագայթի մեր կյանքում:

Սիրելիներ, իմ վերջին խորս այս է, որ սրբության ճառագայթումը բարեգործությունն է, սրբության ճառագայթումը անձից դուրս գալն է, ինչպես ճառագայթն արևից է գալիս, և ժողովրդին լույս տալիս: Ժողովրդին բարիք բերել և մեզ այդ բարիքով ապրեցնել և հավերժացնել: Եթե ես իմ ունեցածը, կարողությունը ես ինձ համար պահեմ՝ ի՞նչ կլինեմ. ոչինչ: Բայց եթե Աստուծոն տվածը և Աստուծոն տվածի միջից մեր դուրս բերածը ուրիշի հետ բաժանենք, ուրիշով կիարատանանք. սրբությունն ա'յդ է, որ չես կարող լույսը պահել. լույսը եթե լույս է՝ պետք է ճառագայթի:


\* \* \*

Ահավասիկ մենք այստեղ ենք եկել մի անգամ ևս, «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամի երկրորդ ժողովին ենք մասնակցում Վեհափառ Հայրապետի հետ միասին, և որիշ պատվական ազգայինների հետ և Հայատանից և Սիբուրքից: Ամենայն սրբոց տոնի այս օրը ես ասու եմ, որ սուրբ գործ է դա, որովհետև սուրբ հայրենիքին ճառագելու, նրան տնտեսական, ընկերային, սննդական և վերականգնողական բոլոր կարիքներին մեզ մատառ անելու, մեր բաժինը բերելու: Եվ աս ոչ թե ստացողը կիարքստացնի, տվողը կարքացնի. Հա ով կուս, ոչ թե տվածից ընդունողն է, որ միայն կշանէ, այլ տվողը հոգելորապես կիարատանա, կիրճի, կերշանկանա: Երբ որիշն ուրախացնես, քո ուրախությունը կրազմապատկե: Երբ քեզ համար հաց կոտսես, մարմնիդ համար կլինի հացը, բայց երբ որիշին հաց կրտսա, քո մեջ ուրախությունը կլինի և հարստացած նրա ուրախությամբը, կրազմապատկի քո ուրախությունը:

Անշուշտ մենք բոլորս ալ գիտակից ենք մեր ժողովրդի այս օրերի դըժվարություններին, այն տագնապալի կացության, որին մատնվել է մեր ժողովուրդը: Մարտ ենք, ամենակարող չենք, բայց ինչ որ մեր ձեռքից կռա, ամբողջ կարողությամբ անում ենք և դեռ ավելին պետք է անենք: Բայց այս բոլորի մեջ, սիրելի հավատացալներ, շմոռանաք, որ նյութական հացով մթաք մարդ չի ապրի: Նյութական հացը կենսական է, բայց բոգիին հացը, սրբության հացը, մեր ժողովուրդը առողջ պահող ամենից նզոր ուժերից

**Մեկն է:** Այսօր եկեք խոնարի սրտով մետեւնք Ավետարանի խոսրին, որ առաջ է. «Երանի նրանց, որ սորբ են սրտով, որովհետև նրանք զԱստված պիտի տեսնեն»: Ուզո՞ւմ եք Աստուծո ներկայության մեջ երջանկանալ, հըրճվել, այսօր մի ովատ արեցեք այս տոնի առիթով, որ ես պիտի ջանամ իմ կյանքումս քայլել սրբերի ճանապարհով, սրբության ճառագայթը իմ հոգիին մեջ առնելու, Սորբ Աստված փառավորելու և իմ հայրենիքը պահպանելու և զրոյացնելու, մեր ազգի պատվին և հավերժության համար, հավիտյան, հավիտենից. ամեն:





## ՀԱՌՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը Եջմիածնի Մայր Տաճարում, խարսավիլակությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսէս արքապիսկոպոս Պողապալյանի և ընթերակայությամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիկ Տ. Թորգոն արքապիսկոպոսի ու Միացյալ Նահանգների Հայոց արքեպան թեմի առաջնորդ Տ. Խաժակ եպիսկոպոս Պարսամյանի, սրբազնությունունի օճմամբ հայկոպոս ձեռնադրեց չորս վարդապետների՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյաց Առաքելական սուրբ Եկեղեցու:

Ձեռնադրված Ծոգնորականներն են՝

1. Տ. Հոսիկ եպիսկոպոս Պատրիարքան՝ ձեռնադրված Երուսաղեմի հայոց Սուրբ Աթոռի վրա՝ համաձայն Միքոց Հակոբյանց միաբանության ընթանուր ժողովի որոշման, ծնյալ 1936թ. ԱՄՆ-ում:

2. Տ. Տարոն եպիսկոպոս Ծերեցյան՝ ձեռնադրված Հարավային Ֆրանսիայի հայոց իրքն առաջնորդ և փոխանորդ Արևմտյան Եղիոնակի Հայրապետական պատվիրակի, ծնյալ 1937 թ. Բեյրութ քաղաքում:

3. Տ. Գարեգին եպիսկոպոս Պեքանյան՝ ձեռնադրված Գերմանիայի հայոց թեմի վրա իրքն թեմակալ առաջնորդ, ծնյալ 1942 թ. Խթամբուլ քաղաքում:

4. Տ. Վահեն եպիսկոպոս Ալբայան՝ ձեռնադրված Ծվելցարիայի հայոց թեմի վրա իրքն թեմակալ առաջնորդ, ծնյալ 1952 թ. Սդերթում (Թուրքիա):

Պատշաճ հանդիսավորությամբ տեղի ունեցած սրբազն արարողություններին ներկա էին ովհատավորաբար Մայր Աթոռ ժամանած Հայ Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամներ, հայրենի արքեստագետներ, սփյուռքահայ ովհատավորներ և հակասացյալ ժողովրդյան հոծ քաղմություն:

Նորապատ եպիսկոպոսները իրենց ոլխի պատարագը մատուցեցին Սեպտեմբերի 28-ին, 29-ին և Հոկտեմբերի 4-ին Մայր Տաճարում, Երևանի Տ. Սարգսի և Ստեփանավանի Ա. Աստվածածին Եկեղեցիներում:

«Լցն՝ Տէր զոսա հոգուվդ Քով սրբվ, զօրացն՝ և խաջողեա՝ սոցա օգնականութեամբ Քով յամենայն գործս բարիս». Ամեն:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



( 1992 ქსეპრეზებული 67 )

四  
卷之三





## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆՈՒԽ

Անպտեմբերի 27-ին, Վարագա Ս. Խաչի կիրակի օրը, Ամենայն Հայոց Աստուղիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Գևորգյան Հայրապետը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, սրբադրու մեռնի օճառը, Կոփակոպս ձեռնադրեց Ս. Երուսաղեմի միարան Տ. Հովհիկ ծ. վրդ. Բաղդապամին, Մարտելի նարց սուածնորդ Տ. Ցարոն ծ. վրդ. Մերժամին, Գերմանիայի նարց թեմի առաջնորդ Տ. Գյուգեն ծ. վրդ. Ալբայամին:

Սաքրեմբերի 28-ին, շարաթ օրը, Կրելորդան նամդիսավոր ժամերգությունից հետո, համաձայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կամոնների, կատարվեց նորմածամերի «բանորություն» և ոխտադրություն»:

Մայր տաճարում, Եղիսա և Անդամի առաջ, Առաջնորդ Տ. Հովհիկ, Տ. Ցարոն, Տ. Գյուգեն և Տ. Վիգեն Վարդապետները ովառում են «Հաւատարիմ լինել» Ս. Էջմիածնի միջն ցվախման կենաց իրենաց, կաւ մնալ նոյն նպատակութեամբ ի ներք իշխանութեամն և նրանաց Արքոյ Կաթողիկոս Ս. Մատուռյան:

Հմբերցումից հետո նորմածամերը ստորագրում են ոխտագիրը: Ազանդության համաձայն ստորագրում են նաև Մայր տաճարի լուսարարակուն գերշ. Տ. Հովհիկ արքեպոս, Սամբորքանը և Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս, Պողապալանը:

Հաշորդ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական բափորով, նրբացս օրմնելով նախատավոր ժողովրդին, Ս. Էջմիածնի զամքերի դողանցների ներք, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու և պատարաց և կատարելու Կոփակոպսական ձեռնադրություն: Վեհափառ Հայրապետին որպես առքայի համբարձուակա ուղեկցում են Երուսաղեմի



Յանձնաւութիւն յանձնաւութիւն յանձնաւութիւն

հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպոս, Մանուկյանը և Ամերիկայի հայոց Արքեպան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ եպոս Պարտամյանը: Այս սրբազն ձեռնադրության խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Մայր Սբոյի դիվանագիտ գերշ. Տ. Ներսես արքեպոս Պողապալյանը:

Եպիսկոպոսական ձեռնադրության հանդիսավոր արարողությանը ներկա էին Գերագոյն Հոգևոր Խորիրդի անդամները, սրբազն հայրեր, թեմակալ առաջնորդներ, Մայր Սբոյի միաբանությունը և պաշտոնեությունը, ազգային-հասարակական գործիչներ, մեծ թվով ոխտավորներ և հավատացյալների խուսներամ բազմություն Հայաստանի տարբեր շրջաններից և Սփյուռքից:

Մայր տաճարի Ա. Ստեփանոսի խորանի առաջ սկսվում է ձեռնադրության արարողությունը: Ձեռնադրության խարտավիլակ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը Ձեռնադրության Մաշտոցից բարձրաձայն ընթերցում է հետևյալ տողերը. «Ընորհազարդ Ա. Հայրապետ ... զի միաբանք՝ Սրբոյ և Առաքելական Արքուոյ Էջմիածնի, հանդերձ համօրէն ուխտիս, այսինքն Եպիսկոպոսունք, քահանայք, սարկապատուք... այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք ի բարձրագահ Տէրութենէն»:

Ապա Հայոց Հայրապետի պատասխան «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մատչել և ողջամիտ դիտարութեամբ բացայատել մեզ զոր ինչ խնդրէք» ընթերցումից հետո սրբազն հայրեր, քահանաներ, սարկապատներ, իշխաններ և աղքատներ մոտենալով համբուրում են Նորին Սրբության աջը: Այսուհետև նորընծաները, ծերադիր աղոթելով Խման ս. մեղանի առաջ, համընթաց մոտենում են Վեհափառ Հայրապետին՝ տպու իրենց հավատի ուղարկած խոստվանությունը և ստանալու Եպիսկոպոսության աստիճանները: Ամենայն Հայոց Հայրապետն իր աղոթքներով և օրհնությամբ հոգեշնորհ վարդապետներին շնորհում է Եպիսկոպոսական կոչման յոթ աստիճաններ և համապատասխան գգեստ:

Հույկ հետո եկեղեցական թափորով և խնկարկությամբ ձեռնադրության ու ս. պատարագի արարողությունը շարունակվում է Ավագ ս. մեղանի վրա: Այսուղետ Վեհափառ Հայրապետը Ձեռնադրության Մաշտոցից ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը. «Եու Տէր, այսօր վերածէր տհունութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տուր սոցա հմանիլ քեզ՝ ճշմարիտ Հովովիդ, դնել զանձինս իրեանց ի վերա ոչխարաց, առաջնորդ ինել Կորաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տիեզերաց...»:

Արավափակ հոգևոր վերացման հուզումնալից պահն է: Նորընծաները ծերադիր, դնեմքները դարձրած դեսի հավատացյալների հոն բազմությունը, «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեցունց շարականի երգակցությամբ, հրաժարվում են աշխարհի ունայնությունից: Ապա Հայոց Հայրապետը շարունակում է Եպիսկոպոսական ձեռնադրությունը և կատարում սրբազն օծման կարգը: Նորած Եպիսկոպոսներին տրվում է Եպիսկոպոսական գավազան և մատամի:

Սուրբ Գրական, սրբազնագոյն հայրերի աղոթքների ընթերցումից, շարականների երգեցողություններից հետո ընթերցվում է վերշին Ավելասանը և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում ձեռնադրության հանդիսավոր արարողությունը:



Վեհափառ Հայուսպետը սուրբ մեռնոնի օծում է աջը Տ. Հուսիկ եպիսկոպոս  
Բաղդասարի.

Հավարտ պրազման խորհրդի նորին Սրբությունը նորապատկ եպիսկոպոսներին տալիս է իր հայրապետական պատգամն ու խորհրդները:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ  
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒԽՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ  
ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

«Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ. Ամէն»:

«Եւ լցան ամենէքեան Հոգուվն Սրբով»:

Սիրելի հավատացյալներ, այս պահին եկեք միասին նշենք այն դեպքը, հրաշալի դեպքը անկրկնելի, որ պատահեց Հիսուսի Հարությունից հիսուն օր հետո, ինչպես պատմում է մեզ նոր Կոտակարանը:

Հիսուսի Համբարձումից հետո, բնական է, յոր աշակերտները մնացել էին տիտր-տրտում և ճակ հուսահատած, քանզի իրենց մեջ չունեն այլս Մեծ Ռւսուցին և հատակ չէին պատկերացնում իրենց ապագա անելիքը: Հավաքվում էին հաճախ մի համեստ կտորի տակ, Վերնատուն կոչված, ներա եր գտնվում և Աստվածամայրը հաճախ, հիշում էին Աստուծո Որդուն, Նրա քարոզները, Նրա պատվիրանները, Նրա քաղցր հոգին և միխթարվում այդ հիշատակություններով միայն: Եվ ահա հիսուներորդ օրը պատահեց այդ հրաշալի դեպքը, երբ նրանք Հիսուսի աշակերտները և Աստվածամայրը, հոգեկան վերացման բացառիկ մի կացության մեջ հանկարծ զգացին ինչ-որ մի ոժ, որ իշնում է երկնքից հրեղեն լեզուների ձևով և իշնում ամեն մեկի գլխի վրա: Բոլորը շփորվեցին, հարրածի նման եղան, սակայն ուժգին ցնցվեցին հոգովով և մարմնով, որովհետև զգացին և հիշեցին մանավանդ Հիսուսի խոսքը, որ պիտի ուղարկե Միխթարիչ Ս. Հոգին Աստուծո: Եվ ահա հասկացան այդ պահուն, որ հենց Հիսուսի այդ նախատեսությունն է, որ իրականանում է և Ս. Հոգին ամեն մեկի հոգու մեջ: Եվ ամեն մեկը սկսակ խոսել, պատմում է Կոտակարանը, մինչ այդ իրենց համար անձանոյ լեզուներով: Մի խոսքով նրանք լրիկ Կերպարանափոխվեցին, պայծառակերպվեցին, ոգեշնչվեցին, ոժ, եռանդ ստացան հոգով և մարմնով և մանավանդ պայծառացավ նրանց մեջ այն գիտակցությունը, թե ինչ պիտի լինի հետագա իրենց գործունեությունը, իրենց առաքելությունը: Հիսուսի աշակերտներն այդ պահից իսկ դարձան հշմարիտ առաքյալները Հիսուսի: Եվ ցրվեցին աշխարհով մեկ, ինչպես գիտեք, տարածելու համար Հիսուսի Ավետարանը: Եվ որոնցից երկուքը, վկայում են հնագոյն ավանդությունները ոչ միայն հայկական, այլև ասորական, հույնիսկ երբայական, որ Թաղեռու և Բարդուղիմեռու առաքյալները ացելեցին, եկան ճակ Հայաստան աշխարհ կամ ինչպես որոշ վկայությունների մեջ կա, երբայական մանավանդ, Արարատյան երկիր, այսինք մեր Հայաստան հայրենիքը: Ահա այսպիսով առաքելական շունչը, Ս. Հոգու լույսը սկսակ տարածվել ճակ Հայաստան աշխարհում: Եվ այն փոխանցվեց հաջորդաբար ձեռնադրությունների շնորհիվ, այնպես, ինչպես պահնադրաբ կատարվեց այդ շրջանին ամենուր:

Ամեն ձեռնադրություն հետևանքն է այդ Ս. Հոգու գալստյան, որով Ս. Հոգու զորությունը շարունակվում է ձեռնադրությունների շնորհիվ՝ առաքյալներից սկսակ մինչև մեր օրերը՝ եպիսկոպոսներ, կաթողիկոսներ և այլ եկեղեցական պատրիարքներ:



Վեհափառ Հայրապետը սուրբ մասոնով օծում է աջը Տ. Տարոն եպիսկոպոս  
Ծերենյանի

Անհա այդ պահը երկի մենք պետք է հիշենք այսօր, երբ ես իմ տկար ուժերով Աերկայացնում եմ այդ առաքելական ավանդությունը, առաքելական հաջորդականության ավանդությունը: Եվ իմ տկար ուժերով, ինձանց անկախ, Առյօնիսկ կարող եմ ասել, իմ հանգամանքով, այդ Ս. Հոգու շնորհներն իմ ձեռնադրությամբ բաշխվեցին այս շորս երիտասարդ նորապակ և յիշուկոպուներին:

Բոլորին անունով, նաև ձեր անունով, ես շնորհավորում եմ նրանց և մայրում եմ, որ այդ բոլոր շնորհները, որոնք բաշխվեցին այսօր նրանց, և այդ բոլոր պատվերները, որոնք փոխանցվեցին այսօրքա աղոթքների միջոցավ նրանց, դրանք պիտի մնան իրենց մեջ իրեն առաջնորդ, իրեն ուղեցոյց իրենց ապագա սուրբ գործի ճանապարհին, մսիթարելու համար մեր հավատացալ ժողովուրդը, զորացնելու նրանց հավատքը և քաջալերելու համար նրանց բարի գործերը, աստվածահան առարինի գործերը նաև մեր Եկեղեցու պայծառության և մեր ազգի բարորության նվիրված իրենց գործունեությունը: Այս բոլորը, որ ես մի բանի խոսքով ասացի, բոլորը մեկ սրբազն պարտականություն են հանդիսանում բազմաթիվ իրենց կողմերով և երանգներով:

Մեր շորս թեկնածուները, այսօր արդեն ձեռնադրված և օծված եպիսկոպոս, շորսն էլ արտասահմանում գործող հոգևոր հայրեր են, ծանոթ են մեզ Վաղուց իրենց հավատքով, իրենց ուխտապահությամբ, իրենց եռանդուն աշխատանքով՝ ի պայծառություն մեր Եկեղեցին և իրենց ծառայության Նվիրյալ աշխատանքով իրենց համայնքներից ներս՝ ի մսիթարություն աշխարհում ցրված մեր հավատավոր ժողովորի զավակներին:

Առաջինը կուգեի հիշել Տ. Հուսիկ եպս. Բաղդասյան, որ բազում տարիներ ի վեր կծառայել մեր Եկեղեցուն, մանավանդ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց իրեն միաբան: Բազում տարիներ աշխատած է վանքային տարբեր պաշտոնների մեջ, նետո Ամերիկա, իսկ հիմա կվերադառնա Երուսաղեմ՝ պատասխանառու պաշտոն ստանձնելու համար այսուել Նորին Ա. մենապատվություն Պատրիարք Թորգոն արքեպիսկոպոսի կարգադրությամբ:

Երկրորդը Տարոն եպս. Ծերեայան. նա Մայր Աթոռի հոգևոր ճեմարան ավարտած է ժամանակին, և վերջի ավելի քան տասը-տասնհինգ տարիների ընթացքում, մոտ քանի տարիների ընթացքում հարավային Ֆրանսիայի տարբեր շրջաններում, հատկապես Նիս քաղաքում, որ ինքն իր բացառիկ շինարար գործունեությամբ աշքի ընկավ և գնահատանքը վայելց ոչ միայն մեր, այլև այդ տեղի՝ Նիսի և հարավային Ֆրանսիայի հայության: Այսօր ինքը կոչված է որպես եպիսկոպոս՝ հովվելու համայն հարավային Ֆրանսիայի շրջանը, կենտրոն ունենալով Մարսիլիա քաղաքը: Նա սիրված բարձրաստիճան հոգևորական է: Եվ մենք ընդառաջելով Եկեղեցեկան վարչությունների դիմումներին, մենք էլ նրան արժանի գտնելով ձեռնադրել եպիսկոպոս և տալ նրան մեր Եկեղեցին բարձրագույն հոգևոր աստիճանը, որ եպիսկոպոսական աստիճանն է:

Հաջորդ եպիսկոպոսն է Գարեգին եպս. Բերճյան, նա էլ բազում տարիներ գործած է մեր Եկեղեցու ծոցի մեջ: Առաջին շրջանին Գերմանիա տասած է, որպեսզի կարողանա շարունակել իր աստվածաբանական ուսումը և լուրացումը գերմաններն լեզվի: Բազում տարիներ նա էլ գործել է հարավային Ֆրանսիայի տարբեր շրջաններում: Այսօր վերադարձավ ինքը Գերմանիա, որ նոր մեծ համայնք է ստեղծվել, ինչպես գիտեք, ավելի քան



Վեհափառ Հայրապետը սուրբ մասոնով օծում է աջը S. Գարեգին Եպիսկոպոս  
Բեթղյանի

բան-քանինեց հազար հայություն կա հավաքված Գերմանիո տարբեր շրջաններում՝ որթ-ինը քաղաքների մեջ: Համայնքները կազմված են կամ կազմվելու ընթացքի մեջ են: Ընդհանրապես այդ շրջանը հիմա կրնակինե վերակազմության, կազմակերպման և հատաշդիմության նոր շրջան նը, որովհետև մենք հոչակեցինք Գերմանիան առանձին թեմ և իրեն թեմակալ առաջնորդ, Եպիսկոպոսական աստիճանով, անշոշան միջնորդությամբ այնտեղի ժողովրդի, Եկեղեցական Վարչական մարմիններին: Նա տիրապետում է գերմաններեն լեզվին և արդեն վկայություններ բերեց այս անգամ իր այցելությամբ, որ եռուն գործունեության լծված է, որպեսզի ամբողջ Գերմանիո մեջ Հայ Եկեղեցին կազմակերպված, ամուր հիմքերի վրա հաստատված մի սրբազն հաստատվող դառնա:

Եվ վերջապես չորրորդ թեկնածուն նույնական երիտասարդ, ամենաերիտասարդը նրանց մեջ, մեր համակրելի Վիգեն Եպիսկոպոսն է: Նա կ Երուսաղեմի պատրիարքական Աթոռից: Երկար տարիներեւ ի վեր ծառացում է Ըվեցարին մեջ, Ժնև քաղաքում, իրեն հոգևոր հովիլի: Բայց վերջին տարիներին Ըվեցարիայի հայերի թիվը քառապատկվեց, նույնիսկ ավելին և այսօր կան ավելի քան քան հազարի շուրջ հայեր, ոչ միայն Ժնևում, այլ նաև տարբեր քաղաքներում: Այսպիսով անհրաժեշտությունը ստեղծվեց մեզ համար՝ Մայր Աթոռին համար, որպեսզի Ըվեցարիան առանձին թեմ հոչակվի և օժտվի թեմակալ առաջնորդով՝ Եպիսկոպոսական աստիճանով:

Մեր չորս Եպիսկոպոսներն են երիտասարդ են, հավատքով լեցուն և եռանորդ նվիրված մեր Եկեղեցին ծառապության, պայծառության, հառաջդիմության, մեր ժողովրդի կարիքներին, նաև Հայաստանի կարիքներին: Նրանցից ոմանք մանավանդ իրենց պաշտոնի բերումով կարևոր մասնակցություն բերած են մեր այս դժվար օրերին Հայաստանի օգնության իմաստով՝ և՛ աղետայլ գոտում, և՛ Արցախում, և՛ այլ կարիքների համար:

Ես մաղթում եմ, որ հիմա այս ձեռնադրությամբ ավելի զորացած և պայծառացած Ս. Հոգու շնորհներով շարունակեն իրենց առաքելությունը մեր Եկեղեցու ծոցի մեջ երկար, շատ երկար տարիներ մինչև խոր ծերություն՝ ի փառ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի մսիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

«Ուշ լերուք զօրացեալ Ս. Հոգուվ և յաէտ օրինեալ ի Տեառնէ և ի մեջ. ամէն»:

Վեհափառ Հայրապետի ոգեշունչ խոսքից հետո շարունակվում է սպատարագի հոգեպարար արարողությունը:

Ս. պատարագի ավարտից հետո, նորընծա Եպիսկոպոսների պատվին, Վեհափառի սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որ Վեհափառ Հայրապետը և որիշներ շնորհավորանքի շերմ խոսքեր են ասում նորաօծ սրբազն հայրերին:

Հավարտ ճաշկերույթի նորապատճենը Եպիսկոպոսները երախտագիտության խոր ասացին՝ հավաստիացնելով, որ հավատարիմ կմնան իրենց ուխտին և Ս. Էջմիածնին:


Շնորհարությանը հաջորդած շաբաթվա ընթացքում նորընծա սրբազն հայրերն իրենց ուխտի պատարագները մատուցեցին Ս. Էջմիածնում, Ս. Աստվածածին Եկեղեցում և Ստեփանավանի Ս. Աստվածածին Եկեղեցում:



Վեհափառ Հայրապետը սուրբ մտսնով օծում է աջը Տ. Վիգեն Կայսկոպոս  
Աքրազամի

\* \* \*

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս չերմորեն շնորհավորում է նորապահ սրբազն հայրերին՝ այն հույսով ու հավատքով, որ Օրանք իրենց ողջ գիտակցական և հոգևոր կարողություններն ի սպաս կդնեն ի բարօրություն և ի պայծառություն Հայաստանյայց Մայր Եկեղեցուն:





## S. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂԴԱՍՅԱՆ

Ծնվել է 1934 թ. մայիսի 31-ին ԱՄՆ-ի Ռոտ Այլ ճահանգի Փրովի-  
դենս քաղաքում: Նախնական և բարձրագույն ուսումն ստացել է ծննդա-  
վայրում: Երկար տարիներ դպրության աստիճանով ծառացել է տեղի Ս. Սա-  
հակ և Մեսրոպ եկեղեցում:



1955 թ. ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ժառանգավորացի  
ընծառանի քաժինը:

1959 թ. նոյեմբերին ավարտելով հոգևոր դասընթացը, Ս. Հրեշտակա-  
պետաց վաճքում, ձեռամբ գերշ. Տ. Սուրեն արքեպոս. Քեմիաճյանի, ձեռ-  
նադրվել է Կոսակրոն քահանա: Սրբազն հայրը Սրբոց Հակոբյանց վաճ-  
քում վարել է զանազան պաշտոններ՝ ավագ թարգմանիչ, կալվածոց պա-  
տասխանատու, տեսուչ Ս. Աստվածածին վաճքի:

1960 թ. Խորայելի պետության մոտ նշանակվել է պատրիարքական Աթրկայացուցիչ և վաճառապատկան կալվածոց պատասխանատու: Մի քանի տարի անց Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքի ձեռամբ ստացել է ծայրագոյն վարդապետության տարը աստիճաններ:

1971 թ. ընդունվել է ԱՄՆ-ի «Մետն հելլ» համալսարան և նույն տարին նշանակվել Լիինգթոնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

1976 թ. նշանակվել է Ամերիկայի հայոց Արևելյան թեմի փոխառաջնորդ:

1991 թ. ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի տնօրեն ժողովի անդամ:

1992 թ. նշանակվել է Վաճառապատկան կալվածոց տեսուչ:

1992 թ. սեպտեմբերի 27-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

## Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՇՅԱՆ

Ծնվել է 1937 թ. նոյիսի 11-ին Բեյրութում: Նախնական կրթությունը սուացել է տեղի Սահակյան վարժարանում:

1952—1956 թթ. ուսանել և ավարտել է Աճմիջյան Դպրեկանքի ժառագալորաց բաժինը: Ասս նոյն տարւա աշնանը, ընդուածելով Վազ-



գեն Ա. Հայրապետի կոչին, ընդուածել է Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինն ավարտել է 1959 թ. մայիսին:

1960—1963 թթ. որպես ազատ ունկնդիր հետևել է Լոնդոնի «Քինկ գուեն»-ի աստվածաբանական դասընթացներին:

1963 թ. դեկտեմբերի 8-ին Փարիզում, ձեռամբ Տ. Մերովե արքեպս. Մամուկյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Այսուհետև որպես հոգևոր հովիպ ծառացել է Փարիզ, Վալսան, Մարտել քաղաքներում:

1965 թ. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցում, Վեհափառ Հայութինի կողմից, ստացել է վարդապետական աստիճան:

1969—1971 թթ. ստացնորդական փիլանորդի պաշտոնով ծառայել է Պամանիկով հայոց թեմում: Ապա որոշ շրջան հոգևոր հովվությամբ ծառայել է Հովհաննեսի հայոց թեմում:

1971 թ. վերադարձել է Մարտել:

1972—1991 թթ. եղել է տեղի Նիս Քոյթ դ'Ազյուրի ծովախ հոգևոր հովվով:

1977 թ. Ժնևում ստացել է ծարքագոյն վարդապետության տասը աստիճաններ:

1991 թ. փետրվարին ընտրվել է հարավային Ֆրանսիայի հայության փիլառաջնորդ:

Մըրբազան հայոք Ֆրանսիայում իր հոգևոր հովվության շրջանում կատարել է ազգային-Եկեղեցական մեծ աշխատանք: Հիմնել է Եկեղեցիներ և դպրոցներ Մարտել, Վարսև, Սեն Ռաֆայել, Նիս քաղաքներում, որոնց մեջ ստանձնանում է Պարտամյան համապիրն իր ամենօրյա դպրոցով և մշակութային կենտրոնով: S. Տարոն եպս. Ծերեմյանը բազմաթիվ հոդվածների հեղինակ է, որոնք հրատարակվել են «Գեղարդ» հանդեսում:

1992 թ. մեպտեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Վեհափառ Հայութինի, ստացել է եպիսկոպոսական աստիճան:

## Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔԾՅԱՆ

Ծնվել է 1942 թ. դեկտեմբերի 21-ին Ստամբուլում:

1949—1959 թթ. սպորել և ավարտել է տեղի Վիեննական Մխիթարյան վարժարանի հայակրոֆական և միջնակարգ բաժինները:

1959—1963 թթ. սովորել է Ակյուտարի Ս. Խաչ դպրելավանքի բարձրագույն բաժինը:



1962—1965 թթ. սովորել և ավարտել է Ստամբուլի համալսարանի գրականության բաժինը, որտեղ ուսանել է դասական լեզուներ, պատմություն և թմբերաբանություն: Միաժամանակ հետևել է Ս. Խաչ դպրելավանքի ընծայրանի դասընթացներին և 1963 թ. ձեռնադրվել սարկավագ:

1965 թ. հուլիսին, ձեռամբ Ամենապատիվ S. Ծնորիք Պատրիարքի, ձեռնադրվել է կոսակրոն քահանա:

1966—1973 թթ. Գերմանիայի Բոն և Բոխում քաղաքների համապարհաներում ոսամել է գերմաներեն լեզու և մանկավարժություն: Միևնույն ժամանակ տեղի հայ համայնքում ծավալել է ազգային-եկեղեցական զգայի աշխատանք:

1970 թ. Ամենապատիվ S. Ծնորիք արքեպոս. Պալուստյանի ձեռքով ստուգել է վարդապետական աստիճան:


1973—1976 թթ. Մարտելի հայոց U. Կարապետ եկեղեցու հոգևոր հովանությունն է կատարել:

1977—1990 թթ. Վարել է Մարտելի հայոց U. Թարգմանչաց Մայր եկեղեցու հոգևոր հովիթի պաշտոնը: Մրազան հայրը հոգևոր հովկության կողմին գրադրվել է նաև կրթական ու մշակութային գործունեությամբ: Մարտելու հիմնել է Խ. Արովյանի անվան միօրյա հայկական լեզվի վարժարան: Հայերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակել է բառարան:

1991 թ. ապրիլին Եշանակվել է Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ:

1992 թ. մայիսին Կ. Պոլս Ամենապատիվ S. Գարեգին Պատրիարքի ձեռքով ստացել է ծայրագոյն վարդապետության տասը աստիճաններ:

1992 թ. սեպտեմբերի 27-ին U. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ստացել է եպիսկոպոսական աստիճան:



## Տ. ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅԲԱԶՅԱՆ

Ծնվել է 1952 թ. պատմական Հայաստանի Սղբք քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում, ապա մեկնել Կ. Պոլիս՝ ուսանելու U. Խաչ դպրելվաճքում:



1967—1970 թթ. սովորել և ավարտել է Երևանի Կոնսուլատում Հայոց Հակոբյանց հոգևոր ճեմարանը:

1971 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1975 թ. ընդունվել է Լոնդոնի համալսարանի Սբքական Քոլեջ և այն ավարտել 1980 թ.՝ ստանալով բարձրագույն կրթություն:


1981 թ. Աշանավել է Ծվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ, որը իր ծառայությունը կատարել է ամենայն ջանափրությամբ:

1983—1986 թթ. հետևել է «Ֆրիպարկ» համալսարանի Աստվածաբանական ճեմարանի Մագիստրոսի դիպլոմի դասընթացներին և հաջողությամբ ավարտել:

1986 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սրբազն հայրը Աշանավել է իբրև Հայ Եկեղեցու Աերկայացուցիչ Եջև-ի Կենտրոնական վարչության մոտ:

1990 թ. Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքի ձեռքով ստացել է ծաղրագույն Վարդապետության տար աստիճաններ:

1992 թ. սեպտեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է Եպիսկոպոս:



## ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սոյմ թվականի սեպտեմբերի 10-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր հայսագահությամբ, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1992—1993 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը:

Նախագահության սեղանի շորջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հովսիկ արքեպոս. Խանողորյանը, Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը և ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Շահնիա եպոս. Արքաքաջյանը:

Հոգևոր ճեմարանի նոր ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայրավանքի պաշտոնեությունը, հյուրեր և ուսանողների ծնողներ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով: Այնուհետև հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ հնչեցին Հայաստանի Հանրապետության պետական հիմնը և հոգևոր ճեմարանի բայլերգը: Ապա Տ. Տիրայր քին. Գրլեցյանը Ս. Ավետարանից ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ավետարանական ընթերցումից հետո, ուսումնական նոր տարեշրջանի հանդիսության բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպոս. Արքաքաջյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազն հայրեր, հոգևորի և արժանապատիվ եղբայրներ, հարգելի դասախոսներ հոգևոր ճեմարանի և սիրելի սաներ:

Աննկատելիորեն ու դանդաղ սահեցին-անցան ամառային մեր արձակուրդի օրերը և այսօր մենք նորից, շորջ երկու ամսյա ընդմիջումից հետո, կրկին հայրավելի նաք մեզ համար այդքան հարազատ դարձած հոգևոր ճե-

նարանի հարկից ներս՝ կատարելու համար այս անգամ հոգևոր ճեմարանի 1992—1993 ուսումնական տարվա բացումը:

Անապահ այս երկու ամիսները ոչինչ չփոխեցին մեր հասարակական կյանքում, թերևս միայն ավելի զորացրին մեր մանուկ հոգիները՝ դժմանալու շրջափակման ու պատերազմի դժվարություններին: Ինչ արած, մեր ազգի պատմության բոլոր ժամանակներում մեր սերունդները, ինչպես այսօր, կարողացել են գիտություն բառել յարաղանի ու գնդակների ներքո, սովոր ու համարակների ուղեկցությամբ: Կարողացել են, որովհետև նրանց մեջ միշտ էլ հոգին առավել է եղել, քան մարմինը:

Այսօր ևս, 1992 թ. սեպտեմբերյան այս օրերին, հավաքվել ենք մեր սիրելի ճեմարանի հարկից ներս՝ դեպի ապագան քայլելու հաստատ վճռականությամբ: Եվ մեր այս վճռականության մեջ պակաս դեր չի խաղում հանկարիչական Հայրապետի անձը, որ մեր ուսման ճանապարհին մի անապատմելի ոգևորիչ օրինակ է հանդիսանում: Դեռևս մեր մտքերի մեջ թարմ են Զերդ Սրբության խոսքերը, որ այսօրվա մեր հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունները և դրանց փոփոխությունները պահանջում են մեզանից պատրաստելու նորանոր հոգևորականներ՝ հասցնելու համար այն մեկ պահանջին, որ այսօր գգում են բազմաթիվ նորաբաց եկեղեցիների համայնքներ ու վաճեքեր:

Այս ուսումնական տարում ճեմարանի ուսանողության նոր ընդունելություն չկատարվեց: Ճեմարանի ուսանողության այժմյան թիվը մոտ ութսուն է՝ բաժանված վեց լսարանների: Դասախոսական կազմը նույնպես անփոփոխ է: Տեսչական կազմը նեկավարվում է Մայր Աթոռի դիվանագետ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի կողմից իբրև վերատեսուչ:

Տամականում ենք հավաստիացնել Զերդ Սրբությանը, որ ճեմարանի տեսչական կազմը, ոգևորված Տ. Ներսես արքեպիսկոպոսի եռանդից ու պահանջկոտությունից, այս տարի առավելագույնը պիտի ան մեր սամերի դաստիարակման ազնիվ գործում կատարելով մեր աշխատանքը առավել ոգևորությամբ ու անձնվիրումով:

Սույն մտքերից հետո, Վեհափառ Հայր և սիրելի ներկաներ, թույլ տվեք հոգևոր ճեմարանի 1992—1993 ուսումնական տարին համարել բացված»:

Տեսուչ սրբազն հոր խոսքից հետո հոգևոր ճեմարանի սաները երգեցին Վարդան Սրբնեցու «Որք զարդարեցին», Ս. Մեսրոպ Մաշտոցի «Լոյս փառաց» և Ս. Սահակ Զորափորեցու «Էջ Միածինն ի Հօրէ» հոգելու շարականները: Այնուհետև հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյան իր ողջունի խոսքը հղեց ճեմարանի ուսանողությանը՝ ուսումնական տարեշրջանի բացման առիթով.

### Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՋԱՊՍԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ամառային արձակուրդն օգտակարապես անցկացնելուց հետո, ահա վասիկ բացում ենք այսօր հոգևոր ճեմարանի 1992—93 ուսումնական նոր տարեշրջանը: Հոգով ու մարմնով վերատիմ նորոգված, մեր Եկեղեցու եռամեծ վարդապետների և հայրապետների տեսիլքով, եկել ենք նորից սկսելու աշխատանքը, որ սերնդից սերունդ փոխանցվել ու հասել է մեզ:

Վերջին տարիներին մեր երկրի կյանքում կատարված արժատական փոփոխությունները, մեր ժողովրդի ձեռք բերած անկախությունը, հայրենական շատրված շնորհ շաղախաված նրա սիրագործությունն ու անձնազրությունը, մեզ նոր լիցք են տալիս և մերս ավելի լարված աշխատանքի, հոգեւոր ձեմարանի հարկի տակ: Այսաւելի, այս հոգեւոր վաստանում է, որ թրծվում են մեծ տեսլիքի և կոչման գիտակ հոգիներ, որոնք գալիք օրերին Հայաստանաց Եկեղեցու և հայ ժողովրդի ծառաներն են դառնալու սպասավորելու համար նրա Սեղանին:

Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը գրեթե այնքան է հին, որքան Հայաստանաց Եկեղեցին: Հպատականաց Եկեղեցին ևս մի դպրոց է, հոգու մի կրթարան, և նրա հիմնադիրը՝ Հիսոս Քրիստոս, այդ կրթարանի վարդապետն է և ուսուցիչը իր համբաւենական վարդապետությամբ: Այն օրվացից, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իշխան Սատուն Միաժին Որդին Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, այդ օրվանից հան իշման Ս. Սեղանի Կողբին հաստատվեց այս հոգեւոր կրթարանը: Ծուրշ 1700 տարիներ շարունակ ահա այս ուսուավագրի կողքին գտնվող հոգեւոր ճեմարանն են Եկեղեց բազում սերունդներ հոգեւոր պատրաստության համար, և հավատի, հույսի ու սիրության աղբյուրը երբեք չի չորացնել: Կենաւու աղբյուր, աղբյուր անսպաս:

Մենք՝ հոգեւոր ճեմարանի ամբողջ անձնակազմը, երշանիկ ենք, որ այսօր, հակառակ մեր երկրում տիրող ծանր ու տագնապակի կացության, կարողանում ենք, աշխատանքայն նոր ավտոնով լոված, սկսել այս ուսումնական տարեշրջանը:

Այս բարեպատճի ու երշանիկ առիթով խնդրում ենք Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կայողիկոսին, իրքն մեր ուսուցառեան ու հոգեւոր հայրը, որ մեզ տա իր շնորհաբեր պատգամն ու հայրապետական օրինությունը:

Միրով հրավիրում ենք Վեհափառ Հայրապետին:

Իր խոսքի ավարտին վերատեսուչ սրբազն հայրը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ տպու իր հայրական օրինությունն ու պատգամները հոգեւոր ճեմարանի սաներին, դասախոսներին և ներկաներին:

### ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Ես շատ գոհ եմ, որ իմ բավական հառաջացած տարիքում, 37 անգամ է, որ ներկա եմ գտնվում Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանի նոր տարեշրջանի բացման հանդիսության: Փառք Սատուն: Եվ այս առիթով ես պարտը եմ համարում իմ ողջունի և գնահատանքի խոսք ուղղել տեսչության, դասախոսական կազմին, պաշտոնատրյան, որոնք նոր ուժերով, նոր ոգեշնչումներով պիտի շարունակեն իրենց կրթական և դաստիարակչական գործությունը:

Մենք, անշուշտ, բոլոր հետևում ենք քայլ առ քայլ, և հետևում ենք հոգումով, ծանր մտահոգություններով, երբեմն նույնիսկ հուսահատական զգացմունքներով, թե ինչպես զարգանում են պատերազմական գործողությունները և Արցախում, և մեր սահմանամերձ շրջաններում, և ինչպես մեր զավակներից շատերը բացառիկ հերոսական ողով մարտնչում են՝ պաշտպանելու համար իրենց հացենի նողը, ընտանիքն ու ազգային արժանապատվությունը:

Ս.թե մի պահ անդրադառնալ այս հերոսական երևոյթին մեծ գնահատներով, հիացմունքով և նոյնիսկ ազգային մեծ հպատանքով։ Հաճախ չէ, որ ժողովուրդների կյանքում պատահում են այսպիսի պահեր, երբ կամացը կերպով, առանց ստիպման ենթարկվելու, երիտասարդներ գնում են իրենց կյանքը զոհելու։

Սա մի ցնցող երևոյթ է, որի համար մենք հպարտ պետք է լինենք որպես ազգություն։ Եվ այս իրողուրջունը պետք է ներշնչի և մեր դասախոսներին, և մանավանդ մեր երիտասարդ ուսանողներին։ Հատկապես դուք, սիրելի սաներ, պետք է ոչ միայն հպարտ լինեք այս հերոսական արարքների առջն, այլ նաև դուք եւ վարակվեք այդ նոյն ոգով, այդ նոյն հերոսական ոգով, զոհաբերումի ոգով։ Դուք պատերազմի դաշտ չեք գնալու, բայց այստեղ եւ մի տեսակ պատերազմի դաշտ է, և դուք կոչված եք պատրաստվելու այդ պատերազմը տանելու հոգենոր մակարդակի վրա, երբ ազարտեք նեմարանի դասընթացները և կոչվեք բահանապորչան պաշտոնի (ամուսնացյալ կամ կուսակրոն, միննույն է) և մտնեք մեր հավատացյալ ժողովրդի և մեր եկեղեցին ծառայության մեջ։


Համոզված եմ, որ դա հեշտ գործ չէ, դժվարին գործ է և մենք շատ պահանջկուտ ենք։ Ովքեր որ թուամորթ են, պատրաստ չեն այդ հոգենոր պատերազմին, թող շմեան պատեն, մենք կարիք չունենք թուամորթների, վախկուտների, ծովարի և անկարգների։ Ըեզանից ամեն մեկը պետք է պատրաստ լինի հոգենոր ֆիդայի լինելու իր կյանքի ընթացքուն, իր եկեղեցական ծառայության ընթացքուն։ Այս է մեր օրերի պատգամը, այս է նաև մեր պատգամը, մեր ցանկությունը, մեր հորդորը և մեր սպասումը։ Նախ հիմնովին սովորեցեք այն գիտելիքները, որ ավանդում են ձեզ տարբեր առարկաների անվան տակ և մեր դասախոսներն իրենց մասնագիտությամբ ձեզ փոխանցում են այդ գիտելիքները։ Սուրբ Գիրք, հայոց պատմություն, Հայ Եկեղեցու պատմություն, հայերեն լեզու, գրաբար և այլն։ Երկրորդ շատ բահանդրությամբ և շանասիրությամբ հետևեցեք Եկեղեցական ժամերգություններին, մասնակցեցեք և սովորեցեք մեր շարականները, մեր երգերը և ժամերգության ընթացքին, և սրբազն պատարագներին։ Դա շատ կարևոր է։ Եվ երրորդ, աշխատեք ձեր հոգեուրականի բարոյական նկարագրը հետզինեւու կազմավորեք։ Դուք պետք չէ նմանվեք որիշ ձեր տարիքն ունեցող երիտասարդների, որոնք որիշ կրթական հաստատություններում են սովորում։ Հոգևորականի բարոյական նկարագրի պետք է կազմեք և մեր բոլորին, ինձանից սկսած, և տեսունների և դասախոսների աշխատանքի իմաստն այդ է, որ դուք պետք է պատրաստվեք պատգա հոգենոր հովիվներ դառնալու այսօրվա ոգով, ֆիդայական ոգով։ Դուք այդ ճանապարհի վրա եք գտնվում։ Ես վստահ եմ, որ ձեզանից ամեն մեկի մեջ ինչ որ բարձնված ոժեր կան, ձեր ներագիտակցության մեջ, ձեր արյան մեջ, ձեր ցեղային ժառանգության մեջ։ Ահա այդ ուժերն են, որ մենք ուզում ենք արքնացնել, որ դուք իրավես այդ ուժերը կարողանաք ձեր մեջ հայտնաբերել, բազմապատկեր, պայծառակերպել և իմաստավորել ձեր ապագա հոգենոր կյանքի ասպարեզի մեջ, որպեսզի պատրաստ լինեք ձեր ուժերի լիությամբ, նոր հայտնաբերված ուժերով զորացած դառնար իրավես հոգենոր զինվորներ և ստեղծագործողներ ձեր կյանքի ընթացքուն։ Ահա այս մի բանի պատիրաններով և բերում եմ ձեզ բոլորիդ, սիրելի սաներ, իմ հայրական բարի մադրանքները և իմ օրինությունը, որ Աստված ձեզ պահեն-պահապան բաշտող, աշխատյած, հոգով և մարմնով առողջ, որպեսզի քայլ առ քայլ

պատրաստվեք այդ հոգևոր պատերազմին, ինչպես հրահանգում է մեզ մեր Տեր Հիսոս Քրիստոս և մանավանդ Սուրբ Պողոս առաքյալ իր տարրեր և ամակների մեջ: Մենք պիտի հետևենք ձեզ, պիտի քաջալերենք ձեզ, դիտողորոշուներ պիտի անենք: Եվ եթե տկարանանք կամ հուսահատվենք մեկից կամ մյուսից, պիտի հեռացնենք նրանց, որպեսզի այստեղ մնան խիկապես իրենց ոխտին հավատարիմ և այդ հոգևոր պատերազմին պատրաստ զինվորներ՝ հերոսական ոգով:

Թող Աստված ձեզ պահի-պահպանի և ձեզ իր Ս. Հոգով ներշնչի ստեղծարար, շինարար ուժեր, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն:

Հոգևոր մեմարանի նոր ուսումնական տարվա հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի խմբովին երգեցողությամբ և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ՀՈՒՐԵՐ

**Սեպտեմբերի 6-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզափառանցանը և «Հայր մեր»-ից առաջ ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբառական կոնդակը՝ ուղղված համայն Հայ Եկեղեցու հոգևորականությանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

### Սեպտեմբերի 13-ին, կիրակի.—ԽԱՇՎԵՐԱՅ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, և պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպիսոպ. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորիրդի մասին քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

### Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.—Յիշատակ մետեղոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Խաչատորիր ավ. քին. Ֆրանկյանը:

Հավարտ և պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն մնջեցելոց»:

\* \* \*

**Սեպտեմբերի 20-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խոսնի վրա, և պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քին. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպիսոպ. Պողապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Սեպտեմբերի 28-ին, երկուշաբթի.**—Այսօր Մայր տաճարում, Խօման և սեղանի վրա, ոխտի և պատարագ մատուցեց ոխտափորաքար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Գարեգին եպս. Բեթանյանը:

\* \* \*

**Հոկտեմբերի 4-ին, Կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, ոխոփ և պատարագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Տարոն Եպս. Շերեմանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հոկտեմբերի 11-ին, Կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մելքոն Եպս. Մոթափանը և «Հեյր մեր»-ից առաջ քարանդակացից քարոզ խոսեց (տես Էջ 49):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հոկտեմբերի 18-ին, Կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վաչե ծ. վրդ. Խօնախոխանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց (տես Էջ 52):

\* \* \*

**Հոկտեմբերի 25-ին, Կիրակի.**—Գիւտ խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Եփրեմ Եպս. Թարաբյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հոյեմբերի 28-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական հերթական Բալվարդյոց:

**Նոյեմբերի 1-ին, Կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Կարեն ալ. թին. Կոտանանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսը (տես Էջ 15):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նոյեմբերի 4-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական հերթական Բալվարդյոց:

\* \* \*

**Նոյեմբերի 7-ին, շաբաթ.**— Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն:

Այսօր Մայր տաճարում, Սրբոց Հրեշտակապետաց խորանում, և պատագ մատուցեց Տ. Միքայէլ վրդ. Աջապահյանը:

\* \* \*

**Նոյեմբերի 8-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Միքայէլ վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բարող խոսեց:

\* \* \*

**Նոյեմբերի 11-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական համարույթ:

\* \* \*

**Նոյեմբերի 15-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Թաղեռն արդ. Զիրեկլյանցը և «Հայր մեր»-ից առաջ բարող խոսեց:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նոյեմբերի 18-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական համարույթ:

Նոյն երեկոյան, ժամը 21.00-ին, Մայր տաճարում Տ. Մամիկոն արդ. Քիլենյանի կատարմամբ տեղի ունեցավ երգեհոնային համերգ, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը և Մայրավանքի միաբանությունը:

\* \* \*

**Նոյեմբերի 22-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մամիկոն արդ. Քիլենյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նոյեմբերի 25-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական համարույթ:

\* \* \*

**Նոյեմբերի 28-ին, շաբաթ.**— Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւրչացն մերոց Թաղեռն և Բարդողիմէռնի:

Այսօր Մայր տաճարում, Ավլագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Թաղեռու արդ. Զիրեկյանը: Հավարտ պատարագի բովանդակալից քարոզ խուեց ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. 8. Մեսրոպ Ներս. Մոլթաֆյանը:

\* \* \*

**Նոյեմբերի 29-ին, Կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավլագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խուեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊՈ. ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ  
ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ  
(11 հոկտեմբեր 1992 թ.)

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն»:

«Որպէս առաքեաց զիս Հայր և ես առաքեմ զեզ, գնացեք պատուես աշակերտեցեք զամենայն հեթանոս, ուսոցեք զնոսա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն առուրս մինչև ի կատարած աշխարհի» (Մատթեոս Խ. 19):

Սիրելի և հավատացյալ ժողովուրդ, Աստված չի կամենար, որ մեղավորը մահանա, այլ կիսափագի, որ մարդը դառնա իր չար ճանապարհեն և ապրի: Աստված այնքան սիրեց մեղավորներս, անքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր եռութենա՞ն իր Միածին Որդին որկեց, որպեսզի բոլոր անոնք, որոնք հավատան Անոր, հավիտենական կյանք ընդունին: Աստված մեզ փրկելու, հավիտենական կյանքին առաջնորդելու համար ամեն բանե առաջ ընտրեց լուսավորության ճամփան: Միածին Որդին՝ մեր Տերը Յիսոս Քրիստոս, մարմնացավ, մարդացավ, ծնավ կատարելապես Սուրբ Կույս Մարիամն, ինչպէս Սիմեոն Ծերութին ըսավ, «որպէս լոյս ի յայտնութիւն հեթանոսաց» (Ղուկաս Բ. 32):

Մեր Եկեղեցին առաքելական և ողդափառ հայրերու հետ կդավանի, որ Միածին Որդին Աստված էր Աստուծուն, լոյս էր լուսե, ճշմարիտ Աստված էր ճշմարիտ Աստուծուն. որեմն ո՞վ կարող է իրմեն շատ ավելի հստակ կերպով, շատ ավելի կատարյալ կերպով ծանրացնել մեզ Երկնալոր Հայրը: Ամավասիկ, Տեր Հիսոս երկրավոր իր կյանքի ընթացքին, և մասնանդ վերջին երեք տարիները, իր աշակերտներուն և բազմահազար ժողովորդին՝ հրաշքներու կողքին, բժշկություններու և, զարմանահրաշ որիշ նշաններու կողքին շարունակ ավետարանեց, Բարի Լուրը տվավ, թե ո՞րպէս ելք կա մեր այս ծանր վիճակեն, թե ո՞րպէս կարելի է Աստուծուն երշանկությունը, Աստուծուն տված հոգևոր ուրախությունը, Աստուծուն փրկությունը վայելել: Տերը իր երկրավոր տարիներուն շարունակ լոյս սփեց, Վերջին Ընթիրին Վերնատան մեջ իր աշակերտներուն հետ հստած հաղորդեց իրենց Սուրբ Պատարագի խորհուրդը, ոչ միայն ուզեց, որ իր բարոյական և կամ խորհրդավոր մերկայությամբ հաղորդվինք իր Փիզիկական բացակայության, այլ ողեց, որ աշակերտները երբ հավաքվին, նաև հիշատակեն իր ըրածները: Ուրեմն աշակերտներուն ոչ միայն հաղորդվեցավ ավանդությունը, այլ միաժամանակ հրամայեցավ կատարել Տիրոջ ըսածն ու ըրածը: «Ինչպէս որ Հայրը զիս դրկեց լուսավորելու՝ այսինքն փրկության ավետիսիր հաղորդելու ձեզ, ինչնա ես ձեզ կողմեմ. գացեք որեմն և ավետարանեցեք

բոլոր ազգերուն, նոյնը դոր սրբեցուցեք ամենքին և ես ձես պիտի ըլլամ մինչև աշխարհի վերջը»:

Սուրբ Հոգին իշավ և զրուցուց աշակերտները, ամենքն ալ Սուրբ Հոգու ներգործության կրակով վատված՝ նևան սուրբ քաղաքեն, գացին մինչև Պարսկաստան, Հայաստան, Հնդկաստան և ամենուրեք տարին Հիսուսի լուսը՝ վայելելու թէ՝ երկնավոր և թէ՝ երկրավոր որպահությունը: Տերը սրբեցուց բազում օրինակներով Ավետարանին մեջ, որ չկա շնորհը Աստուծուն տրված, որ միայն մեզի համար ըլլա: Ամեն շնորհը նաև որիշներուն բաշխվելու համար է:

Սիրելի հավատացյալներ, Տերը անպատու թգենիի օրինակով սրբեցուց, որ ծառը եթե պատու չտա, պետք է կարվի, պետք է կրակ նետվի: Այդ նոյն օրինակը մեզի համար է նաև: Տիրոջ լուսը սփռելու հրամայականով մենք, որ այսօր Աստուծուն Սուրբ Խոսքը լսեցինք, պատգամ ստացանք Աստուծուն մեր տրվածները որիշներուն պատմելու անհրաժեշտության մասին, որպեսզի որիշներն ալ հաղորդ դատնան Աստուծուն խոսքին: Դուք ձեզի հարցուցեք, սիրելի ժողովորդ, օրվա ընթացքին արդյոք քանի՛ վայրկյան կյանքիր Աստուծուն մասին, սուրբերու կյանքին մասին, Եկեղեցին մասին: Մեզի տրված ամեն ինչ որիշներուն բաժնելու համար է, մանավանդ սերը, որ կրածնե և չի հատնիր: Աստուծուն սերն է, որ կրակի պես կտարածվի: Որքան տաք, այդքան կշատանա: Այդպես է նաև Աստուծուն խոսքը. որքան Տիրոջ տված շնորհքները՛ Տիրոջ խոսքը որիշներուն բաժնեք, այնքան պիտի շատանա և տարածվի աև մեր հայրենիքուն: Ուսուցանելը Եկեղեցին նիմնական պարտականություններն մեկն է: Եկեղեցին նաև դուք եք: Աստուծուն խոսքը տարածելը ինչքան եպիսկոպոսի, վարդապետի, քահանայի, այնքան նաև ձե՞ր պարտականությունն է:

Սիրելի հավատացյալներ, Քրիստոսի ուսուցանելու այդ հրահանգը Էւկան է Եկեղեցին համար, մեզ և ձեզ համար, որովհետև ուր որ ուսուցում չկա, կոյք հավատը կա, ուր որ ուսուցում չկա, ձևական հավատը կա: Ծառ դյուրին է ծունկի թերել կոյք հավատը, շատ հեշտ է ծունկի թերել և պարտության մատնել ձևական հավատըն ու Կեղծավորությունն: Զևականությունն ու Կեղծավորությունը քրիստոնեության համար ամենամեծ ախտերն են, և բուժելու միան ճամփան կարծեն թէ Տիրոջ կողմէն մեզի արդեն ցոյց տրված Է հավածանըն ու տառապանըն է այդ: Եկեղեցը հայրապետները մեկ կողմէն կուսուցանեին, մյուս կողմէն կհալածվեին: Առաքյալներն ոչ մեկը համագիտ քարոզության շրջան բոլորեց, բացի մեկեն, ամենքն ալ հաղածվեցան, ամենքն ալ հահատակվեցան: Նոյնին մեր քարգմանիշ վարդապետները հաղածվեցան և դժվարություններու մատնելելով հանդերձ, Սուրբ Հոգին ներգործություններու հայու նոգին:

Սիրելի հավատացյալներ, այսօր Հայաստանի մեջ երբ տնտեսական, քաղաքական, ընկերային տագնապ կապիհնք, ստիպված ենք զգուշանալ օտարությի նոր շարժումներեն. Կաթողիկոսը, բողոքականներ, աղանդավորական շարժումներ կուգան և կիորդեն քանի մը հարցուր դոլարի ծախու առնել հայու նոգին:

Սիրելի հավատացյալներ, մենք երբ կրնդվզինք և Վրդովլունք կարտանայտնեք այս Եղելությանց առջև, երբեք պիտի շնորհահատինք և պիտի շը-նենք որ Հայաստանաց Եկեղեցին պայօք ուժը չունի դիմագրավելու, դիմադրելու և քարոզությամբ իր ժողովրդին վարդապետելու և գայն գիտակից

դարձնելու միմիայն իր հայու հավատքին և զինք մարենի Եկեղեցիի շուրջը հավաքելու՝ մեր Աերկա պայմանները որքան ալ դժվար և գգնածամային ըլլան: Մենք ալ պյաօր, մեր հոգուոր դասով և ձեզմով, սիրելի ժողովորդ, կրնանք այս բոլոր օտար շարժումները չորցնել, բոլոր այս օտար շարժումներու առաջքն առնել մեր հողերու վրա, կրնանք մեր Եկեղեցին ձայնը Հայաստանի ամենեն մութ և հեռավոր անկուններուն տանիլ: Ասոր համար Եկեղեցական և աշխարհական ձեռք-ձեռքի պիտի տաճք, պիտի լեցվինք Տիրոջ Հոգիով և պիտի անսանք Անոր Բրամպականին: «ուսուցեք ամեն ինչ, որ ես ձեզ սորվեցուցի». մարդ իրեն պիտի չպահէ սորվածը, այլ պիտի տարածե, որպեսզի բոլորը վերադառնան առաքելական և ողդափառ Եկեղեցվո գոգը:

Սիրելի հավատացյալներ, աղոթենք և մաղթենք, որ Տիրոջ շնորհները առատապես թող տեղան մեր վրա և Սուրբ Հոգին Աերգործն ընդմիշտ մեր Եկեղեցին մեջ: Տարեք այս օրհնությունը ձեր բոյմերուն: Այն լոյսը, որ հեթանոսներուն համար դրկվեցավ, իշակ հան այստեղ և Հայաստանը լուսավորվեցավ:

Տիրոջ օրհնությունը և սրբարար զորությունը անպակաս ըլլա ամենքին վրայեն. այժմ և հավիտյան. ամեն:





**Տ. ՎԱՀԵ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ  
Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ  
(18 հոկտեմբերի 1992 թ.)**

«Հոգի Տեառն ի վերայ իմ,  
վասն որոյ էօ զիս,  
Աւետարանել աղքատաց առաքեաց զիս  
Բժշկել զբեկեալս սրտի» (Ղոկ. Դ. 18)

Արդարն, այս օրուան կարդացուած ճաշոյ Աւետարանը Ղոկասու Աւետարանի այն գեղեցիկ հաւուածներն մէկն է, որ ամբողջ Աւետարանին բովանդակութիւնն ու էպոթինը կը կազմէ: Եւ կը սկսի ախալէս.—

«Եւ Ցիսու հոգիի գօրութեամբ Գալիլիա վերադարձաւ և անոր համբար՝ այն գաւառին ամէն կողմերը տարածուեցաւ: Եւ ինք նրեաներու աղօթավայրերուն մէջ կը սրբվենք, և ամենն կը փառարուեք»:

«Եւ եկաւ նազարէթ, ուր ինք մեծցած էր, եւ իր սովորութեան պէս, շարաթ օրը մտաւ աղօթավայրը: Եւ եկաւ, որ կարդայ՝ Իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը: Եւ երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը (ԿԱ. 1) ուր գրուած էր. Տիրոջ հոգին իմ վրաս է. «Վասն զի զիս օծեց աղքատներուն Աւետարանը քարոզելու, Զիս դրեց կոտրած սիրու ունեցողները բժշկելու, գերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, Տիրոջ ընդունալու տարին քարոզելու» (ՂԿ. Դ. 18—19):

Արդարն, եթէ առնենք իրաքանչիր համարը եւ վերլուծենք, պիտի տեսնենք թէ որքան կը յարմարի մեր հայրենի աշխարհի այսօրուան հոգեվիճակին եւ գոյավիճակին:

Ս. — «Տիրոջ Հոգին իմ վրաս»

Արդարն, Խարաբէլի ժողովուրդը դարերով սպասած էր խոստացեալ Մեսան, որուն մասին երգած էին շարունակ մարգարէները և այս կարդացուած մարգարէութիւնը Կիրականանար Քրիստոսի անձով, որուն ծնունդը տեղի ունեցած էր Սր. Հոգիի գօրութեամբ: Աւետարան ատենք Գարբիէլ հըրեշտակապետը աւետեց սր. կոյսին թէ՝ Հոգին Սուրբ պիտի գայ թեզի և Բարձրելոյն գօրութիւնը քու վրայ հովանի պիտի ըլլայ: Ուստի այն, որ թեզ-

մէ ծնանելու է՝ Սուրբ Աստուծոյ Որդի պիտի ըսուի» (Ղոկ. Ա. 35): Ինչպէս ան մկրտութեան պահուն Սր. Հոգին իշած էր աղաւնակերպ (Մաթ. Գ. 17):

70 տարիներ ևոք, մեր հայրենիքի մէջ, Սր. Հոգի օգործեամբ, Քրիստոս դարձեալ յայտնուեցաւ հաւատացեալներու մէջ:

Բ.—«Վասն զի զիս օծեց աղքատներուն Աւետարանը քարոզելու»:

Յիսոս միշտ նախապատութիւնը տուած էր աղքատներուն քարոզելու: Ինչպէս ան երանիներու առաջինն է. «Երանի հոգով աղքատներուն, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնց է» (Մտթ. Ե. 3): Այս նախապատութիւնը տրուած է աղքատներուն, որովհետև աղքատ դասակարգն է, որ աւելի կը փնտու զԱստուծ: Իսկ ընդհանրապէս տեսմուած է, որ հարուստ դասակարգը կշտացած ըլլալով կեանքի բարիքներէն, հեռացած է Աստուծն: և ընկինծած է մեղքի, ապականութեան և անբարդուսկանութեան մէջ: Ասացոյց՝ մեր հայրենիքի ժողովուրդի մէջ մեծ արթնութիւն մը տեղի կ'ունենայ, մարդիկ ծարաւ են և Աստուծոյ ճշմարիտ խոսքով կ'ուղեն կշտանալ: Դրժախտաբար սակայն այս գոյավիճակին օգտուելով շատ մը աղանդարներ մեր հայրենիքը արշաւելով՝ մոլորեցուցած են շատերը մեր Սուաբեական լոյս հաւատոքն: Անոնք հարուստ երկիրներէն գալով՝ իրենց տղարձներով մարդորութիւն կ'ընեն և իրենց մոլար վարդապետութեան կ'առաջնորդնեն: Հայ Սուաբեական Եկեղեցոյ վարդապետութիւնը հիմնուած է Աստուծացնի հաւատոքի և վարդապետութեան վրա:

Սոր՝ մի խարուիք անոնցնէ, և մի նեւուիք այդ աղանդարներու համբուն: Յովհաննես Սուաբեալի պէս կ'ըսեմ ձեզի. «Զանոնք տուներնիդ մի ընդունիք, և անոնց բարն մի ըսէք: Որովհետև ով որ անոնց բարն կ'ըսէ անոնց շար գործերուն հաղորդ կ'ըլլայ (Բ. Յովհ. 10):

Գ.—Զիս դրկեց կոտրած սիրո ունեցողները բժշկելու:

Արդարն, այս համարը որքան կը նամանի մեր հայրենիքի ժողովուրդին պասօրուան հոգեվիճակին: Լեռնականի այդ ահաւոր երկրաշարժը հազարաւոր զոհեր խեց և ոչ միայն մեր հայրենիքը ան ու սարսափի մատնեց, այլն ամբողջ աշխարհը ցնցեց: Ամրող հայ ժողովուրդին սիրոն ու հոգին կոտրեց, իսկ այսօր ալ Ղարաբաղի զոհերն ու համատակները մեր սիրոը կ'արիննեն: Դժբախտաբար օտար մեծ պետութիւններէ կան միայն հոգեշան խօսքեր: Արդ՝ մեր պայքարը Ղարաբաղի մէջ կը նամանի Դաւիթի և Գողիաթի պատմութեան: Ինչպէս պատանի Ղաւիթը միմիշայն Աստուծոյ ապահնելով՝ յաղթեց ու տապալեց հոկայ գրահաւոր Գողիաթը, մենք ալ միմիշան Տիրոց օգնութեան ապահնելով՝ կրնանք յաղթահարել թշնամին: Որովհետև Տէրը մեզ չի խարեւ, բանի որ կը խոստանայ մեզի՝ կոտրած սիրո ունեցողները բժշկելու: Ծնորիի այս օրուան հոգեւոր արթնութեան, խաղաղութիւն պիտի պարզէ մեզի: Ինչպէս պարզէ մեզի: Ինչպէս պարզէն էր Սուաբեալներուն վերջին ընթրիքն: Երբ իր Աշակերտներուն սիրոն ու հոգին խոռված էր:

«Խաղաղութիւն կը թողուս ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի» (Յովհ. ԺԴ. 27):


Ինչպէս Տէրը բած էր Խարաբեկի ժողովուրդին. «Երանի թէ իմ ժողովուրդը ինձի մտիկ ըներ, և Խարաբեկ իմ ճամբաներուն մէջ բավեր: Ծուտով պիտի խոնարհեցնեի անոնց թշնամիները, և ձեռքս պիտի դարձնեի անոնց Աեղիշերուն վրայ» (Սղմ. ՂԱ. 13—14):

Ահաւափկ ծամս է, որ դամնանք մեր պապերու լոյս հաւատոքին, որպէսզի անոնք մեր ազատութիւնն ու փրկութիւնը ստանան:

Դ.—«Գերիներուն ազատութիւն և կոյրերուն տեսութիւն քարողելու, Տիրոց ընդունելու տարին քարողելու»:

Այսօր մեր հայ ժողովուրդը ազատագրուած է 70 տարիներէ եւոք, երբ գերի մնացած էր անաստուածութեան ճիրաններուն մէջ: Անոնք կործանեցին մարդոց հաւատը, երկու հազարէ աւելի Եկեղեցիներ, վանքեր կողուպտեցին, թաղանքեցին, քանդեցին ու այրեցին: Անոնք կործանեցին մարդոց հաւատը: Բազմաթիւ հաւատացեալներ Սիրերիս արսորեցին, մէկ խոսքով՝ քրիստոնեութեան տեղ անաստուած կայսրութիւն մը հիմնեցին, որ տևեց 70 տարիներ, հրեական բարելոնեան 70 տարիներու հման: Այսօր փառք Ամենակալին, որ հայ ժողովուրդը ազատուելով այդ գերութեալ կը պաշտէն Քրիստոս ճշմարիտ Աստուածը: Քրիստոսի լոյսով կը սորվին ճշմարտութիւնները (Յովի. Թ. 39): Բայց դժբախտաբար հազիւ գաղափարախոսական գերութեալն ձերքազատուած՝ մեր հաւատացեալներէն ումանք ինկած են աղանդարներու ցանցին մէջ: Սար համար մեր երկու իմաստուն կաթողիկոսները՝ Վազգեն Ա. Ամենայն Հայոցը և Գարեգին Բ. Մեծի Տաճա Կիլիկիոյ, գրեցին «Հայրական խոռը՝ հայ ժողովրդին»: Մեր Վեհափառ Հայուսաւ 37 տարիներէ ի վեր իմաստութեամբ առաջնորդեց մեր Հայ Եկեղեցին իր ամենէն դժուարին և փոթորկալից օրերուն մէջէն, մեծ հասավարի հման: Փառք Ամենակալին Աստուծոյ, որ պահեց և պահպանեց մեր Սր. Եջմիածին Մայր Աթոռը և անոր վեհ զահակալը և մեզ հասցոց Տիրոց ընդունելու տարին հոչակելու և հիմնելու ազատ ու անկախ քրիստոնեական մեր հանրապետութիւնը: Միշտ հաւատարիմ մնանք մեր Սր. Եջմիածնին և մեր անկախ հանրապետութեան:





## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՐԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՑՈՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 26-ին, Վարդավառի կիրակի օրը, հոգևոր ուրախության և ոգեշնչումի օր էր Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում։ Օրվա մեծ սոնի համբիսավոր պատարագի ընթացքում Ս. Էջմիածնի և Ս. Ներսեսի հոգևոր ճեմարանների շրջանավարտ բարեշնորհ Վազգեն սրբ։ Պերպերյանը քահանայական ձեռնադրությամբ կոչվեց ի ծառայություն Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն։

Նախորդ օրը, հուլիսի 25-ին, երեկոյան ժամերգությունից հետո, ըստ Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց, կատարվել էր նորընթացի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» (Ձեռնադրության Մաշտոց) կարգը, երբ բարեշնորհ սարկավագը, տպով իր հավատի ողջափառ դավանությունը, խոտանում է «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»։

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Վարդան Մայր տաճարում սկսվում է հանդիսավոր և պատարագ։ Օրվա պատարագին է Ամերիկայի Արևելյան թեմի հայոց բարեխմամ առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսմանը։

Ամերիկահայ հավատավոր ժողովուրդը, հավաքված եկեղեցու խնկարույր կամարների ներքո, բարեպաշտական զգացումներով հետևում է սրբազն խորհրդի ընթացքին։

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով» աղոթքը, ապա ձեռնադրության խարտավլիվակ Տ. Հայկագուն ծ. վրդ. Նաջարյանը բարեշնորհ Վազգեն սարկավագին ծնրադիր առաջնորդում է Ավագ խորան, որ նորընթան «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեհույզ շարականի երգակցությամբ, ձեռամբարձ հրամարվում է աշխարհիկ ուսայնությունից՝ կոչվելով սարկավագությունից ի քահանայություն։

Ակնորենու նորընթան ծնրադիր մոտենում է սրբազն հորը, և ձեռնադրոյ Տ. Խաժակ եպիսկոպոսը, ձեռքը դնելով նրա գլխին, արտաահում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարեք զի արժանի լիցի սա զատիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը։ Նորընթային շնորհվում է քահանայական փիլոն, շորջառ, սաղավարտ, փորուրար կրելու իրավունք։

Պատարագի սրբազն արարողությունը շարունակվում է մինչև «Ողջոյն սուրբ միմեանց» քարոզը: Ապա ձեռնադրության սրբազն արարողությունը հնանում է իր հոգևոր վերացման բարձութին, սկսվում է ս. օծման խրիստությունը՝ անդամագույն համար առաջարկությունը մեռնոնվ օծում է նոր ընծայի ճակատն ու ձեռքերը և նրան վերանվանում Տ. Նարեկ քահանա: Այսուհետև նորած քահանան, դառնադր դեպի ժողովուրդը, տալիս է իր անդրամասիկ օրմենությունը՝ «Խաղաղութիւն ամեննցուն»:

Հավարտ հանդիսավոր ձեռնադրության գերշ. Տ. Խամակ եպս. Պարամայնը բովանդակալից քարոզ խոսեց: Արրազան հայրը, վկայակոչելով նորընծայի հոգևոր-իմացական կարողությունները, հոյս հայտնեց, որ նա իր ոխտի գիտակցությունվ կծառայի հայ հավատավոր ժողովրդին:

Սրբազն հայրն այս բացառիկ առիթով շնորհավորեց ամերիկահայ համայնքին՝ Աստուծոն մի նոր սպասավորի օծման առիթով:

Նոյն օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվեց «Օրինակին արելայի» և «Օրինութիւն վեղարի» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, որ Տ. Նարեկ արելա Պերպերյանն ստացավ կուսակրոն քահանացության խրիստանից վեղարը:

## S. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Ծնվել է 1967 թ. հոկտեմբերի 28-ին Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Վահան Թերեկան դպրոցում:

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր մեմարան և բարձր առաջադիմությամբ ավարտել 1988 թ.:

1986 թ., ձեռամբ Տ. Հովսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1988 թ. մեկնել է Նյու Յորք և իր ուսանող սովորել Ս. Վաղիմիր Ռողափառ աստվածաբանական համալսարանում, միևնույն ժամանակ հետեւել հան Ս. Ներսես ընծայարանի դասերին:

1991 թ. ավարտել է իր ուսումը և Ս. Վաղիմիրից ստացել աստվածաբանության վկայական: Որոշ ժամանակ անց աստվածաբանական սեմինարիայից ստացել է Մագիստրոսի աստիճան՝ մասնագիտանալով Նոր Կոտակարանի մեջ:

Հոգեշնորի հայր սուրբը իր ուսումնառության տարիներին լծվել է հոգևոր-մշակութային գործունեությանը. Ս. Վարդան Մայր տաճարում կազմել է պատահաների երգախումբը, եկեղեցու սպասավորության համար կրթել է մի քանի դաշիներ:

1992 թ. հունիսի 26-ին, ձեռամբ գերշ. Տ. Խամակ եպս. Պարսամյանի, ձեռնադրվել է արելա:

Այժմ Նարեկ արդ. Պերպերյանը ծառայում է Հյուսթոնի հայ համայնքում որպես հոգևոր հովվի օգնական:



# ԵԿՈՒՄԵԼԻԿ ԿՅԱՂ

## ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի սեպտեմբերի 1—11 օրերին Պրագայում գումարվեց Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի 10-րդ հավաքը: Սույն հավաքը գումարվեց «Աստված համախմբում է — Քրիստոսով՝ Նոր Արարշագործություն» խորագրով: Ժողովին մասնակցեցին Եվրոպայի բոլոր երկրները Աերկայացնող 114 եկեղեցիների 317 Աերկայացուցներ:

Սառը պատերազմի ավարտով թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Եվրոպաները կանգնեցին նոր իրականությունների առջև: Արևելյան Եվրոպայում ստեղծվեցին նոր ժողովրդավարական կառավարչություններ, որոնք իրենց առջև խնդիր են դրել իրականացնելու շուկայական տնտեսության անցման բարդ գործընթացը: Մյուս կողմից Արևմտյան Եվրոպան բարոյական նոր պարտավորությունների տակ է ընկեռում: Այս պարմաներում, հետևաբար, կարևոր է, որ Եվրոպայի եկեղեցիները միասնաբար իրենց խոսքը ատեն և Ս. Հոգու առաջնորդությամբ փորձեն ընդհանուր հայտարարի գալ հասարակական լայն խավերին հոգող բազմաթիվ երևույթների վերաբերյալ:

Համաժողովում հասուն քննության մյութ դարձան, զոր օրինակ, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի, Ասիսկին Հարավալիհայի, Կիպրոսի, Խովանդիայի և Ուկրաինայի հետ կապված մտահոգիչ վիճակները՝ կապված պատերազմի, ահաբեկչության, ցեղական թշնամության և այլ երևոյթների հետ: Ժողովը հայտարարեց, որ Եկեղեցին, որպես Քրիստոսի մարմին, պարտավոր է ժողովրդներին ցույց տալ, որ տարբեր մշակույթ և հեքենություն ունեցող ժողովրդները կարող են խաղաղությամբ ապրել միասին: Քննության ենթարկվեց նաև փախառականների հարցը, քննադատությունն ազգանամության և ազգային խորականության հետ կապված շատ երևույթներ:


Համաժողովում քննարկվեցին Եկեղեցական միության և Եկեղեցու առաքելության հետ առնչվող հարցեր: Որոշվեց շարունակել գործակցության մերս ոգին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հետ, խրախուսել տարբեր Եկեղեցիների միջև տեղի ունեցող երկխոսություններն ու հոգևոր կապը, բացահայտել, որ բոլոր Եկեղեցիներն եւ դեմ են ահաբեկչությանը, ամեն կերպ զորավիգ կանգնել Կարմիր Խաչին և մարդասիրական օգնությունների այլ ծրագրերին, դեմ կանգնել ազգայնամուլական երևույթներին, որոնք ժխտում են որիշ ժողովրդների մարդկային իրավունքը:


Ժողովը կոչ արեց նաև պաշտպանել երեխաների իրավունքը, մերժել օտարների նկատմամբ տածած ատելությունը, միշտ պաշտպան կանգնել

պահանջականներին: Դրվեց նաև կանանց և տղամարդկանց հավասարության հարցը:

Սույն Համաժողովին, հանուն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու, մասնակցեց Հունաստանի Հայոց Հայոստանական Պատվիրակ Տ. Ուկան Եպիսկոպոս Գալիքաբյանը: Այդ առթիվ սրբազն հայրը հանդես եկավ մի համապարփակ գեկուցումով՝ նվիրված հայ-ադրբեջանական բախումներին—Դարաբաղի հարցին: Զեկուցման մեջ հատկապես նշվեց, որ Ղարաբաղը Հայոց պատմական Արցախն է, որ կան ավելի քան 1600 հայկական հուշարձաններ, որոնցից 200-ը՝ 4-6-րդ դարերի: Զեկուցման մեջ հատկապես այն միտքը արտահայտվեց, որ Միջազգային համայնքը սահմանների անփոփոխության հարցը դնելոց առաջ պարտավոր է վերացնել բոլոր տեսակի անարդարություններն ու քննել դրանց առաջացման պատճանները: «Հայատանը և Ադրբեջանը Միջազգային համայնքի օգնության կարիքն ունեն խաղաղությամբ լուծելու համար իրենց միջև գոյություն ունեցող հակադրությունը», եզրակացրեց սրբազն հայրը:

Սույն համաժողովում Տ. Ուկան Եպիսկոպոս Գալիքաբյանը ընտրվեց Համաժողովի կենտրոնական հանձնախմբի անդամ:





## ՆՈՐՈՐԵԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

«Եթ ուն ո մուտքը մեր հողի վրայ խերով լին»: Այս խօսքերով բարի գալուստ մաղթեց ծերունի հայրոդի մը Ապարանի մէջ խումբ մը երիտասարդներու, որոնք մեկնած էին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ո Գանատային քարոզչական գործունեութեան առաջադրութեամբ, առաջնորդութեամբը Գանատայի Հայց. Եկեղեցոյ թեմի կորովի առաջնորդին՝ Գերշ. Տ. Յովան եպիսկոպոս Տերտերեանի: Ամիսներ առաջ ծրագրուած տվյալ աւերանիկ առաքելութինը, որպէս մտայդացումը երեք երիտասարդ և տեկարոր հոգևորականներու, յանձննան Յովան Սրբազնի, Արարատեան հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդ Գերշ. Գարեգին եպիս. Ներսիսեանի և Ս. Ներսէս ճեմարանի Տեսուց Բարեց. Հրաչ Սարկ. Ջիլմկիրեանի, ծնունդ առած էր հայրենի մեր ժողովուրդի հոգևոր վերագործօնքին զարկ տալու, ինչպէս նաև կարգ մը նորամուս աղանդներու մարթորտութիւնը կասեցնելու նպատակա: Հարկը կը զգացուիր նորօրեայ առաքելական արշակի մը սկիզբը դնելու արտասահմանեան ձեռքերու կարկառուոյ դեպի հայրենիք:

Ահա այս մտադրութեամբ ի մի հաւաքունցան 20 հոգիներ, Ս. Ներսէս Ընծայարանի նախաճեկունութեամբ, ճերառեալ Գերշ. Յովան եպիսկոպոս, զոյգ մը քահանայ հայրեր, Տ. Գարեգին քին. Գանապարեան հոգևոր հովի Ուեսթչեաթի Ս. Յակոբ Եկեղեցոյ և Տ. Մեսրոպ քին. Սարաֆեան, հոգևոր հովի Օքլընտի Ս. Վարդան Եկեղեցոյ, հինգ քահանայացու սաներ և երկրոտասանեակ մը Եկեղեցաւը հայ երիտասարդներ ու երիտասարդութիներ Միացեալ Նահանգներու Արևելեան թեմն և Գանատայի թեմն, որոնք միաշարաթեայ պատրաստութեան շրջան մը անցուցին Ս. Ներսէս Ասսուածարանական ճեմարանի մէջ անոր ծրաջան տեսչին դեկանալութեամբ: Այս ճիշտեղ կեցութեան նպատակն էր, որ երիտասարդները նահօթանային մօտիկէն իրարու հոգևոր զօդուելու միտումով և միանգա-

մայն առաջադրեալ առաքելութեան նպատակը և բնոյթը իրացնելու մտօք, որպէսզի անոնք լաւագոյն պատրաստուած՝ մտքով, հոգիով և այլազան ծրագրումներով, սկսէին հոգեոր սոյն ճանապարհորդութեամ՝ լուրջ և հոգեուանդի կեցուածքով:

Աղօթալից և յոզումնախատն որանադրութեամբ խումբը ճամբար ելաւ Նիւ-Եռքեւ Յովիս 26-ին կիրակի օրը, հաստատ համոզումով, որ իր հոգևորականներու առաջնորդութեամբ կ'երթար Մայր Հայուննիք սորվելու և սորվեցնելու, հաստիքի ու աղօթքի հաղորդակից դատնալու, բարյական ծառայութիւն և նիյժական նպաստ բաշխելու, ինչպէս նաև ոխտ կատարելու յաւերժական Ս. Էջմիածնին և Արարատին դիմաց:

Հայ ծրագրին խումբը հասաւ Ասպարան, իր առաջին առաքելադաշտը, գլխաւորութեամբ Գարեգին և Յովհան Սրբազներու: Քաղաքապետին ու յարակից պաշտօնեաներու հետ հանդիպումէ մը ետք խումբի անդամները տեղաւորուեցան ընտանիքներու մէջ որ պիտի մնային ու մասնակից դատապահին տեղական կենցաղակերպին: Ասպարան ճանչցուած է իր բարեպաշտութեամբ, ըստ որում չէին լրած իրենց եկեղեցին, նոյնիսկ կոմունիստական ամէնախիստ հավածանքի օրերուն և իրենց անվախ հոգեոր հովհիներով մշտապէս մնացած են պատմէշի վրայ:

Երկուշարքի օրը աւագ աշխատանք եղաւ աղօթք ու պաշտամունք ունենալ Ասպարանի Ս. Աստուածածին կիսաքանդ հնադարեան եկեղեցին մէջ, որը ըստ տեղացիներու Ս. Էջմիածնին ետք Հայաստանի հնագոյն եկեղեցին է, կառուցուած 320 թ.: Նախօտք պատրաստուած պաշտամունքի տեսրակներ բաժնուեցան եկեղաներուն, որոնք մնծով թէ փոքրով փութացած էին խուներամ լեցնելու այդ անկոտուր եկեղեցին: Անոնք բարեպաշտութեամբ մասնակից դարձան առաօտեան ժամերգութեամ՝ ձեռամբարձ երգակցելով Տերունական աղօթքի երգեցողութեան: Անջնջելի տպաւորութիւն ձգեց մեր վրայ հաւատացեալ ժողովուրդի վիրաւոր սիրտերու կանչը այս վիրաւորած եկեղեցոյ երկնարաց երդիքին տակ, որ աղիոնորմ երգուած «Տէր ողորմեան» ուղղաձիգ բարձրացաւ առ Բարձրեալ՛ պարգեւելով միսիանարութիւն բոլորին: Եկեղեցիներ կրնան ովալ կիսաքանդ կամ անհնատացած, սակայն ժողովուրդի հաւատքը մշտապէս կը մնայ անյալթ ու անքակտելի: Աղօթքի այդ պահին մենք բոլորս այդ իրական ճշմարտութիւնը վայելեցինք:

Այնուհետև Յովիսան Սրբազն բացատրեց եկեղաներուն խումբի առաքելութեան նպատակը և իր օրինութիւնը բաշխելէ յետոյ ուղղուեցաւ շրջակայ տուները մէկ առ մէկ տօնքների աւանդական արարողութիւնը կատարելու զոյգ քանանաներու և տեղույն հոգեոր հովիտն ընկերակցութեամբ: Տարեցներ կարուու, իսկ պատանիներ ու երիտասարդներ հետաքրքրութեամբ հետեւեցան աղօթքներուն, մինչ եկեղայ հոգեուրականները կարգ առին օրինելու աղը, հացն ու ջուրը, հիմնական տարերը և խորհրդանիշը Աստուծոյ օրինութեան: Այսպէս, ժամերով օրինուեցան տուները բազմաթիւ ընտանիքներու, բարողուեցան Աստուծոյ խօսքը, ուսուցուեցան աղօթքներ, երեխն նոյնիսկ խաչակըքելու կերպը, ումենադրուեցան արտայատութիւններ ժողովուրդի հաւատքի հաւաստիքին, և նոյն ատեն տրունջակը իրենց տնտեսական անձկութեան ու բաղաքական անստոգութեան մասին:

Այցելեցինք ընտանիքներ, որոնք նոր սուգի մատնուած էին իրենց ֆետալի զակին սպաննութեան պատճառա՝ Արցախեան ինքնապաշտպանութ-

համ ընթացքին: Անկարելի էր չուզովի տեսմելով զուսպ լացը հայ ծնողներու որոնք մէկ օրէն միւսը դարձած էին սեւազգեստ սգաւորներ, ողբարյով իրենց «ջանել» հարազատներուն կորուստը: Մեզի վիճակուած էր միխարութիւն տալու դժուարին բայց անհրաժեշտ պարուականութիւնը, որ երթան կը կատարոի միայն լացակից դառնալով վշտահարին ჩետ, եթիւ սուգի սկ որպէին բառեր կը պակսին:

Հետևեալ օքը, ամբողջովին տրամադրուեցանք շրջելու գիլէ գիլ—Շեմանն, Եղիպատրուշ, Արագած, Բժնի, Արգարանդ և այլն— իրագործելու այն նպատակները, որ խոմքը պատրաստուած էր կատարելու. Քարոզիսութիւն, Վկայութիւն, խորհրդակցութիւն, ուսուցումներ հաւատքի հիմնական տարրերու մասին, հոգեհանգիստներ և տնօրինելքներ, ինչպէս նաև մկրտչութիւններ թէ՝ մանուկներու և թէ՝ շափահասներու, նոյնիսկ գիշերուաց ժամերուն:

Սմերիկայի և Գանատայի մեր քահանայագործութեան մէջ տնօրիններ և հոգեհանգիստ ընդունուած և հիմնական արարողութիւններ ճանչցուած են. այսուեղ աւելին՝ իրաքանչիր արարողութիւն ստացաւ արտասովոր նշանակութիւն և դարձաւ առիթ ուսուցանելու ո՛չ միայն հաւատք ու հաւատպիքներ, այլ մանաւանդ անհրաժեշտութիւններ հոգենոր հաւատարութեամ՝ հանդէա մեր դարաւոր եկեղեցւոյ ու անոր հիմնադրին մեր Տիրոց և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, յատկապէս ներկայ դճնակ պայմաններուն մէջ: Չպակեցան առիթներ հոգենոր խորհրդատուութիւններ և բուժման աղօթքներ կարդապու անձերու հետ, շատեր դեռատի, իրենց հոգեկան խոռվքներու բուժման ի խնդիր: Չպակեցան նաև առիթներ, եթիւ խոմքի անդամները բաշխեցին այդ նպատակա իրենց հետ տարած ուսեւտեղնեններու ու իրերը:

Ժողովուրդին հետ հանդիպումներ ունեցանք ուր որ հնարաւոր էր՝ եկեղեցներ, սրամներ, տուններ, աշխատավայրեր, բռնագաղթուածներու կայաններ, փողոցներ, լեռներ, ճամբարներ և հիանդանցներ: Մեր այցելած զոյտ հիանդանցներէն միոյն մէջ բուժուելու բերուած էին հերոս մարտիկներ, որոնք Վիրաւորուած էին Արցախի պաշտպանութեան ընթացքին: Անհաւատպի էր տեսնել հաւատքը այդ երիտասարդ կտրին ֆետայիններուն, որոնք այնքան երկիղած քարեպաշտութեամբ կը հնարիէն աղօթք ու խաչամբոյը ներկայ հոգենոր կանոններէն, բուժուելէ յետոյ կրին գենքի վերադառնալու վճռականութեամբ, ոչ միայն ի խնդիր հայրենի հողի պաշտպանութեան, այլ նաև ի պատի և ի յիշատակ իրենց զոհուած զինակիցներու:

Զարենցաւանի մէջ շիման մէջ եկանք կարգ մը հայորդիններու հետ, որոնք դաւանափոխ դարձած են և յարած Պենտեկոստականներու աղանդատրական ուսուցումներուն: Անոնք բոլորովին կը մերժէին Մայր եկեղեցւոյ ասադական ու բարի սովորութիւնները՝ ու հաւատպիքները՝ ինչպէս խաչակըքնելը, սուրբերուն աղօթելը, կրօնական տօնակատարութիւններ ընելը, մատուն ու ծէսը և այլն: Հարկ եղաւ հաստատել ու շեշտել կարեւորութիւնը մեր հոգենոր մօր՝ Հայց: Եկեղեցւոյ ուսուցմանց և աւանդութեանց հետևելու, և գգուշացնել մերազնեալը, որ հեռու մնան օտարուի և խորթ դաւանդիններէ ու սաստել դաւանափոխներուն: Խնդրեցինք ու յորդորեցինք, որ մեր հոգենոր մօր կաթը անարատ պահուի ու մեր եկեղեցւոյ զաւակները անձեռնմխելի:

Քանից զգացինք թէ մեր այս բարի և բարեմիտ ժողովուրդը ծարաւու բաղցն ուզի հոգենոր սնունդի, որմէ գրկուած էր եօթանասուն երկար տա-

թիւներ և սակայն պահած է իր հաւատքը՝ պարզ ու անսերելելոց և այժմ կարդքն ունի նոր թափով ու եռանդով սրբելու և սնանելու: Անմա այս հոգևոր մարտահրատէրին առջև կը գտնէ ինքզինք Հայց. Առաքելական Մայր Ս. Եկեղեցին: Անմա այս հրամայականէն մղուած է, որ քարոզչական այս անդրանիկ խումբը սկիզբ կը դնէ շարժում մը, որ պէտք է շարունակուի նոյնինքն Ամենայն Հայոց Հայրապետի եռանդագին յորդորով, «Տարին նուազագոյն Յ—4 անգամ Ամանօրինակ խոմքեր պետք է գան և այս սքանչելի ծառայութիւնը մասուցեն մեր ժողովուրդին»: Հրաժեշտի իր խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը յայտնեց իր գնահատանքը և նոյնիսկ շնորհակալութիւնը և տուալ իր հայրապետական օրինութիւնը այս սքանչելի տապելուան կազմակերպողներուն ու մասնակիցներուն ըսկելով, «Նորէն Եկեք»:

Մենք տեսանք ու կը վկայենք, որ հակառակ քազմատեսակ դժնդակ պայմաններու, հայրենի մեր ժողովուրդի հսկայ զանգուածը ներկայիս յարած ու փարած է Եկեղեցիին, որմէ կը սպասէ ստանալ միխթարութիւն ու քաշութիւն, յու և լոյս, խրատ և խրախոյ, գորգուրանք և նոյնիսկ օգնութիւն:

Մշակներ պէտք են ոչ միայն արտասահմանէն, այլ նաև ու մասնաւան հայրենիքն, որ ո՛չ միայն սերմաննեն բարի սերմ հոգիններուն մէջ մեր հոգեքաղ ժողովուրդին, այլ նաև արգիլեն ու կասեցնեն որոն ցանողները մեր հայրենի անդաստանին մէջ, որոնք աղանդատրական տեսակ տեսակ խոստումներով ու պշրանքներով կը ջանան հրապուրել անկուշու մնացած հոգիները պարզ ու միամիտ հայրենակիցներու:

Տայ Աստուած, որ մերօրեալ տապելական այս համեստ շարժումը ծառի նոր և ուժեղ թափով:





## ԱՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ԷՉՄԻԱԾԻՆ

Երկնամերճ են ու ձոյլ աշտարակոս փակված զամգերը Նոտրդամի,  
Աստվածներ են բազմել Խանէի կանաչ խոյակների վրա,  
Ժամերգության պահին հավերժության նման պապանձկոս է քամին  
Պետրոս առաքյալի շքեղ եկեղեցու կամարների ներք:

Պատմությունն ու ներկան, երկու ախոյաններ, դեռ վեճի են նատած  
Սակրելյոր կոչվող ներմակ եկեղեցու դատարկ սրահներում,  
Դեռ Ավետյաց երկրում դամբարանն է հատնում տեղահարված Տիրոջ  
Ու նա մեզ է գալիս ճանապարհը կորցրած ժամանակի միջով:

Աղոթել եմ հաճախ գոթական խաչաձև տաճարների բակում,  
Թաքուն աստված կանչել հելլենների թողած հպարտ Ակրոպոլում,  
Խաչակաքել մի օր լեռների մեջ նիրհող Տրոանի վանքում\*,  
Տրոյայի նախկին փառքը շնչավորել Հորդանանի ափին:

Ամեն հոգում տաճար, ամեն հոգի վանք ու հատուկ սրբատեղի,  
Խաչագմբեթ մատոն՝ աստվածատոր սիրո կանաչ նախաշեմին,  
Ամեն հոգի՝ բաց դոր անմահություն տանող բանուկ ճանապարհին,  
Պաղատանք ու երկուղ, անպարագիծ աղոթք՝ աստծու եկեղեցում:

Սակայն չկա մի տուն, ուր ինձ համար Տերը ալնքան մոտիկ լինի,  
Այնքան շոշափելի, շողարձակ ու ստոյգ, ինչպես այս Բին վաճքում,  
Այստեղ ամեն մի քար մի տաճար է կանգուն, մի պատոս է հիմնից,  
Լյառ է սրբազնագույն, ժամանակի շառաչ, հավերժության ակունք:

Այստեղ ամեն մի քար իր երանգը ունի ու խորհուրդը վերին,  
Երգ է արևահամ, վերք է արյունածոր, կապուտաչյա ժպիտ,

\* Վանք Բոլղարիայում:

Խաչագծված երկինք, սուրբ գրական մորմոք՝ մոմերի շուրջերին,  
Այստեղ ամեն մի քա՞ պատմությունից եկած ուսուցիչ ու դպիր:

Օ, ո՞չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,  
Վեհաշուր են անշուշտ թշող կամարները երկնու նոտրամի  
Ու հանճարի ծնունդ զարդանկար ու վեմ՝ Վատիկանի սրտում,  
Խաչկան գյուղը՝ երկնքի հետ խոսող կապույտ հրաշալիք...

Ես իմ աստվածն ունեմ, որ Բամեստ է գուցե այլոց աստվածներից,  
Անստեղ է ինչպես այգաբացի լույսը Մասսի կառարներին,  
Լույսի նման վճիռ, հույսի նման զերծ է վախսուր կասկածներից  
Ու կառարյալ ինչպես մանուկ Արարիչը Աստվածամոր գրկում:

Ցուրտ է եղել, թե մոյք, ամպու իրիկնամուտ, թե կապուտակ երկինք,  
Ես խորանի առաջ մոմ եմ վատել երկնի անգույք արևներից,  
Սուրբ են եղել անսուս տառապանքը՝ տխոր աստվածամոր դեմքին  
Եվ Հիսուսը մանուկ՝ Արա սիրագորով ու խնձահուր գրկում:


Իմ պապերի ձայնն է արձագանքում այստեղ ժայռեղեն պատից,  
Ես բողոք եմ լուս Արանց երկնամիսիրն անշար աղոթքներում,  
Կորուսների թախիծ, փախստական կարու, ազգանպաստ վճիռ,  
Հավերժելու պատիվ, Բավերժելու պատիճ՝ Արանց աղոթքներում:

Օ, ո՞չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,  
Գեղեցիկ են Արանք, անզուգական գուցե, գուցե անկրկնելի  
Ես իմ տաճշվածն ունեմ, ես իմ խաչվածն ունեմ, ես իմ անկրկնելին,  
Որ տարբեր է մի քի, որ նման չի երբեք իր հետ խաչվածներին:

Հին է, ամենահին. Դարեր են ծանրացել Արա կամարներին,  
Նրա կմահիններում դարեր են համրացել ահա քանի դարեր,  
Նրա գմբեթներից ճառագել է Տիրոջ լոյսը անմարելի,  
Խաչով լուսավորել բնություն ու տարերք արշալուսից առաջ:


Նա՝ նոր Նոյան տապան՝ հավերժ նոյարնակ Արարատի դիմաց,  
Նա՝ հոյսկապ կամար՝ աստվածային սիրո խոյակների վրա,  
Նա՝ բանատեղծ արքա, իմաստության քանքար, բանատեղծի հիացք,  
Կենանորդ Կրակ՝ հավերժ հայարնակ Արարատի ներք:

Օ, ո՞չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,  
Գեղեցիկ են Արանք, անզուգական գուցե, գուցե անկրկնելի,  
Ես իմ տաճշվածն ունեմ, ես իմ խաչվածն ունեմ, ես իմ անկրկնելին,  
Որ տարբեր է մի քի ու նման չի երբեք իր հետ խաչվածներին:



## ՆՎԻՐՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Լրացավ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի ծննդյան 80 տարին, որից ուղիղ 35 տարի նաև նվիրել է Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի շինարարական մեծածավալ ծրագրերի իրականացմանը:



Ծնվել է Վան քաղաքում 1912 թ. սեպտեմբերի 8-ին: Հայրը՝ Գաբրիելը, հմուտ ատաղձագործ էր, իր արհեստում ճանաչում ստացած արհեստավոր: 1915 թ., քախուսկից լինելով եղեռնի սերնի դառն ճակատագրին, երեք տարեկան մանուկը ընտանիքի հետ միասին անցավ գաղթի մահմարեր ճամապարհներով ու հանգրվանեց Երևանում:

Սյստեղ էլ նա ստացել է իր միջնակարգ և բարձրագույն կրթությունը: Միջնակարգ դպրոցը ուսանելիս (որն ավարտել է 1929 թ.), նա միևնույն ժամանակ Ակարչական կրթություն է ստացել Երևանի Գեղարդտեխնիկումում: Մեկ տարի գյուղական ուսուցչի պաշտոն վարելուց հետո, նա 1931 թ. իր ուսումնառությունը շարունակել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժնում, որը գերազանց դիմումով ավարտել է 1937 թ.: Տակավին ուսանող տարիներին, սկսված 1934 թ., նա նաև աշխատել է Երևանի և Սովորական ճարտարապետական արվեստանոցներում, փորձառու ճարտարապետների դեկանականությամբ՝ կատարելով ճարտարապետի օգնականի պարտականություն:

Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Հայարդնախագիծ» ինստիտուտում, որտեղ նախագծել է տպարանի շենքեր՝ Երևանում և Կիրովականում կառուցելու համար, մի քանի արտադրական շենքեր՝ համար 447 գործարանի (այժմ՝ Հայէլեկտրո գործարան) ընդհանուր համալիրում:

Սակայն կարճատև եղավ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի գործությունը իր նախասիրած բնագավառում: 1941 թ. պայթեց երկրորդ աշխարհամարտը, իսկ 1942 թ. փետրվարին նա գորակոչվեց բանակ: Լեյտենանությունով, 409 հայեական դիմիզիայի կազմում, նա մասնակցեց մարտական թեժ գործողությունների ու նոյն տարին շրջափակման մեջ ընկնելով՝ գերեվարվեց:

Դրանով սկզբնավորվեց Արծրուն Գալիկյանի ոդիսականը: Գերմանական մեկ ճամբարից մյուսը փոխադրվելով, նա «վայելեց» դրանց ողջ դառնությունները, հյուծվեց, ուժասպառ եղավ, բայց հրաշքով կենդանի մնաց:

Բայց ոդիսականը վերջ չունեցավ: Երբ պատերազմի ավարտից հետո ինքնակամ հայրենիք վերադարձավ, ոդիսականը շարունակվեց: «Հայրենիքի դավաճանի» ստանու պիտակով «պարզևատրվեց» 10 տարվա բանտարկության ու այս անգամ հեռավոր աքսորավայրերում «վայելեց» դրանց դառնությունները, թեև՝ ինչպես լվովում, այնպես էլ հեռավոր հյուսիսային Նորիլսկ քաղաքում, օգտագործվեց իր մասնագիտությամբ: 1949—1957 թթ. Նորիլսկի կալանավայրում նա սկզբում աշխատել է որպես շինարարության պետ և գլխավոր աշխատել, իսկ դրանից հետո, սկսած 1951 թվականից մինչև ազատվելը, որպես հեղինակ-ճարտարապետ՝ տեղի նախագծային ինստիտուտում:

Բախտավոր դիմպահով նա հանդիպեց իր ուսուցիչներին՝ ճարտարապետներ Գևորգ Քոչարին և Միքայել Մազմանյանին, որոնք այս նեռավոր աքսորավայրն էին ընկել դեռևս 1937 թ. ու դրա հատակագծման ու կառուցապատճան մեջինակները եղան: Աշխատակցությունը իր ուսուցիչների հետ բախտորոշ եղավ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի համար, նախ այն կապակցությամբ, որ վերստին հնարավորություն ստացավ անցնելու իր մասնագիտությանը՝ ճարտարապետական նախագծմանը, ապա աքսորից ազատվելոց և 1957 թ. Երևան վերադարձալուց հետո, Միքայել Մազմա-



Նոր վեհաբան—նախարան վերակառուցումից հետո

լանի (որը մեկ տարի առաջ էր վերադարձել Երևան) միջնորդությամբ, ճարտարապետի պաշտոնվ աշխատանքի անցալ Մայր Աթոռում:


Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինը դեմ նոր էր արժանացել Լուսավորչի գահին նատելու բարձր պատվին ու ծրագրում էր խորհրդատու՝ ճարտարապետական հանձնաժողովի (որի նախագահն էր Միքայել Մազմանյանը) օգնությամբ ծավալել իր եկեղեցաշեն բեղմնավոր գործունեությունը:

Իրեն վատահված բնագավառում փորձառու, պաշտոնում պարտաճառաց, ազնիվ ու կարգապահ ճարտարապետ Արծրուն Գալիկյանը ահա երեք ու կես տասնամյակ աշխատում է Մայր Աթոռում՝ բժախնդրորեն կատարելով իր պարտականությունը և որպես նախագծող ճարտարապետ, և որպես շինարարության ընդհանուր ղեկավար: Նրա անունը կապված է շատ կարևոր իրագործությունների հետ՝ Հին և Նոր Վեհարանների հիմնական վերանորոգման ու բարեկարգման, Մայրավանքի արևելյան և հյուսիսային դարպասների նախագծման ու կառուցման, Ղազարապատ կոչված շենքի արդարացման:




Հուշարձան—նվիրված Մեծ Եկեղեցի և նայենական պատերազմի զոհերին,  
նախագծված և կառուցված 1981 թ.

մատական վերակառուցման, դրանցում միաբանական սեղանատան և հանրակացարանի (երկրորդ հարկում) ստեղծման, տպարամի շենքի նորոգման ու երկրորդ հարկի հավելման, նեմարանի շենքի նոր մասի հավելման, Երևանի Սուրբ Սարգսի եկեղեցու հիմնական վերակառուցման ու բարեգարդման (ճարտարապետ Ռ. Խորյայելյանի հետ) և որիշ շատ ու շատ գործեր: Դրանցով առ իր անունը առնավետ կապեց Մայր Աթոռի արժանահիշատակ շինարարական գործունեության պատմության հետ, բարի հիշատակ թողեց:



Օմելյոնդիական դիսպանսերի գլխ. շենքը նախագծված և կառուցված Երևանում  
1967—1970 թվականներին



Նախիջենվանում կառուցված բնակելի շենք, 1939 թ.

Հիմնականում աշխատելով Մայր Սրբում, նա ժամանակ հատկացրեց նաև իր մասնագիտությամբ ծառալելու համար մայրաքաղաքին: «Հայարդ» համագիծ ինստիտուտում համատեղության կարգով աշխատելով (1966—1968 թթ.), նրա կազմած նախագծով Քանաքեռի տարածքում կառուցվեց շատ կարեւոր բուժական հիմնարկի՝ ուսուցքաբանական հիվանդանոցի ընդունակ համալիրը:

Ու առաջացած տարիքում նոյնապիս նվիրումով ու անսպառ եռանդով ճարտարապետ Արքուն Գալիկյանը, գործարար վաճեցին, շարունակում է ծառալել իրեն վատահիմած չափազանց կարեւոր ու պատվաբեր քնագավառին:

Մեր գնահատանքի խոսքը մատուցենք, ուժ ու արևշատություն մաղթենք երան:

ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐՍՁԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Նախագահ Մայր Աթոռու ճարտարապետական  
համանաժողովի

Ծարտարապետ Ա. Գալիկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տվեց իր հայրապետական հետույալ կոնդակը.

**ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐԾՐՈՒՆ ԳԱԼԻԿԵՍՆԻՆ ՀԱՐՍՁԱՏ ՈՐԴԻՈՅ  
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ ՈՂՋՈՅՑՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ  
ՕՐՃՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

ԵՐԵՒԱՆ

Ողորմութեամբն բարձրեալն Աստոծոյ Հայոց մայր դաստիարակ Եկեղեցին տասնեօթ երկար դարերից ի վեր իր հոգեւոր ու բարոյական առաքելութինը կը շարունակէ մեր հայատացեալ ժողովուրդի ծոցին մէջ, ի Հայաստան և ի ափիսու աշխարհի, վայելելով յարգանքը և գործակցութիւնը մեր ազգի հայատաւոր գաւակներին:

Մեր այդ գաւակների հովին պատկանում էք Դուք ևս, յարգելի պարոն Գալիկյան, որ ահա երեսունինգ երկար տարիներից ի վեր աշխատում էք Մայր Աթոռում, անկոտրում կամքով և աշխատասիրութեամբ վերանորոգելու համար մեր ճարտարապետական գոհար պատմական վանքերն ու Եկեղեցիները, ամենայն հմտութեամբ ու ջանահրութեամբ: Մեզ քաջ յայտնի է նաև որ անցեալում ևս Երևանում և ալլոր ծրագրաւորուել և կառուցուել են լիշարժար բազմաթիւ կառուցներ մեր հայրենիքի, շնորհի ճարտարապետութեան մէջ Զեր ունեցած բազմավաստակ հմտութեան ու ճաշակին:

Զերմանէ գնահատելով Զեր Եկեղեցանուելու ու գիտական ծառայութիւնը, Զեր ծննդեան որստենամեակի լիշարժան առթիւ, այսու Հայրապետական Մեր կոնդակով Մայր Սրբու Սուրբ Էջմիածնից Զեզի բերում ենք Մեր օրինութիւնը, մաղթելով Զեզի բաշառողջութիւն, բազում տարիներ արևոտ ու խաղաղ կեանք, ընտանեկան երշանկութեամբ:



Խաչքար—նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին Բաղդադում (Վեհափառ Հայրապետի ավերը Խրաբի հայոց թեմին)

«Ողջ լեռոր զօրացեալ Սուրբ Հոգով և յաէտ օրհնեալ ի Տեսոնէ և ի մէնջ»: Ամէն:

Վաշինգտոն

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ

Տասւ կոնդակս ի 10 Սեպտեմբերի

1992 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց Ռեզաք

ի մայրավան Սրբոյ Էջմիածնի:

ՀՄԹ. 1913

Սուրբ բերքած ցանկում նիշատակվում են բազմավաստակ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի գործերը՝ կատարած Մայր Աթոռում պաշտոնավարելիս:

1. Նոր Վեհարանի արմատական վերակառուցում.

2. Հին Վեհարանի արմատական նորոգում.

3. Տպարանի շենքի արմատական վերանորոգում՝ երկրորդ հարկի հավելումով.

4. Դազարապատ շենքի արմատական վերակառուցում և ամրացում: Առաջին հարկում միարանական սեղանատան և խոհանոցի, երկրորդ հարկի հավելումով՝ ճեմարանականների հանրակացարանի ստեղծում.

5. Մայրավանքի արենելյան և հյուսիսային (ժամացույցի աշտարակով) նախագծում և կառուցում.

6. Ճեմարանի շենքի ընդարձակում՝ արևմտյան թևի հավելումով.

7. Երեմյան խուցերի վերանորոգում՝ ներքին հարմարություններով լրացում.

8. Ս. Գայանե վանքում՝

ա. Մատողատան նախագծում և կառուցում.

բ. Միահարկ շենքի արմատական վերակառուցում, նկուղային հարկի ստեղծումով.

գ. Բակհում՝ տնտեսական շենքի նախագծում և կառուցում.

դ. Բակի ցանկապատում և բարեկարգում:

9. Ս. Շողակաթ վանքում՝

ա. Եկեղեցու հիմնական վերանորոգում.

բ. Երիցատան նախագծում և կառուցում.

գ. Բակի ցանկապատում և բարեկարգում:

10. Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում՝

ա. Հիմնական վերանորոգում.

բ. Բակի ցանկապատում և բարեկարգում.

գ. Երիցատան նախագծում և կառուցում:

11. Երևանի Ս. Մարգիս եկեղեցու արմատական վերակառուցում և բարեզարդում, վրան նոր հարկի հավելումով (ճարտ. Ռ. Խարայելյանի հեղինակակցությամբ):

12. Նորագալիթի Ս. Գևորգ եկեղեցու արմատական վերանորոգում, կտուրին՝ զանգակատան հավելումով:

13. Բամբակաշատի (Արմավիրի շրջան) Ս. Սատվածածին Եկեղեցու արմատական վերանորոգում:
14. Հրազդանի Ս. Խաչ Եկեղեցու արմատական վերանորոգում, բակում երիցատան նախագծում և կառուցում:
15. Վարդենիսի Ս. Սատվածածին Եկեղեցու արմատական վերանորոգում:
16. Երևանում Ս. Սարգիս Եկեղեցուն Կից առաջնորդարանի շենքի նախագծի բանվորական գծագրերի կատարում:
17. Տնտեսական շենքերի (գարաժի, դիզելատան) նախագծում և կառուցում Մայրավանքի բակում:
18. Խաչքարերի նախագծում Բաղդադի և Մինսկի հայ համայնքների պատվերով:
19. Գևորգյան ճեմարանի շենքի վերանորոգման նախագիծ:
20. Մինոդի շենքի վերանորոգում և հարմարեցում գրասենյակային կարիքների համար:





## S. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՍԵՐԱՑԴԱՐՅԱՆ

### ԳԱՎԱԶԱՆՍԳԻՐՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԵՐԿԱՆ.—Հայաշատ երկրների թվում իր ուրուց տեղն ունի Վրաստանը, որ ներկայում ապրում են շուրջ կես միլիոն հայեր քաղաքացիական համահավասար իրավունքներով: Նրանք պահպանել են իրենց ազգային սովորություններն ու ավանդությունները: Վրացանց ժողովորդը հավատացյալ ժողովորդ է, ինչպես և վրացիները: Ակրնենալու է, որ նրանք ունեն խորին հարգանքի զգացմունք Հայաստանյաց Սուպերեական Եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ:

Վիրահայոց մայրենի լեզուն արևելահայ գրական լեզուն է: Թիֆլիսանքերը, թեև կորցրել են իրենց (սունդուկյանական) հին քարքարը, սակայն ներկային նրանց խոսակցական լեզուն, որը «ում» ճյուղին է պատկանում, առավել մոտ է արևելահայ գրական լեզվին՝ վրացերենի որոշ ազդեցությամբ:

1830 թ. մայիսին Էրզրումից մեծ թվով հայեր Կարապետ եպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ գաղթում են Սխալցխա, որտեղ նրանց հետնորդները մինչև օրս պահպանում են իրենց արևմտահայ քարքարը: Նոյնն է պարագան ևակ Զավախիք հայերի համար: Սնծովյան շրջանների հայերը նոյնպես պահպանել են իրենց քարքարները, որոնք Տրայիզոնի, Սամսոնի, Համշենի քարքարներն են, բոլորն էլ «կ» ճյուղի քարքարներ:

Վրաստանի տարածքում գործող բոլոր հայկական դպրոցներում դասավանդում են արևելահայ գրական լեզվով:

Վրաստանի հայ համայնքը պահանջություն ունեցող կազմակերպված համայնք է: Նա ունի եկեղեցական թեմական իշխանություն և գործող հայկական եկեղեցիներ: Ուժի նաև մշակութային, բարեգործական, կրթական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ և այլն: Թիֆլիսիում գործում է հայկական թատրոնը, հրատարակում է «Վրաստան» թերթը, ամեն օր տրվում են մեկժամյա հայերեն ուսդիհաղորդումներ, գործում են հայկական դպրոցները, հայ գրողների միության մասնաճյուղը, համա-

լարանի մանկավարժական թեքումով հայկական մասնաբյուլը, թատերական ինստիտուտի հայկական բաժինը և այլն:

ՎԿՍՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ.—Վրաստանը հնագույն հայ գաղթավայրերից մեկն է, որի մասին վրկայում են Ստրաբոնը (հույն աշխարհագրագետ, պատմագիր, ապրել է մ. թ. ա. 64/63 թթ., վախճանվել է՝ մ. թ. 23/24 թթ.), Պլինիոս Ավագը (հոռմացի գիտական, ուսումնական և պետական գործիչ, 23—79 թթ.) և որիշեր<sup>1</sup>:

ԿՐՈՆԸ. —Բնականաբար Ստրաբոնի ժամանակ քրիստոնեություն չկար: Հայերը և վրացիները հեթանոսներ էին: Վերոհիշյալ երկու ազգերը քրիստոնյա դարձան շորորոդ դարի սկզբներին:

ՀԱՅԱՏԱՆԸ ՀԱՂԹԱԿԱՆ ՀԱՎԱՏԻ ՄՈՒՏՔԻ ՍԵՄԻՆ. —Չորրորդ դարի սկզբից՝ 301 թ. Ա. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ հայոց թագավորի ջանքերով Հայաստանը դարձավ քրիստոնյա երկիր և քրիստոնեությունը՝ պետական կրու:

301—303 թթ. Կառուցվեց հայոց առաջին քրիստոնեական Մայր տաճարը՝ Սուրբ Էջմիածինը, որն ունեցավ նաև իր հոգևոր դպրոցը: Այդ դրայոցում սովորեցին մեծ մասամբ նախաքրիստոնեական շրջանի կրոնավորների՝ քրմերի զավակները: Քրիստոնեական ուսում և կրթություն ստացած շրջանավարտները ընդգրկվեցին հոգևոր ծառայության մեջ, որպես քահանաներ և եպիսկոպոսներ:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ. —Երբ Հայաստանում քրիստոնեությունը դարձավ պետական պաշտոնական կրոն, Վրաստանում ապրող հայերը հնարավորություն ունեցան լայն շփում ունենալու հոր կրոնի քարոզիչների հետ շնորհիվ Ա. Գրիգոր Լուսավորչի ուղարկած քահանաների և եպիսկոպոսների, որոնք հրավիրվում էին Ա. Նուև կուլսի և Վրաց Միհրան բդեշխի կողմից<sup>2</sup>:

ՎՐԱՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԴԵՐԸ. —Հայ վրացական պատմական տվյալների, Վրաստանի քրիստոնեացման պաշտոնական տարեթիվը ընդունված է համարել 326 թվականը: Նորընտիր վրաց հայրապետները

<sup>1</sup> Տե՛ս՝ Հ. Ա. Համբարձումարան, հատոր 11, Երևան, 1985 թ., էջ 529, «Հայերը Վրաստանում» և նյութականագիրը:

<sup>2</sup> Մ. Օթմանեան, «Ազգապատում», հոդ. 71. «Հոփիսմետաց խումբէն» մէկն էր Նուև, որ Վրաստան գնաց, և Մծինիսա մայրաքաղաքին մէջ թշկություններ կըներ, և նոյնիսկ Միհրան բդեշխի կիմն ալ թշկեց: Անկ Միհրան սկսան հնատքրքոմիլ Նուևի օրորթեան վրա, և երբ իհրան ալ վտաճառոր փորորիկի մը հանդիպեցա, Տրդատի փորձանքը իփեց, և Նուևի Աստուծոյն ապահնելով ազատեցա, և անկ եսոք քրիստոնեան հանգան և Նուևի հետ կոսպատութիւնը շնչելու աշխատեցա (Խոր. 170):

Ասոնք ամէնքը տեղի ունեցան Հայոց դարձին առաջին տարիները: Նուև և Միհրան Դիկորի դիմեցին հրահանգուելու համար և անկ ստացան Վրաստանի համար գլխաւոր հովին մը և եկեղեցական պաշտօնեաներ և այս կերպով Վրաց կաթողիկոսությունը Հայոց Հայրապետություններ ենթարկեալ մնաց մինչև է դար:

հանդիսացան համայն Վրաստանի քրիստոնյաների, ընդ որում նաև Վրաստանում ապրող հայերի հոգեոր առաջնորդները, որովհետև քրիստոնեական սկզբնական դարերում հայերն ու վրացիները նույնադավան էին, նրանց միջև չկային դավանական տարրելորժուններ: Հայոց տատերի գյուտից և Աստվածաշնչի հայերն թարգմանությունների հետո, Վրաստանի որոշ եկեղեցիներում հայ հավատացյալների համար Սուրբ Գրքից կատարվում էին հայերն ընթերցումներ:

Ցուրտավի եկեղեցում, Ս. Շոշանիկի կարգադրությամբ, ժամերգությունը ները կատարվում էին հայերն լեզվով<sup>3</sup>: Կյուրիխն կաթողիկոսի ժամանակ Ցուրտավի եկեղեցու պաշտամունքային լեզվում նոցվեց նաև վրացերենը, որի մասին Կյուրիխն կաթողիկոսն ասում է. «Զի ամեներին իմասցին զրան պաշտաման, երկրումք լեզուաք կատարի այն՝ հայերն և վրացերէն»<sup>4</sup>:

Վրաց կաթողիկոսների հոգեոր առաջնորդությունը Վրաստանում ապրող հայերի վրա տևեց մինչև Կյուրիխն Ա. կաթողիկոսը, որը, ըստ վրացական աղբյուրների, գահակալել է 595—610 թթ.: Կյուրիխն Ա. կաթողիկոսը Վրաստանի հայրապետական գահը ժառանգելուց հետո, ընդունեց քաղկեդոնականությունը 608 թ. և դավանական հողի վրա բաժանվեց հայ Եկեղեցուց<sup>5</sup>:

Կյուրիխնը բնիկ վրացի էր, ծննդով Զավախք գավառի Ակուտրի գյուտից: Գիտեր չորս լեզուներ՝ վրացերեն, հայերեն, հունարեն և պարսկերեն: Աշակերտել էր վրաց և հայոց դպրանցներում, ապա հունական դպրության մեջ և հմտանալու հապալակով 15 տարի ապրել էր հունաց երկրում Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքում:

592 թվին նա վերադառնում է Դիլի: Մովսես կաթողիկոսի կոլմից Աշամակլում է վանքերի երեց, ապա՝ Այրարատի համանգի քորեախսկուպուն. «Կացեալ ի նմին ամս հինգ» (Ուխտ. Բ. 4): Իր պաշտոնավարության ընթացքում Կյուրիխնը իր եռանդրուն գործունեությամբ և փայլուն իմացականությամբ սիրելի է դատնում Մովսես կաթողիկոսին: Նա կաթողիկոս է օծվում ձեռամբ Մովսես կաթողիկոսի, (ըստ Ուխտ. Բ. 6) նրա կաթողիկոսության 25-րդ տարում, այսինքն՝ 598 թվին: Կաթողիկոսանապուն հետո Կյուրիխնը պատճառ է դառնում հայ Եկեղեցու վրաց Եկեղեցու անշատման (ըստ Օրմանյանի՝ 608 թ., իսկ ըստ Ա. Զամինյանի՝ 607 թ.): Այս խնդրի մեջ մեծ դեր է խաղում հունաց քարոզությունը, որի ուժեղ ազդեցությանն էր ենթարկվել Կյուրիխնը Նիկոպոլում ապրելու 15 տարիների ընթացքում:

Ըստ վրաց աղբյուրների, մինչև Կյուրիխնը վրաց Եկեղեցում գահակալել են հետևյալ հայրապետները<sup>6</sup>.

## Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ն Ե Ր

### 1. Խոանե

335—363

<sup>3</sup> Տե՛ս Մ. Չամչիսեան, «Հայոց պատմություն» հատոր Բ, Երևան, 1984, էջ 303:

<sup>4</sup> Տե՛ս Անդր, էջ 304:

<sup>5</sup> Տե՛ս Անդր, էջ 301: Տե՛ս նաև Մ. Օրմանյան, «Ազգապատում», նորված 395:

Մ. Զամինյան, «Հայոց Եկեղեցու պատմություն», Ս, Նոր Նախիջևան, 1908 թ., էջ 117:

<sup>6</sup> Տե՛ս Վրաց Եկեղեցու 1962 թվականի պաշտոնական օրացույցը՝ տպագած Թբիլիսիում վրացերեն լեզվով:

2. Խակորի	363—375
3. Խորի	375—390 (Եղել է հայոց Ներսես Կաթողիկոսի սարկավագը)
4. Ելիա	390—400
5. Սվիմենն Ա.	400—410
6. Մուն	410—425
7. Խոնա	425—429
8. Խերեմիա	429—433
9. Գրիգոր Ա.	433—434
10. Բասիլ Ա.	434—436
11. Մորիդանի	436—448 (բարեկամության կողմից պարսիկ էր):
12. Խովել Ա.	448—452
13. Միքել Ա.	452—467 (սա շարդեց Վախտանգ Գորգասալու ատամները):

## ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

14. Պետրե Ա.	467—474
15. Սամոնել Ա.	474—502
16. Գաբրիել Ա.	502—510
17. Թավթեշաղ	510—516
18. Չորմագի-Չիղիրմանե	516—523
19. Սարս Ա.	523—552 (Վրացիների կողմից առաջին անգամ ընտրվածը Մցիւեթայում):
20. Եվլավի	533—544
21. Սամոնել Բ	544—553
22. Սակարի	553—569
23. Սվիմոն Բ	569—575
24. Սամոնել Գ	575—582
25. Սամոնել Դ	582—591
26. Բարթոլոմէ	591—595
27. Կիրիոն Ա.	595—610 (սրա ժամանակ տեղի ունեցավ հայոց և վրաց եկեղեցիների դավանական բաժանումը):

ԲԱԺԱՆՄԱՆԸ ՀԱԶՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԸ.—Վրաց եկեղեցին հունադավանությանը հարելուց հետո հայերը ստիպված են լինում իրենց համար նոր եկեղեցիներ կառուցել: Նորակառուց հայկական եկեղեցիները, մատուցներն ու հայ համայնքը դեկալավում են հայոց եպիսկոպոսների, քահանաների կողմից:

Թրիխիսիոս կառուցված հայկական առաջին եկեղեցին համարվում է Բերդի մեծ եկեղեցին, այն է Կրասիլնայա փողոցի վրա գտնվող Մելիքանի Ս. Գևորգ եկեղեցին: Հայ եկեղեցու հյուսիս-արևմտյան արտաքին պատի արձանագրության, այս եկեղեցին կառուցվել է Հայոց 80 թվին, այսինքն՝ 631 թվականին:

Եկեղեցին հիմնահատակ քանդվել է արաքական արշավանքների ժամանակ:

1251 թ. հայազգի իշխան Ռոմելը վերակառուցում է Եկեղեցին, որն է գործում է մինչև օրս<sup>7</sup>:

Թրիլիսի մեջ հայտնի հայկական երկրորդ Եկեղեցին Բերդի փոքր եկեղեցին է, որը կոչվում է Անև Հրեշտակապետաց Եկեղեցի: Սա գոյություն ուներ դեռևս 8-րդ դարից: Եկեղեցին բանդվել է 1937 թվին, մնացել է Ա հիմքի որոշ մասեր և ավերակ պատեր: Սա նոյնպես գտնվում է Կրասիլնայա փողոցի վրա, Ս. Գևորգ Մայր Եկեղեցոց ոչ շատ հեռու:

9-րդ դարում հայկազն Սահմակ իշխանը կառուցում է Սահմակաշեն եկեղեցին: Սա այն Սահմակ իշխանն էր, որին 858 թվին սպանել տվեց Բուղա արար ոստիկանը<sup>8</sup>: Սահմակաշեն եկեղեցին կառուցվել է Թրիլիսի Խարագիանա փողոցում: Այն կիսափոք լինելու պատճոով 1821 թվին Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակացին քանդել է տալիս<sup>9</sup>:

Հետագա դարերում հայկական Եկեղեցիների թիվն ավելանում է մինչև 20-րդ դարի սկզբը: 1914 թվի հաշվետվության տվյալներով՝ Թրիլիսիում գոյություն են ունեցել, բացի Սահմակաշենից, 26 հայկական եկեղեցիներ: Թրիլիսիում գործել են 1 եկիսկոպոս, 55 քահանա և 13 կույսեր: Ամբողջ Վիրահայոց թեմում գործող հայկական Եկեղեցիների թիվը եղել է 439, իսկ հայ քահանաներինը՝ 340<sup>10</sup>:

### ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայ Ա. Գ. Արքահամբամի «Համառու որբագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատության (հատոր Ա, Երևան, 1964 թ., էջ 97), Վրաստանի հայոց թեմը հիմնվել է 12-րդ դարի յոթանատնական թվականներին, թեմական կենտրոն ունենալով Թրիլիսի քաղաքը:

### ՄԵԶ ՀԱՅՑՆԻ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՄԻՒԶԵՎ 1780 ԹՎԱԿԱՆԸ

Մինչև 1780 թվականը Վրաստանում պաշտոնավարած հայ հոգևոր առաջնորդների կյանքի ու գործունեության մասին նժրախտարար բավարար տեղեկություններ չեն հասել մեզ: Այդ մասին պահպանված տեղեկությունները կցկուոր են և վերաբերելում են առանձին հոգևորականների, որոնք ապրել ու գործել են տարբեր ժամանակներում: Մեր ձեռքի տակ եղած տրվյալները հնարավորություն չեն տալիս մեզ ժամանակագրական կարգով կազմելու ամբողջական մի գավազանագիրը: Անշուշտ ունեցել ենք հայ Եկեղեցու ականավոր շատ հոգևորականներ, որոնք, իբրև թեմակալ առաջնորդներ, հոգևոր ու մշակութային կարևոր աշխատանք են կատարել Վրաստանում մինչև վերոհիշյալ թվականները և որոնք ցարդ հայտնի չեն մեզ: Այդպիսիներին հայտնաբերելու աշխատանքը թողնելով ապագա հետազոտող-

<sup>7</sup> «Հշմածին» ամսագիր, 1959 թ., փետրվար, էջ 50:

<sup>8</sup> Թովմա Արքունի, «Պատմություն Տաճան Արքունեաց», էջ 198:

<sup>9</sup> Տես՝ Ա. Երիցեան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք», հատոր 1, էջ 146—147:

<sup>10</sup> Տես՝ «Արքահատ» ամսագիր, 1914, էջ 434—439:

Անրին, մենք կամ կառանք մեզ հայտնի մի քանի առաջնորդների կյանքի ու գործունեության վրա:

**ԲԱՐՍԵՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:** Սա 1179 թ. մասնակցել է Հոռոմկայուս հրավիրված ազգային եկեղեցական ժողովին: Եղել է Բեղյանակավոր աճանապրություն և ժողովի պատգամավորների շարքում հիշվում է ովթերորդ տեղում<sup>11</sup>: Բարսեղ արքեպիսկոպոսը հիշվում է նաև Բասիլիոս անունով. «Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին վրաց Տիմիաց»:

1284 թվին, որպես Վրաստանի հայոց առաջնորդ, հիշվում է Հովհաննես եպիսկոպոսը, որի ժամանակ, այդ նոյն թվականին, հայազգի Ումեկ իշխանի կառուցած Ս. Գևորգ եկեղեցում Հովհաննես Երգմկացի կամ Ծործոցի վարդապետը, որը հայտնի է նաև Պլուզ անունով, քարոզ է խոսել «Ո վերայ սբանելարունս արարչագործութեանց Աստուծոյ և մանաւանց յաղագ զարդու երկնից և շարժման երկնային մարմնոց» թեմայով, որն ունեցել է մեծ արձագանք. «Եւ եղի ախործելի յոյժ լսողաց քանին»<sup>12</sup>: Ումեկի կրտսեր որդին ՎԱԽԹՄԱՆԳ զվարթամիտ պատանին «քազում թախանձանօր» արձաւում է Հովհաննես Երգմկացուն, որ իր այդ տրակտատը գրի առնի, արձակի վերածի և նվիրի իրեն: Տեղի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսն էլ ատիպում է Երգմկացուն, որ գրի առնի իր քարոզը: Այսախով նա շարադրում է մի գիրք «հմաստուն բանիք, յորում խօսի ի վերայ թույ երկնից աստեղաց և շարժման լուսաւորաց և կարգի տարերաց և եղանակաց տարոյ և ի վերայ այլոց բնական իրաց»<sup>13</sup>:

1443 թվին հիշվում է ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԱՍՏԱՆՑԻՆ, որպես Վիրահայոց թեմի առաջնորդ<sup>14</sup>:

1496–ից 1515 թթ. Վիրահայոց թեմի առաջնորդ է եղել ՄԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԱՍՏԱՆՑԻՆ, որը նետագայում օծվում է կաթողիկոս Սարգիս Դ. Վրաստանցի անունով 1520–1536 թթ.<sup>15</sup>:

1722 և 1723 թթ. հիշվում է ՄԻՒՍԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՐՎԵԶՅԱՆԸ, որպես Վիրահայոց թեմի առաջնորդ<sup>16</sup>: Սա նամակով ուզմական միջամտություն խնդրեց Պետրոս առաջին ցարից Հայաստանի փրկության համար, և նրա խնդրանքը անհետևանք չմնաց:

1740 թվին հիշվում է ԱՆԱՆԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ որպես Թիֆլիսի հայոց առաջնորդ<sup>17</sup>:

1765 թվին Տիգիսի հայոց առաջնորդ է եղել ԶԱՔԱՐԻԱ անունով մի ՎԱՐԴԱՊԵՏ<sup>18</sup>:

<sup>11</sup> Տես՝ Մ. Զամենան, «Պատմութիւն հայոց», հ. 3, Վենետիկ 1786, էջ 132:

<sup>12</sup> Տես՝ նոյնը, էջ 272:

<sup>13</sup> Տես՝ նոյնը, էջ 272–273:

<sup>14</sup> Տես՝ Մ. Օրմանեան, «Ազգապատում», հոդ. 1466:

<sup>15</sup> Տես՝ նոյնը, հոդ. 1535:

<sup>16</sup> Տես՝ Մ. Օրմանեան, «Ազգապատում», հոդ. 1981, նաև՝ Լեռ, հ. 5, Երևան, 1986 թ., էջ 459–460:

<sup>17</sup> Տես՝ Դիլան հայոց պատմության», Գիրք 1, Երևան Գ. Ա. հրատ., 1984, էջ 130:

<sup>18</sup> Տես՝ Մ. Օրմանեան, «Ազգապատում», հոդ. 2092:

1769 թվին, որպես Տիգրանի հայոց առաջնորդ, հիշվում է ՄԱՐՏԻՐՈՍ ԱՆԿՈԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ, որին Սիմեոն կաթողիկոսը հատուկ պաշտոնով Ախալցխա է ողարկում<sup>19</sup>:

1773թ. Թիգրանի առաջնորդ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ծայրագույն վարդապետության իշխանություն է ստանում Սիմեոն կաթողիկոսից<sup>20</sup>:

### ՎԵՐՁԻՆ 200 ՏԱՐՎԱ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔԸ

Հնարավորության սահմաններում մեր ձերած գրականության տղյալների հիման վրա, ըստ հաջորդականության, կազմել ենք Վրաստաճ հայոց թեմի հոգևոր առաջնորդների վերջին 200 տարվա ամբողջական ցուցակը:

Հուսով ենք, որ նետագա ուսումնասիրությունների շնորհիվ կհայտնաբերվեն այնպիսի աղբյուրներ, որոնցով հնարավոր կլիմի կազմել նաև հայորդ դարերի թեմակալ առաջնորդների ամբողջական գավագանագիրքը:

### Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ն Ե Ր

#### ԱՌԱՋՆՈՐԴՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

—1781

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԱՆԱՔԵՌԻՑԻ: 1781 թվի հունվարին Ղուկաս կաթողիկոսը Հովհաննես վարդապետին «Ոչ բարոք վարիք ընդ ժողովրդեան» պատճառով Թքիլիսից տեղափոխում է Մայր Աթոռ, տալով նրան նոր պաշտոն՝ «Ցորենոյ ժողովարար»<sup>21</sup>:

1781—1784

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԸՆՉԱՅԻ կամ ՀՆՉԱՅԻ (ՄԵԼԻՔ-ՅԱՆ): Եղել է «Հանճարունակ» և «Աստվածիմաստ» վարդապետ: Եղել է նաև տաղերգու: Եսիսկրպոսական աստիճանն ու արքության պատիվն ստացել է 1784 թվից հետո: 1784 թվի դեկտեմբերին Ղուկաս Ա. կաթողիկոսի հրամանով փոխադրվում է Մայր Աթոռ՝ նոր պաշտոն ստանձնելու: Ծնվել է Կարինի Հինձն գյուղում, վախճանվել է 1790 թ.<sup>22</sup>:

1784—1795

ՄԱՐՏԻՐՈՍ Ա.ՐԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԿՈԹ: Շանաշված է եղել որպես «խոհեմազարդ» հոգևորական: Սրա պաշտոնավարության շրջանում կարճ ժամանակով Վիրահայոց թեմի առաջնորդ է նշանակվում ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ, որը հիվանդության պատճառով 1792 թվին վերադառնում է Մայր Աթոռ, և կրկին առաջնորդ է նշանակվում Մարտիրոս Ամենութը:

<sup>19</sup> Տես՝ Առյնը, հոդ. 2007:

<sup>20</sup> Տես՝ «Արարատ», 1876, էջ 174:

<sup>21</sup> Դիման հայոց պատմության, գիրք առաջին, Երևան, 1984 թ., էջ 196, 200:

<sup>22</sup> Տես՝ Գառնիկ Ստեփանյան, «Աննագրական բառարան», տպ. Երևան:

Աղա Մահմեդ խանի արշավանքների ժամանակ եղուզակները թալանում են Մայր Աթոռի 21 սալլարեն հարստությունը, որը ապահովության համար տարվում էր Թիֆլիսի: Վեց սալլարենը ուղեկցվում էր Մարտիրոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ, որին նոյնական գերեվարում են: Հայերը փրկագին են տալիս և ազատում Մարտիրոս արքեպիսկոպոսին:

Դուկան կաթողիկոսն այս առթիվ մեղադրում է Անկորին և նրա բարկությունը երբեք չի մեղմանում: Կաթողիկոսը հատկապես ցավում էր Ղազար կաթողիկոսի թագի, վակասի և շորջառի համար:

Մարտիրոս արքեպիսկոպոսը մահանում է վշտից 1795 թվին<sup>23</sup>:

1795—1798

**ԱՎԵՏԻՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ**<sup>24</sup>: Միա առաջնորդական տարեթվերը տրված են հավանական ժամանակագրությամբ:

1798—1802

**ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**: Արդությանի 12 նոյեմբեր 1800 թվակիր ճամանակում Սարգիս արքեպիսկոպոսը հիշվում է որպես Թիֆլիսի հայոց առաջնորդ<sup>25</sup>: Իր եղբոր՝ Սովորից Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո, 1792 թվին, Գանձակում օծվում է կաթողիկոս: Քաղաքական պատճառներով 1798 թվին փախչում է Թիֆլիսի և Դուկան կաթողիկոսի կողմից Աշանակում Հաղպատի վանքի առաջնորդ վրաց Գեղրդի թագավորի միջնորդությամբ: 1802 թ. գնում է Գանձասար և օգտագործում կաթողիկոսական տիտղոսն ու կնիքը: 1815 թ. Եփրեմ կաթողիկոսը և Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին ուսական պետության համաձայնությամբ վերացնում են Գանձասարի կաթողիկոսությունը՝ այն վերածելով մետրոպոլիտության կամ արքեպիսկոպոսության: Սարգիս մետրոպոլիտը 1828 թ. ծանր հիանդանությունից հետո վախճանվում է: Նրան հաջորդում է իր եղբորորդի Բաղդասար արքեպիսկոպոսը իբրև մետրոպոլիտ:

1802—1810

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԿՆԵՑԻ ԳԵՂԱՐԴԱԿԻՐ**: 1798 թվին Թիֆլիսում տարածված ժանտախուի ժամանակ վրաց Գեղրդի թագավորը խնդրում է հայոց Դուկան կաթողիկոսին, որ Ս. Գեղարդը Թիֆլիս ուղարկեն: Նա հավատում էր, որ Ս. Գեղարդը (Անգալը, որով հոռմացի զինվորը խոցել էր Քրիստոսի աջ կողը խաչի վրա) կարող է իր զորությամբ վերացնել համաճարակը: Դուկան կաթողիկոսը 1798 թ. նոյեմբերի 3-ին Ս. Գեղարդու ուղարկում է Թիֆլիս Հովհաննես արքեպիսկոպոսի հետ: Այսպիսով Հովհաննես արքեպիսկոպոսն ստանում է Գեղարդակիր անունը<sup>26</sup>: Վախճանվել է 1810 թվին:

1810—1814

**ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**: Առաջնորդ է Աշանակվել Եփրեմ կաթողիկոսի կողմից 1810 թվին: Սա 1813 թվի նոյեմբերի 22-ին Թիֆլիսի հայոց Հարանց վանքի եկեղեցու հանդիսավոր իրադրության մեջ

<sup>23</sup> Օրմանեան, «Ազգապատում» հոդ. 2201:

<sup>24</sup> Ա. Երիցեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք, Բատոր Ա. Թիֆլիս, 1894 թ., էջ 97:

<sup>25</sup> Նոյնական, Բատոր Ա., Թիֆլիս, էջ 9:

<sup>26</sup> Օրմանեան, «Ազգապատում» հոդ. 2203:

կարդում է ուսաց Ալեքսանդր Ա. կայսեր հրովարտակը ուսերեն և հայեցին լեզուներով: Սպա մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ:

1814 թվին Եփին կաթողիկոսը Մայր Աշոռ է կանչում Աստվածատուր արքեպիսկոպոսին և նրա փոխարեն Վրաստանի հայոց տուածնորդ է հշանակում 44-ամյա Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցուն<sup>27</sup>:

1814—1828

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ: Եկեղեցական, մը շակութային ականավոր գործիչ, ազգային-ազատագրական շարժման ռահվիրա: Ավագանի անունը եղել է Թորոս: Որդին էր Տեր Հարություն քահա-



նա Շահազիզանի: Մայրը բյուրականցի մի հայունի էր Սուսամբար անով: Ծնվել է 1770 թ. փետրվարի 13-ին Աշտարակում: 1791 թ. ձեռնադրը վել է սարկավագ: 1794 թվին՝ վարդապետ: 1808 թվին՝ եպիսկոպոս և արքեպիսկոպոս: 1814 թ. մարտի 7-ին նշանակվում է վիրահայոց թեմի տուածնորդ: 1822 թ. Սուրբ Ալոնյանց քահանայից տոնին, փետրվարի 7-ին կատարում է հիմնօրինները<sup>28</sup> Թիֆլիսի Ներսիսան դպրոցի՝ Աերկայությամբ

<sup>27</sup> Նույն, Բոդ. 2333, 2341 և Ա. Երիցեան, «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք», Հ. Ա., Թրիլիսի, էջ 67-ից 73:

<sup>28</sup> Առ. Մալխասեան, Համառու պատմութիւն Ներսիսան նոգար դպրոցի, Թիֆլիս, 1900 թ., էջ 17:

Երմոլով կուսակալի: Ներսիսյան դպրոցի շինությունն ավարտվում է 1824 թ. և նոյն տարվա դեկտեմբերի 1-ին այն քացվում է ձեռամբ Հարություն քահանա Ալամդարյանի: 1828 թվին Պասկիչի կարգադրությամբ Աշտարակեցման ուղարկում են Բեսարաբիա որպես Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ: Դա մի տեսակ պարտադրված ազատ արքոր էր:

1828—1829 թթ. Ներսես Աշտարակեցին կազմակերպել է հայերի Աերգաղյուղականությունը և Թուրքիայից: Կարճ նահանջից մոտ 90.000 հայեր տեղափոխվել են Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում:

1843 թ. օծվել է Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Ե անունով:

Ապրել է փոխ առ փոխ Էջմիածնում և Թբիլիսիում: Աշտարակեցուց հիշատակ են մնացել. Թբիլիսիում Ներսիսյան դպրոցի շենքը, Էջմիածնում՝ Ներսիսյան լիճը և Ներսիսյան անուառը:

Ներսես Ե կաթողիկոսը վախճանվել է 1857 թ. փետրվարի 13-ին, 87 տարեկան հասակում Թբիլիսիի հայոց առաջնորդարանի գրասեղանի առջև: Հետագայում նրա մարմինը տեղափոխվում են Ս. Էջմիածին:

1828—1830

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՐԱԽԱՆՑԻ ԱԼԱՄԴԱՌԱՆ: Ավագանի անունը՝ Գևորգ: Եկեղեցական, հասարական-քաղաքական գործիչ, բանաստեղծ և մանկավարժ: Մնվել է 1795 թ. հունվարի 14-ին: Հոր ա-



նուն՝ Մանուկ: Լազարյանների կողմից 1813 թ. նրավիրվում է Մոսկվա և նրանց մոտ աշխատում որպես գրագիր: 1815 թ. հիմնադրվում է Լազարյան ճեմարանը: Ալամդարյանը եղել է Լազարյան ճեմարանի տեսուչ և ուսուցիչ: 1824—1830 թթ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ:

Դպրոցի պատմության մեջ այդ տարիները հայտնի են «ղար Ալամդարյան» անունով: Նրա առաջնորդության տարիներին վիրահայոց թեմի հո-

գետը գործերի և եկեղեցական վարչության նախանդամ է եղել ՄԻՄԵՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԶՆՈՒԽՆԻԸ (Թոփալ):

Հարություն վարդապետ Ալամդարյանը մեղադրվել է որպես Ներսես Աշտարակեցու գաղափարակից: Ի. Պատկեփի թելադրանքով Ս. Էջմիածնի Սինոդը 1830 թ. նրան աքսորել է Հաղպատ: Մեկ տարի անց, 1831 թ. նա նշանակվել է Նոր Նախիչևանի Ս. Խաչ վանքի վանահայր, որ և 1834 թ. մայիսի 25-ին գազանաբար սպանվել է ավագակների կողմից, և վաճքը թալանվել:

Ալամդարյանը համարվում է իր ժամանակի ակնառու մտավորականներից մեկը:

1830—1831

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԲԵՑԻ.—Ծնվել է Կարբի գյուղին մաս կազմող Հովհաննեավանք գյուղակոմ 1762 թ.: Աշակերտել է Մուղնու վանական դպրոցում և Ս. Էջմիածնի ճեմարանում: Կուսակրոն քա-



հանա է ձեռնադրվել Դուկաս կաթողիկոսի օրոք: 1807 թ. Դանիել կաթողիկոսի ձեռամբ օծվել է եպիսկոպոս և Աշանակվել վիրահայոց թեմի առաջնորդ: Իր առաջնորդության շրջանում ամեն կերպ աշխատել է նստմացնել Ներսես Աշտարակեցու կատարած գործերը և նստմացնելով՝ վերացնել նրա թուած ազդեցությունը:

1831 թ. Կարբեցին ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ը անունով: Նա ընդունեց հայոց կաթողիկոսներին պատմականորեն թվահամարով որոշելու սկզբունքը: Նրա օրոք՝ 1836 թ. նաստատվեց «Պոլոնենի» ոուսամայերի ազգային-մշակութային իրավունքների կանոնադրությունը:

Կարբեցին վախճանվել է 1842 թվի մարտի 26-ին Ս. Էջմիածնում, որ և թաղված է Մայրավանքի զանգսկատան հուսափային պատի մոտ։ Կարբեցոց հիշատակ է մնացել Ս. Էջմիածնի Սինօդի շենքը<sup>29</sup>:

1832—1836

**ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՂՈՒԽՅՑԱՆ**.—1832 թ. վիրահայոց թեմի առաջնորդության համար կային երկու թեկնածուներ՝ Ստեփանոս Արդության և Զաքարիա Գոլասպյան արքեպիսկոպոսները։ Արդությանը ընտրվեց Վիրահայոց թեմի առաջնորդ, իսկ Գոլասպյանը՝ Երևանի թեմակալ առաջնորդի փոխանորդ։ Գոլասպյանը չգոհացավ իր պաշտոնվ և որպես Հովհաննես Ը Կարբեցու հին համակիր, Արա իշխանության տակ դրվեց նաև Հաղպատի վանահայրությունը։ Ապա, մեկնելով Թրիլիսի, Գրիգոր Բեհրության ազդեցիկ իշխանի միջոցով նա կամեցավ Ղազախն ու Բորչալուն անջատել Թիֆլիսի հայոց թեմից և միացնել Հաղպատին, սակայն Արդության ընդդիմացավ, և Գոլասպյանի ցանկությունը չկատարվեց։

Ստեփանոս Արդության արքեպիսկոպոսը իր քառամյա առաջնորդության շրջանում ենթարկվեց Բոգերանական ծանր ճնշումների Գոլասպյանի, իշխան Գ. Բեհրությանի, ինչպես նաև Հովհաննես Ը կաթողիկոսի կողմից։ Վերջինս հակառակորդ էր Աշտարակեցուն և ձգտում էր Վրաստանի թեմակալ առաջնորդ Արդության արքեպիսկոպոսի միջոցով վճարել Աշտարակեցուն։ Նա ուզում էր Ներսես Աշտարակեցու հիմնադրամ Ներսիսյան դպրոցի անունը փոխել և այն կոչել «Վարժարան Էջմիածնի ի Տփդիս»։ Նա նովճիսկ ծրագրել էր դպրոցի շենքը վաճառքի հանել Ներսեսի անունը ջննջելու համար։ Աշտարակեցու կողմնակիցները հորդորում էին նրան, որ հրապարակայնորեն հանդես գա, բայց մեծ հոգնորականը հանգստացնում էր նրանց ասելով. «Եթէ զբարիս ընկալաք ի ձեռանէ Տեառնէ, չարեացն ո՞չ համբերիցեմք»։

Ծոսով, 1835 թ. Զաքարիա Գոլասպյան արքեպիսկոպոսը վախճանվում է, իսկ 1836 թ. Արդությանը տեղափոխվում է Երևան, և այդպիսով փակվում է Թրիլիսի հարցը<sup>30</sup>:

Արդությանը եպիսկոպոսական օծում է ստացել 1832 թ. մայիսի 28-ին, իսկ արքության պատիվ՝ 1835 թ.: Նա կառուցել տվեց վիրահայոց թեմի եռամբարկ առաջնորդարանը Թրիլիսիում։ Ստեփանոս արքեպիսկոպոսը Սանահին վաճրին է նվիրել մի մասնատուի Ս. Գրիգոր Աղվանից կաթողիկոսի նշխարներով<sup>31</sup>:

<sup>29</sup> Տես՝ Հ. Ս. Հանրագիտարան և Օրմանեան, «Ազգապատում», հոդված 2334:

<sup>30</sup> Օրմանեան, «Ազգապատում», հոդ. 2507:

<sup>31</sup> Սարգս Վրդ. Զաղակեան, «Ծանապարհորդություն ի Մեծն Հայաստան», հատոր Ա, Տփդիս, 1842, էջ 52:

1837—1856

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. — Եկեղեցական  
և հասարակական գործիչ: Ավագանի անունը՝ Հովհաննես: Սերված է իշ-  
խանական ցեղից: Նախապես հայտնի է եղել Եղիկյան ազգանունով: Հոր ա-  
նունը Գրիգոր, մորը՝ Արեգական: Կարապետ արքեպիսկոպոս ծնվել է Կա-  
րինում (Էրզրում) 1779 թ. մայիսի 18-ին: Սովորել է Ակնում, ապա՝ Կ. Պոլ-  
սում: 1801 թ. ձեռնադրվում է վարդապետ: 1808 թ. օգոստոսի 21-ին հշա-



ճակվում է Կարինի առաջնորդ: 1811 թվի Յոյեմբերի 2-ին ձեռնադրվում է Եպիսկոպոս ձեռամբ Եփեմ Ա Կաթողիկոսի, ապա նրան շնորհվում է արք-  
եպիսկոպոսի կոչում: Կարապետ արքեպիսկոպոս ունեցել է հաջողակ գո-  
րիշ և ճարտար լեզու: Սշխատանքի մեջ եղել է ամսոնչ, տոկուն մարդ, գոր-  
ծոնյա և հնարամիո հոգևորական:

1829—1830 թթ. Կարինից և նրա շրջակա գյուղերից նա մոտ 50.000 հա-  
յերից քաղաքաց արտագաղթ է կազմակերպվել դեպի Ախալքալաքի, Ախալ-  
քիալի, Ծալքալի, Լոռի-Փամբակի և Ծորագյալի շրջանները: Նա գալթա-  
կանների հետ միաժամանակ Ախալցխան է տեղափոխվել Կարինի և շրջակայ-  
քի եկեղեցիների ամրող սպասքը, եկեղեցական գործերն ու ձեռագործերը,  
որոնց մեջ իր հնությամբ հայտնի է «Ծուղրութիւն Ավելատաբան»:

1837 թ. սեպտեմբերին Կարապետ արքեպիսկոպոս Թրիլիսիում դիմա-  
վորել է Ռուսաստանի Նիկոլայ Առաջին ցարին, ապա տեսակցություն ու-

նեցել նրա հետ և իր համայնքում նվիրյալ ու եռանդուն գործունեության համար արժանացել Նորին Կայսերական Մեծության գովասահքին: Ցարը արտօնություն է տվել նաև հայ գաղթականներին, որ ամբողջ մեկ տարի պետական հարկեր չվճարեն: Իր մատուցած բազում ծառադրությունների համար նա 1838 թ. պարգևատրվել է Ս. Աննայի առաջին կարգի շքանշանով:

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատոսին իր առաջնորդության շորջ քանի տարիների ընթացքում կառուցել է տվել մոտ 80 եկեղեցիներ, ինչպես նաև բազմաթիվ հայկական դպրոցներ, որոնցից հիշատակության արժանի են Նոր Կարապետյան վարժարանը Սխալցխալյում և Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան արական դպրոցը Ախալքալաքում:

Վախճանվել է 1856 թ. և թաղվել Սխալցխալյի Ս. Փրկիչ եկեղեցու գավթում: 1953 թ. նրա աճյունը տեղափոխվել են տեղի քաղաքային գերեզմանատունը: 1985 թվին նրա գերեզմանի վրա կառուցվեց մի մատուռ, որի օրինությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 1-ին՝ նախագահությամբ վիրայաց յեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի<sup>32</sup>:

Կարապետ սրբազն արքեպիսկոպոսի գերեզմանը այժմ վերածված է ոխտանելիի:

1857—1861

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱԼԱՅՅԱՆՑ.—Եկեղեցական ականավոր գործիչ, բանասեր, հնէաբան, գրող: Սերվել է Խաչենի Հասան-



Հայալլանների տոհմից: Ծնվել է 1819 թվին: Ծանապարհորդել է Արևելյան Հայաստանում և գրի առել պատմական արժեք ներկայացնող մի շարք նո-

<sup>32</sup> «Էջմիածին» ամսագիր, 1985, ԺԱ—ԺԲ, էջ 85:

Ասգիտական նույթեր ճոխ նկարագրություններով հետևյալ գրքում. «Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (մ. 1—2, 1842 և 1856 թթ.): Սարգիս Զալալյանց արքեպիսկոպոսը 1861 թվին իր ավարտին է հասցնում Թրիլիսիում վիրաբանոց առաջնորդարանի շենքի կառուցումը: Այդ մասին կա մի արձանագրություն, որ գետեղված է նաև Պ. Ս. Մուրադյանի «Վրաստանի հայերեն արձանագրությունները» գրքում (Երևան, 1988 թ., էջ 57, որութեն լեզվով): Արձանագրության բովանդակությունը հետևյալն է. «Ի լրումն բանուր կտակի հոգեւոր ծնողի իմոյ Տեսոն Ներսիսի ազգաւէր կաթողիկոսի Ամենայն Հայոց աւարտեցի զառացնորդարանն Տփղիսոյ ի 1861 ամի ես՝ Սարգիս նույթ եպիսկոպոս Հայան-Զալալեանց: Աղաչեմ յիշել զիս յայն աւոր յորում բանք սպատին և գործք թագաւորեն»:

Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը հայ հոգեւոր, մշակութային և կրթական հաստատությունների համար 1880 թվին կտակել է 25.000 ռուբլի՝ օգտագործվելով համար 2005 թվականին, երբ գումարը 125 տարվա ընթացքում կհասնի 12 միլիոնի:

Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը վախճանվել է 1879 թվին 60 տարեկան հասակում:

#### 1864—1876

**ՍԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԵՂՈՒՏՅԻ (ՏԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ).**  
— Ծնվել է Մուշի նահանգի Թեղուտ գյուղում 1813 թվին: Որդին է Հազրոյնց Տեր Պետրոս քահանայի: 1828—1834 թթ. սովորել է Ս. Էջմիածնի ժա-



ունգավորաց վարժարանում: 1842 թ. ձեռնադրվել է վարդապետ, իսկ մի տարի անց Աշանակվել է Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի տեսառուս, որ միաժամանակ զբաղվել է դասախոսական աշխատանքով: Ծրջագայել է Պարսկաստանի, Թուրքիայի, Օտտանաստանի հայաշատ շրջաններ և հավաքել բազմաթիվ հայերեն ձեռագրեր, որոնցով հարստացրել է Ս. Էջմիածնի մատենադարանը:

1848 թ. ընտրվել է Ս. Սինոդի անդամ, իսկ 1849 թ. նշանակվել է Ս. Էջմիածնի ժատենադարանի վարիչ: 1852 թ. ապրիլի 12-ին ստանում է ծայրագոյն վարդապետական աստիճան և նույն թվի օգոստոսի 15-ին ձեռնարկվում է եպիսկոպոս, ապա 1859 թ. նրան շնորհվում է արքության պատիվ: 1862 թվին նշանակվում է Տիֆլիսի կառավարիչ և 1864 թ. մարտի 15-ին նույն վիճակի առաջնորդ:

1876 թ. փետրվարի 20-ին Թեղուտցին Նոր-Նախիչևնանի և Բեսարաբիայի առաջնորդ է: Նա այդ պաշտոնը վարում է մինչև 1885 թվականը, երբ Ազգային-Ենթերեցական ժողովի կողմից ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս:

Մակար կաթողիկոսը իր փորձառությամբ և խոհականությամբ իր վեց տարվա կաթողիկոսության շրջանում ունեցավ արդյունավետ գործունեություն, ասկային նա միշտ սիրում էր Կրկնել. «Մարդը գործի կողչեն, երբ արդեն ուժաթափ եղած է»:

Մակար կաթողիկոսը 1888 թ. սկսել է կատարել Մայր Տաճարի վերաբերողությունը: Վերջին անգամ Մայր Տաճարը վերանորոգվել էր Մովսես Գ Տաթևացի (1629—1632 թթ.) կաթողիկոսի կողմից: Մակար կաթողիկոսի հաջորդ մեծ ձեռնարկումը Մայր Աթոռի տաճարն հիմնարկեցն էր:

Մակար կաթողիկոսն էր, որ, առաջին անգամ լինելով, Գերմանիա ուսման ողբարկեց երկու սարկավագներ՝ Կարապետ Տեր-Մկրտչյանին՝ ասովածարանության մեջ խորանալու, իսկ Սոլոմոն Սոլոմոնյանին՝ (Կոմիտաս վարդապետ) երաժշտության մեջ:

Մակար Թեղուտցու շանթերով հնարավոր եղավ ստանալ ցարական արքունիքի թույլատվությունը Հայաստանում հայկական դպրոցները վերաբերյալ և կաթողիկոսական իրավունքները վերականգնելու:

Մակար կաթողիկոսը վախճանվել է 1891 թ. և թաղվել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատան մոտ: (Տես Մ. Օրմանեան «Ազգապատում», հատոր Գ, հոդ. 2917, 2945, 2951, 2952: Գ. Ստեփանյան «Կենսագրական բառարան»: Հ. Ս. Հ. հատոր 7):

## 1876—1880

**ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱՋՅԱՆ**.—Հայ եկեղեցական գործիչ: Եղել է խմբագիր, բանաեր, պատմաբան, գրող, թարգմանիչ և մանկավարժ: Ծնվել է 1812 թ. մայիսի 10-ին Թեղուտիայում: Որդին է Եղել Մողդավիայից գաղթած Գևորգ Այվազի կամ Հայվազի (հետագայում Կուտանդին Հայվազովսկի) անունով մի մանր առևտրականի և եղբայրը աշխարհահուշակ ծովանկարիչ Հովհաննես (Խվան) Այվազովսկու:

1826—1830 թթ. ստվորել է Ս. Ղազարում (Վենետիկ): 1830 թ. դառնում է Մխիթարյան միաբանության անդամ, իսկ 1834 թ. ձեռնադրվում վարդապետ: Վանքում գործում է որպես միաբանության ընդհանուր քարտուղար: Մխիթարյան վարժարանում դասավանդում է աստվածաբանություն, փիլիսոփայություն, ինչպես նաև արևելյան և եվրոպական լեզուներ: Եղել է Սլիշանի դաստիարակը: 1843-ից 1848 թթ. խմբագրում է «Բագմավեկ» ամսագիրը՝ լինելով նրա առաջին խմբագիրը: 1848 թ. նշանակվում է Փարիզի Մուրադյան վարժարանի տնօրին և այդ պաշտոնը վարում է մինչև 1855 թվականը: Նույն տարին նա այդ վարժարանում դասավանդում է հայ ժողովրդի պատմություն և հայոց լեզու:

1855 թ. գմտվելով միաժարյանների հետ՝ հրաժարվում է կաթողիկոպյանց: Նա Խորեն Գալֆայանի և Սարգսի Թեղողորյանի հետ Փարիզում հիմնում է Հայկացյան վարժարանը, սկսում խմբագրել և հրատարակել «Մատաց աղանձ» ամսագիրը հայերեն և ֆրանսերեն լեզուներով:

1858 թ. Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով գրքուղվում է Թեղողոսիա, ուր հիմնում է Խոակիրյան վարժարանը և ստանձնում այդ կողմական հրաժարական տեսչության պաշտոնը: Թեղողոսիայում շարունակում է հրատարակել «Մատաց աղանձ»-ը հայերեն և ոռուերեն լեզուներով մինչև 1865 թվականը: Խոակիրյան վարժարանը փակվոյն է 1871 թվին:

Գաբրիել արքեպիսկոպոսը եսիսկոպոսական աստիճան է ստացել 1867 թ., իսկ արքության պատիվ՝ 1871 թվին Գևորգ Դ կաթողիկոսի կողմից: 1875—1876 թթ. նշանակվում է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ, իսկ 1876-ից 1880 թթ. վիրահայոց թեմի առաջնորդ:

Գաբրիել արքեպիսկոպոսը վախճանվում է Թբիլիսիում 1880 թ. և թաղվում վանքի գավթուն: 1977 թվին նրա աճյունը մեծ հանդիսությամբ և հոգևոր արարողություններով տեղափոխվում է և ամփոփվում Ս. Գևորգ Մայր Եկեղեցու գավթուն, Խորեն եսիսկոպոսությաների, Սրբար Հովհաննեարանի և Պետրոս Սիմոնյանի աճյունների հետ միասին:

1880—1881

ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ ՔԵՐԵՍ-ՏԵՋՅԱՆ.—Գաբրիել արքեպիսկոպոսի մահից հետո Վեհափառ կաթողիկո-



ոլ «Հկամենալով առանց միսիթարութեան բողնել Թիֆլիս քաղաքի իր սիրահի ժողովուրդը՝ և մինչև ընտրութիւն արժանաւորագումին առաջնորդութեան պաշտօնի անունը առժամանակեայ Վերապահելով լինըն, հրամայեց Թիֆլիսի Կոնսիսորիին շարունակել իր գործերը ընդ նախագահութեամբ շնորհունակ Մամբրէ վարդապետ Սահմանարեանի և անմիտար չթողնելով համար ժողովուրդը հոգևորապէս, բարեհաճեց իր կողմից նշանակել Գեղազնորի Գրիգոր Եպիսկոպոս։ Աղափիրեանին, որ քարոզէ և միսիթարէ ժողովուրդը պէտք եղած օրերին, պատարագէ հինգ տաղապի տօներից...»<sup>33</sup>։

Գևորգ Դ կաթողիկոսը ծնվել է 1813 թ. հուլիսի 7-ին։ Սովորել է Կ. Պոլսի ժառանգավորաց վարժարանում։ 1835 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1848 թվին՝ Եպիսկոպոս։ 1844 թվին նշանակվել է Բրուսայի հայոց առաջնորդ։ 1858 թ. հոկտեմբերի 17-ին ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք։ 1860 թ. ապրիլի 21-ին Ազգային Սահմանադրությանը դեմ դուրս գալով՝ հրաժարվել է պատրիարքական պաշտոնից։ 1861 թ. հոկտեմբերից նա կրկին Բրուսայի թեմի առաջնորդ է։ 1866 թ. ընտրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս։ 1868 թ. հիմնել է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը և կառուցել Ս. Էջմիածնի թանգարանը։ Կարգավորել է մայրավանքի տպարանն ու մատունադարանը։ Գևորգ Դ կաթողիկոսը հիմնադրել է նաև Էջմիածնի Գևորգան ճեմարանը, իսկ 1879 թվին կառուցել է Օշականի Եկեղեցին Ս. Միարոպ Մաշտոցի գերեզմանի վրա։ Կանոնավորել է հայ հոգևոր երաժշտությունը։

Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսը վախճանվել է 1882 թ. դեկտեմբերի 6-ին Ս. Էջմիածնում։

1881—1889

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂՐԱԿՅԱՆ (ՄԵԼԻՔ-ԱՌԱՋԵԼ-



<sup>33</sup> «Արարատ», 1880 թ., էջ 365—366։

ՅԱՆ).—Հայ Եկեղեցական գործիչ, բանասեր, պատմաբան, գրքերի հեղինակ: Ծնվել է 1845 թ. օգոստոսի 23-ին Երևանի նահանգի Խալֆալու գյուղում: Հոր ամուսն՝ Ստեփակ: 1869—1882 թթ. եղել է Երևանի Ս. Կարապետ և Էջմիածնի Ս. Գայանե վանքերի վանահայր: 1874—76 թթ. նա Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ է, իսկ 1891—93 թթ.. նոյն ճեմարանի տեսչ: Վարել է Տաթևի, Արցախի, Վրաստանի, Խմերեթիայի և Սատրափյանի հայոց թեմերի առաջնորդության պաշտոնները: Ուսումնասիրել և Ակարագրել է հայոց պատմությանը և մշակոյթին վերաբերող բազմաթիվ հիշատակառներ, հայկական բանահյուսության հմուշներ: 1894 թ. հրատարակել է «Հովհաննես Եպիսկոպոս Շամիսաթումանցի կենսագրությունը»: Ունի աշխատասիրություններ հայ Եկեղեցու պատմության և դավանարանության վերաբերյալ: Հիշատակության արժանի են 1904 թ. Ս. Պետերբուրգում հրատարակված «Հայաստանեաց Եկեղեցու պատկերաբարգութիւնը» ծավալուն աշխատության առաջին մասը: (Երկրորդ մասը լույս չի տեսել), «Ամունական խնդիրներ» (1891 թ.), «Համանայական խնդիրներ» (1900 թ.) աշխատությունները: Ունի նաև թարգմանություններ, անտիպ գործեր և այլն: Վախճանվել է 1906 թ. նոյնմերի 10-ին Վաղարշապատում<sup>34</sup>:

1889—1892

ՄԱՄԲՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍՐՅԱՆ.—Ծնվել է 1844 թ.: Սովորել է Ս. Էջմիածնի Ժառանգավորաց ղպրոցում: 1864 թ. ձեռնադրվել է ասրկավագ, 1865 թվին՝ վարդապետ: 1868 թ. ճշանակվել է Գորոս (Վրաստան) հայոց վիճակի առաջնորդական փոխանորդ: 1871 թ. ստանձնել է Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահյուրության պաշտոնը: 1875 թ. կարգվել է քննիչ Նոր-Բայազեդի գալաքի նոգեստ գործերի: 1877 թ. նա առաջնորդական փոխանորդ է Հին-Նախիջևանի վիճակի, ապա՝ ճախանդամ Թթիլիսիի Կոնսիսորիայի և վանահայր Ս. Մարգիս ուստատեղիի: 1883 թ. ճշանակվում է առաջնորդական փոխանորդ Ախալցխայի վիճակի, իսկ 1884 թվին՝ անդամ Ս. Էջմիածնի Սինոդի: 1886 թ. Մակար Ա. կաթողիկոսի կողմից ձեռնադրվում է Եպիսկոպոս և 1889 թ. ճախանդամ վիրահայոց թեմի առաջնորդ: Այդ պաշտոնում էլ նա կնքում է իր մահկանացուն 1892 թ. օգոստոսի 1-ին Կոչորի (Վրաստան) ամառանոցում, երկարատև հիվանդությունից հետո, 48 տարեկան հասակում:

Մամբրե Եպիսկոպոսը պարգևատրվել է ծաղկա փիլոնով, լանջախաչով, Եպիսկոպոսական պանակեռով և Ս. Աննայի 2-րդ կարգի շքանշանով<sup>35</sup>:

<sup>34</sup> Տես՝ Հ. Ս. Համբագիտարան, հատոր 10:

<sup>35</sup> Տես՝ «Արքատ», 1892 թ., էջ 768:

1894—1904

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ՏՓՂԻՄԵՑԻ<sup>36</sup>—  
Մակել է Թքիլիսիում 1847 թ. օգոստոսի 28-ին: 1872 թվին ձեռնադրվում է  
վարդապետ: 1874 թվին Գևորգյան ճեմարանում կոչվում է ուսուցիչ պաշտո-




Այ: 1875 թ. Հարաբաղի թեմի առաջնորդ է և դպրոցների տեսուչ: 1878 թը-  
վականին ճշանակվում է Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդ (կառուցել  
է Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցին): 1882 թ. ձեռնադրվում է  
եսիսկոպոս: 1886 թ. մեկնում է Աստրախան թեմակալ առաջնորդի պաշտո-  
նով: Այնուհետև տասը տարի, 1894—1904 թթ. վարում է վիրահայոց թեմի  
առաջնորդի պաշտոնը: 1907 թ. ընտրվում է կաթողիկոսական տեղապահ, 1912  
թվին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս: Նրա գահակալության տարինե-  
րը Հայաստանում եղել են քաղաքական փոթորկալի վերիվայրումների ծա-  
նրը մի ժամանակաշրջան: Այդ պատճառով նա իր պաշտոնական գործուն-  
եան ու կոնդակներն ստորագրել է «Վշտակի կաթողիկոս»: Նրա հմր. 349  
կոմակի հրահանգով 1924 թվի հունվարի 1-ից Հայաստանյաց Եկեղեցից  
պաշտոնապես ընդունում է նոր տոմարը: Բացառության կարգով հունադա-  
վան երկրներում հայ եկեղեցիներին արտոնվում է նախկինի նման դեկա-  
վարվել հին տոմարով:

Երշանկահիշատակ Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը վախճանվել է  
Ս. Էջմիածնում 1930 թվի մայիսի 8-ին և թաղվել Ս. Էջմիածնի Մայր Տա-  
ճարի զանգակատան մոտ:

(Ծարունակելի)

<sup>36</sup> Տես՝ Հ. Ս. Հանրագիտարան, հատոր 3, էջ 19:



## ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՀՈԳԵՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԾԱՆԱՊԱՐՀԸ

Եկեղեցու ճանաչված գործի համար բանաստեղծությունը հոգնությունից ելք փնտրելու վարժանք չէ, ինչպես ժամանակին վարդպում էին Մխիթարյան միաբանության գիտնական արքեպ' առօրյա խճողումներից դիմելով սիրողական «զբոսանքների»։ Այս պարագայում Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի բանաստեղծական որոշումները հետամտում են կյանքի օրինաչափ երևույթների գնահատությանը, երբ ամեն ինչ վերատուգվում է աստվածային ավագանում, երբ խճնմտանքի ու հավատի ձայնը տիրապետում է աշխարհիկ բազմաձայնության մեջ։ Անտարակոյս, այս մտավորական թեկադրությամբ է նա ընտրել անպանույն ու անհավակնութ «Ներսես Կանական» գրչանունը։

Երևույթը չի կարելի, ինչ խոսք, բացատրել միայն կրոնական ճանաչողությամբ։ Հարկ է արդեն հիշատակել «հոգևոր» բարի լայնալիք իմաստները, որոնցով ողողվում են մեր ներաշխարհի բոլոր զգացումները, որոնք չեն հանգուի միայն եկեղեցական հակացողության։

Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի կենագործունեությունը եղել և մնում է հայոց առաքելական Եկեղեցուն անմնացրդ ծառայության օրինակ։ Տասը տարի շարունակ, 1982-ից ի վեր, նա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիմանապետն է, որն իրագործում է միաբան համախումբ քաղաքականություն։ Ծնվել է 1937-ին պատմական Կիլիկիայում, գալիք Բեյրութ, որ հանիսել է Նուապարյան ազգային վարժարան։ Անթիվասի Դրեվանքը նրան մեկնեմիշտ կապում է աստվածային խորհրդին։ Եվ պատահական չէ, որ բանամիս հասակում ներգաղթելով Հայաստան՝ Ն. Պողապալյանը ուսումն շարունակում է Մայր Աթոռի հոգևոր մեմարանում, որից հետո կատարելության ձգտումով հասնում Անգլիա և Շվեյցարիա՝ աստվածաբանության հիմնարար կրթություն ստանալով «Հարության քոլեջ»-ում, այնուհետև՝ Ժնևի Էկումենիկ ինստիտուտում։ Էջմիածնի վերադարձից հետո նրան վըստահում են հոգևոր մեմարանի տեսչի աշխատանքը, սակայն որոշ ժամանակ

անց Կաթողիկոսը Արան Աշանակոմ է Ծվեյցարիայի հայոց թեմի հոգևոր հովիլ: Ծուսով Արան Կարեկի էր արդեն տեսնել ամպամած Ավրիլոսում՝ որպես հայ առաքելական Եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդ: 1983-ից ի վեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական մարմնի անդամ է:

Այսօր Առագույն բանաստեղծությանը ներհատուկ է բարդությաներն անընդմեջ հոսքով ընթերցողին «Բանձնելու» միտումը, խճողումը հոգևուցելու չափ ու աստիճանով «վարպետություն» համարելը, որքան գլխապտույտ ու գահավեժ արագությամբ հաջորդեն պատկերակառուցները, որքան խըրթին ու մթամած լինեն Արանը, եթե ընթերցողը հաճուքը որտում է ոչ թե գեղեցիկի շփումից, այլ բանաստեղծական պատկերները որոշակի տեխնիկական «իմացության» շնորհիվ հանաչելու ընդմեջեն,—այնքան, չփոխելու մեջ է թվում քերթվածի գեղագիտական արժանիքը: Սակայն բանաստեղծական պարզությունը երբեք է հակընթաց դասողության չի հանգում:

Հնդհակառակը, Ներսես Վանականը գիտակցորեն ընտրելով պարզ համատառեղծության տիրություն՝ ճշում է և իր վերաբերմունքը, «սպասված» ենթաժամկետի նոր հնարավորությունների նկատմամբ ունեցած հավատը:

— Հին ու սիրած իմ երգերից դուք գիտե՞ք,  
ամօդուած Հարցին ես անցորդներին փողոցի.

Դառն ծպտացին, անպատասխան գնացին,  
Սիրու մնաց ցուրտ գիշերվա ճամփերին:

Եթե ափոփանք՝ հին օրերից անթեղված  
ու մթուրասմինց մի կազմ ջերմացնում է իմ հոգին:

Սա թերևս հիշատակված «առեխնիկական» պակաս դմվարություններ չունի: Այստեղ ագուցվում են պատկերների վճառությունը, բանաստեղծական թեմայի խորունկ ապառակը՝ գլխավոր կիզակեսից բխող պահանջին. պատգամքը մատուցվում է մատչելիության Ազգություն, Արան չեն խառնվում պլազման, կողմնակի խնդիրներ: Երգի պարզությունը բանաստեղծական պլազմի վկայությունն է.

Չարականների, տաղ ու գանձերի  
Երգով եմ ոզում երկինք բարձրանալ  
Եվ իմ երգի մեջ ոզում եմ դեմել  
Իմ ողջ եւլոյտունն ու անէանալ:

Ի՞նչ գգլիս է լինել հանդիման  
Կյանքի արարչին այս սուրբ տաճարում,  
Թորափել այստեղ փառքի ցնցուին,  
Մանկանալ, պարզել ու պայծառանալ:

Ն. Վանականը հրապարակ է հանձն բանաստեղծական մի բանի ժողովածուներ՝ «Տեսիլք Յաւերմական» (Վենետիկ—Ս. Ղազար, 1989), «Հավերժ պատարագ» (Վենետիկ—Ս. Ղազար, 1990), «Ավանդ հավերժական» (Ս. Էջմիածին, 1990), «Քնար հովվական» (Ս. Էջմիածին, 1991): Վերաբերեն արդեն բացահայտորեն հուշում են բանաստեղծությունների կրոնարմատ ողղությունը: Աստվածաշնչյան և ազգային-կրոնական երգերը գեղար-

վեատական թարմ մեկնաբանումներով կազմում են սովոր մաս վերջին առավել ամբողջական ժողովածուի մեջ, որ գետեղված են հետիհանկ' Վերջին տարիներին գրված լավագույն ստեղծագործությունները:

Ուզագրավ է «Քեար հովվական» գրքի մեջ բանատեղի բացած գեղարվեստական ընկալման հոգեւր «պատուհանը», գեղագիտական այն չափակշիռը, որով հասու ենք դառնում ներքին այրման ճյուղավորումներին: Այս իմաստով ծրագրային պիտի դիտել «Սակավ ընտրյալք» բանատեղծությունը, որով եզրափակվում է ժողովածուն, որը բանատեղծական խոսքը ճանաչվում է որպես «անքառ աղոթք», «ուխտի կորորդ», պարզ մարդուն՝ Անհունի հետ՝ «հավերժ կյանքին կապող օղակ»: Այսպիսով, բանատեղծությունը, լինելով հանդերձ «երկինք բարձրացած պահատանը», չի Անհիմակում սույն եկեղեցական «տարածքում», այլ բացվում է հավատավոր աշխարհին՝ միահյուսելով հոգեւր և աշխարհիկ բաց դրամերը: Մեր կարծիքով, այստեղ պիտի որոնել Ն. Վանականի գեղարվեստական աշխարհի դիմորոշ հատկությունը, երա ստեղծագործության՝ աշխարհին պարզված ավազանը: «Հովվական» սահմանման մեջ նախորդված է արդեն հոգեւր-բանատեղծ-առաջնորդը, իսկ «քնարը» այն ազեխի հոգեկանն է, որին մղվում է ընթերցողը, ինչպես հավատացյալը՝ իր ողեկազմը:

Աստծո և աստվածային թեման Ներսէս Վանականի ստեղծագործական տարերքն, Է. հետևելով միջնադարյան տաղերգութերի կառուցղական շարքերին, հոգևոր երգերի, շարականների ավանդական մոտիվներին՝ առ Աստծո կերպարի տակ որոնում է Էորժյան, խորիրդի ակունքը, գոյության իմաստն ու առհավատչյան։ Նրա համար ևս կենական է ճանապարհի ու ճամփորդի իմաստավորումը։ Ծանապարհը դեպի Էորժյան խորը իմքնամքրուն է, սրբացումը, աստվածային հաստղությունը, որի հաճախանքը ժամանակի մեջ դուզել-ինչ որում են միայն բանաստեղծները։ Թումանյանական «քարձրից» հսկվող այդ ճանապարհին Ն. Վանականն արժնորդում է իր առաքելությունը որպես ճամփորդի պայծառատեսություն։ Ճամփորդ, որ թարգմանն է մեր հոյզերի, մեր տագնապների։ «Ոեքիլեմ» ստեղծագործության մեջ խորագնան է դառնում «ճամփորդի» մտասեռումը։ Կարձանուու մեջքերելով Աստծո և աշխարհի քրիստոնեական իմաստալից զրուցը՝ բանաստեղծը փորձում է Ամենարարդյալին հասցել մեր երկրային թրթիմները, մեր կորուստների փիլիսոփայությունը, որոնք տարերի հզորությամբ թափվել են ժողովրդի գլխին։ Լավատեսության հորդորը բխում է մարդասիրության անքան ճանաչումից։

Ուստ' մեզ, Տե՛ր, զոհողություն  
Ներել Առյանիսկ մեր թշնամուն:

«Խոր երախտիքի» բանաստեղծության մեջ քնարական հերոսը Ակատում է և որիշ «ճամփորդների», որոնց բարյական նկարագիրը նախապատրաստել է իր մուտքը, սերմանելով գործի, օրինության ու զոհաբերության հիմնավոր պատգամները: «Փափագ» բանաստեղծությունը նպատակալացրեն բացում է «Ճամփորդի» («Ճամփորդների») ներաշխարհը, ցոյց տպին բարյության հոմանիք: Այսուեղ առանձին չերմությամբ վերաբժանվում է Վ. Տերյանի հերոսի հայտնի ցանկությունը՝ «Լինենի շոքան սարերում էնսեգ», սակայն ժամանակի ու միտումի ընդդեմած լորահատկությունը Ն. Վանականի մոտ որոշակի է: Սիրո հովվերգությանց գալիս է փոխարինելոյ հո-

գլոր բարոյականությունը՝ շաղախած աշխատանքի, բնապաշտության, սրտի պարզության փառաբանումերին: Սրդար աշխատանքից հոգնարեկ՝ ներուր աղորարանում աստվածային խորհրդով լեցուն լույս է սփռում, որպեսին այլևս աստվածահան է ինքը: Քրիստոնեական հրաշքի ճանարիչը, դասական պոեզիայի դասերի հետևողությամբ: Քրիստոնեականը մարդաբարձրության բաց դրուն է, և պատահական չէ, որ այն կապվում է Մ. Մեծարենցի, Հովհ. Թումանյանի բանաստեղծ համակարգի՝ «անանձնական»՝ լույս տալով սպառվելու հումանիստական թեզին, որի նախնական բարձրագույն օրինակը հենց Հիսոս Քրիստոսն է:

Սարի լանջին, պուրակի մոտ,  
Մի հին վանքում ծվարեի,  
Առավոտյան աղոթեի  
Եվ օրնիբուն աշխատեի:

Մոտի առվից շուր բերեի,  
Ծառ ու ծաղիկ ամեցնեի,  
Քրտինքս արդար ես թափեի,  
Ծիլ ու ծաղկին նոր կյանք տայի:  
Երեկոյան խոնջած, դադրած,  
Աղորարան ես մտնեի,  
Մուսի ճաման բոցկտայի,  
Լույս սփռեի, սպառվեի:

Քրիստոնեական թեման Ն. Վանականի բանաստեղծություններում ու կա և ազգային տառապանքի զուգակշիռը. «Ավանդ հավերժական» պոեմում, վերաշարադրելով Տրդատի, կույսերի ու Գրիգոր Լուսավորչի զյույցները, հեղինակը այն դիտում է հայոց աշխարհի պաշտպանության ազնիվ մտահոգությամբ: Պետմի վերջին տունն իր մեջ ամփոփում է բանաստեղծական հետևողական կարևորագույն գաղափարը՝

Ո՞վ հրաշք անձառ, տեսի՞լ դու լուսե,  
Օրինյալ Միամոր Որդի դու, լսե'  
Մեր Լուսավորչի աղերսն անդադար.  
«Լե՛ր հայր ու պաշտպան ազգիս դարե-դար»:

Ն. Վանականի բանաստեղծությունները անընդմեջ կրճատում են մարդու և աստվածային միջև ձգված տարածությունը. Օրս քնարական ներուր իրեն սահմանազատում է առօրյայի կեղևից, ներքին հաղորդակցման դիմաց համառող աղմուկից, երկրային պահ բոլոր հրապուրներից, որոնք կաշկանդում են մարդու ինքնամաքրման ներընթացը: Սրա հետևանքով հովվական երգերի գերակշռող մասում հոգևոր-զգայական գործառույթները ձեռք են բերում առաջնային ներկապնակ՝ դուրս մղելով առարկայական-կենացային մանրամասները: Սա եթե կոգեք՝ հայեցողություն է, սակայն ներծծված հոգու աստվածանանց պազանում: Նոր, կրոնական հակվածությամբ՝ բանաստեղծությունը վերածում է համամարդկային հիմնի, բարության ու լուսի ակոնքի:

Այլուրանդերք, ստեղծվում է մեծ սպասման և սպասման հանդեպ բանաստեղծի հարցադրութարակոյների ներքին դրամատիզմ, որը արդեն անհաջողահարելի է բանաստեղծական պատկերի մեջ, քանի որ քանարկան ներուը դեռ չի գոնում ազգային մոտակողությունների բազում պատասխանները: Նկատվում է, որ Ն. Վանականին չեն բավարարում այն ձևակերպումները, որոնցում առկա են եկեղեցական ավանդապահ հովզերը: Բանաստեղծը դեմ է նաև կրոնական ներազգային մոտիվների «ինֆլյացիային», դեմ է, որովհետև մեկ քայլ է ընդամենը աստվածաշնչային սուրբ պատգամների, հոգնոր-ազգային համադրումների շահարկումից մեզ և իրեն բաժանողը: Ուղղակի նրա համար քրիստոնեությունը բարձրագույն աշխարհայացք է, շահագրգիռ դիրքորոշում, փիլիսոփայական տրվածք, հետո նոր միայն մշակույթի դաշտ:

Բանաստեղծական թեմատիկ ուղղությանը զուգահեռ Ն. Վանականը թափանցում է աշխարհիկ սյումետային բազմապահության մեջ: Այստեղ նրա համար սահմանագիծ է դատմում 1988 թվականը՝ իր երկու հիմնարար ճյուղավորումներով: «Քնար հովքական» ժողովածիվ մեջ առանձին բաժին է հատկացված ազգային զարթոնքի գեղարվեստական արձարծումներին՝ «Հոգ հայրենի» խորագրով: Մարտական աշխայթ շեշտերն են այստեղ բնութագրական: Մավալուն «Հերոսական» ստեղծագործության մեջ մանրամասնորեն վերաշարադրելով ազգային պատմության կեռումանները՝ հեղինակը չի խոսափում գաղափարական հայտնի ուսուցներից: Դրանով նա որոշ շափով վտանգի տակ է դնում գեղարվեստականության տարրը: Սակայն նկատված որոշ զգագածության փոխարեն կարծես նա շահում է պայքարի անկաշկանդ շնչով, որը դառնում է ոգևորիչ ելակետ շարքի մյուս երգերի համար:

Մեր հիշատակած երկրորդ թեման «պարտադրում է» բնությունը: Ավելի թիվ երկրաշարժը փոխում է բանաստեղծի խաղաղ, ներիուն ոճը: Այն դառնում է կրքու, հոգական, միաժամանակ՝ անել ու անընտել ազգակորուց իր խոռվորվ: Համաժողովրդական ողբերգական էջը բանաստեղծություն է մտնում նոյնքան տարերայնորեն: Տիրոջ ողղված խոները, տագնապները բազում հարցականներ ունեն. իրար են ագուցված ազգային շարժման, նորագույն տարագրության, աղետի, վաղվա օրվա մտրումները: Կրտսական անցյալ դասերը հուշում են Տիրոջ «պատմի» փորձի զուգահեռոր: Եվ առանց այլապլության ծնվում են տվալտախ դատողությունները.

Արհավի՞րք էր սա, թե՞ սև պատուհաս,

Մեր գիխին եկած այսքան վաղահաս,

Մեր մեղքը ո՞րն էր, ո՞րն էր մեր հանցանը,

Տե՛ր, աղե՛տ էր սա, թե՞ սև պատուհաս:

Բանաստեղծության մեջ վերհանված հակադրությունները բնական են արդեն իրենց անբնականությամբ. մի գծին՝ «կյանք, ծիծառ, խնդրություն», մրուին՝ «մահ, փլատակ, մեռելություն»: Վերնագիրն էլ անհավականու է, գորիկ գեղարվեստական պատկերային պատշաճությունից՝ «Աղետ», և որիշ ոչինչ: Ցավի արտահայտությունը հման մոտեցման մեջ ավելի ատիճառող է, քանի որ հարվածն, իրոք, սահմոկեցուցիչ է: Անդոհանքին հաջորդում է աշխարհիկ հգանությունը, որը, հնաշելով պարզ տողերի արանքից, բերում է առաջին ներթին աղետը, «որպես բաժակն այս լեղի» ուղղամիտ խոսք:

Ժողովրդական Վերաբերմունքի գնահատությունից հետո միայն Ն. Վանականը անցնում է խոհերի «աստվածատուր» սահմանը:

Սղետն արթնացրեց, ցնցեց աշխարհի խիդճ, մարդուն վերադարձնելով ի շրջան բարության, մարդկայինից: Պատուիաված հայ ժողովուրդը ևս մի անգամ դառնում է աշխարհին ուղղված զգնության, պահպության կոչ, բարության կամ, ինչպես հնում էին ասում, օճանի յուրովի սոտոգորության փորձադաշտու: Այնուհանեղերձ, զոհողության, Աստծո սիրելին դառնալով քրիստոնեական խորհուրդն ընդունելով անգամ, բանատեղծը չի կարողանում հաշովել իրողության «առարկայական» դաժանության հնու, որովհետև ինքը հահատակվող հոտի հետ է, մարդկային ցավերի ու աղայակների ականատեսը: Եվ եթե մի կողմից՝ նա մսիթաք ու ուժ է տեսնում Տիրոց մեջ՝ նրա «մարդեղության այս սուրբ օրերին», ապա մյուս կողմից՝ երևան է հանում դիմադրական ազգային ոգին՝

Ծակատագրի հետ ես չեմ հաշովում,  
Ընդդուռ եմ ես, անվերջ բողոքում...

Իսկ ահա «Բողոք» բանատեղության մեջ ն. Վանականը քննում է երկրաշարժի բերած բարոյագիտության լծակները՝ կյանքի ճշմարտության և հասարակական արդարության ճամարները: Ամերկրա ու հատու և բանատեղծի գրիչը. Սոցիալիզմը, ընդդիմանալով քրիստոնեության մարդեղության և Աստծո պաշտամունքի հայտնի կարգախոսներին, մղվեց ակամա, բայց և բութ համառությամբ սպանելու մարդու մեջ խիճճ, բարության հունդը, երշանկության խորհուրդը: Հետևանքը որոշ է. հասարակությունը, լայն ինաստով՝ «աշխարհն է դարձել նյութապաշտ», անկուս, խիճ ու գործ չըվել»: Մթափ գրչի տակ դատապարտվում են հասարակական կյանքի բոլոր ինստիտուտները, հոգու և մարմնի բազմաւեսակ վկումները: Նորոգ խահականական հայտնատեսությամբ Ներսես Վանականը բացում է կեղծիքի ու ստի վրա հիմնված մեր կումոնիստական ներքինը.

Ամեն բանից վեր շահն իրենց դասում,  
Ծահատակում են, խոյիր չեն դնում,  
Զկա՛ սրբություն, չկա՛ ովստ, խոստում,  
Զկա՛ ոչինչ սուրբ, ոչ մի համոզում:

Ո՞ւր ենք մենք հասել և ո՞ւր ենք գնում.  
Ո՞վ պիտի ցնցի, պափեցնի մեզ,  
Որ անդարդաններ ու շուտ ետ դառնանք  
Անդադի եզրից, նորից մարդ դառնանք:

Այստեղ բանաստեղծի ուժն է: Ի տարբերություն սակալն Ավ. Խահականի գեղարվեատական մտայնության, Ն. Վանականը չի փախչում մարդկանցից դեպի անապատ, ավազուտներ: Եվ ինչպես հեռանա, չէ՞ որ իր ժողովորդի նովիվճ է, անգամ պատվազուրկն ու անբարոյական, գողն ու մարդասպանը հասարակական այս պայմանների պատղն ու զին են, որ գրեթե ազգովիճ «դավաճանում ենք մեր իդեալին»: Հոգեւրական բանատեղծը, իհարկե, պատասխանատվությունից խուսափելու իրավունք չունի: Հնդիականակը, նա որոնում է իր մեղքի բաժինը՝

Մենք երկուսով են, օհ, մեղավոր ենք,  
Բայց է կեղծելով մենք միմյանց խարենք ...

Բարձրատիճան լուծումներ չկան այս բանաստեղծության մեջ: Կապարզ ու լուսավոր ճշմարտությունը՝ հավատի վերհայտնաբերումը մեր մեջ, աշխարհիկի ու պատրականի ասորադասումը հոգու և խղճի, աստվածայինի դիմաց: Սա միայն քրիստոնեականի վերաբանատումը չէ, սա մարդու և մարդկայինի կենաւկան ճանաչումն է, որը կարող է գալ ինքնամաքրումից հետո:

Դա՛ր իմաստության և զգաստության ....  
Ծանի՛ր քեզ նորից ...

Մարդու մղոնմ դեպի գեղեցիկը բացում է նրա մշտարթուն երկվությունը, որ դեռ դարեր առաջ Գ. Նարեկացու ատեղծագործական ներհանգացումների դաշտն էր: Այսօր էլ նոյն են հոգենոր տառապանքի սահմանները, հոգու և մարմնի կողմը, որ շատ հաճախ ընեղացման շփորչ առաջացնում է մեր պոեզիային այնքան ճանաչելի տարութերումները: Ն. Վանականի մի շարք բանաստեղծություններում («Մի՛ մերձենար յիս», «Հոգեր խորիեր»-ի զանազան հատվածները, «Աղոթք առ էջմիածին») քնարական հերոսը մարտում է այս աշխարհի հոլովերի և երկնային ճշմարտության միջև: Բնության կամքը հաղթահարելու ճանապարհով միայն կարելի է մերձնենալ, իպել աստվածային եղոյանը:

Այնուհանդերձ, կյանքի գեղեցկությունը վեր է ամեն ինչից: Գեղեցիկը բարին է, գոյոց, իսկ նրանց միամնությունն արդեն աստվածահան է: «Եւմանի ափին» բանաստեղծությունը արևածագի հրաշալի պատկեր է, որ արևն ու լիճը հաստատում են աշխարհի ու բարձրագոյն զգացումների հավերժությունը: Սերը լայն ճշնակությամբ՝ դեպի մարդը, բնությունը, աստվածայինն ու խորհրդավորը, որը պիտի մեկնելի քրիստոնեական պայծառատեսության իմաստի ներքո: Բնության խորհուրդը մարդկային կյանքի հետ կապված է հան «Խմ նշենին» հոգաթաթավ բանաստեղծության մեջ: Ծաղկած նշենին այստեղ ևս համեմատության նոյն զուգահեռներն է գծում՝ որպես հարս, զարթոնք: Ընդհանրապես Ն. Վանականի բնապատկերները թարմ են, իրենց պարզությամբ համակող և, անտարակույս, հոգեխորհուրդ: Պատկերի ավանդական սուրբեկները չեն խանգարում գեղարվեստական ներքին նոր կապերի հյուանան, նոր հոգական իմաստների ձևավորման բանաստեղծի փորձին: Եվ այստեղ մենք տեսնում ենք նրա գեղարվեստական յորահատուկ մեկ գիծը: Ահա, խնդրեմ, մեկ օրինակ:

Եվ մի զեփյոտ մոլորում՝ ճյուղերի մեջ նշենու  
Թափառում է ու հուզում ծաղկած ոստերն ապիտակ,  
Փրփրում է նշենին, ալիք-ալիք պսպղում,  
Ջրերն ինչպես Սևանի՝ կապույտ, անամայ երկնի տակ:

Այստեղ ծանոյթ են զեփյոտը, նշենին, որ ծաղկել է, սակայն վաղեմի բանաստեղծական «առարկաները» շարժվում են բոլորովին նոր տարածության մեջ, նոր զուգահեռականներում: Անակնկալ է ճյուղերի ալիքվելը,

փրիքալ, որը հանգեցրել է Սևանա շրերի արդեն նորահայտ համեմատությամբ:

Բնության հորդուն պատկերները որոշ իմաստվ ուղղություն են հաղորդում գեղարվեստական մտածողությանը, համակարգում խոսքը, սրում նրա նեռագիտական պացը՝ պահելով ընթերցողին հմայքի հարատեղյան անտևս հյուվածքում: Սավածը տարածվում է «Տարերքի երգով», «Նոնենիս», «Մոլորված մեղուն», «Արփայի հովտում» և այլ երգերի վրա: Անմոռաց է հավերժության հետ քայլ պահող Արփան՝ լեռնային գետը, որի բացած ճանապարհը բանաստեղծն անձկանելիորեն համեմատում է ժողովրդի երթի հետ՝ վերջին տան մեջ կերտելով ժողովրդական ակունքին փարզող քնարական հերոսի հայտնության նոր վիճակը, որը և՛ իմաստալից է, և՛ աստվածային:

Իմ սիրտը պապակ՝ կարուով անհուն,  
Դարավոր երգիդ թովչանքով զեղուն,  
Եկեղ-նստել է հովտում երկնային,  
Իր հոտը գտած եղանիկի նման:

Աստվածայինի և բնության թեմաները, մեր կարծիքով, գերիշխում են Ներսես Վանականի ստեղծագործական աշխարհում: Դրանց միջոցով նա հիմնականում հաղորդակցվում է մեծ աշխարհին, գեղագիտական հարցադրումներին: Հենց այս հանգամանքը առավել տարողունակ է դարձնում այդ երկու թեմաների ընկալումների դաշտը, լայն խորքով է բացվում պատկերի, բարի ենթիմաստը: Սույ միջոցների օգնությամբ, համեմայն դեպս, հայոց առարեկական Եկեղեցու ճշանավոր արքեպիսկոպոսը տալիս է իր վերաբերմունքի, իր գնահատությունների գունեղ ներկայականը, այն տպավորում է, մնում բանաստեղծության սիրահարների ազդեցության ոլորտում:

Գեղարվեստական մտածողության հոգևոր «պատոհանը» բաց է կրնկի վրա: Այն հրավիրում է զրուցի, ամրակայում հավատը: Հովվական երգերում հայրենիքը հողի և ոգու միասնության փառարևունուն է: Սույ հասարակական հայացքը շիտակ ու պայծառ, դարձի բերող և ներող խոսք է:

Եվ ի վերջո, ամենագլխավորը. Ներսես Պոպազյան-Վանականի երգը, եթե տագնապներ ունի, ապա միայն հոգու անաղարտության պաշտպանության ու վերադարձի համար: Այդ տագնապից է սնկում սերը դեպի մարդը: Այդ սիրոց էլ սկսվում է հոգևոր այն մեծ ճանապարհը, որ տանում է դեպի մարդկացինի կատարեկատիպը, դեպի ինքնամաքրում:

Բանաստեղծությունը երթ է առ Աստված:

Անվախճան այդ երթի ոխտավորներից է Ներսես Վանականը:

Աստված օգնական:

## ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2743 ձեռագիրը «Թարգմանչաց անտարան» է կոչվում Արցախ աշխարհի, Գարդման գավառի Թարգմանչաց վանքի անունով, որուղի այն գտնվում էր մինչև 1900 թվականը, Խաչենք գավառի Խադրի կամ Խաթրա վանքից տեղափոխվելուց հետո: Այդ տարում Էջմիածնի մատենադարանապետ (1897—1906 թթ.) Գարեգին վարդապետ Հովսեփյանը ձեռագիրը վանքից տեղափոխում է Էջմիածնի Մատենադարան, իսկ 1911 թ., մի քանի այլ ձեռագրերի մանրանկարների հետ միասին, առաջին անգամ գիտական շրջաններին է ներկայացնում նաև Թարգմանչաց ավետարանի մանրանկարները<sup>1</sup>:

Այնուհետև ձեռագրի մանրանկարներին անդրադարձել են հայ մանրանկարչությամբ զբաղվող ու հետաքրքրվող համարյա բոլոր մասնագետները, բացառապետ արվեստաբաններ, և կարծես «մոռացել», որ այդ մանրանկարները գտնվում են ձեռագրի մեջ, որը պետք է ուսումնասիրվեր նախ՝ որպես պատմա-մշակութային ամբողջական և ինքնորոշուն հուշարձան, ապա նոր միայն նրա բաղադրիչը, որքան էլ այն «հնքնորույնություն» ձեռք բերած լինի:

Ձեռագիրն ուսումնասիրող ամեն մի մասնագետ, լինի աղբյուրագետ, թեագրագետ, արվեստաբան թե հնագրագետ, պետք է մանրախույզ քննության նենթարկի հուշարձանը, պարզի ստեղծման հանգամանքները, ընձեռած հնարավորությունների սահմաններում՝ մտովին վերականգնի նրա նախնական վիճակը, բացահայտի նրա կորցրած կամ նրա վրա հավելված շերտերը և արդի վիճակի հետ համեմատելով, ուրվագծի հուշարձանի բարդ և բազմակողմանի պատմությունը:

Թարգմանչաց Ավետարանը մեզ է հասել մի քանի անգամ կազմված ու եզրահատված, ներդիրներով լրացված, վերջից պակասավոր, առանց գրլիավոր հիշատակարանի, որը շատ հարցեր լուսաբանելու հնարավորություն կրնածենք:

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անասիտ», Փարիզ, 1911, № 5—6:

Այսուհանդերձ ձեռագրի պատճենական կորուսող մեջ չէ. իրենց տեղերում են բոլոր պրակաները և պրականիշերը (թեկուզ մի մասը եզրահատված), բացառությամբ վերջի մի քանի թերթերի և կազմի:

Պահպանվել են գրչության ժամանակի մի քանի հիշատակագրություններ՝ խորանների և կիսախորանների գերանների ու պյուների վրա և Մարկոսի ավետարանի վերջում, որոնցում նշված են ստացողի, գրչի, ծաղկողի անունները և ծաղկելու թվականը: Կան հետագա ստացողների, նվիրատվության, վերատին կազմելու և զարդարելու վերաբերյալ կարևոր հիշատակագրություններ, որոնց քննությունն առանձին հարցեր պարզելու լավ հնարավորություն է տալիս: Մատենադարանի ձեռագրերի համառոտ ցուցակի համաձայն, № 2743 Ավետարանը գրված է 1232 թ.: «Գրիչ՝ Տիրացու: Ծաղկող՝ Գրիգոր որդի Գարփին: Ստացող՝ Յովհաննես քահանայ և ծաղկող»:

Թերթ՝ 374: Մագաղաթ:  $30 \times 23$ : Երկայնական բոլորագիծ երկաթագիծ: Տող՝ 17: Մանրանկար՝ տերունական՝ 7, ավետարանից՝ 2, խորան՝ 10, կիսախորան, լուսանցագարդ: Կազմ՝ կաշևասի տախտակ դրոշմազարդ: Աստան կարմիր մետաքս: Հիշատակարան գրչի՝ 7թ, 8ա, 12ա, 183ա, ծաղկողի՝ 9ա, 10ա, 10թ, 115ա, 293թ, հետագայի՝ 113թ, 183ա (ԺԳ—ԺԴ դդ), 183ա (ԺԵ դ.), 114թ, 184թ (ԺԶ—ԺԷ դդ.), 294թ (1843 թ.), 295ա (1889 թ.)»<sup>2</sup>:

Հենց այստեղից ձեռագրի բախտը չի բերել. բերված տվյալների մի մասը ճիշտ չէ<sup>3</sup>:

Թարգմանչաց ավետարանը թերթակալված է մատիսով 20-րդ դարում և որոշ թերթերի համարներ բաց են թողնված ու կրկնված: Թերթակալողը բաց է թողել 177, 222, 266 և կրկնել 293 թերթահամարները: Ուրեմն ձեռագրի թերթերի ճիշտ քանակը 372 է: Այդպես էր թարգմանչաց վաճքում, այդպես է և այսօր Մատենադարանում<sup>4</sup>:

Թարգմանչաց ավետարանն այսօր ունի  $30,1 \times 23,2$  ամ մեծության մագաղաթյան սպիտակ, լավ մշակված 372 թերթ: Գրությունը երկայուն է, լուրաքանչչուր սյունակ ունի  $23,5 \times 7,1$  ամ մեծություն, 2 ամ միջին և 3 ամ արևատի լուսանցքներ: Տառերը գրված են 0,6 ամ հեռավորության գույզ տողերի մեջ, տողերի քանակը 17 է, իսկ տողերի միջի տարածությունը՝ 0,9 ամ: Տողագծերը և պյունագծերը արված են ճնշումով:

Ամրող ձեռագիրը գրված է միջին մեծության գեղեցիկ երկաթագրով, որոց էջեր՝ դեպի ձախ հակված գրերով: «Յարուցեալ Յիսուս» հատվածը, համարաբառը՝ խորաններում, ցրվացանկը և գլխակարգությունը՝ այլուսակ գրով: Պրակաների թիվը 46 (Ա—ԽԶ) է, սկզբունք է Մատթեոսի ավետարանի առաջին թերթից մինչև ձեռագրի վերջը: Ամեն մի պրակ կազմված է որթական թերթերից, բացառությամբ լուրաքանչչուր ավետարանի վերջին պրակի, որոնք ունեն այնքան թերթ, ինչքան հարկավոր է բնագրի վերջին մնացած մասը տեղափոխելու համար. պատկեն՝ Մատթեոսի ավետարանի վերջին ԺԳ պրակն ունի 4 թերթ, Մարկոսինը՝ (ԽԲ պրակ) 3, Ղուկասինը՝ (ԼԶ պրակությունը՝ Մատթեոսի ավետարանի առաջին թիվը՝ Ա. Ա. Կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անդրացի, Երևան, 1965, էջ 866:

<sup>2</sup> Սրբագրությունները՝ շարադրանքի ընթացքում:

<sup>3</sup> Մատենադարանի Մայր մատյանում, Մայր քարտում 314 է, հավանաբար շփոթված է 7-ը 1-ի մեջ: Լ. Չոգապալյանը ևս ձեռագրի ծաղկողին նվիրված ուսումնակրության մեջ գրում է: «Ձեռագիրն ունի 374 էջ» (ուղարկված էջը 187 թերթ՝ կատարված է կրկնակի սիսալ («Գրիգոր ծաղկող», Երևան, 1986, էջ 7: Այսուհետև՝ «Գրիգոր ծաղկող»):

պրակ) 5, Հովհաննեսինը՝ (ԽԶ պրակ) 7, (որի վերջից մի քանի թերթ պակասում է): Սրբացից բացի Դուկասի Ավետարանի ԽԹ պրակը կազմված է 6 թերթից (բնագիրը լրիվ է):

Պրակավորումից դուրս է սկզբուն դրվագ Եփսեբիոսի թղթի 2 և համարաբաների 8 խորանների 10 թերթանց պրակը: Ըստ այս Մատթեոսի ավետարան ոճի  $(8 \times 12 = ) 96 + 4 = 100^5$ , Մարկոսինը՝  $(8 \times 8) = 84 + 3 = 87^6$ , Դուկասինը՝  $(8 \times 12 = ) 96 + 5 + 6 = 107^7$ , Հովհաննեսինը՝  $(8 \times 10 = ) 80 + 1 = 79^8$ : Ամբողջ ձեռագիրն ունի  $100 + 67 + 107 + 79 = 353$  թերթ+10 թերթ (խորաններ)՝ 363 թերթ: Այս 363-ը ձեռագիրի ստեղծման ժամանակից մեզ հասած թերթաբանակն է, որին գումարում ենք հետագայում կատարված ներդիրներից պահպանված 9 թերթը և ստանում 372 թերթ, այսօրվա թերթաբանակը:

Ներդիրները Մատթեոս և Հովհաննես ավետարանիչների և յոթ տերունական նկարներն են<sup>9</sup>, որոնք մուծված են ձեռագիրի թերթերի արանքներում, ըստ որում լորաբանչուոր ներդիրի արմատը մտցված է բուն թերթի արմատից ներս և մյուս կողմում ծավագած և ստանձված: Սունձումը ավելի ոչ է արված, հավանաբար որոշ ներդիրներ կորցնելուց հետո:

Ձեռագիրը պրակակալված է երկու անգամ: Առաջին պրակակալվումը գրչության ժամանակից է: Այս պրականիշները դրված են եղել լորաբանչուոր պրակի առաջին թերթի ա և վերջին թերթի բ երեսներում, ստորին լուսացքի կենտրոնում, գրվել են գրչության երկաթագրով և վերից-վարից առնելի պատիվների մեջ: Վերջին անգամ կազմելու ժամանակ եզրահատվել են այս պրականիշների մեծ մասը: Տեղ-տեղ պահպանվել են վերին բաժանարանները, որոց մասեր՝ տառերից, ինչպես նաև ամբողջական պրականիշները: Երկրորդ պրակակալվումը կատարված է ձեռագիր վերջին, հավանաբար երրորդ անգամ կազմելուց առաջ:

Առաջին անգամ, բնականաբար, կազմվել է ձեռագիրն ավարտելիս, երկրորդ անգամ, հիշատակագրության համաձայն՝ 1312 թ.: Այժմյան կազմը արձարապատը չէ: Ուրեմն կազմվել է նաև երրորդ անգամ և ձեռագիրը եզրահատվել է երեք անգամ: Ահա այս երրորդ կազմից առաջ, եզրահատելուց հետո կատարվել է երկրորդ պրակակալվումը, երկու տարրեր գրիչների կողմից: Սրբացից առաջինը պրակակալումն սկսել է խորաններից, որոնք գրչի (առաջին) պրակակալվումից դուրս են<sup>10</sup>:

Բոլորգիր ա և Եշանակված առաջին թերթի ա էջի ստորոտում և առըված բաժանարանների մեջ: Նոյնակիսի ա և Եշանակված նաև վերջին 10-րդ թերթի բ էջի ստորոտում և առաջին տասը թերթերը դարձրած առաջին պրակ:

<sup>5</sup>  $A(8) + B(8) + C(8) + D(8) + E(8) + F(8) + G(8) + H(8) + I(8) + J(8) + K(8) + L(8) + M(8) + N(8) + O(8) + P(8) + Q(8) + R(8) + S(8) + T(8) + U(8) + V(8) + W(8) + X(8) + Y(8) + Z(8) + (4) = 100$ :

<sup>6</sup>  $D \cdot A(8) + D \cdot B(8) + D \cdot C(8) + D \cdot E(8) + D \cdot F(8) + D \cdot G(8) + D \cdot H(8) + D \cdot I(8) + D \cdot J(8) + D \cdot K(8) + D \cdot L(8) + D \cdot M(8) + D \cdot N(8) + D \cdot O(8) + D \cdot P(8) + D \cdot Q(8) + D \cdot R(8) + D \cdot S(8) + D \cdot T(8) + D \cdot V(8) + D \cdot W(8) + D \cdot X(8) + D \cdot Y(8) + D \cdot Z(8) = 67$ :

<sup>7</sup>  $H \cdot A(8) + H \cdot B(8) + H \cdot C(8) + H \cdot D(8) + H \cdot E(8) + H \cdot F(8) + H \cdot G(8) + H \cdot I(8) + H \cdot J(8) + H \cdot K(8) + H \cdot L(8) + H \cdot M(8) + H \cdot N(8) + H \cdot O(8) + H \cdot P(8) + H \cdot Q(8) + H \cdot R(8) + H \cdot S(8) + H \cdot T(8) + H \cdot V(8) + H \cdot W(8) + H \cdot X(8) + H \cdot Y(8) + H \cdot Z(8) = 107$ :

<sup>8</sup>  $I \cdot E(8) + I \cdot L(8) + I \cdot M(8) + I \cdot N(8) + I \cdot U(8) + I \cdot V(8) + I \cdot W(8) + I \cdot X(8) + I \cdot Y(8) + I \cdot Z(8) = 79$ :

<sup>9</sup> Ներդիրները կրում են 11, 15, 20, 114, 170, 184, 188, 294, 295 թերթահամարները:

<sup>10</sup> Այդպես է համարյա հնագոյն բոյոր ձեռագրերում, անելիս այն բանից, թե գրիչն ու նկարիչը միմնույն մարդն է, թե ոչ: Պրակակալվում են չորս Ավետարանները: Հետուանաբար, մաս են կազմում պրակների և խորանները դասնում են առաջին պրակ:

Երկրորդ պրակի նիշը՝ թ գրված է խորանների և գրչի ա պրակի մեջ՝ տևողմ ներդրված Մատթեոս ավետարանիցի նկարի ա էջում: Այսպիսով պրակակալովը ներդիրն առնում է պրակահացի մեջ: Որովհետև գրչի Ա պրակում երկու այլ ներդիրներ կային, դրանք եւ գումարելով պրակի ուժ թերթի վրա, առանում է 11 թերթանոց պրակ, և Ա պրակի վերջին թերթի վրա գրում Բ, և սրանով գրչի Ա պրակը դառնում է կազմողի Բ պրակ:

Հավանաբար նկատելով գրչի պրականիշերի հետքերը, ինչպես նաև պրակների կանոնավորությունն ու ամբողջական նիշերը, գգուշանում է սրխալը խորացնելուց, ընդունում է Տիրացու գրչի նշանակումները և հաջորդ պրակի վերջում կրկին նշանակում է Բ, այսինքն երկու անգամ երկրորդ պրակ է նշանակում, որպեսզի այլև չխախտի ձեռագրի բուն պրակակալումը, և, այնուհետև, պարզապես շարունակում է լրացնել եզրահատված արդականիշերը:

Դուկասի ավետարանից սկսած՝ փոխվում են պրակներ նշողը, գրիչ գործիքը և գիրը՝ բոլորգրի փոխարեն՝ շղագիր: Պրականիշերը լրացվում են նոյն սկզբունքով, մինչև Դուկասի ավետարանի վերջին, ԽԶ պրակը, որն ունի 5 թերթ: Սրան ավելացնում է հաջորդ երկու ներդիր թերթերը և անտևսկով Հովհաննեսի ավետարանի առաջին թերթի պրականիշը (ԼԵ), այդ թերթը ել գումարում է նախորդների վրա, և կազմում ուժ թերթանոց մի պրակ' (ԼԶ), կրկնելով իրենից առաջ պրակակալողի սխալը: Հաջորդ պրակը (ԼԵ) բնականաբար լոյս թերթանոց է դառնում:: Բարեբախտաբար հաջորդ ԼԸ-ից սկսած պահպանվել են բուն պրականիշերը, և պրակակալողին ոչնչ չեն մնում անել, եթե միայն ընդունել այն և լրացնել միայն եզրահատված պրականիշերը:

Վերջին՝ ԽԶ պրականիշը դրված է պրակի լոթերորդ թերթի վրա: Այս նշանակում է, որ երկրորդ պրակակալման ժամանակ արդեն վերջին պրակի վերջին թերթը և հաջորդ պրակները հիշատակարանի հետ թափված են եղան: Ձեռագրի երկրորդ պրակակալումը նոյնպես ցուց է տալիս, որ ձեռագրի իմաստը պահպանվել են բուն պրականիշերը, և պրակակալողին ոչնչ չեն մնում անել, եթե միայն ընդունել այն և լրացնել միայն եզրահատված պրականիշերը:

Ձեռագրում պահպանված վերջին ԽԶ պրակի լոթերորդ թերթից հետո մնացած բնագիրը կարելի է տեղափորել երկու և կես թերթի վրա<sup>11</sup>:

Այսպիսով, երկրորդ պրակակալումը տեղի է ունեցել ձեռագրի վերջին թերթերը, հիշատակարանը և կազմը կորցնելուց հետո: Բայց այդ ժամանակ արդեն կային ներդիրները, որոնք, ինչպես նաև նկարչի կողմից բնագրի թերթերի լուսանցքներում կատարած լուսանցապատկերները, տուժել են կազմելու ժամանակ թերթերի եզրահատումից:

Ձեռագրի կառուցվածքային հիմք հանդիսացող պրակների կայունությունը և նրանց պահպանվածությունն ապացուցում է, որ այն գրվել ու ծաղկվել է այդ պրակների վրա, իսկ նրանցից դուրս մուծված նկարագրդ թերթերը ներդիրներ են և հետևամուտ են:

## ՏիրԱՑՈՒ ԳՐԻՉ

Ձեռագրի գրիչը Տիրացուն է, որի անունը պահպանվել է իր իսկ ձեռքով գրված հիշատակագրության մեջ, Մարկոսի ավետարանից հետո զե-

<sup>11</sup> Այդ թերթերից առաջինը ԽԶ պրակի վերջին թերթն է եղել. մյուս՝ ԽԵ պրակի առաջին թերթը, որ ավարտվել է Հովհաննեսու ավետարանը. ԽԵ պրակի երկրորդ թերթի ա էջում: Այնուհետև գրվել է հիշատակարանը, որի գրադեցրած թերթի քանակը հայտնի չէ: (Աստուածաշնուն, Վենետիկ, 1860, էջ 1044):

տեղված «Յարուցեալ Յիսոս» հատվածի վերջում. «Զմեղապարտ գըծիս՝ զՏիրացու լիշեցէք ի Տէր» (էջ 183ա): Սոյն հատվածը, հիշատակագրության մեջ միասին, գրված է աղյուսակ գրով (ուղղագիծ երկաթագիր): Այս հիշատակագրությամբ գրիչը, որ ամբողջ ձեռագիրը գրել է գեղեցիկ երկաթագրով, հավաստում է, որ ինքն է գրիչը նաև աղյուսակ գրատեսակով գրված մյուս գրությունների: Վարժ և հմտություն գրիչ է Տիրացուն, հավասարապես գրում է բոլոր գրատեսակներով: Ինքն է կատարել նաև սրբագրությունները: Լուսանցքներուն գրելով բարի կամ տարի ուղիղ ձևը, տօրիկինվ ցուց է տաղիս բնագրի մեջ մխամենքը, և ճիշտ ձևը՝ լուսանցքում: Սրբագրությունները, ինչպես նաև խորանամեջ գրությունները, տնագոլիս համարներն ու ցըրփացանները գրված են մանր, միահավասար աղյուսակ գրով, տեղ-տեղ օգտագործել է նաև բոլորգիրը: Այսպիսով, ավետարանառաջներից սկսած մինչև վերջ բոլոր գրությունները Տիրացու գրչինն են: Գլխագործը հույսներս ունեն չափավոր մեծություն, և գտնվում են գրադաշտում: Ավետարանների սկզբնարարերը, որ գրվում են զարդարից հետո, ուկեպատել է ծաղկողը:

Տիրացու գրիչը, որպես կանոն, շատ հավատարիմ է մնացել գաղափար օրինակին, որը, ինչպես երևում է Կետադրական ինքնատիպ հշանեներից, ը ձայնավորի գործածության յուրահատկությունից և ձեռագրի ձևավորման կանոնավորությունից, եղել է հշանավոր, ընտիր օրինակ: Այսպես, որոշ տեղերում, որպես կետադրության նշան, դնում է պատիփ՝ վրան կետ ցուց տաղու համար, որ բարը չի հապավված: Եթենու դրվում է այդ հշանի մի կամ մյուս կեսը: Այն դրվում է նաև Դ համուրիի վրա, իսկ ավելի հաճախ համուրիի վրա դրվում է Խորիզոնական փոքրիկ գծիկ (-): Որոշ տառերի վրա դրվում է ուղղամայաց գծիկ ('):

Ը ձայնավորը հաճախ է գրվում, ոչ միայն տողադարձերի ժամանակ, բարի տողավերջին մնացող կամ բաժանվող մասում, այլև սովորական գրության մեջ, զընա զընեաւ, դրայիր:

Որոշ անոններ ունեն գրության այլ ձև, օրինակ՝ նաասովն գրվում է նայասըսովն, բոսո-ը բոյս ձևով, գործածում է հարցական, բացականական, ստորակետ, վերջակետ, կետ-ստորակետ, տօրիկիկ, փշիկ հշանեներ: Եթեն պատվագրված բարը բացականականի պեսք ունի, ապա դրվում է պատվի հշանի վրա, Ած: Շատ քիչ է բառանշատումը:

#### ԳՐԻԳՈՐ ԾԱՂԿՈՂ

Ձեռագիրը ծաղկողը կամ ծաղկազարդողը Գրիգորն է: Առաջին տասը թերթերի վրա Եվսերիոսի թուղթն է՝ ուղղված Կարպիանոսին և համարաբար խորանները, որոնք գրանցենում են 1թ—2ա, 3թ—4ա, 5թ—6ա, 7թ—8ա, 9թ—10ա հանդիպակաց էջերը: Այս ամբողջովին ծաղկող Գրիգորի գործըն է, որի անոնը պահպանվել է Մարկոսի ավետարանառաջի գլխազարդի ստորին գերանի վրա. «Տէր Աստուած ողորմեա Գրիգորի ծաղկողի, ամէն, ամէն» (115ա):

Գրիգոր ծաղկողը առաջին գույք թերթերի հանդիպակաց էջերում պատկերել է երկու խորան, որոնց ուղղանկյունների մեջտեղում, շրջանակների մեջ նկարել է Եվսերիոս Կեսարացուն և Կարպիանոսին: Խորանների երկու սյուների միջև համակն է: Ստորին գերանից՝ եզրալուսանցքներում սյուների հետ բարձրանում են իրար նման մեկական ծառ: Նոյն ձևով են Երկայնացված նաև մյուս թերթերի հանդիպակաց խորանները, միայն նրանք ունեն երեքական սյուներ: Գրիգոր ծաղկողը օգտագործում է վառ գույներ և

գնեցիկ համադրությամբ ստեղծում խկապես «ծաղկազարդ բուրաստան»:

Խորաններին հաջորդում է առաջին պրակը, որի առաջին թերթի ա էջից սկսվում է Մատթեոսի Ավետարանը: Ավետարանառաջը ծաղկազարդել է Գրիգոր ծաղկողը: Խորանի գլխազարդը քառանկյուն է, որի աստրին մասում ձգված գերանի վրա ստացողի մասին հիշատակագրությունն է, իսկ շրջանակը հայկական գորգի զարդանախչեր ունի: Հառանկան կենտրոնում ըլքանաձև մեծ զարդանախչ է, աչ և ահյակ կողմերում ավելի փոքր զուգագոյց շրջանաձև այլ զարդեր:

Ավետարանն սկսվում է «Գ» զարդագրով, որի վերջովայններն ավարտվում են եռանկյունաձև հախչազարդով: Տարի թևի տակ, զամավորակի վրա բազմած է Մատթեոս ավետարանիչի խորիրդանիշ մարդ-հրեշտակը՝ ձեռքին Ավետարան: Այս ավելի շատ համահնչուն է հախորդ ներդիր թերթի Մատթեոսի Ակարին, քան ծաղկողի զարդարվեալին:

Գրիգոր ծաղկողն այնուհետև ծաղկազարդել է ողջ ձեռագիրը լուսանցազարդերով և զարդագրերով, գերազանցապես օգտագործելով կապույտ, կարմիր, գույնները: Ձեռագրում երբ զարդագիրը ընկնում է զույգ էջերի եզրալուսանցքի կողմում, ճրան մերձ Ակարում է լուսանցազարդը (13, 14թ, 29թ, 46թ և այլն), իսկ երբ զարդագիրը թերթի արմատին կամ միջին լուսանցքին կից է, լուսանցազարդը Ակարվում է ոչ թե ճրան մերձ, այլ ճրա դիմաց՝ դարձալ եզրալուսանցքում (16թ, 18ա, 19ա, 21թ և այլն): Մատթեոսի ավետարանառաջի և խորանների պրակի արանքում գտնվում է Մատթեոս ավետարանիչի Ակարի ներդիրը: Այս չի պատկանում երկու կից պրակներից ոչ մեկին, ճրանցից դուրս է և հետևամուտ: Ներդիրներ են նաև 15, 20 և 114 թերթերը, որոնք ներկայացնում են համապատասխանարար՝ «Ծնունդ Փքրկչն»՝ «Մկրտութիւն Տեառն» և «Յարութիւն Տեառն» Ակարները:

Մատթեոսի ավետարանն ավարտվում է չորս թերթանոց ԺԳ պրակի վերջին թերթի ա երեսում (Եջ 113ա), իսկ թ երեսը ամբողջովին ազատ է: Այսուղի կարող եր Ակարվել հաջորդ ավետարանի Մարկոսի Ակարը, բայց չկա: Ուրեմն այն ծաղկողը չի Ակարել գրչության ժամանակ: Նոր պրակը ԺԴ-Ա սկսվում է հաջորդ ավետարանառաջով, գլխազարդով, զարդագրով, ավետարանիչի խորիրդանիշով, լուսանցազարդով և երկրորդ պյունակի ինն տող ուկեապատ երկաթագրով (որը դարձալ ծաղկող Գրիգորի գործը չէ): Վերջին գիրը, ինչպես նաև խորագիրը՝ «Ավետարան ըստ Մարկոսի» Տիրացու գրչի ձեռքով է արված, մնացածը՝ Գրիգոր ծաղկողի: Գլխազարդի ասունին գերանի վրա ծաղկողի մասին հիշատակագրությունն է. Այս ավետարանառաջի և Մատթեոսի վերջին պրակի արանքում տեղադրված ներդիրը՝ «Յարութիւն Տեառն» մանրանկարը, երեսով ոչ թե դեպի Մարկոսի ավետարանառաջը է, այլ՝ Մատթեոսի վերջին՝ անգրել էջը:

182ա էջում ավարտվում է Աւետարանն ըստ Մարկոսի, որից հետո շարունակվում է «Յարուցեալ Յիսուս» հատվածը, գրված աղյուսակ գրով, և վերջանում գրչի մասին հիշատակագրությամբ (183ա): Հաջորդ սյունակը և նրան էջը, դարձալ ազատ-անգրել է, որտեղ կարելի եր Ղուկաս ավետարանիչի Ակարել, բայց չի Ակարված:

Ղուկասի ավետարանն սկսվում է ԻԳ պրակի առաջին էջով, զարդարված ավետարանառաջով: Այս ավետարանառաջի և Մարկոսի վերջին թերթի արանքում, Կրկին մուծված է տերունական «Աներուն դժոխցն» (բնագրում՝ «Անարումն...») ներդիրը, դարձալ երեսով դեպի ավարտվող ավետարանը և ոչ սկսվողը:

Դուկասի ավետարանն ավարտվում է 294ա էջում, որի հաջորդ էջը դարձալ ազատ-անգրել է և չնկարված: Հաջորդ՝ Հովհաննու ավետարանի զարդարված ավետարանառաջի և նախորդի վերջին էջի արանքում մուծված են երկու ներդիրներ, առաջինը՝ «Ննջումն Աստուածամայրն» նկարն է, երեսով դեպի Դուկասի ավետարանը, և երկրորդը՝ Հովհաննես ավետարանիշի և Պրիխորնի նկարը՝ երեսով՝ Հովհաննու ավետարանառաջը:

Արդեն ասել ենք, որ Հովհաննու ավետարանի վերջից թերթ է պակաս:

Ամենամեծ հավանականությամբ, այդ թերթերի մեջ, ավետարանի վերջում նոյնպես եղել է մի ներդիր, որը «փակել» է Հովհաննու ավետարանը:

Ինչպես տեսնում ենք, այսուղ առկա է նկարազարդման երկու օրինաչափություն. մի կողմից Գրիգոր ծաղկողի աշխատանքն է, համարաբառի 10 խորանների, չորս ավետարանառաջների և լուսանցազարդերի ու զարդարերի նկարազարդումը, կատարված ձեռագիրը գրելու ժամանակ, որն հաստատվում է պրակեների կայտն հենքով, ծաղկողի հիշատակագրությամբ, զարդարանքի և զարդարվածության միասնական ոճով: Մյուսը մի այլ նկարիչ, որը նոյնպես աշքի է ընկենում, որն իր որոշակի, հազվադեպ հանդիպող օրինաչափությամբ. բոլոր տերունական նկարները (7) և ավետարանիշները դասավորված են այսպես. Ավետարանիշների նկարները ներդրված են ավետարանառաջների դիմաց, որտեղ սովորաբար նկարվում են: Ցուրաբանչյուր ավետարանի վերջ փակվում է տերունական մի նկարով:

Մատթեոս ավետարանիշը և «Յարութիւն Տեառն» մանրանկարները սկզբից և վերջից իրենց մեջ են ամփոփում Մատթեոսի ավետարանը: Մարկոս ավետարանիշի նկարը, (որ այժմ բացակայում է) և «Աւերտմն դժոխց» մանրանկարները սկզբից և վերջից ամփոփում են Մարկոսի Ավետարանը: Դուկաս ավետարանիշի (որ այժմ բացակայում է) և «Անջումն Աստուածամայրն» մանրանկարները ամփոփում են Դուկասի ավետարանը, և վերջապես Հովհաննես ավետարանիշի և Պրիխորանի նկարը՝ սկզբից և մի տերունական նկար (որ այժմ չկա) ամփոփել են Հովհաննու ավետարանը:

Ենթերվ սրանից կարող ենք համոզված. Կերպով պնդել, որ այժմ բացակա Մարկոս և Դուկաս ավետարանիշների նկարները մյուս ավետարանիշների հետ նկարված և տեղադրված են եղել իրենց տեղերում, ինչպես նաև վերջում եղել է տերունական մի նկար ևս, այսինքն այժմյան ինն մանրանկարի փոխարեն եղել է առնվազն տասներկու ներդիր: Քանի որ Մատթեոսի Ավետարանը օժտված է ավետարանիշի նկարով, փակող տերունական նկարով և տերունական երկու այլ նկարներով, հավանական ենք համարում, որ բոլոր չորս Ավետարանները են օժտված են եղել չորսական նկարներով, այսինքն չորս ավետարանիշների նկարներով և տասներկու տերունական նկարներով, ինչպես լինում է սովորաբար: Սակայն հնարավոր է նաև, որ միայն տասներկու ներդիր է եղել. չորս ավետարանիշներ և ութ տերունական նկարներ: Ինչպես տեսնում ենք, Թարգմանչաց Ավետարանում մենք գործ ունենք մանրանկարչական երկու ձևավորման հետ, որոնք կապվում են տարբեր ժամանակների և տարբեր անհատականությունների հետ:

Ցավոր, ոչ որ Թարգմանչաց Ավետարանի, որպես ձեռագրական հուշարձանի, շատ ամենալավ չի անդրադարձել, արվետարաններից շատերը պարզապես կրկնել են իրար, ունակ ել անհրաժեշտ ժամանակ ու հնարավորություն չեն ունեցել այն քննելու: Չեղագրական հուշարձանի ուսումնասիրման առաջին համարայիմանը ժամանակի և տարածության մեջ՝ նրա ճիշտ տեղադրումն է, որով և ուրվագծվում է այն որոշակի միջավայրը, որի

ձնունդն է նաև Խսկ մի ձեռագիր, որի մեջ ոստուասիրողը երկու Ակարիչ է տեսել (երկու ժամանակ, երկու միջավայր) առանձնակի հետազոտման է արժանի: Այս հանգամանքների անտեսումը, միակողմանիորեն պատկերագրական վերլուծություններով տարվելը հանգեցրել են այն բանին, որ իրապես տարբեր ժամանակներում ու վայրերում ստեղծագործած երկու արվեստագետները դարձել են մի «Գրիգոր ծաղկող»:

### ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Գրիշ Տիրացուի և ծաղկող Գրիգորի մասին վկայություններից բացի, վերջինիս ձեռքով ունենք նաև ծաղկազարդելու թվականի վերաբերյալ հիշատակագրություն, գրված համարաբառի վերջին զույգ խորանների գլխազարդերի ստորին գերանների վրա. «Ի թիս ՌԶԱ. (1232) ծաղկազարդեցաւ սոր // Աւետարանս բարեխաւս առ Ք[րիստո]ս Յ[իսուս] ի Տ[է]ք մեր» (9թ-10ա):

Թվականը կրկնված է նաև 311ա էջում, լուսանցազարդի շրջանակի մեջ՝ «Թիս ՌԶԱ. (1232) ծաղկեցաւ»:

Ուրեմն Թարգմանչաց Ավետարանը ծաղկազարդվել է 1232 թվականին: Գրիշը և ծաղկողը միասին են աշխատել, ուստի ծաղկազարդման ավարտը նաև գրչության ավարտն է: Զեռագիրն, այսպիսով ավարտվել է 1232 թվականին:

Դարձյալ ծաղկող Գրիգորն է գրում խորանների գերանների և սյուների վրա ստացողի մասին վկայությունները՝ «Տէր Աստուած, ողորմեա պատուական քահանայի և երեւելի պարոնի Յովաննիսի, ամէն» (7թ), «Զինվաննես աստուածազարդ քահանայ և զևսաչիկ հայր իր լիշեսչիք ի Քրիստո Յիսուս, ի Տէր» (8ա) «ԶՅովաննես ատագերեց լիշեա Տէր Աստուած ամէն» (12ա): Այս բոլորը վրձինով գրել է Գրիգոր ծաղկողը: Ոչ ել նա որդին է «Գարփին»: Ծաղկողին շիրթել են հետագա ստացող «Դաւիթի որդի Գրիգորի» հետ (տե՛ս Զեռագրացուակը):

Այսպիսով, անհայտ է մնամ գրչության կենտրոնը, որ աշխատել են վարպետ գրիշն ու ծաղկողը, և որոնց իր ցանկալի շքել Ավետարանի ստեղծումը վատահել է պարոն Հովհաննես քահանան: Այս հարցերին անդրադարձել է արվեստաբան Լ. Զարարյանը, որը նկատի առնելով «ձեռագրի գեղակարչության որոշ առանձնահատկություններ», նրա պատվիրատուին փետրում է Հայաստանի արևմտյան շրջաններում:

13-րդ դ. առաջին կեսին Կարին քաղաքում ապրում էր Հովհաննես առնելով մի պարոն՝ Ումելիս Աշանավոր գերդաստանի ազգականներից: Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ, մոնղոլների կողմից Կարինը գրավելու հետևանքով, Ումելիսների գերդաստանը՝ ազգականներով տեղափոխվում է Հայաստանի արևելյան կողմերը և բնակվում լուրու շրջանում: Նրանք հավանաբար իրենց հետ բերել են նաև Հովհաննես պարոնի Ավետարանը<sup>12</sup>: Բայց ի՞նչ կապ ունի Թարգմանչաց Ավետարանը Կարինի հետ: 1230 թ. Կարինում Գրիգոր անունով մի գրիշ գրում և ծաղկում է մի Ավետարան սեփական օգտագործման համար: Այդ ձեռագրը այժմ պահպում է Վեճետիկի Միհիթարյան միաբանության մատենադարանու: Զեռագրում այժմ կան միայն երկու կիսախորանները և լուսանցազարդեր: «Դմվար չէ նկատել պահպանված կիսախորանների, ավետարանների

<sup>12</sup> Լ. Զարարյան, «Թարգմանչաց» Ավետարանի մասին, ՊԲՀ, 1969, № 2, էջ 167—188:

խորհրդանշերի և լուսանցագարդերի բացառիկ ոճական հմանույունը «Թարգմանչաց» Ավետարանի նույնանուն նկարաթերթերի հետ: Կրկնվում էն զարդանկարչական մոտիվներն ու զարդագրերը, հատկանշական քառասուր կամ շրջանական լուսանցագարդերը՝ հավելված ցողուններով: Թղթում է, թե նոյն է նաև օգտագործված ներկապնակը՝ «Թարգմանչացի» գուսապ, նուրբ ու բարձր ճաշակի արտահայտության գունաշարը, անկրկնելի կապուտով»<sup>13</sup>:

Լ. Զաքարյանը Կարինի և Թարգմանչաց Ավետարանների մանրանկարները վերագրում է նույն Գրիգոր ծաղկողին, իսկ վերջինիս գրչության վայրը ներթարբար համարում է Կարինը:

Ծանոթանանք Կարինի Ավետարանի գլխավոր հիշատակարանին: Նրա գրիչ Գրիգորը գրչության արվեստը սովորել էր հորից՝ Խաչատոր քահանացից, որ էր «...ոյժ հմուտ և հոնուր այս արհեստի»: Չատ էր ցանկանում ունենալ ժամանակի հոչակավոր գիտնական և գրչության խոշոր վարպետ Գրիգոր Մուրդանեցու գրած Ավետարանի ընդօրինակությունը: Եվ ահա գտնում, ընդօրինակում է, և շատ գոռն է, «իսկ ես եղեկելիս, Գրիգոր գրիչ, փափագող եղեալ այս անմահական ըմբելոյ... Եւ ես Տէր գիտերուածս իմ, զի ի վաղոց ժամու ցանկացեալ էի այս անգիտ մարգարտիս և ամենալաւ արինակիս, որ կոչի Գրիգորի Մուրդանեցույց, ճարտարագիծ գրչի և անյալը գիտնականի: Եւ ըստ յաշողելոյն Աստուծոյ՝ եղեւ ըստ կամաց իմոց: Եւ ես ըստ կարի իմում՝ բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ»<sup>14</sup>:

Ավետարանն ավարտել է 1230 թվականին, Կարինում, «Ի հոյակապ են ի հոչակարոր բաղաքիս Թեոդորպալիս, ընդ հովանեաւ Սրբութեանս»:

Զեռագրից պակասում են առաջին 10 թերթերը, որոնց վրա խորաններ էին, և Մարկոսի և Հովհաննու ավետարանառաջները: Զեռագրին ունի 52 պրակ, բոլորը ուժական թերթ, բացառությամբ Ժ (որն ունի 3), ԺԶ (10), ԽԴ (9), Խ (4) և ԾԲ (6) թերթ, որոնց գումարը՝ 32 թերթ է, կամ 4 պրակ:

Փաստորեն Թեոդորպալիս (Կարինի) Ավետարանը ավետարանիշների նկարներ չի ունեցել, այնպես, ինչպես Թարգմանչաց Ավետարանը, որը նոյնպես Գրիգոր Մուրցանեցու ճարտարագիծ գրչի և ամենայթ գիտնականի ամենալավ օրինակից պետք է ընդօրինակված լինի: Ապացուց՝ ոչ միայն ծաղկազարդման նոյն եղանակը, այլև գրչության նմանությունը, որոնք գալիս են գաղափար օրինակից՝ համարաբառի 10 խորաններ, չորս ավետարանառաջներ (գլխազարդով, մեծ զարդագրով, ավետարանչի խորհրդանշով, լուսանցագարդերով, կարմիր, ալյուսակագիր խորագրով և ոսկեպատերկաթագիր (բնագրով) լուսանցագարդեր և զարդագրեր: Ընդ որում, գրլիավոր ավետարանները զարդագրով սկսելուց հետո, առաջին տողը անմի-

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 169:

<sup>14</sup> Բ. Մարգիսան, Մայր ցուցակ, էջ 572 Հիշատակարանում հորից՝ Խաչատոր քահանացից բացի միշտում է մորը (առանց անոնք տպու), բրոյերին, Թամելերին, Ազգերին, Ակներին, փեսային Վահրամին («զպիրելի անձին իմոյ»), Հովհաննի փիլիսոփային՝ իրենց հոգեւորոր: Այնուհետև միշտում է ձեռագրի գրչությանը դրամով կամ աշխատաքառվով օգնութեան պատճեն Վարդ բարեգործին «որ աշխատեցա ի պարզել թղթոյս և մասն ինչ եր լևետարան յարդար ընչից իրոց», մորաքը Գոհարին՝ համերձ որդիներով «որ ևս մասն ինչ եր լևետարան», Ազատ տիկնոջն ու դատերը (վախճանեալ) «որ ի մագաղաթս աշխատեցա ընդ իս»: Անդ՝ էջ 572—573:

շապէս շարունակվում է ուկեպատ երկաթագրով: Նմանություն կա նաև երկու ավելացրանների գրչության մեջ, որը ավելի է հաստատում նրանց նոյն շառավիղին պատկանելը:

Բ. Սարգիսյանը Թեոդորապոլի ձեռագիրը Ակարագրելիս կետադրության մասին գրում է. «ասորակետերեն, միջակետերեն և վերջակետերեն զատ՝ հաճախ գործածված է նաև կետ և ստորակետ ի միասին, այսպէս (,), որ բարին կամ հունակատին ուղղագրությամբ երած փոխառություն համարելի է»: Նոյն բանը մենք ունենք Թարգմանչաց Ավետարանի գրիչ Տիրացու մոտ: «Տողադարձին «ը» կավելացվի ոչ միայն ավարտող տողավերջի «զ» նախորդին, այլև սկսվող սողի բաղաձայնին բռվ, դեկոր հավելյալ ձայնավորին վրա փշիկ մ'ալ», —և բերում է օրինակներ, որոնց նոյնությամբ հանդիպում ենք Տիրացու մոտ. օրինակ, զը-նա, զը-նոս, յաւ-ըկոյս, յան-կոյս և այլն: Այդ փշիկը կամ գծիկը դրվում է նաև «ի» նախորդի վրա:

«Հատուկ անուններեն շատերն իսկ տարբեր ուղղագրությամբ գրված են այսպէս՝ Նայասովն գրված է՝ Նայասովն, Բոյու՝ Բոյու, Ռորովամը՝ Ռորոյամ, Ցովհաննեւըր (Մկրտիչ)՝ Ցուննեւ և այլն: Նոյն բանը Տիրացու մոտ է, 12ր Էջում. Նայասովն, Բոյու, Ռորոյամ: Թեոդորապոլի ավելացրանում. «Այդ յարրիցեալ առաւատուց ի միաշարաթուց երեւեցաւ նաև Մարտայ Մակրաղենացոյց» և այլն (Մարկոսի ավետարան): Թարգմանչացում, (էջ 182ա) նոյնն է. «առաւատուց, միաշարաթուցեալ», մակրաղենացոյց: Նոյնն են ստուերի նշանակման ձևերը. շրջանակներում աղյուսակագիր: Լուսանցազարերի մասին խոսելիս, գրում է. «Մեծի մասին բազմագունի մանեակներ են և ծոցի ժամացոյցի հման խարսխավոր շրջանականներ և սկավառակներ, որոնց մեջ ազնիվ ակունք երփերին կը նշողնեն... ոմանց մեջ պարսիկ կամ արար գրերուն հման զարդեր և ոմանց ալ հովն և հայերեն տառերով անուններ դրոշմված են»: Թարգմանչացում աղյուսի զարդերը և գրություններ շատ են (Հմտ. էջ 300, 311ա, 312ա, 318ա, 326թ, 343ա, 350թ, 388թ և այլն):

Ինչպես ծաղկազարդումները, այնպէս էլ գրչությունը ցույց էն տալիս, որ Գրիգոր գրչի Թեոդորապոլի և Տիրացու գրչի Թարգմանչաց ավետարանները գրված են Գրիգոր Մուրդանցու ընտիր օրինակից:

Ինարկե, կարող են նրանք իրենց ձեռագրերը ընթօրինակել Թեոդորապոլիս-Կարինում: Եթե 1230 թ. Գրիգոր Մուրդանցու օրինակը (կամ նրա օրինակից արտագրված մի այլ ձեռագիր) գտնվեր այնտեղ, որից օգտվեր Խաչատորի որդի Գրիգոր Կարմեցին, ապա 1232 թ. նրանից (կամ նենց Գրիգոր Կարմեցու ձեռագրից) օգտվելիս Տիրացու գրիչն ու Գրիգոր ծաղկողը՝ Թարգմանչաց ավետարանն ստեղծելու համար:

Այս ենթադրությունը փաստ դառնալու համար պետք է Թարգմանչացի ստացող պարուն Հովհաննեսի քահանայի և Ումելյան գերդաստանին անդամ պարուն Հովհաննեսի նոյնությունը հաստատող վկայություն լինի, որն ստացման չկա: Խակ մյուս փաստարկները (ձեռագիրը մենակ չգրելը կամ ողորմի խնդրելը) այստեղ կովաններ չեն: Ուստի Կարմելը Թարգմանչաց ավետարանի գրչության վայրը համարել չի կարելի: Ուրեմն գրչության վայրի մասին ենթադրությունը մնում է ենթադրություն: Համարավոր չէ նաև նոյնացնել Գրիգոր Կարմեցուն և Գրիգոր ծաղկողին, որոնք բռլորդվին տարբեր անհատականություններ են: Շատ բնորոշ է մեծավաստակ արվեստաբան Ս. Տեր-Ներսիսյանի կարծիքը այս առթիվ: Թեոդորապոլի և Թարգմանչաց ավետարանների ծաղկողները Գրիգորները «առկարելի է, որ նոյն անձը ըլ-

լան: Երկու ձեռագիրները գլխազարդերը իրար հետ բաղդատելով թերևս դժվար ըլլա որոշ համզում մը կազմի, բայց բարեպահտաբար կա Մատթեոսի ավետարանի հրեշտակը: Խնչպես կարելի է երևակայել, որ նոյն անձը նոյն տարիներուն կըրևան միշարած ըլլա Վենետիկի գեղեցիկ նկարությունը բյուզանդական գգեստի ամեն մի մանրամասնություն ճիշտ ներկայացված է, և Թարգմանչաց ավետարանի շատ ավելի թույլ նկարը, որ, ի միջը այլոց բյուզանդական Loros-ի ձևը չի հասկցած և այն վերածած է գիրքի մը, որ հրեշտակը կործքին առջև կրոնել»<sup>15</sup>:

Ուրեմն Թեոդորոսի և Թարգմանչաց ավետարանները իրար մոտեցնող հանգամանքը գալիս է նրանց գաղափար օրինակից, այսինքն՝ Գրիգոր Մուրդանեցու օրինակից, որի մասին վկայում է Գրիգոր Կարմեցին, և որը գաղափար օրինակ է ծառայել Թարգմանչաց ավետարանի համար: Գրիգոր Մուրդանեցու ընդորինակած ընտիր օրինակը<sup>16</sup> մեզ է հասել Կոստանդին Ուրբայեցի (1157 թ.)<sup>17</sup>, սրբանից՝ Վասիլ Ուրբայեցի (1161 թ.)<sup>18</sup>, Կողմանարքերդի (1166, 1219 թ.)<sup>19</sup>, սրբանից՝ Սուելիանո Երզըկացի (1201 թ.)<sup>20</sup>, Գրիգոր Կարմեցի (1230 թ.)<sup>21</sup>, Տիրացու (1232 թ.)<sup>22</sup>, Գրիգոր Սուեցի (1238 թ.) (Կոստանդին Ուրբայեցու օրինակից)<sup>23</sup>, Միսիթարիչ Գետկեցի (1271 թ.)<sup>24</sup> և այլ գրիների ընդորինակություններով<sup>25</sup>:

Այս ձեռագրերի ն նրանց հիշատակարանների ընթացակարգությունը ցույց է տալիս, որ Մուրդանեցու օրինակը տերության և ավետարանիշների նկարներ չի ունեցել, այսինքն նրա գեղարվեստական զարդարվածությունը սահմանափակվել է համարարրատի խորաններով, չորս ավետարանառաջներով (Կիսախորան կամ գլխազարդ, զարդագիր և լուսանցազարդ), զարդագրելով և լուսանցազարդերով:

Միսիթար գրիշը գրում է. «Ծրեցի ի գովելի արինակէ, ուղիղ և լի արուեստի ի բան և ի գիր, ի տուն և ստոր, և ի գրադարձ, և եղանակ, և ի վանեկ, և յառագանութիւնս, զոր կոչեն Գրիգորի Մուրդանեցյ՝ ի բազմաց վկայեալ»<sup>26</sup>: Խնչպես տեսնում ենք Մուրդանեցու օրինակը աչքի է ընկենում գոշության արվեստի քերականական կանոնների կիրառման կատարելությամբ, ամեն ինչ ուղիղ է, ճշգրիտ, բանը, գիրը, տունը և տնհատումը, բաժանված ստորակետով, տողադարձը, եղանակը, վանկերը և առողանության

<sup>15</sup> «Գրիգոր ծաղկող», էջ 14, ծթ.:

<sup>16</sup> Հ. Ասկան, Ցուցակ նայերեն ձեռագրաց Միսիթարեան մատենադարանին ի Վիեննա, Հ. Բ. Վիեննա, 1969, էջ 148:

<sup>17</sup> Ս. Մուրդայան, Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից Երուսաղեմ, 1967, էջ 1:

<sup>18</sup> Ա. Ասեղյան, Ցուցակ Միհացյալ Առանձների հայերեն ձեռագրաց, Լոռո-Անջելոս, 1976, էջ 380–381 (անգլերեն):

<sup>19</sup> Մատենադարան, ձ. № 7347, 7734:

<sup>20</sup> Մատենադարան, ձ. № 10359:

<sup>21</sup> Բ. Սարգսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Միսիթարեան մատենադարանին ի Վենետիկ, Հ. Ա. 1914, էջ 567–574: Հմտություն Հայկական մանրամակարչութիւն, Հ. Ա. Վենետիկ, 1966:

<sup>22</sup> Մատենադարան, ձ. № 2743:

<sup>23</sup> Գ. Հովսեփյան, Յիշատակարան ձեռագրաց, Հ. Ա., Անթիլիս, 1956, էջ 859–862:

<sup>24</sup> Մատենադարան, ձ. № 2814:

<sup>25</sup> Մատենադարան, ձ. № 280:

<sup>26</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ—Դ. 1984, էջ 397–398:

Յշանները: Վկայողներից մեկն էլ Մխիթարիչի ուսուցիչն էր, «վարդապետաց վարդապետն և երևելի» Կիրակոս Գանձակեցի պատմիչը:

Դիմավոր պետարանները բաժանարարներով հշանակելու փոխարեն Մորդանեցու օրինակում հշվում են լուսանցազարդերով, դիմացի գլխազիր՝ զարդագրով, տողը՝ ուկեգրով: Այս երևոյթին առաջին անգամ հանդիպում ենք տասնմեկերրորդ դարի կեսերին, հշանավոր գեղագիր, գրիշ և մանրանկարիչ Հովհաննես Սանդղավանեցու մոտ, հրանից մեզ հասած երկու ձեռագրերում, հոչակավոր «Մողնու» և «Սանդղավանքի» (1053 թ.) աղետարաններում<sup>27</sup>, ընդ որում, երկուսն էլ, պահանջեց զատ ունեն և տերունական և ավետարանների փառավոր նկարներ, իսկ լուսանցազարդերը՝ միայն տերուներ են՝ զարդագրին առընթեր: Հավանաբար, Բագրատունյաց թագավորության վերացումից հետո ստեղծված ծանր կացության ժամանակ շատ թանկ էր հասում նոյն նկարազարդված ձեռագրերը: Ուստի Մորդանեցին հրաժարվել է դրանից և Ավետարանի բնագիրը հարդարել է կետադրական նոր ժամանակներում կիրավող հշաններով, ուղղել է աղավաղված կամ աղճատված բառերը, լուսանցքներում բացատրել որոշ բառեր, ընթերցվածներ կարգավորել և հանձնարարել բնարությանը: Հետագայում այդպիսի ձեռագրերում նկատվում է ավետարանների, ինչպես նաև տերունական նկարների մուծում:

Աշնուանենայնիվ, որտե՞ղ է ստեղծվել Թարգմանչաց Ավետարանը, ինչպիսի մշակութային միջավայրի ծնունդ է այն, որտե՞ղ են աշխատել Տիրացու գրիշն ու Գրիգոր ծաղկողը: Որոնումները տանում են Անի քաղաք:

Թարգմանչացի գրիշ անվանը մի անգամ հանդիպում ենք Մարկոսի պետարանի վերջում, «Տիրացու գրծիչ» ձևով: Մի Տիրացու գրիշի էլ հանդիպում ենք Անի քաղաքի Բեխսենց վանքի գրչության կենտրոնում, որը գործում էր Տիգրան Հռնենցի հովանավորությամբ և հայր Եղբայրիկի առաջնորդությամբ XIII դարի առաջին տասնամյակներում: 1211 թ. այս վանքում Մարգարե ծաղկողը լրացրել ու նկարազարդել է հշանավոր Հայութի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 6288), խորաններից մեկում պատկերելով վանահայր Եղբայրիկին<sup>28</sup>: Այսուղի է գրվել ու զարդարվել նաև Մատենադարանի № 5554<sup>29</sup> Բեխսենց վանքի Ավետարանը, որի խորանների պուների, գերանների, ինչպես և գիշազարդերի վարդյակների վրա հիշատակագրություններ են արձանագրված: Խորանների գերանների վրա հիշատակագրություններ կան նաև Հաղբատի Ավետարանում: Հայ գրչության պատմության մեջ այս երևոյթն առաջին անգամ նկատվում է Բեխսենց վանքի ձեռագրերում, մի փոքր ոչ՝ նաև Հոռոմոսի մատյաններում, և դիտվում է որպես Անի քաղաքի մեծարվեստ ճարտարապետության, եկեղեցիների կամարների, պուտերի, մուտքերի ճակատարարերի վրա փորագրված բազմաթիվ վիմագիր արձանագրությունների ազդեցությունը գրիշ գեղարվեստական հարդարանքի վրա<sup>29</sup>:

Բեխսենց վանքի Ավետարանի խորաններից մեկի գերանի վրա գրված է.

<sup>27</sup> Մատենադարան, ձ. № 7736, 3793:

<sup>28</sup> Ա. Մաթևոսյան, Նշանական Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանքը Մատենադարանի» № 14, էջ 106—135:

<sup>29</sup> Ըստ յ տեղում, տե՛ս նաև Կ. Մաթևոսյան, Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, Պատմա-բանահրական հանդես, 1982, № 1, էջ 143—147, նույնի՝ Զեռագիր գրված Անի քաղաքի Բեխսենց վանքում, Պատմա-բանահրական հանդես, 1984, № 1, էջ 221—225:

«Եղբայրիկ զհայր Բեկսենց վանից յիշեցէք յաղաթա», խև մեկ այլ խորանի պան վրա, վերից վար գրված Է «Տիրացու գրիշ»<sup>30</sup>: Այս երկու հիշատակագրությունները սույն ձեռագրի գրչության ժամանակի և վայրի վկայություններն են (Հայր Եղբայրիկն Անդում հիշվում է 1211 և 1222 թթ.), խև Տիրացու գրչի անվան մակագրությունը՝ Ակարազարդ խորանի պան վրա, երա նաև ծաղկող լինելու վկայություն է:

Բեկսենց վանիք Ավետարանը Ակարազարդման տարրերով և գրչության հանգամանքներով շատ նման է Մատենադարանի № 7635 Ավետարանին (Երկուսն էլ գրվել են ոչ թե ստացողի նախնական պատվերով, այլ նախատեսված են եղել վաճառքի համար)<sup>31</sup>: Այն ևս դասվում է Անդ-Հոռոմու մշակութային միջավայրի հուշարձանների թվին, զարդարված է խորաններով (գրիշ Սուրբենեսի անունը պահպանվել է խորանի գերանի վրա գրքած հիշատակագրության մեջ), ավետարանառաջներով, լուսանցազարդերով: Նախորդի նման չունի ավետարանիշների, տերունական Ակարաներ, որովհետև դրանց պատկերումը մատյանում սկզբնապես չի նախատեսվել:

Զարդարվածության բաղադրիչների այս նույն մակարդակն է ունեցել նաև Թարգմանչաց Ավետարանը, միայն ավելի ճնշու է գունազարդված: Թարգմանչաց Ավետարանի և Բեկսենց վանիք Ավետարանի Տիրացու գրիշի անվան նույնությունը, խորանների ու ավետարանառաջների որոշ զարդերի ընդհանրությունը ինչպես այս, այնպես էլ անհական շրջանի մյուս՝ № 6735 Ավետարանի հետ, խորանների վրա հիշատակագրություններ գրելու սպոռտյունը, դրանց երկարագրի տարրերի սեպածն վերջավորությունը, ինչպես և այս բոլոր մատյաններում ավետարանիշների, տերունական պատկերների բացակայությունը թույլ են տալիս ենթադրելու, որ Թարգմանչաց Ավետարանը նույնպես կարող էր այդ միջավայրում ստեղծված հուշարձան լինել: Ինչ վերաբերում է ստացողին, ապա նրա անվանը կցված, «պարոնը» և Անիի միջավայրի համար ընորոշ երևույթ է:

Մատյանում ավետարանիշները, նրանց խորհրդանշանները, տերունական պատկերները, ինչպես և ան Ստեփանոս Սյունեցու խորանների մեկնությունը, որ գրված է խորաններն օբաղեցնող թերթերի ազգայի էջերում, լրացվել են հետագայում Արցախում, ինչպես թիջ հետո կտեսնենք:

Թարգմանչաց Ավետարանի, անհական և Թենողուպուսի Ավետարանների նմանությունը Գրիգոր Մուրդանեցի հմտություն գրչի գաղափար օրինակից է, խև Թարգմանչացում ավետարանիշների խորհրդանշանների նախագաղափարը՝ Թեղողուպուսի Ավետարանն է, որը գտնվել է Արցախում հետոց այն ժամանակ, երբ այնունշան երկրորդ անգամ Ակարազարդվում էր Թարգմանչաց Ավետարանը: Գնանք ձեռագրի հետքերով:

#### (Ծարունակելի)

<sup>30</sup> Մատենադարան, ձև. № 5554, էջ 8ր, 4ա:

<sup>31</sup> Կ. Մաթևոսյան, Գրչի և ստացողի միջնորդը (Վաճառքի համար նախատեսված գիրք միջնադարյան Հայաստանում), Պատմա-բանասիրական հանդես, 1990, 1, էջ 121—131:



## ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՆԻՒ\*

#### Պետրոս Ա. Գետադարձ

Պետրոս Գետադարձի ճենմադրության հանդեսի մասին ժամանակով ավելի մոտ պատմիչները լուս են, միայն Վարդան Արևելցին (ԺԳ դ.) գրում է, որ Արան «տէր Սարգիս ի կենդնութեան իրում օծեալ էր իրով ճեռք յԱնի, մեծ հանդիսիւ»<sup>25</sup>: Դրանից մեկ տարի անց՝ 1020 թ. մահանում է Գագիկ Ա. Բագրատունին և սկզբ է առնում Հայոց պետության ճգնաժամը, որը քառորդ դար հետո ավարտվում է քագավորության անկումով: Պատմական այս բախտորոշ ժամանակաշրջանում հայրապետական Աթոռը գրալեցնող Պետրոս Գետադարձը, ցավոք, չի կարողանում պահպանել եկեղեցու ու ժողովրդի միասնականությունը, տարփում է քաղաքական հարցերով և ի վերջո ինքն էլ դառնում այդ գործեղակերպի զոհի:

Պետրոս Գետադարձի գործունեության մասին հանգամանորեն խոսել, հշանակում է մանրամասնորեն անդրադառնալ Բագրատունյաց քագավորության վերջին շրջանի ողջ պատմությանը, մի քան, որ դուրս է մեր նպատակից: Հետևաբար նախ համառու կերպով կրթարկենք կաթողիկոսի մասնակցությամբ կատարված դեպքերը, ապա կանդրադառնանք կաթողիկոսարանի գործունեությանը՝ եկեղեցական կյանքի իրավիճակին: Գագիկ Ա-ի մահից հետո գաճի ժառանգած Հովհաննես Անրատի (1020—1041) և նրա կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև գահակալական եղբայրասպան կոհիվներ են տեղի ունենում, որոնք ավարտվում են 1021 թ. վերջերին, կաթողիկոսի ու իշխանների միջնորդությամբ, բայց հանգեցնում են երկրի նոր մասնատմանը՝ «Հայրապետն Պետրոս և իշխանըն ելին առ զԱշոտ և մեծաւ երմանք նառուցին զԱշոտ Դրուց աշխարհի՝ քագաւոր ամենայն Տաճան Հայոց, և Ցովհաննես նառուցին քագաւոր ի քաղաքին Անի»<sup>26</sup>:

1022 թ. հունվարի 6-ին Աստվածահայտնության տոնի օրը Պետրոսը Տրապիզոնում Վասիլի Բ կայսեր ներկայությամբ կատարում է ջորիների

\* Ակիգը «Էջմիածնի» 1992 թ. Ը համարում:

<sup>25</sup> Վարդան Արևելցի, էջ 126:

<sup>26</sup> Մատթեոս Ռուբակեցի, էջ 11:

ծեսը, որի հանդիսավորության շափազանցված արձագանքները նետագայում ծնունդ են տալիս կաթողիկոսի Գևորգարձ մականվանք<sup>27</sup>: Այս նոյն հանդիպման ժամանակ կաթողիկոսը Վասիլ կայսեր է հանձնում Հռվիաննես Սմբատի տիկրամուշակ կուսկը՝ «քանչի Յովհաննէկ» պատուեր տուեալ էր մայրապետին, եթէ՝ Գրէ գիր և տո՛ւր կուսկ թագաւորին (Վասիլ) զի յտա իմոյ վախճանին՝ զիմ բաղարս և զերկիրս նմա տաց ի ծառանգութիւն»<sup>28</sup>:

Դրանից հետո կաթողիկոսն անմիջապես Անի չի վերադառնում, այլ կայսեր ցուցումով տեղափոխվում է Մերաւոյի: Ենթադրվում է, որ Վասիլի մահից հետո՝ 1026-ին նոր միայն Պետրոս վերադառնում է մայրաքաղաք<sup>29</sup>, որը նրան այնքան էլ չերմորեն չեն ընդունում:

1033 թ. տեսի է ունենում արևի խավարում, որով Զշանավորվում է Քրիստոսի խաչերոթյան հազարամյակը և մեծ ազդեցություն է ունենում ժամանակակիցների վրա: Թագավորն ու կաթողիկոսը, երկրի մյուս մեծամեծերը Անիից հատուկ աստվիթակություն են ուղարկում Հռվիաննես Կողեն վարդապետի մոտ, կատարվածի մեկնարանությունն իմանալու համար: Վերջինս կանխատեսում է մոտավոր բազում դժբախտություններ, որպես հետևանք բարքերի համբեղիանոր ամենա ու անբարեպաշտության, ըննադատելով անգամ եկեղեցու առաջնորդին («Եւ ահա յայս հետէ բազում հերձուածք մոտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծովութենէ հայրապետաց, վաս զի թուլամորթին և տկարանան և հասատոյ քննութիւն ոչ առնեն և կան լինարիեալք: Յաղագ արծաթոյն թողուն ի բաց զհաւատն և պակասին օրինագործիմք ի տամէն Աստուծոյ»)<sup>30</sup>: Դրանից հետո, նոյն թվականին Պետրոս ծածուկ կերպով թողնում է Անիի Արքոոր և կայսրության տիրապետության տակ անցած Վասպորականի Չորսվանք փոխադրվելով պատեղ է մնում չորս տարի: Թագավորն ու ավագանին բազմից դիմում են նրան կանչելով, բայց ապարդյուն: Միայն 1037 թ. Վասպորականի բյուզանդիան կուսամիալի միջամտությամբ Պետրոս վերադարձվում է Անի և բաղար մտնելուն պես թագավորի հրամանով ձերքակալվում, ուղարկվում Բջնի: Նոյն տարվա վերջերին մայրաքաղաքում գումարվում է եկեղեցական ծողով, Պետրոսը համարվում է առողջակ և կաթողիկոս է ձեռնադրք-վում Սանամինի վաճրի առաջնորդ Պետոկորուր:

Նման որոշման կայացման համար Պետրոսի դեմ եղած մեղադրանքները պեսք ե, որ գորավոր եղած լինեին, սակայն վճռորոշ էր նաև Հռվիաննես Սմբատի դիրքորոշումը, որը գտնված լինելով կաթողիկոսի հետ փորձեց նման ձևով հաշվեմարդար տեսնել նրա հետ: Սակայն հայ ավանդապահ հոգևորականությունը չհանդորժեց աշխարհիկ իշխանության նմանօրինակ միջամտությունը եկեղեցու գործերին և ըմբուտացավ Անիում կայացված որոշման դեմ, ինչպես պատմիշն է գրում «Եպիսկոպոսը և վարդապետը Հայոց աշխարհին՝ նզովիք փակեցին զթագաւորն և զամենայն համարաբան Հայոց՝ վասն հակառակութեանն որ նոյն ի մէջ եկեղեցուց»<sup>31</sup>:

<sup>27</sup> Մադարին Օրմանյան, Ազգապատում, էջ 1203:

<sup>28</sup> Արիստակես Լատիվերտցի, էջ 32:

<sup>29</sup> Մադարին Օրմանյան, Ազվ. աշխ., էջ 1207:

<sup>30</sup> Մատթեոս Ռուբակեցի, էջ 79: Արիստակես Լատիվերտցին ևս վկացում է, որ ժամանակակիցները մնադրում էին Պետրոսին արծաթափության համար:

<sup>31</sup> Մատթեոս Ռուբակեցի, էջ 88—89:

Արքունիքը ստիպված է լինում տեղի տալ: Մեկ տարի և երկու ամիս արողակալեց հետո Դեռևորուսն աթոռանկ է արվում, վերադարձվում Սահմանին և կաթողիկոսական աթոռին 1039 թ. սկզբներին վերականգնվում է Պետրոս Գետադարձը:

1041 թ. մեկը մյուսի ետևից մահանում են Հովհաննես Սմբատն ու նրա եղբար Աշոտը և երկրում տիրում է ամեաստատ կացություն, քանի որ թագավորն անզավակ էր: Որոշ քաղաքական պայքարից հետո 1042 թ. Ս. Ելյում Բագրատունյաց գամին է նաև կույցվում Աշոտի տասնութամյա որդիին՝ Գագիկ Բ-ն (1042—1045): Օծուր կատարվում է Մայր տաճարում Պետրոս կաթողիկոսի ձեռորվ մեծ համեստով: Սակայն երեք տարի անց Գագիկը խաթությամբ կանչվում է Կոտավանդուպողին և զրկվում գամից: Բյուզանդացիները հասնում են իրենց նպատակին, զավթում են մայրաքաղաք Ս. Ելյու, այդ արարքը ձևականորեն հիմնավորելով Հովհաննես Սմբատի կուսկով: Թագավորության անկումից հետո հովհանները կատարում են զավթողական հաջորդ քայլը՝ 1046 թ. Ս. Ելյու հեռացնում են Հայոց կաթողիկոսին և իրենց հետագա տիրապետության ընթացքում երեք թուլ չեն տալիս նրա վերադարձը համարին մայրաքաղաք:

Պետրոսի աթոռակալության վերջին շրջանին և բյուզանդական քաղաքականությամբ կամորրատնամբ թիզ հետո, իսկ այժմ տեսնենք, թե ինչ էր իրենց ներկայացնում Ս. Ելյու Աշոտը Պետրոսի ժամանակ: Նախ հշենք, որ այս կաթողիկոսը քառանամյա աթոռակալության ընթացքում (1019—1058) Ս. Ելյուն է եղել ընդամենը 18 տարի (1019—22, 1026—33, 1038—46 թթ.): Սակայն Ս. Ելյու կաթողիկոսարքը գործունեության ընդարձակ ուրու և մեծ հնարավորություններ ունեցող հաստատություն էր, որը գործուն էր նաև կաթողիկոսի ժամանակավոր քացակալության շրջանում:

Մատթեոս Ուռիայնցին, որի համար Ս. Ելյու շրջանի պատմության կարևոր սկզբանադրյուր է ծառայել Հայոց Սահմաննեցի պատմիչի (մահացել է 1085 թ.) մեջ շիամած երկը, հավանաբար հենց վերջինից օգտվելով հետևյալ կերպ է ներկայացնում Հայոց կաթողիկոսությունը Պետրոսի ժամանակ. «որժամ էր տէր Պետրոս յԱշոտ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին, ուներ կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի քագաւորացն Հայոց մինք հարիւր գեղ անուանի և մեծանիր... նոյնպէս և հայսկապոր հինգ հարիւր փառաւորք և գատառատեսուչ ի վերայ մինք հարիւր թեմի հանապազերկութան եափսկոպուր և չորս վարդապետ ի տան հայրապետին անպական լիներ և վաթուուն երեց ի կրոնաւորաց և յաշխարհականաց՝ հինգ հարիւր. և չեր նուաստ Աշոտ հայրապետութեանն, քան զթագաւորութեանն Հայոց: Նաև զարդարանք եկեղեցեացն և տան հայրապետութեանն քաղուն և անհամար և հրաշալի մեծութեամբ լցեալ, զոր լսութին թագաւորացն տուեալ հաստատութեամբ ստացին հայրապետացն, որ գայր հասաներ մինչև ի տէր Պետրոսն...»<sup>32</sup>: Ուստինադրողներն այս մկարագրության մեջ շափանցություն են տեսնում, մասնավոր հինգ հարյուր գյուղի ու թեմերի հարցում, սակայն եթե անգամ կա հման շափանցություն, ապա մինևոյն է, այն չի փոխում ընդհանուր պատկերը: Բագրատունյաց վերջին շրջանում Հայոց կաթողիկոսությունն իրոք փառագոր կացության մեջ է գտնվել, աեր եղել հսկայական միջոցների ու հնարավորությունների: Սակայն ցավոր, հսկայապետի շափից ավելի մասնակցությունը քաղաքական կանքին, հան-

<sup>32</sup> Մատթեոս Ուռիայնցի, էջ 184—185:

գեցրել է Անրքին տարաձայնությունների հենց եկեղեցու ներսում: Դրա լավագոյն արտահայտությունը Դեռևորությ հետ կապված դեպքերն են: Վերջինին մասին պատմիչները ստվորաբար գովեստով են խոսում, միայն թե չեն ներում նրան Դեռորությ կենդանության օրոք Սթոռին տեր դատնալու համար:

Ուսմայեցին Դեռևորությ կոչում է «մեծ հոնոր», Վարդան Արևելցին՝ «այր սուրբ և լի ամենայն առաքինութեամբ», իսկ նրա աշակերտ Անանիա Սամահինցին ուսուցին մեծարությունը է «Երկրորդ Լուսավորիչ» կոչելով<sup>33</sup>: Իր կարմատու աթոռակալության ժամանակ Դեռևորությ Անիում բազմաթիվ նոր եպիսկոպոսներ է ձեռնադրում, առաջ քաջում Պետրոսի կողմից մերժված ներքին («զբազում... ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն... որք... մերժեալ էին յարողոյ յառաջին հայրապետացն զամեննեան զենաս յառաջ կոչեաց»)<sup>34</sup>: Իսկ երբ Անի է վերադառնում Պետրոսը, կարգալուց է անում Դեռևորությ կողմից ձեռնադրվածներին:

Եկեղեցու Անրքին դժվարությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում աղանդավորության համար, որի ճավագման մասին են վկայում Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս կաթողիկոսին հասցեագրված համակներում պահպանված տեղեկությունները: Բյուզանդացիները թերևս բավարարված կաթողիկոսի՝ քաջարական հարցերում ունեցած բացահայտ հունական կողմնորշմամբ, առամանակ դալանաբանական խնդիրներ չեն ներկայացնում, սակայն Հայաստանից գրաված տարածքներում հիմնում են քաղենական եպիսկոպոսություններ և իրենց շահերին ծառայեցնում դրանք<sup>35</sup>:

Անուհանդերձ, մինչև Հայոց թագավորության անկումն ու Անիի զավթումը կաթողիկոսությունը գտնվում էր բարվոք կացության մեջ: Մայրաքաղաքում ծաղկում էր հոգևոր մշակութային կյանքը, կառուցվում էին եկեղեցիներ, հիմնվում գրատներ: Կաթողիկոսարանում թիշ չէին բանիքուն վարդապետները, գիտնական ուսուցիչները, ինչպես օրինակ Մագիստրոսի դասընկեր Սարգիս վարդապետ Անեցին, Խաչատոր դարապետը, Տիրանուն Կապանեցին, «անպարտելի» գրիշ Թադեոսը և ուրիշներ: Սարգիսայից Անիի կաթողիկոսարան փոխադրված վարդապետարանում ուսանում էին բազմաթիվ շնորհալի երիտասարդներ: Նրանցից երկուս՝ Գրիգոր Մագիստրոսի աշակերտներ Եղիսակ և Բարսեղ եղբայրները Անի էին եկել կաթողիկոսի հրավերով: Այս կապակցությամբ Պետրոսին հասցեագրած թյոթում Մագիստրոսը գրում է. «Ես կարի յոյժ ուրախ եղէ վասն զի գատինքս այս ի քաջ հովի վատահեցայ և ի մերքս ի զարիթ քո մոցեն»<sup>36</sup>, միաժամանակ, կաթողիկոսի հետ խորհրդակցում է ուսումնական խնդիրների շորք՝ մասնավորապես ամերադառնապու Անանիա Ծիրակացու Քննիկոնին, որի բնագիրը պահվում էր կաթողիկոսարանուն:

Ուսումնական հարցերից քաջի Պետրոսը գրադարձ է եկեղեցական կազմակերպական հարցերով: Նա է հիմնել Քննիկի եպիսկոպոսական Աթոռը, որը հետագայում մեծ ներ է կատարել Արքարայան երկրամասում: Իր հախորդի օրինակով կաթողիկոսը պատվիրել է պատմագրական երկ՝ Բագրատունյաց պատմությունը («Յովհաննէս վարդապետ Տարոնեցի արար

<sup>33</sup> Ե—ԺԲ դդ. հայերն ձևագրերի հիշատակարաններ (աշխատավրությամբ Ա. Մարտիրոսյանի), Երևան, 1988, էջ 99:

<sup>34</sup> Մատուռնու Ուսմայեցի, էջ 88:

<sup>35</sup> Հովիք. Ակիմիցն (թարգմ. և առաջարանը Հ. Բարթիկյանի), Երևան, 1989, էջ LXVIII:

<sup>36</sup> Գրիգոր Մագիստրոսի թյոթը, Ակերամրդապու, 1910, էջ 18:

Պատմութիւն Բագրատունեացն հրամանաւ տէր Պետրոսի»<sup>37</sup>, որը ցավոք չի պահպանվել: Մեզ է հասել Պետրոսի պատվերով 1046 թ. Անիում ընդօրինակված մի մատյան, որը պարունակում է Հովհ. Ուկերերանի ճառերը (Մատենադարան № 988):

Ունիայեցին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Անիի կաթողիկոսարանի պաշտոնեության մի մասի վերաբերյալ, երբ հանգամանորեն նկարագրում է Պետրոսի ուղևորությունը Կոստանդնոպոլիս, որը տեղի է ունեցել Բագրատունյաց անկումից հետո, գրելով. «Եւ էր զիւն տէր Պետրոսի նախական և լան ի բնաւից Բովյար վարդապետն և ամենագովկելին Խաչատրու դարապետն և Թաղեռնու՝ որ էր անպարտելի գրչութեամբ, Գերգ Քարելեցին և Յովհաննէս Քարելեցին, Մատթէոս Հաղբանացին, Միհիթարիկն, Վարդան Սամանին»<sup>38</sup> և այլուն իմաստաւորն Կապանեցին, Միհիթարիկն, Վարդան Սամանին եցին, Բարսեղն Բաշխատեցին, և համավայելուչն և շրեն տէր Եղիսէ և Բարսեղ Առին Եղբայրն, Գերգ՝ Շովիթ ձագն և տէր Եփեմ և տէր Խաչիկ»: Մինչ այդ պատմիչը նշում է շքախմբի մյուս մասնակիցներին, որոնց թիվը հարյուրների է հասել: Պետրոսը ճանապարհ է եկել «տանեցի ազատօքն փառավոր արամբը երեք հարիոն՝ վառեալ զինոր, և վարդապետն և եպիսկոպոսուն և երաժիշտն և կրօնարք քահանայս հայրի և քաջա՞ հեծեալս ի շորոց, հետեւակ պաշտօնեալս՝ երկերիրս»<sup>39</sup>:

Ինչպես երևում է, Անիի կաթողիկոսարան ունեցել է 300 հեծյալներից կազմված մշտական պահակախումբ, որն ուղեկցել է կաթողիկոսին նրա ճամփորդությունների ժամանակ: Մասնավորապես այդ է վկայում նաև Պետրոսի 1021 թ. ուղևորությունը Տրավիզոն, երբ նրան ուղեկցում էին «հեծեալը Գծ (300) ի փառաւորաց»<sup>40</sup>: Նշենք, որ պահակախմբի կազմի նման համապատասխանությունը բանաւեր Հ. Պերպերլանին ենթադրել է տվել, թե պատմիչը շփոթել է դեպքերը և Տրավիզոնյան ուղևորության մասնաւուրը վերաբերել հաջորդ ճամփորդությանը<sup>41</sup>: Բայց դա այդպես չէ: Տրավիզոնի շքախմբի մասին տեղեկություններ կան Հովհաննես Կողենը տեսլիքի բնագրում և Հակոբ Սամաննեցու երկուու: Դրամբ հետևյալն էն. «...եկն տէր Պետրոս կաթողիկոսն... հանդերձ երկուտասան եպիսկոպոսար և Հ (70) կրանաւոր քահանայիր և վարդապետար Յովսէփ Ընձուց եւ ս. վարդապետ Յովհաննէս Կողենն և հեծեալը (Գծ (300) ի փառաւորացը»<sup>42</sup>, «Յայնժամ գայր առ Վասիլ թագաւորը տէր Պետրոս կաթողիկոսն հանդերձ երկուտասան եպիսկոպոսօք և ութանասուն կրօնարք քահանայիր և վարդապետօք Յովսէփ Ընձուց և Կողենն Յովհաննէս և այլ Գծ (300) ճամփառը ընդ նմայ ի փառաւորաց»<sup>43</sup>: Ինչպես տեսնում ենք, միակ համընկնող մանրամասնը երկու ճանապարհորդությունների պարագայում 300 հեծյալների առկայությունն է, իսկ ամենաեւական հանգամանքը երկու դեպ-

<sup>37</sup> Միհիթարաց Այդիվանեցու Պատմութիւն Հայոց, Մովկա, 1860, էջ 59—60:

<sup>38</sup> Մատթէոս Ուտիայեցի, էջ 122—123:

<sup>39</sup> Հ. Թոփենան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վաճիքն, Վեճանիկ, 1962, էջ 402:

<sup>40</sup> Հ. Պերպերլան, Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը 11-րդ դարու երկրորդ կոմին, Հանդէս ամսօրեալ, 1967, էջ 150, տես' նաև Մատթէոս Ուտիայեցի, Ժամանակականիս կողմէուն, (թարգմ. և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երևան, 1973, էջ 69, 321, նաև, 188:

<sup>41</sup> Հ. Թոփենան, ճշվ. աշխ., էջ 402:

<sup>42</sup> Լ. Խաչիկյան, Հակոբ Սամաննեցի՝ ժամանակագիր XI դարի, «Բանքեր Երևանի համապարանի», 1971, № 1, էջ 42:

բում կաթողիկոսին ուղեկցած վարդապետների միանգամայն տարբեր լինելը: Բացի այդ, Տրավորոն գնալիս Պետրոսին չէին կարող ուղեկցել Մաստիառոսի աշակերտներ Բարսեղն ու Եղիսեն, որոնք 1021 թ. դեռ Անի էլ չէին եկել:

Սակայն Ուղևայեցու մոտ, այնուամենայնիվ կա մի շփոթովթյուն: Բանն այն է, որ Պետրոսը բյուզանդական տիրապետության տակ անցած Անիից դորս գալով վերը նշված բազմամարդ շքախմբով ոչ թե անմիջապես ուղևորվել է Կոստանդնուպոլիս, այլ Սրբն: Խնչակա ստորև կտևսնենք, զա կայսրության մայրաքաղաք է տարվել միանգամայն այլ հանգամանքներում:

Այսպիսով, Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում Անիի կաթողիկոսարքն առաջիկ պես շարունակում էր կատարել իր հոգևոր նկեղեցական առաջատար դերը, միաժամանակ, երկրի մասնաւոլվածության ու բոլոցման պայմաններում ունենալով համահայկական նշանակություն և ազքեցորդյան ամին մեծ որոր, քան որևէ քաղաքական ուժ, հանդիսանում էր հայ ժողովրդին համախմբող գլխավոր գործոնն ու նրա միանականության խորհրդակենիքը: Հենց դրանով էլ պայմանավորված էր բյուզանդական զավթողական քաղաքականության անհանդուրժողական վերաբերմունքը Հայաստանյաց նկեղեցու և նրա կենտրոնի՝ կաթողիկոսության նկատմամբ:

#### ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ ԱՆԻԻՑ. ԽԱՉԻԿ Բ ԱՆԵՑԻ

1045 թ. Գաֆիկ Բ Բագրատունուն գահից հեռացնելուց և մայրաքաղաք Անին գրավելոց հետո բյուզանդացիները ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսությունը թողացնելու ու կազմալուծելու գործը: Վարդան Սրբեցու դիպուկ բնութագրում «Յոյնք... կատապան եղին ինքեանք քաղաքին (Անի) և վերացուցին ի անանէ գերկուսին՝ պատկե՝ զգահ հայրապետութեան և զօագաւորութեան, յակամայ ածեալ գերկուսեանս առ ինքեան՝ և անդրէն ոչ դարձուցին»<sup>43</sup>: Քրիստոնա հզոր հարևանի հովանու տակ ապահովաբար ապրելու մասին որոշ հայ գործիշներին՝ այդ թվում Պետրոս Ա-ի երազանքը, խարկանք դուրս եկավ: Արդեն 1046 թ. Վերջերին Անի ժամանած բյուզանդական երկրորդ կուսակալը՝ Կատակալոն Կեկալմենոսը քաղաքից հեռացրեց կաթողիկոսին՝ «...խարանօր հանէ զնա (Պետրոսին) ի քաղաքէն, ասելով եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւադի յԱրծին աւամի»<sup>44</sup>:

Հուսախար եղած կաթողիկոս այդ ժամանակից ի վեր սկսում է լըրջութեան անհանգուածալ կաթողիկոսության հետագա ճակատագրի համար: Մինչ Անիից հեռանալը նա կանխազգում է, որ կարող է այլևս իրեն շռովլաւորվի ետ վերադառնալ և որոշ ճախապատրաստություն է տեսնում. «տէր Պետրոս ... խորինցա ի միտս իր և ասէ. «գոյցէ այլ ոչ թողոն զիս Հռոմը եղանէ յարեւելք». անուանեաց յԱթոռ հայրապետութեան իրոյ զամենագովելին գտէր Խաչիկ: Նոյն օրինական խորինցա և յաղագս միունիւն օրմնեալ ձիթոյն՝ օծմանն հասառոյ Հայաստանեալց: պահեաց ի

<sup>43</sup> Վարդան Սրբեցի, էջ 133:

<sup>44</sup> Արիստական Լաստիվերտցի, էջ 63:

յԱնուբան գետն երկաթի ամանօք իբրև լիտր չորս հարիսր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռն Հռոմոց»<sup>45</sup>:

Այս ամենից հետո է, որ Պետրոսը վերը Ակարագրված հանդիսավոր շքախմբով, Կաթողիկոսարանի կարևոր պատունյաների և մեծաթիվ նոգեկ վրասկանների ուղեկցությամբ թողնում է Անին և ողերգում Արծն: Սակայն արդեն մայրաքաղաքից հեռացած կաթողիկոսի հետ հոյները սկսում են վարդի առանց այլևալությունների: Ըստ Լաստիվերցու Արծնում Աստվածահայունության տոմի օրը (1047 թ. հունվ. 6) «հասին կալանաւորք» և Պետրոսին տարան Կարինի բերդերից մեկը, իսկ ճրա քրոջ որդի Խաչիկին Անիցից բերեցին Սև Քար Կոչվող բերդը և նրանց արգելափակված պանցին մինչևն ապրիլ ամիսը, որից հետո տարան Կոստանդնուպոլիս:

Կ. Կոստանդնուացի կարծիքով կաթողիկոսին Արծնում կալանել են 1051 թ. հունվարի 6-ին, ըստ այդմ Կոստանդնուպոլիս են տարել նոյն թվականին<sup>46</sup>: Այլ հեղինակներ ևս կարծում են, թե Պետրոսը կալորության մայրաքաղաք է գնացել 1050 կամ 1051 թ., մինչեւն միանգամայն որոշակի է, որ նա Արծնում է եղել մինչև 1048 թ., եթե սեղուկները գրավեցին ու ավերեցին այդ ծաղկուն քաղաքը: Դեպքերի ժամանակագրություններից մինչամայն ճիշտ է ներկայացնում: Մ. Օրմանյանը, կաթողիկոսի ձերքակալունը նշելով 1047 թ. հունվարի 6-ին, իսկ Կոստանդնուպոլիս տարվելը՝ նոյն թվականի ապրիլի կեսերին<sup>47</sup>:

Ուշագրավ է Խաչիկի՝ որպես աթոռակցի ձեռնադրությունը, որը նիշյալ հանգամանքներում բնական էր ու պատճառարանված: Սակայն ինչպես երևում է, Խաչիկը Պետրոսի տեղապահն է եղել մինչև բյուզանդական նվաճումը, դեռևս Գագիկ Բ-ի օրոք: Մրենի վիմագիր արձանագրություններից մեկը (որը Գագիկ Բ-ի կողմից վանքի որոշ հարկերը թողնելու մասին է), սկսվում է հետևյալ կերպ: «ՆՈ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈ Ի ԽԱՐՔԱՎԵՏՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՊԵՏՐՈՍԻ Եւ ԽԱՉԻԿ ՀԱՅՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԳ ԱՅՍ ԽՄ ԽՐԱՄԱՆՔ ԵԱՆ ԳԱԳԿԱ ՇԱԽԱՆՁՈՒԹԻ ՈՐԴՈ ԱՉՈՍՈ, ԱՊԱՏԵԱՎ ԵԱՄ ԳՄՐԵԱՆՈ ԳԲԱՐԿԱ...»<sup>48</sup>: Հավանաբար, Ակատի ունենալով նախընթաց շրջանի խոռվահույզ դեպքերի փորձը (Հովհաննես Սմբատի հետ ունեցած գժտությունը, իր ձերքակալությունն ու Դեռսկորոսի ձեռնադրությունը) Պետրոսը Գագիկի իշխանության գալոց անմիջապես հետո Խաչիկին տեղապահ է հաստատել: Իսկ եթե 1046-ի վերջերին բյուզանդացիների հարկադրանքով ստիպված էր հեռանալ Անիից, ճրան աթոռակից կաթողիկոս է օծել: Իհարկե, Պետրոսի այս փոքր խորամանելությունը ոչ մի դեր չէր կարող խաղալ բյուզանդացիների համար, որունք Արծնում ճրան կալանելով անմիջապես ձերքակալում են նաև Անիում մնացած Խաչիկին («...Խաչին կալանաւորք և աղին զնա (Պետրոսին) տարան եղին ի բերդին՝ որ կոչի Խաղոսոյ Ասիճ: Եւ ապա ածեալ ի Հայոց գրեսորդի նորին զԽաչիկ անուն և եղին ի բերդին, որ կոչի Սեան Քար և մնացին անդ մինչևն մերձ ի զատիկն: Եւ ապա համեալ զնոսա անտի տարան ի Կոստանդնուպոլիսի...»)<sup>49</sup>: Բնական է, որ այս ուղևորության ժամանակ Պետրոս կաթողիկոսը չէր կարող ունենալ այն բազմամարդ շքա-

<sup>45</sup> Մատթեոս Ռոբինսոն, էջ 122:

<sup>46</sup> Կ. Կոստանդնուաց, Պետրոս Ա. Գետապարձ, Վաղարշապատ, 1897, էջ 38—42:

<sup>47</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1234:

<sup>48</sup> Ա. Սարգսիսեան, Տեղեկագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայոց, Վենետիկ, 1864, էջ 197:

<sup>49</sup> Արիստուկես Լաստիվերցի, էջ 64:

խումբը, որը նրա հետ էր Անիից դուրս գալու ժամանակ: Այնուամենայնիվ կայսրության մայրաքաղաքում նրան պատշաճ ընդունելության են արժանացնում: Պետրոս այսուհետ «պատվավոր աքսորականի» վիճակում մնում է երեք կամ չորս տարի, ինչպես պատմիչն է վկայում կայսրը «քազում պատուվ և մեծարանօք ընկալա, և առան ոռնկօր հրամայեաց պաշտել զնա. բայց առ իր պահեաց զնա ամս երիս, քանզի կասկածեր թողով ի Հայութէ երթեայ ապստամքեցուցանէ զԱ.Յի»<sup>50</sup>: Այս վերջին վկայությունը ևս հաստատում է, որ երթեանի հունասեր հայրապետն արդեն վտանգ էր ներկայացնում հենց հովաների համար:

Ի վերջո Ասոն Արծրունու միջնորդությամբ Պետրոսը տեղափոխվում է Սերաստիայի Ս. Նշան վանքը: Ուռիացեցին գրում է, թե կաթողիկոսը «ի քաղաքն Անի ոչ ժամանեաց, այլ երթեալ բնակելի ի Սերաստիա քաղաք»<sup>51</sup>, իսկ Կիրակոս Գանձակեցին ավելի է ճշգրտում «հրամայեաց կայսրն հայրապետին դնել զԱթոռ իր ի Սերաստիա և անոնի հովուել զհօս իր: Եւ ամեն եկաց հայրապետն մինչև ցվահնան իր»<sup>52</sup>:

Պետրոսի աթոռակալության վերջին շրջանի մասին թիշ բան է հայտնի: 1055թ. Սնանիա վարդապետ Սանահնեցին նրա պատվերով ավարտել է Պողոսի թոշերի մեկնությունը համառոտելով ինն հեղինակների երկերը՝ «վասն դիւրահասութեան ընթերցողաց» և թերևս այդ ժամանակ էլ սկսել է գրել իր հայտնի «Բան հականառութեան ընդդէմ երկարնակաց» երկը, դարձյալ «հրամանաւ տեան Պետրոսի Հայոց վերադիտողի»<sup>53</sup>: Սակայն մինչ վարդապետը կավարտեր գործը մահացել է պատվիրատուն և հեղինակն ավարտելով այն ներկայացրել է Խաչիկ Անեցուն, որովհետև աշխատության վերջում գետեղված հիշատակարանում արդեն դիմում է նրան. «...արդ... զարքար իմոց մոտաց ընկալցի պտուղ, ով գերակատարդ... տէր Խաչիկ, վերադիտող Հայոց Մեծաց, փոխանորդ մեծի Լուսավորչին...»<sup>54</sup>: Պետրոսի կողմից սույն աշխատության պատվիրումը ոչ միայն ցոյց է տալիս, որ նա կայսրության նկատմամբ ընդդիմադիրի դիրք էր գրավել, այլև յուրովի նախապատրաստվում էր հովաների դավանաբանական պահանջներին, որովհետև, ինչպես Հ. Քյուսեյանն է հշում. «Դավանաբանական այս աշխատության շարադրումը նպատակ ուներ զորացնել հայ Եկեղեցու գաղափարական դիմագրավման ոգին՝ ընդդեմ Բյուզանդիայի հոգեւոր, քաղաքական նկրտումներին: Այս է պատճառը, որ նրա մեջ արծարծվող խնդիրները գլխավորացներ քիչառությունը ունեցած հոգեվիճակի մասին»<sup>55</sup>: Պետրոս Գետադարձը մահացել է

<sup>50</sup> Նոյն տեղում, էջ 82:

<sup>51</sup> Մատթեոս Ուռիացի, էջ 125:

<sup>52</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 95:

<sup>53</sup> Ե—ԺԲ դր. Բայերն Շեռագրերի հիշատակարաններ, էջ 99, 101:

<sup>54</sup> Ե—ԺԲ դր. Բայերն Շեռագրերի հիշատակարաններ, էջ 101:

<sup>55</sup> Հ. Քյուսեյան, Սնանիա Սանահնեցու «Հականառություն», «Գանձասար», 1992, Ա, էջ 197—198:

<sup>56</sup> Սերաստիայում Պետրոսն իր բուն անցուալը վերաբերներելու, անցակորի ու համբեկանի մասին խոնակու շատ ժամանակ ուներ: Ծարականների «Ննջեցւոց» շարքում նույնականացնելու համար առաջին անգամ անցական է անցուալը վերաբերները պատճենաբանությունում:

1057 կամ 1058 թ., որից հետո միանձնյա աթոռակալ է դարձել Խաչիկ Բ Անեցին, քանի որ «զգենադրութիւն հայրապետութեան վաղնջոց ընկանալ էր»<sup>57</sup>: Սակայն «Անեցի» մականոնն ունեցող այս սուաշին կաթողիկոսին բյուզանդացիներն այդպես ել թույլ չեն տալիս այլևս ուր դնել հայրենի քաղաք և անցնում են բացահայտ հավաճանքներից: Նախ անմիջապես Սէրաստիայից Կոստանդնուպոլիս են տանում Խաչիկին, ապա կողոպսում պատեր և Անիում պահված կաթողիկոսարանի գանձերը: Հոյմերը անձախահետ ճնշում են գործադրում Հայոց կաթողիկոսի Վրա՝ «ընդ հարկի կամ մինչ արկանել զնա... Եւ ապա ի հարց և ի փորձ արկեալ, և սպառնալիս ևս բարդուն եթէ ոչ եւանիցես աստի, եթէ ոչ զիրամայեալսն ի մէնց յանձն առնցուա»<sup>58</sup>: Սակայն Խաչիկ Անեցին անդրդեկի է մնում: Հաստատակամ կաթողիկոսի եռամյա տառապանքներն ավարտվում են 1061 կամ 1062 թ., երբ Անիսին գահակալ Գագիկ Բ-ի, Կարսի թագավոր Գագիկ Արաւանի և որիշների միջնորդությամբ հաջողվում է նրան դուրս բերել կպարության մայրաքաղաքից և բնակության տեղ ապահովել Փոքր Հայքում՝ Թավրլուրում: Մի քանի տարի ալստեղ բնակվելուց և 1064 թ. Անիի սելջուկների կողմից գրավման ու ավերման կակիծն ապրելուց հետո Խաչիկ Անեցին վախճանվում է 1065 թ.:

Այն, որ հոյմերն Անին գրավելուց ի վեր ամեն ինչ անում էին կաթողիկոսական Աթոռն ալստեղից արմատախիլ անելու համար, միանգամայն որոշակի է: Այդ են հաստատում Պետրոսի աթոռակալության վերջին և Խաչիկի կաթողիկոսության բոլոր տարիները, Անիում ու մերձակա վանքերում այդ շրջանում գրված բազմաթիվ վիմագիր արձանագրությունների մեջ Հայոց կաթողիկոսի հիշատակման խաղան բացակայությունը, որը բյուզանդական խիստ գրաբննության արդյունքն էր և այլը<sup>59</sup>: Սակայն, մյուս կողմից նայ ժողովրդի գիտակցության մեջ Անին շարունակում էր օրինական կաթողիկոսանիստ համարվել: Արիստակես կատարվեցին խուելով բյուզան-

արտահայտում է համբումիանոր գաղափարներ, բայց անկանած նաև սեփական կենաց փորձը նկատի ունի: «Մերձեցաւ ևս ի դուռն գերեզմանի» սկզբանողով շարականում դիմում Աստծուն խնդրում է.

«Բժիշկ իմաստուն և ճարտարապետ  
Բժշկեա զիոգույ իմ զիհիանդութիւն...  
Բըլիսեցնեան առ իս զգոյթ մարդասիրութեան  
Եւ բաղրերէ կենաց լուացէս զմադին իմոյ»:

Մեկ այլ տեղում գրում է.

«Ուկի եղեալս՝ անպիտանացայ,  
Գեղեցկայարմար շինուածիս բակտում,  
Խմաստուն՝ իմարացայ,  
Եւ յալեաց մեղաց, յոր ընկդմեցաք» և այլն:

Տ. և Չարական, Երրուստիմ, 1936, էջ 907—908:

<sup>57</sup> Արքաստակես Լաստիվերտցի, էջ 82:

<sup>58</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 83:

<sup>59</sup> Բյուզանդացիների կողմից Անիի կաթողիկոսարանի կազմակունման մասին վկայող պահովդակի փաստ է այն, որ Պետրոսի ու Խաչիկի կապանումից հետո Անին բողել ու վանուածակի փաստ է բաշվել կաթողիկոսարանի մատնադարանապես Սարգսի վարդապետ Անեցին: Կ. Մաթևոսյան, Սարգսի վարդապետ Անեցի, «Անի», 1992, № 1:

դրական տիրապետման մասին գրում Է՝ «այժմ թագաւորն անկեալ ի պատույ, իբրև զգերի կալվանար նատի ի նեռարձնակ տեղիս. այսպես և հայրապետական Աթոռն ամացացեալ ի բնակողէն ցուցանի տխոր դիմօր իբրև զկին նորահասն՝ մնացեալ ի յաշրիութեան»<sup>60</sup>: Այսինքն, հայրապետական աթոռանիստն Անին էր, միայն թե այնուեղ չեր ալոռակալը: Իսկ Ուռիալցու հավտածից երևում է, որ Անիի սելչուկյան զավթումից հետո, Թափրուրում գտնվող Խաչիկ կաթողիկոսը ողբում է նոյն այդ Աթոռի ավերումը՝ «սուգ ուներ ի սրտի իրում տէր Խաչիկ... իշեալ զաւերումն հայրապետական Աթոռոյն Տաճի Հայոց»<sup>61</sup>:

Խաչիկ Անեցու մասից հետո բրուգանացիները դիմեցին ծայրահեղ քալի, Հայոց կաթողիկոսութունն ընդհանրապես վերացմելու համար արգելեցին ուր կաթողիկոսի ընտրությունը: Բայց կայսրությունն այլևս հախկին ուժը չտներ, արևելքում երա բանակները խայտառակ պարտություններ էին կրում սելջուկներից: Զարմանալիորեն, անգամ նման պարմաններում, հոյները շարունակում են հականայ բաղաքականություն վարել: Մեծ ճիգերի գնով հայ ազնվականությանը հաջողվում է 1066 թ. իրականացնել նոր կաթողիկոսի՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգորի (Վկայաւեր) ընտրությունը: Սակայն, վերջինս հեռու էր կաթողիկոսության վարչական գործերից և ամրողովին տարված լինելով սուրբգրական թարգմանական աշխատանքով փաստորեն նկալեցական-կազմակերպական գործերը թողել էր որից մեկի՝ Գեղրդ Լոռեցու տնօրինությանը: Այս շրջանում կաթողիկոսարանը գտնվում էր Կիլիկիայի սահմաններում՝ Աև Լեռներում կամ Ծամնավոյն:

Անին այդ ժամանակ աստիճանաբար բուժում էր վերքերը: Անեցիների համար ծանրագույն հարված էր սելջուկների կողմից՝ Մայր տաճարի վերաբեկը մզկիթի: Բայց բաղաքի երիտասարդ ամիրա Մանուչեն (մոր կողմից ծագումով հայ էր), փորձում էր սիրաշանել հայերին: Վարդան Արևելցու վկայությամբ. «Մանուչ... զարգացեալ լաւելու ի պարհապն Անոյ և յամուտինս նորա: Եւ ած ի բաղաք զամնայն մնացեալ իշխանս... Եւ շինեցարադարն Անի ոչինչ պակաս բան զանցինն»<sup>62</sup>:

Ահա այս պայմաններում 1074 թ. Անի է զալիս կաթողիկոս Գրիգոր Վկայասերը: Պետրոսի հեռանալուց 28 տարի աց Հայոց կաթողիկոսը կորկին ուր է դնում նախկին աթոռանիստ Կենտրոնի նվիրական հողին: Վկայասերի այցելության շարժանիթը զուտ անձնական էր, ևս եկել էր ծերացած մորք տեսության: Սակայն անեցիներն այս այցելությունից հշանակաւից արդյունք քաղեցին, քանի որ կաթողիկոսն այսուեղ եալիսկոպոս ձեռնադրեց իր քրոջ որդի Բարսեղին, երան օժտելով «ընդարձակ իշխանութեամբ հսկողութեան Հայաստանի զավառներու վրա, իբր կաթողիկոսական փոխանորդ...»<sup>63</sup>:

Գրանից շատ չանցած՝ 1081 թ. Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Հաղբատում հանդիսավորապես ձեռնադրվում է Հայոց կաթողի-

<sup>60</sup> Արիստուկիս Լաստիվերոցի, էջ 60:


<sup>61</sup> Մատթեոս Ուռիալցի, էջ 184::

<sup>62</sup> Վարդան Արևելցի, էջ 138:

<sup>63</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1289:

լու ու փառավոր երթով ուղևորվում Ա.Յի։ Պատմիչն որպահությամբ է արձանագրում այս իրադարձությունը՝ «Յայս ժամանակին նորոգեալ եղեւ Աթոն Սրբոց Գրիգորի ի քաղաքն Ա.Յի, որ ի վաղոց հետէ ժամանակաց խափանեալ էր մախանօք և նենգութեամբ չար և դառնացեալ ազգին Հոռոմց»<sup>64</sup>։ Ողջ հայությունը ցնծությամբ է ընդունում այս լուրը։

<sup>64</sup> Մատթեոս Ռումայնի, էջ 266։



## ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ

### ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երզնկայի վանքերի մասին ստեղծվել է հարուստ գրականություն:

ա) Արևմտահայ մամովոս տպագրվել են մի քանի տասնյակ հոդվածներ: Դրանցից առավել փաստալիցներն ու արժեքավորներն են՝ Տ. Պալյանի հոդվածաշարքը «Բյուզանդիոն» օրաթերթի 1902—1904 թթ. մի շարք համարներում, Դ. Վարդապետ Հակոբյանի «Վամօրայք Երզնկայի» հոդվածները այդ նույն թերթի 1897 թ. համարներում, Ս. Ամատյանի «Եկեղյաց գալաք Վանորայք» հոդվածաշարքը «Արևելյան մամով» ամսագրի 1890 թ. համարներում: Առանձին հոդվածներ են տպագրվել նաև «Բյուրակնում», «Մասիսում», «Ծաղիկում» և այլ պարբերականներում:

բ) Երզնկայի վանքերի մասին առաստ տվյալներ ենք գտնում մեր հարուստ ձեռագրերի հիշատակարաններում: Հիշատակենք Հ. Հ. Տաշյանի «Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա» ստվարածավալ աշխատությունը (Վիեննա, 1895), Լ. Խաչիկյանի ԺԴ, ԺԵ դարերը հիշատակարանների մի քանի հատորները (Երևան, 1945, 1955, 1958, 1967), Վ. Հակոբյանի և Ս. Հովհաննիսյանի «ԺԷ դարի հիշատակարանները», ինչպես և Երուաղեմի, Վենետիկի, Զմինակի վանքի և այլ վայրերի ձեռագրերի հիշատակարանները պարունակող մեկ տասնյակից ավելի հատորներ:

գ) Երզնկայի վանքերի մասին խոսում են առանձին պատմաբաններ, ճանապարհորդներ, բանահավաքներ իրենց աշխատություններում, երրեմն թուոցիկ տողերով, երբեմն հանգամանորեն: Հիշենք Գ. Արվանձույանցի «Թորոս Սղբարը», Պ. Նարանջյանի «Արտոս Հայաստանին», Կ. Ղազանճյանի «Խառն ճամակները», Գ. Տեր-Վարդանյանի «Երզնկա-Կամախ գավառաբառը և ազգագրական հուշեր», Հ. Քյուրտյանի «Երիզա և Եկեղյաց գալաք» և այլն:

դ) Գրվել են ամփոփ հետազոտություններ, որոնց մեջ ամենից ծավալուն ու փաստալիցը Հ. Հ. Ռոկյանի «Բարձր հայքի վանքերը» աշխատու-

թյան Երգմկային ճվիրված գլուխն է: Գ. Սյուրմենյանն էլ իր «Երգմկա» գիլում Ակարագրել է 14 վանք, յորպահանջորդի մասին խոսելով շատ համառոտ:

Սրանցից մի քանիսի վկացությունները բացառիկ արժեք են ներկայացնում, քանի որ հեղինակները անձամբ շրջազայել են վանքերում, տեսել, գրի առել բնորոշ տվյալները, անգամ ձեռագրերից արտագրել որոշ հիշտակարաններ: Այդպիսի հավաստի աղբյուրներ են S. Պալլանը, Ա. Ամատյանը, Գ. Սյուրմենյանը: Մյուսները հիմնականում օգտվել են տպագիր գրականությունից:

Ծառ հարցեր, կապված Երգմկայի վանքերի հիմնադրման ժամանակաշրջանի, միարաների քանակի, վանքերի մշակութային դերի մասին, այնուամենապես սպառիչ պատասխան չեն ստացել մինչև օրս:

Մեզ համար էլ դժվար պիտի լինի այդ հարցերի պատասխանը տալը: Փորձելու ենք առկա ցոյտի սահմանում Երգմկայի վանքերը ծանրութացնել ըստ նրանց կատարած կրթական, մատենագրական դերի, հասարակական կյանքում ունեցած կշռի: Բանաստեղծների մեծ մասը հայկական վանքերի մասին գրելիս անտեսել է նրանց հասարակական, քաղաքական դերը ժողովրդից գոյատևման համար մղված պայքարում, մինչդեռ հայ եկեղեցին պետականությունից գորկ մեր ժողովրդի կյանքում կատարել է խոչըն դեր ոչ միայն նրա մտավոր զարգացման, այլև քաղաքական կյանքի դեկալարման գործում: Մեր կաթողիկոսները, պատրիհարքները, հոգևոր առաջնորդները հաճախ են ողղովայում տվել օտար նվաճողների դեմ մղվող պայքարին: Հիշենք Ներսես Աշտարակեցուն, Ֆրանովի Բարթողիմեոս վարդապետին և այլն: Նրանք կոչ են արել զինված պայքարի, իրենք էլ մասնակցել են Կոփակներին:

Երգմկայի վանքերից մի քանիսը նույնպես, դժվարին պայմաններում ուրածել են յորպահատուկ ամրոցներ և շնորհիվ իրենց անառիկ դիրքի՝ փըրկել են հազարավոր մարդկանց կյանքը:

Վերջապես հայ առաքելական եկեղեցին մեծ դեր է կատարել օտարամուս այն գաղափարախոսությունների դեմ մղվող պայքարում, որոնց նպատակն է եղել դավանարանական հակամարտություններով բաժան-բաժան անել հայերին և թողացնել նրանց պաշտպանական ուժը, ենթարկել օտար պետություններին, ինչպես արել են երկար դարերի ընթացքում Հռոմի գործակալները:

Վանքերը մի ուրիշ պատճառով էլ ժողովրդին կապել են իրենց հետ: Մարդիկ պետել ոչ միայն իրենց հոգու փրկության համար աղոթել են, այլև վանահայրերից, վարդապետներից խնդրել են առողջություն տալ, բուժել զանազան հիվանդությունները:

Հայունի է, որ այդ դարերում պատմական Հայաստանի ամբողջ տարածքում չի եղել որևէ հիվանդանոց՝ աշխարհական մարմինների հսկողությանը ենթակա: Հիվանդությունների բուժման միակ եղանակը եղել է տնային բժշկությունը, այժմյան արտահայտությամբ՝ պառավական բուժումը: Հեքիթներին, ժողովրդական բուժակներին է վատահիվել բժշկի դերը: Մեկ էլ հոլյու դրվել է վանքերի վրա:

Այստեղ էլ, անշուշտ, մեծ դեր է կատարել ոչ միայն Ավետարաններ կարդալը, սաղմոսներ ասելը, այլև ոխտագնացությունների օդափոխության օգուտը, բուսական դեղերի օգտագործումը, որոնց հմուտ են եղել շատ վարդապետներ:

Երգնկայի վաճեքերից մի քանիսը խոր անցյալում ունեցել են հիմքանդառնոցային հարկարաժիններ, որտեղ բուժվել են մարդիկ հենց բուսական դեմքերի բարկենորդի միջոցով:

Որոշ վաճեքերի անուններն են վկայում են, որ եղել են բուժական կենսորուններ, ինչպես «Անարծաթ թժկաց վաճեք», «Ակնջի վաճեք» և այլն:

Երգնկայի վաճեքերի անցյալում ունեցած բուժական դերին անդրադարձել է Կ. Դազմանճյանը մոտ 100 տարի առաջ հրատարակած գրքում, ասելով. «Կանգուն մնացած վաճեքն այ շեղած են իրենց նապատակեն և եղած են լոկ ովատատեղիներ. կամ ավելի ճիշու ըսելով՝ զրուավայրեր: Ո՞ւր մնաց վաճեքից մեջ հիմքանդառնոցները, ո՞ւր մնաց անկելանոցները»<sup>1</sup>:

Գոյություն են ունեցել ոչ միայն վաճեքեր, որտեղ վաճականներն ապրել են յորահատուկ համայնական կյանքով, այլև կյանքից «հոսոված» մարդիկ՝ ճգնավորներ, որոնց թիվն էլ բավականաշափ մեծ է եղել Եկեղյաց գավառում:

Նրանք հիմնականում սևվել են բուսականությամբ և շրջակա գյուղերից բարեպաշտ մարդկանց բերած համեստ ճաշերով:

Որոշ ճգնավորներ ունեցել են կրթական, մշակութային գործունեություն, ամենցել են աշակերտներ, իրենց համար զրայմունք դարձել ձեռագործ արտագրելը:

Մեր մատենագրության մեջ հիշվում է Գառնիկ ճգնավորը, որի անունով հետագայում գործել է համանուն վաճեք՝ Տաճրակ և Ծղճի գյուղերի արանքում:

Գրիգոր Դարանաղյին վկայում է, որ Սեպուհ լեռան ստորոտի քարայրներում ապրել են նման ճգնավորներ, որոնցից մեկը՝ Պարոնը, եղել է իր ուսուցիչը:

Հ. Հ. Ռոկանը Երգնկայի վաճեքերի թիվը հասցեում է 34-ի: Անշուշտ իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է եղել: Ժամանակի ամենակոլով ժամանքը սրբել-տարել է շատ վաճեքեր, եկեղեցիներ, փլատակների տակ թողել ուրիշներ, որոնց հետքերը պահպանվել են մինչև մեր օրերը:

Այդ ավելներին հապատել է Երգնկայի աշխարհագրական դիրքը, քարի պակասը, որի պատճառով շենքերը շատ հաճախ շինվել են փայտից կամ բում աղյուսից: Խակ երեւ եղել են քարաշեն, ապա դրանք քանդել են քրերն ու թուրքերը, քարերը տարել-օգտագործել են իրենց տների, մարագների համար:

Բայց այն, ինչ մնացել էր մինչև 19-րդ դարի վերջերը, ինքնին քավական ցյութ կարող է տալ հետազոտողներին և մղել ուշագրավ եզրակացությունների: Եվ դա պես է կատարվի, քանի որ դարավերջին եղածն էլ, որի մասին գրավոր տեղեկություններ են պահպանվել. քանդվել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ու Երանից հետո, երբ Թուրքիայում պետական քաղաքականություն դարձավ հայկական մշակույթի հետքերի խպառ բնաշնչումը: Այդ քաղաքականությունը այժմ էլ տարվում է ամենայն հետևողականությամբ: Ապացուց՝ Էրգրումի մասին թուրքերն լեզվով լուս տեսած մի գիրը<sup>2</sup>, որը թերթողը չի կարող իմանալ, թե Էրգրու-

<sup>1</sup> Կիրակոս Ս. Ղազանճյան, Խառն նամակներ, Կ. Պոլիս, 1887, էջ 21:

<sup>2</sup> Erzrum, Tarihi, Anıtlare, Kitobeleri, İstanbul, 1936.

մոմ առհասարակ հայեր ապրել են: Նոյնը պիտի լինի Երգմկայի դեպքում:

Վերջապես բնությունն էլ դաժան է վարվել մեր վանքերի հետ: Այս, ինչ չի կարողացել կատարել օտար ասպատակողը, արել է երկրաշարժը, որը տևական բնույթ է կրել Եկեղյաց գավառում:

Եթե ունենք վկայություններ, թե եղել են այնպիսի երկրաշարժեր, որոնք մի քանի ժամում, հաճախ մի քանի րոպեում հողին են հավասարեցրել մեծ բնակավայրեր. Խլել մինչև 30.000 մարդու կյանք, անշուշնան երկրաշարժերը պիտի երկրագնդի երեսից սրբեին նաև վանքեր, եկեղեցիներ, դրանք առնենք ցնցումից բացված խորխորածների մեջ ու փակենք ընդմիշտ մարդկության աշքից:

Անցնենք՝ վանքերին:

## 1. ԱՎԱԳ ՎԱՆՔ

Երգմկայի տասնյակ վանքերի մեջ իր մշակութային գործունեության կշիռով բացառիկ տեղ է գրավում Ավագ վանքը, որ կոչվել է նաև Ս. Թադեոսի, ըստ երևություն հրամ խոր հնություն վերագրելու հասկանավի հապատակ, քանի որ հին ձեռագրերի հիշատակարաններում այդ անվանը չենք հանդիպում:

Այսպես թե այնպես, Ավագ վանքը մոտ հազար տարվա հնություն ունեցող մի կենտրոն է եղել: Խոր անցյալից եկել-հասել է մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիներից:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում միշտ գոյն կշիռը չի ունեցել, մերժ եղել է սովորական աղոթատեղի, մերթ՝ կրթական, գրչագրական կենտրոն, մինչև անգամ արժանանալով «համալսարան» հորչորշման: Մերժ հետու վայրերից մարդիկ այնտեղ են գնացել ուսում ստանալու, մերժ տեղի միարաններն են ամեն ինչ թողել, կամ մի քանի ձեռագիր վերցրած՝ փախել են որիշ վայրեր՝ ազատվելու համար բարբարոսական հարձակումներից, կոտորածներից:

Ավագ վանքը կառուցված է եղել Սեպուհ սարի լանջերին, Երգմկայից յոթ ժամ հեռավորության վրա, գեղատեսիլ ու հովասուն վայրում, շրջապատված ծաղիկով, սաղարթախիտ անտառներով, օժոված սառնորակ աղբյուրներով ու գլուխ առվակներով, առավելություններ, որոնց շնորհիվ դարեր շարունակ պահել է սիրված ոխտատեղի լինելու առավելությունը:

Գ. Սլուրմենյանն իր գրքում գետեղել է մի նկար, հանկած 1906 թ. մի ոխտագնացության ժամանակ: Հարյուրավոր մարդկանց ներկայությունը այդ լուսանկարում, այն էլ Համբիյան բռնապետության խստագոյն տարիներին, երբ հայերի համախմբումը որևէ վայրում դիտվում էր որպես քաղաքական խմբումների արտահայտություն, ցոյց է տալիս այն մեծ հետաքրքրությունը, որ եղել է այս ոխտատեղի նկատմամբ:

Ե՞րբ է կառուցվել: «Բնաշխարհիկ բառարան» անգամ փորձել է հիմնադրման թվականը որոշել և համարում է մեր թվականության 35-րդ. տարին, կապելով Թադեոս առաքյալի քարոզչության հետ: Ի հարկե սա գիտական հիմք չունի: Նրա հնությունը մինչև առաջին դարերը տանելու համար վանահայրերը որոնել ու գտել են նոյնքան միամիտ մի ապացուց էլ:

Դա Ավագ վանքի սևիականությունը եղող ճշանավոր Դեղթափն է, որի շորջ անգամ մամուլում աղմուկ է բարձրացվել, նկարն էլ տպագրվել է պուլահայ տարեցոյցներից մեկում:

«Դեղթափը փոքր ձեռքի մը մեծովյամբ, գոգածն, բոլորակ, հակիմքրյա երկնագույն քար մըն էր, —գրում է Գ. Սյուրմենյանը, —որուն վրա նկարված էին Հոռմի կայսեր ու կայսրութիւն նկարները... Ավանդաբար կպատմվեր թե Տրդատ թագավոր քիչտունեությունն ընդունելէ վերջ Հոռվմա կայսեր տված իր այցելության առիթով Կոստանդիանոս կայսեր կողմե նվեր ստացած է զայն: Անոր վրա, նկարներուն տակը գտնված կայսեր ստորագրությունը կհաստատե այդ պարագան: Ան որպես մասունք կպահվեր մասնավոր խաքանոցի մը մեջ: ... Այս քարը Թեղթափ կկոչվեր անոր համար, որ բուժիչ հաճախանք ուներ»<sup>3</sup>:

Որ Դեղթափը հնագիտական արժեք է Աերկայացրել՝ կասկածից վեր է, բայց ամենին չի կարող որոշել վանքի հիմնադրման ժամանակը: Ի վերջո կարող էր Պոլսից բերված լինել շատ ուշ ժամանակներուն:

Ուստի դուրս գանք ավանդությունների արահետներից ու դիմենք գիտական, վավերական փաստերին: Այդպիսի փաստեր մեզ կարող են տալ վիմական արձանագրություններն ու մատենագրական հիշատակությունները:

Ավագ վանքի հնագույն արձանագրությունը 15-րդ դարից ետ չի գտնվ երկրաշարժների պատճեռով հաճախ հիմնահատակ կործանված լինելով: Նրա մատուններից մենի վրա կա մի քար, որը կրում է Զթ (1460) թվականը և կառուցող վարպետի անունը՝ Հովհաննես:

Բարերախտաբար ձեռագիր մատյանները մեզ ետ են տանում մինչև 12-րդ դարի կեսերը:

Հնագույն վկայությունը, որին համույթում ենք, վերաբերում է 1200 թվականին: Այդ տարուն Ավագ վանքում գրվել է երկու ձեռագիր: Երկուս գրիչներն էլ կոչվում են Վարդան: Հնարավոր է, որ տարրեր մարդիկ լինեն:

Ձեռագիրը մեկը մի Ավետարան է, որի հիշատակարանում ժամանակի հոգինոր առաջնորդ է հիշվում Տեր-Սարգիսը: Հ. Քյուրյանը ենթադրում է, թե պետք է լինի հետագալում հոչակված Տեր-Սարգիս արքեպիսկոպոսի պապը:

Սրու ձեռագիրը այն ճշանավոր «Ծաղընտիրն» է, որ գիտական աշխարհին հայտնի է «Մշո ճաղընտիր» անունով և հանդիսանում է հայ գրչագրական արվեստի փառքերից մեկը, աշխարհում պահվող բազմահազար հայ ձեռագրերից ամենամեծը: Գրիչն է Վարդան Կարնեցին, ծաղկող՝ Ստեփանոսը: Օգտագործված ըստոք՝ մագաղաթը, պատրաստվել է 600 արշանի և երիսչի մորթոց: Արտագրման աշխատանքը տևել է երեք տարի:

Այս «Ծաղընտիրը» բացառիկ արժեք է Աերկայացնում հան բուվանակությամբ: Պարունակում է ավելի քան 300 միավոր հյութ՝ ճառեր, վկայություններ, պատմական երկեր, Աերբողներ, որոնցից մի քանիսին հանդիպում ենք միայն այդ ձեռագրում: Նյութեր կան Գրիգոր Լուսավորչից, Սահակ Պարթևից, Եղիշեից, Մովսես Խորենացուց, Դավիթ փիլիտափայից, Սերոսից և որիշներից:

«Ծաղընտիրը» աչքի է ընկնում մանրանկարչական արվեստով. ունի բազմաթիվ գլխազարդեր, լուսանցազարդեր, տերունական նկարներ:

<sup>3</sup> Գ. Սյուրմենյան, Երգմկա, Գամիրե, 1947, էջ 36;

Ինչո՞ւ է կոչվում «Մշո ճառընտիր», քանի որ գրվել է Երզակալում:

Բանեա այն է, որ այդ հշանավոր ձեռագրին վիճակվել է ծանր ճակատագիր, նման հայ ժողովրդի ճակատագրին:

Հազիվ ավարտված ընդօրինակումը՝ Սեբաստիայի սովորան արշավել է դեպի Կարին: Չեռագրի պատվիրատու Բարերդի ուխս Աստվածառորը անկազմ վիճակում հասցըել է Բարերդ, բայց այնուեւ Աստվածառորը սպասվել է Ծուրքերի կողմից: Ծառընտիրը բաժին է ընկել դառավորին, որը տարել-թաքցըել է Խլաթում: Երկու տարի անց՝ 4000 արծաթ դրամով վաճառել է Մշն Առաքելոց վաճքին, որը դարձել է ձեռագրի սեփականատերը մինչև մեծ եղեռնի օրերը, այսինքն՝ 710 տարի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և. Մասի հաճախարժությամբ ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի նպատակն է եղել բարբարության վայրագություններից փրկել հայկական հնությունները ու ձեռագրերը: Այդ հանձնաժողովը ձեռք է բերել Մշտ Առաքելոց վանքի փայտյա հշակավոր դրույը, որն այժմ պահպան է Հայաստանի պետական պատմական թանգարանում, և վերոհիշյալ «Ծաղրանիթի» մի մասը: Ձեռք է ընդունվել Բիթիւնում, տեղափոխել Բաքու, ապա՝ Թիֆլիս:

Այսուհետեւ երկու մշեցի հայութիւններ ներկայացել են համապատասխան մարմիններին և հանձնել առևէ ձեռագրի մյուս կեսը՝ սակայն պակասավոր էօքով:

Հետագայում բազմաչարչար «Ծառնախիլը» տեղափոխվել է Երևան և այժմ հատուկ ցուցափեղկի մեջ վերշնական հանգրվանն է գտել Մատենադարանում։ Տարիների ընթացքում հայտնաբերվել են նաև պակասափոք էկերից մի քանիսը։

Մեզ այստեղ հետաքրքրում է մի այլ հարց: 600 արջանի ու երիծած  
մորթուց պատրաստված համա մի հսկա ձեռագիր կարո՞ղ էր գրվել ու նկա-  
րագրվել մի վանքում, եթե այն առնվազն կես դարու գրչագրական փորձ  
ու մասնագետներ չունենար, չունենար նաև ճնշի գրադարան, տրբեր մա-  
սնագիտության տեր վաճականներ:

Անցուս չեր կարող: Ուստի Ավագ վամբի գրչագրական գործութեա-  
թակ սկիզբը ամենահի է չենք կարող համարել 1200 թվականը:

Հաջորդ տարի, այսինքն 1201 թվականին, Ավագ Պատրիարք ավարտվել է մի առ Ավետարանի արտագրությունը, որի գրիչն է Ղազարը: Նոյն թվին մի Ավետարան էլ արտագրել է Ստեփանոսը:

1227 թ. գրված «Հարանց վարքի» հիշատակարանից երևում է, որ աղ-  
տասամայսկերում Ավագ վանքը եղել է մուսավոր ուշագրավ կենտրոն՝ ամ-  
բող Եկեղաց գալստում: Այդ հիշատակարանում հանդիպում ենք մի շարք  
անոնների, որոնցից Ստեփանոսը, Պողոսը, Հովհանն համարվում են «ա-  
ռաջնորդք սուրբ ուխտիս Աւագ վանաց», Կարապետը, Ղազարը, Ներսեսը՝  
ձեռագիր արտագրողներ: Վանքն էլ կոչվում է «գերադասական սուրբ մե-  
հաստան, զարդարեալ գեղեցկաշեն սրբանուր և սպասիք պատուականօր»:

Մատենագրական հետազոտական վկայությունները ցույց են տալիս, որ Օսման վանքը Կրթական, մշակութային առաջատար դերը պահել է ավելի քան 300 տարի, մինչև 15-րդ դարի վերջին տասնմայսկը:

Երգնկայի հշանավոր մարդկանցից առաջինը, որ սպառում է Ազգակ զաքուս և եղել է Արա առաջնորդը ու մեծապես նպաստել է բարովավաճառին, Մոլուս Երգնկացին է: Քահանա է օծվել այնուհետ, 1293—1295 թթ.: Եղել է վանքի գործուն միաբաններից: Նա մեկնել է Կիլիկիա, կատարելագործել

ուսումը Գևորգ Լամբրոնացու մոտ: Վերջինիս մահից հետո՝ 1301-ին, իր հետ վերցրած գեղագիր մի Ամեստարան, առև իր արտադրած Աստվածաշունչը և այլ ձեռագրեր, վերադարձել է Ամվագ վանք՝ վերանորոգչական լուրջ ծրագրերով, ըստ երևոյթին կազմված Կիլիկիայում արքայական ընտանիքի օժանդակությամբ: Ենթադրելի է, որ նրա Կիլիկիա մեկնումը եղել է Երզակայի հոգեոր իշխանությունների հանձնարարությամբ ու Այութական միջոցներով:

Մովսեսը հետագայում, 1307 թ. կրկին է մեկնել Կիլիկիա, վերադարձից հետո կարգի է բերել Ամվագ վանքը, կառուցել է նոր մասնարաժիններ, աղյուսակիներ, տաղավարներ, «Հաստանելու վիմօք կառոյց ի բանապատ Մօրն լուսոյ ի դուռն ա. Աստուածածնին և ս. Կարապետին, և այլոց պիտույքից հարկադրաց ի հաճիխու և ի վայելս ժառանգաւորաց սրբուն եկեղեց- ոյ և այսոցիկ մեմաստանաց»<sup>4</sup>:

Այս աշխատանքների շնորհիվ նրա համբավը դուրս է եղել վանքի շրջանակից «տարածեցաւ ընդ տիեզերս, ոյսու բազմութիւն ժողովեալ միանձանց կրոնարորաց և սրբազն կուսակրօն քահանայից և սիրողաց ուսմանց աստուածայնոց վարժից վարդապետութեանց և լցաւ վայրս այս արամք աստուածայնովք՝ ի փառ և ի պատի համայնշցու մեր լուսաւորչի և հօր, և յորախութիւն և ցնծութիւն Հայաստանեացս սեղի, յորում տեղուց իր ի հաւահանգիստ դիմեալք ամենեցունց՝ ի զանազանից ծիելոց պետաց խաղաղանց և ուսանք ի ցաւոց պէսպէս ախտակրելոց իբրև առ հանուրց բժիշկ և առողջարար եկեալ ստժամայն հանդիպէին թժկութեան»<sup>5</sup>:

1830-ական թվականների Կեսերից վանքի առաջնորդն է եղել Կիրակոս Վարդապետը: Նրա անունը որպես առաջնորդ հիշվում է մինչև 1872 թվականը: Կամ այն է, որ վանքում այդ տասնամյակներում գործել են երկու Կիրակոսներ, կամ՝ այս մեկը պաշտոնավարել է երկար տարիներ:

Կիրակոս վարդապետին հաջորդել է Գևորգ Երզակացին, որ նոյնական ունեցել է բնեղուն գործունեություն: Առ «աշակերտներու հովոյ մը կտեսնեն իր շորջը: Անոր օրով Ամվագ վանքի մեջ գիտությունը կծաղկի և գրչագրությունը նոր զարկ կատանա»:

1874 թ. Երզական են եկել Հովհաննես Որոտնեցին և նրա հավատարիմ աշակերտ Գր. Տաթևացին:

Կա կարծիք, որ Որոտնեցին ու Տաթևացին նկատելի աշխուժություն են մոցրել վանքի մտավոր կյանքում, դաստիարակել են Հայաստանի տարրեր վայրերից եկած աշակերտների, զարկ տվել ձեռագրերի արտադրության գործին:

1886 թ. Որոտնեցին մեկնել է իր հայրենիքը՝ Սյունիք, և այնտեղ է վախճանվել է 1388 թ.:

Հ. Քյուրոյանը գրում է, թե Որոտնեցին և Տաթևացին Երուաղեմից դառնալուց մետք Ամվագ վանքում հաստատել են իրենց «մեծահամբավ և արդյունավոր համալսարան»:

Հովհաննես Որոտնեցու մեկնումից հետո նրա գործը շարունակել է Գր. Տաթևացին: Դասակից աշակերտների թվում են եղել Գևորգ Երզակացին, Սարգսին և Հակոբ Ղրիմեցիները, որոնք բոլորն են ունեցել են մատենագրական և կրթական լայն գործունեություն: Սարգսին ու Հակոբը նաև զբաղվել են գրչագրությամբ, մինչդեռ Գևորգ Երզակացին իշխող դեմք է եղել վան-

<sup>4</sup> Հ. Քյուրոյան, Երիզա և Եկեղեց գավառ, հատ. Ա. Վենետիկ, 1953;

<sup>5</sup> Հ. Ամիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 509;

քում որպես մանկավարժ և մատենագիր: Եղել է «քաջ հոկտոր», պայքարել ներեւութիւնի կողմէն դեմ: Եղել է վաճրի համալսարանի տնօրինը: Նա Ավագ վաճրում գործել է մինչև 1412 թվականը, կարծ ժամանակ Կապուի վաճրում պաշտոնավարելուց հետո:

Այդ տարիներին Ավագ վաճրում աշխատող բեղմնավոր գրիշներից Արիստակեսը 1408 թ. «Մանրումունքի» հիշատակարանում հետևյալ ուշագրավ տողերն է թողել: «Գրեցա եղանակատր տառ, որ կոչի Մանրումունք ի լաւ և լրնտիր օրինակէ, որ էր յարմարած առաջին երածշուապետացն սուրբ ուխտիս Արքայազնոցն, զոր էր բազում աշխատույթեամբ օրըստորէ առորձ դասն գրած, լի ամենայն արհեստի, զոր առեալ զնոյն օրինակեցի ձեռամբ իմոյ անհմաստ գրչի և յոյժ մեղապարտի Արիստակիսի, ի մեծափառ և ի հոչակատր անապատիս որ կոչի Ասագ վաճր, ընդ հովանեաւ սրբության Աստուածածնին, և սրբոյ Կարապետին և սրբոց Սուաքելոցն, և ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս գերիմաստ քաջ հոկտորին և տիեզերալոյս Վարդապետին մեծին Գեղորգեա, բազմերախտ սուրբ հաւըն իմոյ և վարժապետին: Զոր ... Պարծանք հայոց ազգին եղև»<sup>6</sup>:

Նոյն Արիստակես գրիշը 1412 թ. արտագրել է մի ձեռագիր «ի մեծափառ անապատին, որ կոչի Ասագ վաճր», Խաչատոր գրիշը՝ 1415 թ.՝ մի «Հարանց վարք», Մարգարեն՝ 1432-ին՝ Ավետարան, Սիմոն արեղան՝ 1439-ին՝ մեծ «Յայսատուրք» և այլն: Վերջինիս հիշատակարանից իմանում ենք, որ այդ տարիներին վաճրի առաջնորդն է եղել Մարտիրոս վարդապետը, որ նոյնպես ունեցել է մեծ թվով աշակերտներ, ինչպես՝ Գրիգոր աքեղան, որ եղել է «դասագլուխ», Մկրտիչ աքեղան, «որ շատ աշխատեցաւ լրդորդելու», Մարտիրոս և Ներսէս աքեղաները, նաև մի այլ Մարտիրոս, մի Հակոր և այլն:

Այսպիսով, Ավագ վաճրի կրթական, մանկավարժական գործունեությունը մենք հասցրինք մինչև 15-րդ դարի կեսերը, երբ վաճրը մի նոր փայլուն շրջան է սկսել շնորհիկ Հովհաննես Համշենցու առաջնորդության:

Ստեփանոս գրիշը թողել է շափած ընդարձակ մի հիշատակարան, որից լրիվ գաղափար ենք կազմում Ավագ վաճրի այս նոր շրջանի մասին, որն իսկապես ունեցել է միջնադարյան Հայաստանի համալսարաններին հասուն համբաւ:

Ստեփանոս իր հիշատակարանի հենց սկզբունքում Համշենցու դեկավարծ կրթական հաստատությունը կոչում է լսարան, պայինքն՝ համալսարան, իսկ նրա դեկավարին՝ «քաջ բարոնի», «պարծանք հայ ազգի»:

Նա տալիս է քանից ավելի անհամեների անուններ, մի քանիչի գրադարած պաշտոնը, նրանց որտեղացի լինելը և այլն: Այդ թվարկումներից իմանում ենք մարդկանց թե մասնագիտությունների, արթեստների անունները և թե պատմական Հայաստանի այն տարածքը, որտեղից աշակերտներ է ունեցել Համշենցին:

Ենթենք մի քանի հասկած Ստեփանոս գրիշի հիշատակարանից: Առաջարկում է, աղերսում հիշել հետևյալներին.

«Եւ զվարդապետն գովելի, զԱստուածատուրն Զերմանցի,

Որ շերմեռանդ սիրով վատի, ի շինութին այս սուրբ ուխտի:

Զեպիսկոպոս մեր արհի՝ զՏէր Սարգիս ցանկալի,

<sup>6</sup> Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, առաջին մաս, Երևան, 1955, էջ 88:

Վերադիտող Եզրնկայի, և Եկեղեցն գտատի,  
Եւ ընդ Ամին համակարգի, զՏէր Գրիգորս բաղձալի՝...  
ԶՏէր-Աքրահամ մեզ և բարի, ԶՏէր Մարգարէն առաքինի:  
Եւ զփակակալս առաքինի՝ ԶՏէր Յակոբ Քաջ և արի...  
ԶՏէր Սուպերէլ Եզրնկացի, և զՏէր-Ներսէս Բաղիշեցի...  
Ումանք ի սպաս սրբոյ բանի, և այլք ի վարումն երածշտի...  
Նախ ԶԳրիգոր Կաֆալեցի, զպասատր տեսոն բանի,  
Այլն զծաղկող այս մատենի, Տէրն տացէ իր վարձ բարի:  
Այլն զեղբայր իմ ցանկալի՝ զՏէր Կարապետ սիրող բանի,  
Ի Տիրիկոյ քաղաքացի մեզ օգտակար և կարելի...  
ԶՏէր Մատթէոս Սեբաստացի՝ վարս ստացեալ երկնաւորի...  
Այլն զՆերսէս Հաղբատացի, զՆիկողայոսն Պոնտացի...  
Եւ զԱնդրէան Պոնտացի, և զԽաչատրոր Եզրնկացի,  
Զփոքրիկ Ներսէս Տիրիկեցի, և զՅովհաննէս նոյն գտատի»<sup>7</sup>:

Եվ այսպես բազմաթիվ այլ անուններ, մարդիկ, որոնք Ավագ վանքում աշխատել են տանյակ տարիներ: Ուշագրավ է Հիշատակագրի հետևյալ ընդհանուր բնութագիրը.

«Եւ սոցան, որ թուեցի, ումանք արև են արփի,

Ումանք լուսինք, պարք աստեղի...»

Իր հզբականներին նոյնական մեկ առ մեկ թվարկելուց հետո Հիշատակարանն ավարտում է՝ խնդրելով, որ իր համար էլ մարդիկ աղոթեն: Թվականն է Զօդ (1464):

Նրա հիշատակած անուններից ու փաստերից երկում է, որ այդ տարիներին Ավագ վանքում աշխատող մարդկանց թիվն անցնում էր հարյուրից: Նա խստովանում է, որ շատ արելաների չի թվարկում, մի քանիսին էլ հիշում է ըստ նրանց պաշտօնի, ինչպես «զտնտեսն ձերունի», «զգործատրքն որ կան աստի» և այլն:

Ուշադրություն գրավող երևոյթներից մեկն էլ այն է, որ տասից ավելի բաղաքներից եկած և այնուղի աշխատող կամ ստվորող մարդկանց մեջ երգնկացիները մեծ թիվ չեն կազմում. ավելի թիշ են, քան Տիվրիկցիները, Տրապիզոնցիները:

Դարձալ Սուեփանու գրիչից իմանում ենք, որ բարոգիչ Գրիգոր Կաֆալեցին նաև եղել է ծաղկող և Սուեփանուի արտագրած ձեռագիրն էլ նա է ծաղկել:

Այն հանգամանքը, որ նա այդ վանքում հիշում է ծաղկողների, կազմողների, երաժիշտների, ցուց է տալիս վանքի ուսումնական ծրագրի լայն ընդունումը:

1480-ական թվականներին Ավագ վանքում եռուն գործունեություն է ունեցել Սուպերէլ գրիչը: Նրա ընդորինակած մի «Մաշտոց» (1481) այժմ պահպում է Երևանի Մատենադարանում: Նոյն տարում նրա ընդորինակած «Ծարակնոցն» էլ գումարում է Զմմարի վանքում: 1483-ին ընդորինակել է մի այլ «Ծարակնոց», 1484-ին՝ մի Ավետարան:

Ուշագրավ է նոյն Սուպերէլի 1487 թ. Ավագ վանքում արտագրած Ծառակնոցի հիշատակարանի բովանդակությունը, որտեղ գրիչը ոչ այնքան

<sup>7</sup> Լ. Խաչիկան, ժԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, Երևան, 1958, էջ 206—212:

մոտել է իր հոգու փրկության, մաքրության մասին, որքան իր արտագարծ ձևագիրը խնամքով պահելու մասին:

Նա գրում է. «Սղաշեմ զգեզ՝ քահանայք և սարկարաց և ըռայիս և ամենայն ժողովուրդը՝ մեծ և փոքր, լաւ պահեցէք ի կաթիլք, ի յաղոյ և ի գոյէ: Դարձեալ աղաշեմ զգեզ՝ մի որ իշխանց գրաւ դնել կամ ծախել կամ գողանաւ, կամ ով յանդգնի՝ զիաշհանուացն առց և զմասն Ուղայի. և ամենայն սրբոց ահիծեալ լինի, ով որ խնամ չտանի»<sup>8</sup>:

Սուաքել գրիշը մի «Ծարակնոց» էլ արտագրել է 1488-ին Առյօն Վանքում, միշելով վանքի առաջնորդ Հովհաննեսին և բարունապետ Հովհաննեսին:

Վերջապես՝ այս Առյօն Սուաքելը մի այլ Ավետարան արտագրել է 1491-ին, Բիշատակարանից երևում է, որ բավականաշափ ծերացել է, «Եւ այլաշեմ անմեղադիր լինել խոշորութեան և սխալանաց, զի կար մեր այս եր»<sup>9</sup>:

Դրանից երեք տարի հետո Ավագ վանքում արտագրված Ավետարանի Բիշատակարանում որպես գրիչ արդեն հանդիպում ենք ուրիշ անվան՝ Գրիգորին:

Այդ տարիներին Ավագ վանքում գործել են նաև այլ գրիչներ, որոնցից երկուսը՝ Հովհաննեսն ու Հայրապետը, գրել են մի «Ծարակնոց»: Սկսել է Հովհաննեսը, չափարտած վախճանվել է: Նրա գործը շարունակել է Հայրապետը, ձեռագիրն ավարտել 1496-ին:

Կա կարծիք, թե 1489 թ. Ավագ վանքի միաբանները տեղափոխվել են Կապոսի վանքը և այնուղ են շարունակել իրենց կրթական ու մատենագրական աշխատանքը: Բայց վերևում մեր բերած փաստերը ցույց են տալիս, որ դրանից հետո առնվազն մեկ տասնամյակ շարունակել է Ավագ վանքի գործունեությունը, կամ հիշյալ տեղափոխությունը տեղի է ունեցել 1490-ական թվականների վերջերին, կամ միաբանների մի մասը մնացել է: Իրական փաստ է, որ հաջորդ 16-րդ դարում գրեթե դադարել է Ավագ վանքի մուավոր բեղուն գործունեությունը: Դա մոտավորապես զուգադիպել է Հովհաննես Համբեցու մահվան տարվան՝ 1497:

Դրանից հետո Ավագ վանքում գրված ձեռագրերի հազվադեպ ենք հանդիպում: Միակ վավերական փաստը 16-րդ դարից՝ Մադարիա Դերջանցին է հաղորդում: Դերջանի Փողձա գլուղում ծնված, Գրիգոր Մշեցու մոտ ուսած այս մարդը 16-րդ դարի առաջին կեսին նկատելի գործունեություն է ունեցել Երզնկայում, մասնավորապես Ավագ վանքում: Նրա գրած ընդարձակ մի հիշատակարանից երևում է, որ 1530-ական թվականներին եղել է Ավագ վանքի վանահայրը: Ավելորդ շենք համարում մեջ բերել այդ հիշատակարանի այն տողերը, որոնք վերաբերում են Ավագ վանքին: Թվարկով այլ վայրերում կատարած իր շինարարական աշխատանքները, Մադարիա Դերջանցին գրում է. «Եւ ապա զԱվագ վանաց հարաւային ժամանեց սրբաքարեր և վերի սեղանատեղն և Ա շարտախ և երկու խոց և քարեա ամբարն և երկու եգի»:

Մադարիա Դերջանցին մի այլ կարևոր գործ էլ է կատարել: Նա «ի բարի ԶՀԹ (1530) մեկնել է Պոլիս, տեղի հայ հոգևորական պետերի ա-

<sup>8</sup> Ա. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, Երևան, 1967, էջ 104:

<sup>9</sup> Առյօն տեղում, էջ 179:

շակցությամբ ներկայացել է Սովորան Սովեյմանին և հաջողեցրել է Կամախի և Ավագ վաճքի եպիսկոպոսության հարկը 12.000 ռուբու իշեցնել 6000-ի:

Դերջանցին չի աշխատել իրեն գովարանել, շատ բան չի գրել, գրածի համար էլ ներդությունն է խնդրել, որ «հայրտացել է», բայց փաստ է նաև այն, որ Սովորանին չի ներկայացել միայն հարկերը թեթևացնելու խնդրանքով, այլ ունեցել է ավելի կարևոր ծրագիր: Նա կարողացել է սովորանի հաստոկ հրովարտակով դադարեցնել տալ մանկաժողովը Դերջանից և Բարեդից: Աճայանն ասում է, թե նա այդ բանը կատարել է 1545-ին<sup>10</sup>: Մենք կարծում ենք, որ կատարել է «ի բուին ԶՀԹ-ին» այսինքն՝ 1530-ին:

Մարտիրոս Դերջանցին թվարկում է նաև իր աշակերտներին՝ Կարապետ, Մեսրոպ, Եղիա, Սարգիս և Թադեոս, մի բան, որ ցույց է տալիս նաև նրա կրթական, մանկավարժական գործունությունը:

Մեզ հայտնի չէ, թե Մարտիրոս Դերջանցին մինչև երր է կապված եղել Ավագ վաճքի հետ:

Քիչ տեղեկություններ ունենք նաև 17-րդ դարի վերաբերյալ: Ինչ որ գիտենք, այն էլ հիմնականում պարտական ենք Գրիգոր Դարանադցուն, որը 17-րդ դարի առաջին քառորդում, այսինքն ջալալիների ասպատակությունների տարիներին եղել է Կ. Պոլում, բայց այցելել է Երզնկա և բավականաշափ տեղեկություններ է տալիս:

Դարանադցին ողբալի վիճակում է տեսել Երզնկայի աղոթատեղիները. Սեպուհ լեռան լանջերին և ստորոտներում գտնվող վանքերը դադարած են եղել կրթական, գոշագրական կենտրոններ լինելուց: Վերածվել էին ծուլանցների, փախառականների կացարանների: Այսուհետեւ Ավագ վաճքը բացություն չեր կարող կազմել:

Դարանադցու վկայությամբ՝ 1610-ական թվականներին Ավագ վաճք վաճառհայրն է եղել Վարդան Եպիսկոպոսը: Այնտեղ գործել է նաև Հակոբ Ծգմիկը, աշակերտ՝ հայտնի Պարոն Ծգմակորի:

Վերջապես Դարանադցին պատմում է, որ իր ժամանակներում Պոլսից Ուկան անունով մի արելա, որ հետո դարձել է վարդապետ, գնացել է Ավագ վաճքը, որտեղ առաջնորդ Վարդան Եպիսկոպոսը շատ էժան գնով նրան է վաճառել մի Աստվածաշուն: Հասկացող մի հոգևորական Կամախ քաղաքից, տեսել է այդ ձեռագիրը նրա մոտ և հայտնել բոլորին, որոնց օժանդակությամբ վերադարձել է արելայի վճարած 35 դուրուշը ու Աստվածաշունը պահել են քաղաքում<sup>11</sup>:

Ավագ վաճքի հետագա մասնավորապես 18-րդ դարի ճակատագրի մասին գրեթե ոչինչ չգիտենք: Ամենայն հավանականությամբ զքաղվել է հիմնականում կրթական աշխատանքով: Դարանադցին ասում է, թե այնտեղ 17-րդ դարի սկզբներին եղել է հարուստ գրադարան: 19-րդ դարի կեսերին այդ վաճքը Ակարագրողները նույն են հաստատում: Վերջապես մինչև 1915 թ. աղետավոր տարին վաճքի ամենից թանկագին հարատությունը կազմող համբավագոր Դերջանի առկայությունն էլ այնտեղ՝ վկայում է միաբանության գոյությունը:

«Ավագ վաճքը,—գրում է Հ. Ուկյանը,— մինչև մեծ եղենը կանգուն էր, թեև ժամանակին հարվածներում ենթարկված և վնասված: Ունեցած է

<sup>10</sup> Հ. Աճայան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946:

<sup>11</sup> Գր. Դարանադցի, ժամանակագրություն, Երևանիմ, 1915, էջ 433:

նատենադարձան, ընդարձակ հողեր, մրգեղենի պարտեզ, լայնատարած աճ-  
տառ և տաքը գյուղ»<sup>12:</sup>

Իսկ որ Աշանավոր Դեղյափի քարը մինչև առաջին համաշխարհային  
պատերազմի նախօրյակը եղել է վանքում, վկայում է 1914 թ. տպագրված  
մի տարեցույց, որտեղ այդ քարի նկարի տակ կարդում ենք. «Այս հնությունը  
կգտնվի Բիմա Ավագ վանքի վանապետ Պրոխորոնյանց գերդաստանի ձեռ-  
քը»<sup>13:</sup>

Մի այլ աղբյուրից ել գիտենք որ «Երկար ատեն այս վանքին վանա-  
հայրությունն ու պաշտպանությունը ստանձնած է Պրոխորոնյան ընտա-  
նիքը»<sup>14:</sup>

Իսկ թե Պրոխորոնյան ընտանիքը ինչ է եղել, կամ ուր է տարվել ու  
վաճառվել այն մասունքը, որը դարերի ընթացքում եղել էր հարյուր հազա-  
րվոր ուստավորների պաշտամունքի առարկան, դժվար թե կարողանաւ  
արձանագրել պատմությունը:

(Ծարունակելի)

<sup>12</sup> «Համես ամսօրյա», 1948, էջ 530:

<sup>13</sup> Ազգ. Ռւսանողմերու խնամակալության Տարեցույց, 1914, էջ 215:

<sup>14</sup> «Սիռն», 1927, էջ 213:

ՀԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ԱՍՏՎԱԾՊԱՇՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ\*.

Յուրաքանչյուր կրոն ենթադրում է Աստվածության հետ մերձավորագոյն հարաբերություն։ Վերջինն իրեւ սկզբունքորեն ներակա ապրում, իր մեջ պարունակում է խորիության պահ։ Բացառություն չի կազմում քիչստունությունը նույնապես։ Նրա վարդապետության շատ կողմերն ուղղակիորեն նպաստում են աստվածաշտությանը (Միատիկային), Հոգու, որպես Աստծո պատկերի, նարդու փրկության և ասար Աստծո Որդու մահանացնան, մասդու և լիլաւան և արության, որ և Երդու միության օրինակով Առողութիւնի դառնալու և առողածանալու (Յովհ. ԺԷ 21—23) մասին նրա ուսմունքը, ինչպես նաև՝ վախճանարանական գաղափարները (Ա. Կորնել. ԺԵ 28) այն հիմքը դարձան, որի վրա անեց ու բարձրացավ քիչստունեական աստվածաշտությունը։ Նշանակայի և արգասավոր էր մասնավորաբար Արեւաբրիստոնեական աստվածաբանության հիմնական գաղափարը՝ «աստվածացումը» (Քեկոսիս), որն Արեւելքի կրոնական կյանքի առանցքն էր։ Նրա շորջն էին պտտվում աստվածաշտության, դավանարանության և բարոյագիտության բոլոր հարցերը։ Եկեղեցու հայրերի համար «աստվածացումը» ոչ գաղափար է, ոչ տեսություն, ոչ էլ դավանություն, այլ՝ ամենից առաջ ներքին կեցություն։ Այս իրողության, իրեւ ամփորտակելի նեցուկի վրա էին նրանք հենվում բոլոր այն պարագաներին, երբ հարկ էր լինում լուծել ժամանակի վիճելի հիմնիները։ Իրենց փրկարանական, բարոյագիտական և վախճանարանական ուսմունքը նրանք հիմնավորում էին եկեղեցկ այս փաստից։ Օրինակ. մենք երեք չենք կարող հասկանալ այն սկզբունքներուն ու հետևողականությունը, որով Ա. Աթանաս Ալեքսանդրացին և նրա համախմբները հաստատագրում և պաշտպանում էին Քրիստոսի Աւտովագության մասին ուսմունքը, եթե հաշվի չառնենք այդ ուսմունքի աստվածաշտության հիմներները։ Քրիստոսի Աստվածության հարցը Ա. Աթանասի մուազնական (սպեկուլատիվ), հայեցողական հարց չէր, այլ՝ Էա-

\* Հայ Պ. Մինին, Главные направления Древне-церковной мистики—«Богословский вестник», 1911, № 12, с. 823—838.

պես բարոյակիրկաբանական ճշանակություն ունեցող կյանքի, մարդկայի և կեցության գերխննիքը: Ըստունէ կամ մերժել էությունը (ioia) նրա համար ճշանակում եր քննել մարդ առարածի կյանքի և մահվան խնդիրը, քանզի մարդկային կյանքը ոչ այլ բան է, քան «աստվածացման» գործներաց: Խոկ այդ «աստվածացում» անբնկայի է սատաց Քրիստոսի Աստվածության մանաւման: Ո՞չ դափանարանական ուսմունքը, ո՞չ բարոյագիտությունը, ո՞չ պաշտամունքը և արարողակարգն իր ճշանագիտությամբ, ո՞չ կրոնական կյանքի հիմնական ձևերը (ճգնակեցություն, վաճականություն) չեն կարող իմաստությունի առանց Արևելքի հոգևոր կյանքի աստվածպաշտական ակունքների բացահայտման: Աստվածպաշտական փորձի հիմնական միտումը Աստծո ներ մարդկային հոգու անմիջական հաղորդակցումն է: Բոլոր աստվածպաշտները Աստծո ներ հաղորդակցման միակ և հիմնական ողին մարդկային կեցության «բացարձակության» հաղթահարումն են համարում: Այս միտումը առանց բացառության ընթանուր է բոլոր ժամանակների և երկրների աստվածպաշտների համար անկախ նրանց ազւ սին և կրոնական պատկանելությունից: Քրիստոնեական աստվածպաշտությունը ևս բնութագրվում է նոյն այս միտումով: Սակայն ունենալով պատրիակ ընթանականությունը՝ ոչ քրիստոնեական աստվածպաշտական ուսմունքների հետ՝ քրիստոնեական աստվածպաշտությունն իր ինքնահատուկ կողմերն ունի: Նրա տարբերություններն ոչ քրիստոնեական աստվածպաշտության նկատմամբ սկսվում են հատկապես այնուեղ, որ ներքին, հոգևոր փորձի իրողությունները նա աշխատում է կապել քրիստոնեական վարդապետության հիմնադրություններին, դրանք մեկնաբանել աստվածային հայտնության լույսի ներքո: Նշենք ոչ քրիստոնեական աստվածպաշտության քրիստոնեականի ընկատմամբ ունեցած հիմնական տարբերությունները: Ոչ քրիստոնեական աստվածպաշտությունը բացահայտորեն հակված է դեպի բնութեանապաշտության (պանթեիզմ): Այս միտումը՝ իրենով որոշարկում և հատկորոշում է աստվածպաշտի հնագետ Աստվածության նկատմամբ ունեցած հայացքների կամ հայեցության բնութագրական կողմերը, անպես էլ Աստվածության հետ լիակատար միության միջոցները: Աստվածությունը իր էության մեջ այսուել ընկալվում է որպես տիեզերական անդեմ ուժ, անցրակ Մոնաշա (Առպատռնականների ԵՅ-ը և բրահմայականների «օօօ»-ը): Այն մշտական առաջընթաց զարգացման և ետադարձ զարգացման (ինվլույսիա) գործներաց է: Մարդկային հոգին բացարձակի զարգացման պահերից մեկն է: Նրա՝ Մոնաշայից դուրս գալը կամ վերադարձ դեպ Աստվածության ըստ էության զուտ տիեզերական գործներաց է: Անկախ այն պարագայից, թե մարդը կագուի ձոլվել Աստվածությանը կամ ոչ, բացարձակի ընդերքում կատարվող տիեզերական գործներացը շարունակում է իր բնականու շարժումը և մարդ անկարող է ազդել նրա բնույթի կամ ընթացքի վրա: Վաղ թե ոչ այն ավարտվելու է կեցության լիակատար ապոկատաստախով, այսինքն՝ բովանդակ կեցության, ըստ որում նաև՝ մարդկային հոգու դեպ իր նախասկիզբ վերադարձով և վերամիավորումով իր անորոշ նախասկզբին: Այդ տիեզերական շարժման մեջ մարդու դերն անհան է: Այս պարագային տեղ չունի ոչ մարդկային անհատականությունը (աստվածպաշտի պարտքը է ի չիք դարձնել անհատականությունը շեշտող կամ ինքնորոշող բոլոր սահմանները), ո՞չ ազատությունը, ո՞չ էլ բարության սիրանքը: Անձնական սիրանքը, բարության շանքն ու փոթեռանությունը փոխարինվում են «սրբազն կեցվածքով, նվիրական բանաձեռքի

միօրինակ կրկնությամբ» և նման արհեստական միջոցներով, որոնք պատակ են հետապնդում մարդկային հոգին հասցնել պասխվ, անդորրապաշտական (բլիետիկ), այսինքն՝ անպոտող հայեցողական վիճակի:

Քրիստոնեական աստվածապաշտությունը, որքանով այն ջատագովով է թեհզի տեսակետը, Աստվածությունը ներկայացնում է ոչ թե անդեմ Սունարայի, այլ կատարելագովով Անձնավորության, դիմավոր (իպոստասային) Սիրո Կերպարի ձևով: Այսօրինակ Անձնավորության մասին կենարանի պանկերացումը աստվածապաշտի սիրու լցնում է անձառելի հիացումով և գործուն խթան է դառնում մերձավորագոյն հարաբերության մեջ մտնելու Աստվածության հետ: Ինչպես ոչ քրիստոնյա աստվածապաշտը, այնպես էլ քրիստոնյա աստվածապաշտը իր նպատակը տեսնում է աստվածացման մեջ: Բայց այդ աստվածացումը տարբեր Կերպ է ընկալվում նրանց կողմից: Ոչ քրիստոնյա աստվածապաշտի համար աստվածացումը նոյնական է Աստվածության հետ լիակատար ձուլման, նրա հետ լիակատար նոյնացման: Այդ աստվածացմանը նա հասնում է իր անհատականության ժխտման ճանապարհով: Իր աստվածապաշտական ուղղությունը նա իրեն ոչ թե մարդ, այլ Աստված է գիտակցում: «Ես Բրահման եմ— ես Աստված եմ, ես ճշմարտություն եմ, Փառք ինձ, ես վեր եմ բոլոր իրերից: Ես Դու եմ և Դու ես եմ»: Այսպիսին է նրա ինքնագիտակցությունը, երբ նա հասնում է կատարյալ աստվածացման վիճակին: Քրիստոնյա աստվածապաշտը նոյնպես ձգուում է աստվածացմանը, նոյնպես ցանկանում «Աստված դառնալ»: Բայց նրա շորտերի վրա այդ արտահայտությունները այլ ենթիմաստ ունեն: Ծիշու է, նա էլ աստվածաման մեջ ընդունում է իր բնության խորհրդավոր-քանացանական վերափոխման պահը, իր բնության ժամանակային և տարածքային սահմանների հաղթահարումը, այսուամենապնդիվ «Աստված դառնալ», բայց նրա, չեր նշանակում ամբողջովին կորցնել իր անհատականությունը և նոյնանալ Աստվածությանը: Նրա համար աստվածացումը ոչ այլ ինչ է, բայց եթե գերագույն հաղորդակցումն աստվածային կատարելությանը, որին նա հասնում է ոչ թե իր անհատականության ժխտումով, այլ իր անձը նմանեցնելով աստվածային Անձնավորությանը: «Աստված դառնալ,— գրում է պրոֆ. Ի. Պոպովը,— այն ժամանակների համար չեր նշանակում հանեն Բացարձակի մեծությանը, նրա կատարելության անսահմանությանը: «Աստված» հասկացության մեջ անհրաժեշտորեն գիտակցվում էն միայն անմանությունը, երանությունը և կյանքի գերմարդկային լիարժեքությունն ու ինտենսիվությունը: Աստվածապաշտական կեցության ամենաբարձր աստիճաններում, երբ նա ամբողջովին ներթափանցված է «Աստծո փառքի» դրսատու թերու հայեցողությամբ, նրան չի լրում իր վերջավոր «Ես»-ի և Աստվածության միջև ընկած տարբերության գիտակցությունը: Վերջինս իր դրսությունը գտնում է այն իրողության մեջ, որ հայեցվող փառքը աստվածապաշտը ոչ թե իրեն է վերագրում (ինը ոչ քրիստոնյա աստվածապաշտի պարագան է), այլ՝ Աստծո: Ըստ քրիստոնեական աստվածապաշտական ուսմունքի աստվածացումը նոյնպես Աստծո շնորհն է, ընծան (Խարիզմա), բայց այն սվերթեցնում է, որ մարդու պատությունից է կախված ընդունել այդ շնորհը կամ մերժել: Աստվածացումը իրականացվում է շնորհով, որ տրվում է որոշակի պայմաններում: մարդու խնդիրն է իրեն դնել այդ պայմանների մեջ: Այսուեւ իրենց դերն ունեն և մարդու պատությունը, և նրա բարոյապաշտությունը պահպանում է մարդու համար ամենակարևորն ու արժեքա-

իրը նրա ազատությունը, անձնավորական անհատականությունն է, և որպես այն նույնիսկ իր ամենախորհրդավոր, ներկողներան կողմով հաղորդակցուն է Աստվածության հետ, այն ոչ այլ բան է, քան անձնավորությունների հարաբերություն։ Վերջինս, ի տարրերություն հեթանոսական բնաւառվաճաշությանը (Հատուրմատիկա) կարող է համարվել, և է անձնավորությունների աստվածաշտություն (կամ, զուտ աստվածաբանական առումով, դեմքերի աստվածաշտություն)։

Զգայի են ան ան նյութական-գգայական կեցության մասին քրիստոնեական և ոչ քրիստոնեական աստվածաշտության որդեգրած տեսակետների տարրերությունները։ Ոչ քրիստոնյա աստվածաշտությունը բնապատճեական իր միտունով հակված է զգայական կեցությունը (Այուղը, մարտինը) բնազանական չարիք համարել։ Այստեղից աստվածաշտական վերամբարձուն առ Աստված ոչ քրիստոնյա աստվածաշտի համար կատարվում է խառըն հետևողական կատարսիս-ի, այն է՝ աշխարհուրացմամբ, ճգնակեցական ինքնամիտմամբ։ Քրիստոնյա աստվածաշտի համար ևս կատարսիս-ի երկույթը նույն գծերով է բնութագրվում։ Բայց կատարսիս-ը այսուեւ իր ինքնօրինակությունն ունի և այլ հիմքերի վրա է ամրակազման։ Եկեղեցական աստվածաշտության հիմքում ընկած քրիստոնեական վարդապետության համաձայն Աշխարհը Աստծո արարչագործության արդյունքն է և, միաժամանակ, Աստծո թագավորության իրականացման միջավայրը, Աստծո Որդու մարմնացումը կատարվում է աստվածային Անձնավորության հետ սերտ միասնության մեջ, մարդու մարտինը Ս. Հոգու բնակատեղին է (ԱԿոբ. Զ 19): Այս պատճառով հասկանալի է, որ քրիստոնյա աստվածաշտությունը և մարտինը չի համարում բնազանացական չարիք։ Այսու քրիստոնյա աստվածաշտի խնդիրն է ոչ թե հրաժարվել Աստծո ստեղծագործությունը հանդիսացող Աշխարհից, այլ՝ այսուեւ եղած չարիքից (Ա. Ցովի. Ե 19, Բ 16), ոչ թե նյութից, այլ նյութի, նյութավոր առարկաների նկատմամբ կրքից, հոգևոր-բանական կյանքի նկատմամբ զգայական-նյութական կյանքի նախապատվություն տալոց։ Չարիքը ոչ թե իրերն են, այլ նրանց ոչ միշտ կիրարկումը։ Այս կապակցությամբ ուշագրավ է Ս. Մեթոդիով Պատարացու միտքը։ «Ոչինչ, ոչինչ չար չէ բնությամբ, բայց կիրառման ձևով չար դառնում է չար» (Migne, PG, t. 18, col. 264 A տե՛ս Օ. Պ. Փլորենսկի, Столп и утверждение истины, М., 1914, с. 263)։ Սակայն չարիքը աշխարհ եկավ կամքի միջոցով։ Դա բնություն չէ, այլ՝ վիճակ։ «Բարի բնությունը ուժեւ է չար հակումից (կամ սովորությունից), —ասում է Դիտոքոս Փոտիկիացին, — քանզի բարին կա, ինկ չար չկա, կամ ավելի ճիշտ այն կա միայն այն պահին, եթե դրսուրվում է» (տե՛ս V. Lossky, Essai sur la théologie mystique de l'Église d'Orient, Paris, 1944, p. 123):

Ս. Հովհան Ուկերեանը ևս, ամերաբանարով այս խնդիրին, Գաղատացուցուց թղթի մեկնության մեջ գրում է. «Եւ արդ, ո՞ւր իցեն, որ յանդեեցան անձամբ յանձանց հատանել զծննդական զերմունն և զայսիսի անձն ընդունել, և Աստուծոյ արարչութիւն խոտեցին և մանիքեցուց գործակից լինին, զի նոքա զմարմինն վճառակար և նեճգիշ ասեն և՝ ի հիտէ իմ չարէ, այսինքն՝ ի հիտոյ։ ...ը է այդպէս իցէ, ապա պարտ է զակն և զականջ և զիեզու և զունչս հատանել, որ է կատարեալ ամբարշտութիւն, զի ոչ թե սոքա են պատճառք չարի, այլ կամք չար և յօժարութիւն մտաց» (Մաշտոցի անկ. Մատենադարան, ձեռ. № 6453, թ. 56ա)։ Չարիքի կամ մողքի ինքնական անգոյլության մասին է խոտում նաև Ս. Աթանաս Ալեքսան-

դրացին. «Ոգին գիտակցելով իր ազատությունը, իր մեջ ընդունակություն է տևենում կիրառելու մարմանավոր անդամները այս կամ այն կերպ և ըստ գոյության և ըստ անգոյության: Գոյք բարիք է, իսկ անգոյք չարիք: Եվ գոյք անվանում եմ բարիք, բանզի ևս օրինակեր (Ամուշներ) ունի Աստծո գոյք մեջ, իսկ անգոյք անվանում եմ չարիք, բանզի անգոյք ստեղծվում է մարդու խորհուրդներով («Բան Յաղագ հեթանոսաց, տե՛ս Փլորենեկան Աշվ. աշխ., շ. 693»): Ս. Գրիգոր Նորացին ևս իր ժողովոյի մեկնության մեջ արձանագրում է. «Արտաքրոյ որեմն Աստծոյ է չարութիւնն, որոյ բնութիւնն ոչ ինքանամք է ինչ, այլ՝ ի բարոյն լոշգոյութեան հաստատեալ լինի... անգոյք չարութեան բնութիւն ի բաց անկանել բարոյն գոյացաւ...» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 436, թ. 62թ—63ա): Նոյն միտքն իր արձագանքը է գտնում տակալին հայ մատենագրության արշալուսին: Ս. Գրիգոր Լուսավորչի անվանք հայունի «Յաճախապատում» ճառերում հետևյալն ենք կարդում. «Սուամձինն բնութեամք չարն չար չէ և ոչ բարին՝ բարի, այլ ի միտս ունի բարի և չար լինել...»: «Զի ամենայն արարածը ի Բարերարեն բարի ստեղծան և ի կամակար մտացն եղեն չարը» («Սրբոյ հօրն մերոյ երանելուց» Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճառը լուսատորք», աշխատ. Ս. Տեր-Միքելյան, Ս. Էջմիածին, 1894, էջ 52, 228):

Չարիքն, ըստ Եղիշիկ Կողբացու «այն բոլոր անհարթությունները են», որոնք տեղի են ունենում ի խախտումն հաստատված օրենքների...: Այդ սպատճանով էլ այն սուբստանցիոնալ չէ» (Գ. Խրլովյան, Հայ սոցիալական իմաստափորթյան պատմություն, Երևան, 1978, էջ 121): «Զիք ինչ չար, որ բնութեամք չար իցէ...»: ասում է աստվածաբան հեղինակը («Եղիշիկ Վարդապետի Կողբացու Եղծ աղանդոց», Թիֆլիզ, 1914, էջ 8): Իր «Հականառութիւն ընդդեմ երկարնակաց» աշխատորթյան մեջ Ժ. Դ. մատենագիր Անամիա Սանահնեցին, խորքն ողղելով «Աներքինացեալներ» անոնք կրող աղանդապնդներին, գրում է. «...մարմնով շնալն ոչ դիրին է, զի բազում պատճառաց լինի խախտումն, իսկ մոռը միշտ, անխափան պոռնիկ ի տուէ և ի գիշերի: Զի թէ մարմին գործի՝ ոգույն է. լորժամ ոգին սուրը իցէ, ի հարկէ և մարմինն լինի սուրը, զի ոչ կարէ ի վերայ իշխանի մաքոր մտացն յայտնել: Խոկ որոյ միտքն և խորհուրդը պիղծ են. Օորին գործ ոչ կարէ սուրը լինել: ...Զի ոչ երէ մերձենալն առ կին պղծէ զմարդն, ապա թէ ոչ և ամուսնացնարքն պիղծ են, այլ՝ չար կամքն, որ արտաքրոյ օրինացն իշխանութեան մտարերեն: Ապա որեմն, որք զրկեալ են ի շնորհացն Աստծոյ և ոչ կարեն ազատութեամք պահել զարրութիւն և ի հարկէ կապեն բնութիւն... կամարը պահանջի ի մենչ սրբութիւն ըստ ազատութեան մտաց» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6453, թ. 57ա—թ): Որեմն կատարին ապատել ոչ այնքան հոլովակոր իրականության բնազանցական ժմառումն է, որքան այլ իրականության նկատմամբ մարդկային կրքի բարյական հաղթահարումը:

Քրիստոնեական և ոչ քրիստոնեական աստվածապաշտության միջև ամենաեական տարբերությունը արձանագրելի է հատկապես հետևյալ կետում. եթե ոչ քրիստոնյա աստվածապաշտը ձգտում է Աստծո հետ անմիջնորդ միացման, ապա քրիստոնյա աստվածապաշտը այն ձգտում է իրականացնել Քրիստոն-Քանի (Լոգոս) միջնորդությամբ: «Քրիստոնեական աստվածապաշտությունը,—գրում է Ուաշինգտոն-Ը, —միաժամանակ ուղղված է և անմատչելի Աստծոն, որի մեջ վերանում են բոլոր սահմանափակումները, և Աստված-Լոգոսին (Քանի), և Աշխարհի բանականությանը ու Սրբությա-

ըլ: Հակոսակ երբեմն Հոր մեջ «անհանալուն», այն իր հիմքում Որդու աստվածաշտություն է: Այն ձգուում է հոգին դարձնել աստվածային զենք, աստվածային ուժի՝ Քրիստոսի մարմնավորման և գործողության վայր»: Այս ախով քրիստոնեական աստվածաշտությունն առհասարակ և եկեղեցական մասնավորաբար Լոգոս, Քրիստոսի, Սատծ Որդու աստվածաշտությունն է:

Քրիստոնեական և ոչ քրիստոնեական աստվածաշտության մեջ արձանագրված այս տարբերությունները հնարավորություն են աաիս առավել համակրողմանիրեն բացահայտել համաշխարհային մորի պատմության մեջ քրիստոնեական աստվածաշտության տեղը ու լորահատկությունները: Այն կարելի թույլ է ընձեռում վերհանել եկեղեցական դավանաբանությունից շղթված գնուատիկների, մոնտանականների, մետաղանների, պավիլիկանների, բողոքինների, ինչպես նաև՝ մասնավորաբար հայ միջավայրում Թ—ԺԱ. դրեւան եկած թունդրակեցինների և «ներքինացյանների» աղանդավորական գաղափարախոսության մեջ քրիստոնեական աստվածաշտության շեմ մեկնաբանմները: Հաճախ քրիստոնեական վարդապետությունը զոհաբերվում է այդ հոսանքներին և դրանց վրա հիմնված մոռակառուցումներին: Սակայն մերեկեղեցական աստվածաշտության ներկայացուցիչների մոտ և մենք տեսնում ենք աստվածաշտական փորձի մեկնաբանման նշանը տարբերությունները: Զանց առնելով դրանք՝ կանգ առնենք Սրբելաքրիստոնեական աստվածաշտության մեջ առկա երկու հոսանքների. Վերացարկված-մտահայեցղական և բարոյագործնեական աստվածաշտության վրա: Առաջին հոսանքի առավել համբավակոր ներկայացուցիչը Ս. Դիոնիսիոս Սրբագացին է; Երկրորդ հոսանքն իր վառ դրսնորումը գտավ Ս. Մակարիոս Եղիստացու, Սիմեոն Նոր Աստվածաբանի, և հայ իրականության մեջ, Ասանիա ու Գրիգոր Նարեկացինների երկերում: Երկու հոսանքներն են «աստվածացման» նպատակն են հետապնդում: Բաց այդ վիճակին հասնելու ճանապարհները հրանք տարբեր կերպ են հասկանում:

Վերացարկված-մտահայեցղական ուղղությունը մարդու աստվածաշտական կատարելագործումը (տեղեռսի) ենթադրում է հապլոսի-ի հասնելու վիճակի մեջ, և աստվածացումը ըմբռնում է Աստվածության հետ անմիջական էնոսիս-ի իմաստով: Խորհրդապատշական «վերաբարձի» ողջ ճանապարհը երեք պահի է բաժանվում. 1) Կատարսի, 2) Փոտիսմու և 3) տեղեռսի. «Կատարսի-ը,—կարդում ենք Ս. Դիոնիսիոս Սրբագացու «Յաղագ երկնային քահանայապետութեան» մեջ,—Ոգու ձերքագատումն է այլազան խառնուրդից»: Այն աշքի է ընկանում աշխարհուրացության, աշխարհամերժման բավկան հետևողական բնույթով: Ֆոտիսմու-ը Ոգու պայծառացումն է աստվածային լույսով: Տեղեռսի-ը «Ծանաշողությունը կատարելագործող հայեցվող խորհրդներին հաղորդակից» լինելն է: Աստվածաշտական կեցության կիզակետը իմացությունն է: Աստվածացման ըմբացը իրականացվում է գլխավորապես մորի վերացարկված-հայեցղական գործողության ճանապարհին:

Բարոյագործնեական աստվածաշտությունը աստվածացումը ենթադրում և տեսնում է ոչ այնքան հոգու գերագույն պարզեցման (հապլոսի), որքան մարդկային բնույթյան բնազանցական վերափոխման մեջ: Այն իրականացվում է Աստծ նկատմամբ անպարագիծ սիրու միջոցով: Աեր, որ աստվածաշտությունն է հարսի նկատմամբ փեսայի սիրուն: Խորհրդապաշտական ճանապարհն այստեղ երկու հիմնական փուլների է բաժանվում

1) Պրաքսիս և 2) թեորիա: Պրաքսիս-ը ընդգրկում է մի կողմից սխրագործական կամ պահը, մյուս կողմից բարեգործությունը կամ բարոյական պահը: Բարոյական պահն այսուեղ առավել ճշանակալի դեր ունի, իսկ ճգնակեցությունը և թեորիա-ն թեպես բնութագրում են կատար-սիս-ի գծերով՝ ունեն նվազ բարոյաբանական (ոփորիկ) նկարագիր: Բայց այս ողղության առավել ակներև ինքնահատկությունը կայանում է նրանու, որ առաջին պահն է միջվում Բանի (Լոգու) միջնորդությունը, ընդ որում Փոտիսմու-ը՝ աստվածային լոյսով պայծառացումը, դիտվում է որպես մարդկային հոգու մեջ Քրիստոս-Բանի ներկայության հոգե-գգայական ճշանակ: Աստվածացման գործընթացն ինքը կատարվում է ոչ այնքան մտքի լիրացարկված հայողությամբ, որքան սրտի խորունկ ապրում, հույզի հայտուն նաև նաև աստվածությամբ: Այսպիսով եթե առաջին դեպքում աստվածապաշտը մտածում է Աստծոն հասնել և միանալ նրան ավելի շատ աստվածաշտական տեսիլքով, ապա այս պարագային նպատակը իրականացվում է Աստծո Ակատմամբ աստվածաշտական միջո ուղիղությունում: Եթե առաջին հուսանքը ներկայացնում է աստվածաշտական գեռսիս-ը, ապա երկրորդը շեշտում է Երս-ագապէ-ի կարևորությունը Բարձրյալի հետ հաղորդակցման պահին: Աստվածաշտական սխրանքի դափնեապասակը երկու դեպքում է Էքստահիս-ն է: Բայց եթե առաջին դեպքում էքստահիս-ը (հոգեւոր պայծառացում), մտքի հիացումը կամ «զերգործվածությունն է», ապա երկրորդ դեպքում գացումի հիացումն է: Արդ, այս երկու հուսանքների մեջ առկա տարրերությունը հետևանք է աստվածաշտական փորձի տարրերության:

Աստվածաշտական ողղությունների մեջ առկա տարրերությունների այսօրինակ զատորոշումը միանգամայն պայմանական բնույթ է կրում: Գործնականում աստվածաշտական լորաքանչյուր իրողություն առավել դժվարի բարդությություն է: Սրանից զատ խորհրդապաշտը ճանակցներից շատերը ձգտել են համակցել այդ երկու սկզբունքները՝ իմացությունը և սերը: Նրանք հարել են, այսպես կոչված հաշտողական ողղությանը: Սրանց մեջ մտնում են օրինակ՝ կապատովկան հայրերը, մասնավորաբար Ս. Գրիգոր Նյուսացին, մասամբ Խամիս Ասորին, իսկ ավելի ուշ հատկապես Մաքսիմո Խոստովանովը: Տիպարի մտայնական (ինտելեկտուալ) ըլքոնման Ակատմամբ առաջին ողղության հարածուն հետաքրքրությունն ու հակվածությունը աղերսկում է նորալատույան խորհրդապաշտույանը, ընդ որում իր մի շարք գծերով այն սահմանակցում է Պրոկիի ուսմունքին: Ընդհանրությունները ունենալով նորալատույան խորհրդապաշտույան հետ՝ այն իր արմատներով սակայն որոշակիորեն կապվում է Կոկմես Ալեքսանդրացու (Բ. Դ.) իմացարանությանը կամ Գնոսիսին (Կոկմես Ալեքսանդրացու իմաստափրության մասին տեսն Գ. Գ. Մայօրօվ, Формирование Средневековой философии, Латинская патристика. М. 1979, с. 80–91, В. В. Соколов, Средневековая философия, М. 1979, с. 41–43): Այս մեծանուն ալեքսանդրացու գնոսիսը ճշմարիտ քրիստոնյային բնութագրում է այնպիսի գծերով, որոնք մեզ հնարավորություն են տալիս նրա «Գնոսիսում» ոչ միայն ընդհանրապես ավելի ուշ շրջանի աստվածաշտի, այլև մասնավորաբար վերացարկված-մտահայեցողական ողղության աստվածաշտի նախատիսը տեսնել: Նա հանդես է գալիս Բ—Գ դր., երբ հունական իմաստափրությունը անկում էր ապրում: Այդ շրջափուլում ավելի ու ավելի է խորանում իր ոմերի Ակատմամբ մարդու անվատահությունից ծնված ընդհանուր ճգնաժամը: Անտիկ փիլիսոփայության մեջ իմաստափրական բոլոր ողղություն-

Աեր կարծեք իրենց սպառել էին: Կեցության նվիրական խորքերը ներքափանցելու իր անկարողությունը խոստովանած քննարան միտքը (ուսցինալիքը) իր տեղը զիշեց առավել բարձր կարգի մի իրակության՝ պայծառացմանը (ինսուիցիա): Եվ իրապես, ճգնաժամապին այս իրադրության մեջ մարդկային միտքը ծարավի էր Աստծո օգևության ու աստվածային հայտնությանը: Հուսալրումով և տեղագին փնտրությունով բնորոշվող այս շրջափուլը ծնունդու տվեց մոգական նշանակություն իրեն վերագրող գնուտիկան ունենալիքի: Վերջինս արդյունք էր Արեների գանազան հայտապիեթերի և խորհրդապաշտական փորձի խրենածածուկ մեկտեղման: Գնուտիկան միտքը համակենում էր իրեն գերագույն իմաստության դրոշակալիքի համարելու: Այս արհամարհում էր քրիստոնեությունն ու քրիստոնեական հայտան իրեն պարզամիտ զանգվածի կրոն: Ուստի անհրաժեշտ էր աղանդավորական այդ գնուտիցիզմին հակադրել ճշմարիտ գնուսիր, և սպացուցել, որ քրիստոնեությունը ոչ միայն ժողովրդական զանգվածների հայտառ է, այլև ճշմարիտ փիլիսոփային վայել ու անհրաժեշտ գիտություն, որն իր խստորեն որոշարկված համակարգն ունի: Ահա այս գիտական, իմաստափառական համակարգի կառուցման գաղափարով խանդավառ Կղեմես Ակերաանդրացին ձեռնարկում է քրիստոնեական վարդապետության, այսպես կոչված, գիտականացման, համակարգայնացման աշխատանքը: Առաջ տանեղով քրիստոնեության «փիլիսոփայացումը» «հունական իմաստաերի թիկնոցով» այդ քրիստոնյա աստվածաբանը առատորեն օգտվում է պղատոնյան և ստոիկյան փիլիսոփայության փաստարկներից ու դատողական մտակառուցումներից՝ ոչ հազվադեպ անմասն չմնալով նին հունական փիլիսոփայության ազդեցությունից: Քրիստոնեական գնուսիր հակադրելով սղանդափորական սմուսիմ: Կղեմես Ակերաանդրացին ձգտում է ցուց տալ, թե ճշմարիտ քրիստոնյան ևս չէ, որ բավարարվում է միայն հունակառու, այլ նաև, ով այդ հունատոր բաձրացնում, հասցնում է աստվածաբաշտական իմացության: Տիպար քրիստոնյան նրան ներկայացնում է ստոիկյան զգանելյաց իմաստունի կերպարանքով: Նրա գիտավոր ստարինությունը հեղինակը տեսնում է ոչ թե քրիստոնեական սիրո, այլ գերագույն իմացությամբ օժտված լինելու մեջ: Սակայն իրենից ի՞նչ է ներկայացնում Կղեմես Ակերաանդրացու գնուսիրը: Հատ նրա ումունքի գնուսիմ-ը (իմացություն) ամելին է քան պիտիս-ը (հավատը): Պիտիս-ը չմտածող ամբոխի հավատոն է, իսկ գնուսիմ-ը՝ իմաստափորության լույսով պայծառացած փոքրանանության հավատը: Գնուսիմ-ը ամելին է քան նույնիկ «գիտական» հավատը: Իր արև հիմունքով գնուսիր ճշմարիտ հայեցողություն է, պայծառակերպարական ներքանիանություն համաշվող եռյան մեջ, մարդկային ոգու գերագույն ֆունկցիա և Աստվածությանը մերձենալու, հաղորդ լինելու միակ միջոց: Հոգեբանական հայեցակետից դիտվող այս լինակը ոչ այ բան է, քան մաքի վերացարկվող գործողություն, որն աստիճանական վերացման կամ վերհանումի ճանապարհով մարդուն հասցնում է «քվարանական կեսի», առավելագույն արարեցման (հապոնի): Կղեմես Ակերաանդրացու դիտունով հենց այս իրավիճակն է մարդու կատարելագործման վերջնառահնանը, նրա աստվածացման սկիզբը: «Վերլուծման ճանապարհով մենք բարձրանում ենք մինչև նախապատճենի հայեցողություն,—ասում է հեղինակը,— վերլուծման միջոցով մենք աստիճանաբար բարձրանում ենք նախասկզբանական Պատճենի իմացությանը՝ սկսելով արարածներից, որոնք ենքան են նախապատճենին և վերջացնելով մարմնին հասող բնական հասուլություն:

Աերից ձերքազատումնվ: Օրինակ, նվազեցնենք երեք շափումները. խորո-  
թյունը, լայնությունը և երկարությունը: Դրանից բնոր կմնա լոկ կրծառված  
միավոր, այսպէս կոչված կետ, որ չի նեթարկվում ծավալի կամ տարածքի  
շափմանը: Ե չիք դարձեք. ոչնչացրեք այդ կետը, և դոք կը նենանք միա-  
վորի վերացարկման կամ վերացության մեջ: Եթե մարմինն ազատենք իրեն  
հասուն քննոյթից և նրանցից, ովքեր անմարմինների անունն են Կրում,  
խորասուզնենք Քրիստոսի վեհոյթյան հայում մեջ և սրբոյթյան միջոցով  
Բամբարձվենք, շղիանանք անսահմանության մեջ, ապս մենք ինչ որ ձևով  
կրաքարանանք մինչ Ամենազորը, թեպես այդ դեպքում մենք տակալին  
չենք կարող հասու լինել այն բանին, թե ինչ կա նրա մեջ—այն՝ միայն այն՝  
ինչ չկա նրա մեջ»: «Մենք կարող ենք, —շարունակում է նա, —բացահայտել  
և տեսնել Աստծոն նրան հայելով իր Մտքի մեջ, եթե, ազատագրելով մեր  
հոգին գգացումների կամայականությունից, գտնենք միակ բանականության  
շահեթերով ներթափանցել յուրաքանչյոր իրի էռոյթյան մեջ՝ ետ չմնալով և  
երբեք չբաժանվելով իրից, բանի դեռ չենք վերացել իրենին կարգադրող  
ոլորտը, բանի դեռ մեր բանականությամբ չենք հասել ճանաչողության գե-  
րագույն և վերջին նպատակը կազմող ճշմարիտ Բարիքին...»: Մի այլ տեղ  
կարդում ենք. «Երբ գնուտիկի հոգին, վերանալով բովանդակ նյութակա-  
նից, դիմում է ինքը իրեն և, սահմանափակվելով լոկ իր անձնական կեցու-  
թյամբ, հարաբերություն է հաստատում միայն գաղափարների աշխարհի  
հետ՝ նա (հոգին—Հ. Ք.) հասնում է երանելի վիճակի (Մատթ. 11: 80), իր կյանքով սուզվում է Քրիստոսի մեջ և, ուղղված լինելով  
Աստծո հայեցողությանը՝ երկրպագում է միայն նրա կամքը»: Իր էու-  
թյան մեջ լինելով միտքը վերացարկող ուժ՝ գնոսիսը, սակայն հրաշագործ,  
մողական հատկություններով է օժտված, ով տիրապետում է այդ հատկու-  
թյունները՝ վերանում է մարդկային բովություններից և արատներից: Գնո-  
սիսը սիրու մաքրող, սրբացնող ուժ է: Այն մարդուն ձերքազատում է զգա-  
յականությունից, որի ժխտում իրականացվում է հայեցողականին վերա-  
դառնալու շնորհիվ: Գնոսիսը մարդուն դարձնում է հրեշտակներին հավա-  
սար, Աստվածության հետ միանական, աստվածանման, աստվածային և  
նոյնինսկ՝ Աստված: Գնոստիկը ինչ էլ խնդրի Աստծոց, «Տերը միայն նրան  
է շնորհում...»: Սակայն Կղեմես Ալեքսանդրացու գնոսիսը լոկ մտային (ին-  
տելեկոստալ) բնոյթ չունի. այն աչքի է ընկնում նաև իր բարոյաբանական  
նկարագրությունը: Սրանով նա, ի դեպ, տարբերվում է աղանդավորական գնոս-  
տիցիզմից: Ծիշու է աստվածապատճեն կյանքը ամենից առաջ և ամենից  
վերջ իմացության տեսություն է, սակայն իր ամրողության մեջ, այն աստ-  
վածպատճեն հոգեկրթանք է: Կղեմեսը ոչ հազվադեպ գնոսիսը ներկա-  
յացնում է որպես առաքինություն: Վերջինիս կողքին նա դնում է սերը,  
իբրև մարդկային կյանքի տեսանելի, իրավահավաքար սկիզբ: Հեղինակը  
նոյնքան բարձր է գնահատում բարոյական կատարելությունը, որքան մտա-  
յինը: Հաճախ նա երկընտրանքի մեջ է. որի՞ն տալ նախապատվությունը,  
իմացությանը, թե սիրուն: Այսուամենայինից նրա հայցըների ողջ համակար-  
գը վկայում է այն մասին, որ այդ տատանումների մեջ նա փաստորեն  
հակվում էր գնոսիսի՝ իմացության կողմը: Մերը (ագառե), ըստ նրա, ոչ  
այնքան քիչունեական կյանքի առանցքը կամ ինքնուրույն սկիզբն է, որ-  
քան իմացության պայմաններից մեկը: Նրա համար հենց գիտությունն ու  
անգիտությունն են բարիքի և շարիքի ծայրաբեռները: Փրկությունը նախ և  
առաջ ճշմարիտ գիտելիքի կամ իմացության ձեռքբերումը այնուհետ մտքի

հայեցողական գործունեության շնորհիվ դեպի հախասկզբանական միասնության վերադարձով ներքին սիմետրիայի վերականգնումն է: Եթե գնասիկն առաջարկվեր ընտրել իմացությունը կամ համփունական փրկությունը՝ նու առանց տատանման կը նուրեք իմացությունը: Կղեմեսն աներկրայրդն վստահ է, որ Քրիստո Խնքը ամենից առաջ և ամենից ավելի Ռատցի և Մանկավարժ է, և նրա իրագործած փրկությունը Տիրոց՝ մեզ հաղորդած ճշմարիտ իմացության ու գիտության մեջ է:


Այսայսուհետեւ Ալեքսանդրացու մոտ մենք հայտանշում ենք ոչ միայն քրիստոնեական աստվածապաշտության սկիզբը, այլև վերացարկված մտահայեցողական ուղղության գիշավոր գծերը: Միուն բանիվ, «Ալեքսանդրան գնումը, —ինչպես Եղուս է Stoffels-ը, — արդեւ ակնհայտորեն քրիստոնեական աստվածապաշտական աստվածաբություն է: Գնուտիկը, Կղեմեսի պատկերացմամբ, փաստորեն աստվածապաշտ է»: Դեռ ավելին, նրա ուսմունքի մեջ մենք մենանում ենք Արևելաքրիստոնեական աստվածապաշտության ուղղություններից մեկի՝ իսիխազմի (Խաղաղարարության) ակունքները: Այն դրսերպում է նրա՝ աղոթքի, որպես Սաստծո հետ ներքին անքարքառ ու անքնդմեց զրոյցի՝ «մտային աղոթքի» մասին ուսմունքի, ինչպես նաև՝ աղոթքի, որպես զրիաքերության և Սաստծո հետ ողջակի միավորման վերաբերյալ նրա զաղափարներում. «Զգտելով Աստծո հետ ապրել, միասնաբար, —ասում է Կղեմեսը, — ճշմարիտ իմաստունն իր բովանդակ կյանքը անցկացնում է աղոթքի մեջ»: «Նրա առողջին զրիաքերությունը աղոթքի հովանուն է», այդ աղոթքի մոգական, ամենազոր ներգործությունը դրսերպում է գնուտիկան տիպարի շեշտված անհատականությամբ: Վերջապես, իմացության պարգևած երանությունը, ոգու լիակատար հանգիստը, իբրև քրիստոնեական կյանքի վերջնական հանգրվան իրականացվում է կյանքի մյուս կողմում, անդենականի մեջ, երկնային նեկելեցում, որտեղ իմաստաներն Աստծո առջև կկանգնեն: Այսուղե մենք կճանաչենք Աստծո, ինչպես Որդին է ճանաչում (սակայն դիմակայելով աղանդավորներին և ստոիկներին) Կղեմեսը մկանում է, որ այդ ճանաչողությունը հավասարժեք չէ Որդու ճանաչողությանը. քանզի ոչ մի աշակերտ իր ուսուցից ավելին չէ): Այս բոլոր գծերը ընկալվելով իսիխաստական աստվածապաշտության մեջ առավել համակողմանի և խոր մշակման ներքարկվեցին՝ բացահայտելով նրագծերը, որոնք, ի դեպ, ավելի ուշ Արևմտաեվրոպական աստվածապաշտության մեջ անդրրապաշտական ողղության ակունքը դարձան: Կղեմեսյան աստվածապաշտությունը իր որոշակի դրսությունը գտավ նա նեկելեցու մեջ նմանապես: Հիշենք թեկուց Ս. Գրիգոր Նարեկացու՝ Աղոթամատյանի «որպես անարյուն զրիաքերություն» որակումը, Անանիա Նարեկացու՝ աղոթքի տեսությունը, որ շեշտվում է «մտային աղոթքի» կարևորությունը, Անանիա Սանահնեցու՝ Վաղարշապատի ներքում «անձայն ձայնիք» տարիողելոյ մասին հաղորդած միտքը և այլն:

Կինելով խորհրդական աստվածաբության հայրը՝ Կղեմեսն իրապես խորհրդապատճ չէր: Նրա առաջարկած կատարսիք չափավոր քննությունը էր կրում: Նա խոսում է ոչ այնքան արտաքին աշխարհուրացության, որքան աշխարհի ներքին հալովահարման մասին: Այստեղից է՝ նրա պական վերաբերմունքը կյանքի գործնական խնդիրների մկանումը: Վերաբերմունք, որ շատ ավելի դրական էր քան վաղ քրիստոնեական աստվածապաշտության որևէ ներկայացուցչի դիրքորոշումը: Եթե նա խոսում է Լոգոսի միատերիաների (գաղտնաձիսության) վերաբերյալ՝ այն հակադրելով նեթանոսական

Այս կամ էպուստիայի՝ մենաշնորհյալ հայեցղոթյան տեսիլքի մասին, ապա դա ավելի շատ նրա դպրոցի լեզուն է բայ նրա անձնական կյանքի իրողորդումը: Գնուտիկը ոչ վիզիոններ է տեսանող, ոչ թեորգիատ և ոչ էլ հակօրինական (անտինուիստ): Նրան օտար են աղանդավորական աստվածաշտոթյան Երցեսները՝ ծայրանեղորեն անկարգ հոգումներ և ոգու այն հիացում-սրանչացումները, որ Պրտիեն ունեցավ: Հայ Կղեմես Սզեբսանդրացու գնուտիկին դեսի ոգու գերազայն իրավիճակ առաջնորդող ճանապարհը ոչ թե տրանսը՝ հիացում-մերապածացումն է, այլ կանոնակարգող բանականոթյունը: Եվ պատամենայնիվ Կղեմեսի աստվածաբանոթյան նշանակությունը քրիստոնեական աստվածաշտոթյան մեջ խիստ մեծ է: Իր ուսմունքը նա կանխանշեց այն հունը, որով ընթանալու էր վաղ քրիստոնեական աստվածաշտոթյան գլխավոր հոսանքներից մեկը: Նա առաջնը մշակեց հոսկացությունների այն համակարգը, որոնք լայնորեն պիտանվեցին ոչ շրշանի աստվածաշտոթյունի կողմից:

Սակայն քրիստոնեական աստվածաշտոթյան վերացարկված-մտագրնեական ուղղորդյան ամենաբնորոշ ներկայացուցիչը Ս. Դիոնիսիոս Արքապատճեն:

(Ծարունակելի)



## ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

### ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԻՐԱԾ ՄԻ ՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ազգային պատկերասրամի հիմ հայկական գեղանկարչության նավաքածուի ընտրանին Աերկայացնող սրբութ, մի շարք բարձրարված սրբապատկերների միջից առաձևանուն է Աստվածամորը պատկերող մեծադիր կոտավը (Գ. 854/1275, 251×133 սմ), որի տակ կարդում ենք՝ «Սննդայու հայ Ակարիչ», «Աստվածամոր Փառարանումը», «18-րդ դար»:

Արվեստաբանական գրականության մեջ Աստվածամոր պատկերը վերաբերվում է երեք Ակարչի՝ Սուլիփանու Անհացուն՝, Հարություն Հովհաննեան-յանին<sup>2</sup>, Հովհաննան Հովհաննեանին<sup>3</sup>: Հեղինակի ինքնույթյան և Ակարի ստեղծման ժամանակի հարցի ճշումն ըստությունը կայսերուն է հրանու, որ 17—18-րդ դարերից մեզ հասած գրեթե բոլոր գեղարվեստական ստեղծագործություններն անսուրագիր են: Այս առումով անգնահատելի արժեք են Աերկայացնում պատմական վավերագրերը, որոնցում տեղ են գտնել այդ շրջանում ստեղծագործող Ակարիչների, նրանց պատվիրաստուների գործությունները վերաբերող ուղղակի և անողջակի տեղեկությունները:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763—1780) «Դավթարի» (Դավթար և Բուշագիր անօթից և ապասուց սրբոյ և Միանալիշի տաճարին...) համաձայն, խնդրու առարկա պատկերը փակցված է եղել Էջմիածնական տաճարի և Հայոց Տեառնելորու խորանու: «Դավթարից» անենկանուն ենք, որ նրանից պատվիրաստու Սիմեոն կաթողիկոս էր<sup>4</sup>: Խճճարերաբար Սունեփանու Անհացու հեղինակության հարցը դորս է գալիս, քանի որ Անհացին ապրել և ստեղծագործել է 17-րդ դարուն:

Ռ. Դրամբյանի կարծիքով Աստվածամոր Ակարը ստեղծվել է 1763 (Սիմեոնի հայրապետական գահ բարձրանալու տարին) և 1776 («Դավթար»-ի կազմման տարին) թվականների միջև ընկած ժամանակահատվածում<sup>5</sup>, Հարություն Հովհաննեանի ձեռքով: Սակայն, Սիմեոն Երևանցին 1763 թվականից չեր կարող սրբապատկերներ պատվիրած լինել, քանզի իր խնկ գրած «Զամրո»-ում (Գիրք որ կոչի իշտուակարան արձանացուցիչ համելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռուն և իրոյ շրջակայից վաճօրէիցն, 1765 թ.) խոսք չկա Էջմիածնի տաճարը Ակարագար-



դեմ մասին<sup>6</sup>, իսկ «Դավթարը» գրվել է 1768—1776 թվականների ընթացքում: Փաստերը վկայում են, որ Նաղաշ Հովհաննանի կրտսեր որդին՝ Հարությունը չէր կարող մեր Ակարի հեղինակը լինել: Սիմեոն կաթողիկոսի գահակալման շրջանի վավերագրերում որևէ տեղեկություն չկա Հարությունի գործունեության վերաբերյալ: Սակայն, Մայր Աթոռի նորոգումների և ծախսումների մատյաններում պահպանված գրառումներում, սկսած 1769 թվականից մինչև 1778-ը, բազմից շեշտվում է Նաղաշի թոռան՝ Հովհաննան Հովհաննանանի անունը<sup>7</sup>, որը համակագրական կատ է պահպանում Սիմեոն հայրապետի հետ<sup>8</sup> և նրա հրավերով ժամանակ առ ժամանակ գալիս էր Մայր Աթոռ իր մասնակցությունը բերելով եկեղեցաշինական աշխատանքներին: Նշվածը հիմք է տպակի Սատվածամոր Ակարը կապել Հովհաննան Հովհաննանանի անվան և ստեղծագործության հետ<sup>9</sup>:

Սատվածամոր Ակարը բերվել է Էջմիածնի թանգարանից 1931 թվականին և պատկերասրմի մայր մատյանում գրանցվել է որպես «Սատվածածին վերևում Սատված և Հիսուս և այլ Ակարներ չորս կողմը» հակիրճ Ակարագրությամբ: Հետագայում այն ստացել է «Սատվածամոր Փառարանումը» (ակաֆիսո) անվանումը<sup>10</sup>, որը չի համապատասխանում Ակարի բովանդակությանը: Նկարիչը Սատվածամորը պատկերել է հասակով մեկ կանգնած մանեղողակի մեջ: Գլխի շորջ արեգակնաման ճաճանչափազ լուսապակ է, ոտքերի տակ՝ լուսնի մահիկ: Մանողովան ընկերմված է զնդան ամպերի մեջ, նրա աջ և ձախ մասերում պատկերված են երկրուական հրեշտակ: Սատվածամոր գլխավերելում ամպերով երիզված տարածության մեջ Սուրբ Երրորդությունն է:

Առաջին իսկ հայացքից պարզ է, որ պատկերվածը համբարձման տեսարան է: Քրիստոնեական պատկերագրության կանոնով մանեղողակի (Աստծո Փառքի առարկայական արտահայտությունը) մեջ պատկերվում են Հիսուս Քրիստոսը և Մարիամ Սատվածածինը: Մանողովան ամենից համար օգտագործվում է Տիրոջ Համբարձման և Սատվածածի վերափոխման խորհրդավոր իրողությունները Աերկայացնող կանոնիկ պատկերներում, ոյտնություն կերպարվել են քրիստոնեության երկու առաջնակարգ տոնները:

Հայ եկեղեցին ունի մի շարք կանոնացված շարականներ, որոնք կոչվում են «Կանոն վերափոխման սուրբ Սատվածածին» և կատարվում են վերափոխման տոնի ժամանակ: Տոնի երկրորդ օրվա շարականում Ակարագրված է Սատվածամոր դեպի երկինք (դեպի Սատվածություն) վերափոխվելը հար և հման մեր Ակարի հորիզոնական դրույթից<sup>11</sup>:

Այս ամենը իրավունք է տպակի Ակարը վերանվանել «Վերափոխուն Սատվածամոր», մանական որ, ինչպես երկում է «Դավթարից» Ակարը Էջմիածնում գտնվելու ժամանակ այդպես էլ կոչվել է<sup>12</sup>:

Բացի զոտ գեղարվեստական արժանիքներից Սատվածամոր պատկերը զուգահեռ կրում է մեծ խորհրդաբանական իմաստ: Կտավի Ակարադաշտի զգակի մասը (Սատվածամոր շորջ բոլորը) գրադեցնում են 28 պատկերների բանանիշ, յուրաքանչյուրը լրացված համապատասխան բացատրագրով: Նոյնօրինակ գրության հետքեր են պահպանվել մանեղողակի վերին կորագիծ եզրաշերտի վրա: Նկարի կառուցվածքային և պատկերագրական հորինվածքի յուրօրինակությունն այն է, որ Սատվածամոր կերպարը Գեղարվեստական արտահայտչամիջոցներից զարդարված մեկնվում է խորհրդանիշ պատկեր-գրությունների միջոցով: Ցավոր, Ակարի այս յուրահատկությանը պատշաճ ուշադրություն չի դարձված: Պատկեր-խորհրդանշանները

ներկայացվել են որպես Մարիամին փառաբանող ստորոգելիներ<sup>13</sup> կամ առաքինություններ<sup>14</sup>:

Վերադառնանք Սիմեոն կաթողիկոսի «Դավթար»-ի այն մասին, որտեղ նկարագրված է Աստվածամոր պատկերը. «Ա պատկեր Աստուածածնի՝ որ է մեծ, զարկագն արկեալ զիրել՝ և զլումին ընտ ոտիք, և ի վերայ պատկեր Երրորդութեան, և շուրջ յիրել՝ գուշակութիւնը մարգարեից՝ որք վասն իր ասացեալ են, մանավանդ այնք՝ որք ի գիրս Երգ Երգոցին են...»<sup>15</sup>: «Դավթար»-ը կազմուելի այս գրառում օգնում է հատակեցնել պատկերի խորհրդանշանելի ծագման աղբյուրները, որոնք են՝ Սուրբ Գիրքը և Եկեղեցածիական գրականությունը: Պատահական չե, որ մեր ուշադրությունը կենտրոնացվում է Երգ Երգոցի վրա: Հատ Եկեղեցու հայրենի Երգ Երգոցում, որտեղ արվում է Փեսաի և Հարսի սիրո պատմությունը, այլաբանորեն տրված է Քրիստոսի և Եկեղեցու (որպես մեկ մարմին), աստվածային կատարյալ սիրո խորհրդը ի դեմս Քրիստոսի (Փեսա) և Եկեղեցու (Հարս): Իսկ հայրաբանական երկասիրություններում Աստվածամայրը խորհրդաբանորեն համարվում է Եկեղեցու գաղափարը մարմնավորողը: Իրենց հերթին պատկեր-խորհրդանշաները ներկայանում են որպես միասնական կուռ համակարգ, իրենց մեջ ներառնելով Աստվածաշնչի համարյաբոլոր գործերը: Այսինքն, խորհրդաբանորեն շեշտվում է Հին և Նոր Կոսկարանների հոգեւոր և գաղափարական միասնությունը: Աստվածամայրը իրականացնում է այդ կապը, որպես «Մայր Աստծոնց եւ Մայր Եկեղեցոյ»:

Անցնենք պատկեր-խորհրդանշանների համարու քննությանը, որոնք, ինչպես վերը նշվեց թվով 28-ը են, պատկերված են կտավի աջ, ձախ և ստորին մասերում և ունեն համապատասխան մակագրություններ:

#### «ԸՆՏԻՐ ԻԲՐԻՒ ԶԱՐԵԳԱԿՆ» (Երգ. Զ 9)

Ս. Գրիգոր Նարեկացին տպիս է իր մեկնությունը վկայակոչելով ս. Գրիգորի հետևյալ արտօնաբայությունը. «Յայն ժամ արդարք ծագեսցն իբրև զարեգակն յարքայութեան երկնից» և բացատրում իր միտքը՝ «Եւ արդարեւ հիացումն է ի հողեղէն բնութեան այնախիս լինել իբրև զառաօտ և իբրև զլուսին և իբրև զարեգակն կարգեալ ի հիացումն իրեշտակաց»<sup>16</sup>:

Աստվածամայրը համեմ է գալիս որպես կրող աստվածային արդարության:

#### «ԳԵՂԵՑԻԿ Ո(Ր)Պ(ԵՍ) ԼՈՒՍԻՆ» (Երգ. Զ 9)

Աստվածամայրը համեմատվում է լուսնի հետ՝ ինչպես լուսինը լուսավորում է գիշերով, այնպիս է հարսը (Աստվածամայրը, Եկեղեցին) լուսավորեց գիշերը կուպաշտության (հեթանության) և ստվերը հրեհը և դարձալ քրիստոնեության լուս առավոտի և լուսին՝ լուսավորող գիշերային մըթութան (մեղքի) մեջ<sup>17</sup>:

#### «(ԱՍՏԴ) (ԾՈՎՈՒ)»<sup>18</sup> (Թվոց. ԻՌ 17)

Մարիամը որպես պածառ ասադ ծագեց Հակոբի ազգի (Խորայել) համար և որպես այդպիսին ծնեց Քրիստոսին<sup>19</sup> (Խորայելի՝ Աստծո ժողովուրդ, Փրկչին):

#### «(Ի)Բ(ՐԵՒ) ԶԱՐՄԱԿԵ(ՆԻ)» (Երգ. Է 7):

Արմավեճնին, երբ նորատունկ է, շատ բարձր չէ, բայց նրա արմատը խիստ խորն է և հաստատ, երբ նա աճում է, երկրի հողմերը նրան չեն տա-

պալում և ինքն էլ միշտ կանաչ է: Եկեղեցին՝ Քրիստոսի Հարսը, սկզբից նույնական փոքր երևաց ինչպես առաջին ժողովարան, ապա գնալով հզորացավ ինչպես արմավեճին<sup>20</sup>: Այստեղ նողմերը խորհրդանշում են մեղքը, իսկ արմավեճին (Եկեղեցին) միշտ ծաղկած է, որը մեկնվում է որպես նոգուր վերածնունդ:

### «ԱԱ(Ի) ՇԱՀԱԲԵՐ» (Առակ. ԼՍ. 14)

Աստվածամայրը (Եկեղեցին) որպես առվ Աստծո Խոսքը բերեց մարդկանց և մարդկանց տարավ առ Աստված<sup>21</sup>: Նավը եկեղեցու խորհրդանշիցն է, որ իր անդամներին մեղքի փոթորկվող ծովի միջով տանում է դեախի խաղաղության հավահանգիստ (Աստծո Սրբայություն):

### «ՏԱԾԱՐ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ»

Աստվածամայրը իր մեջ առավ Աստծո Բանին՝ Քրիստոսին և նմանվեց Աստծո տաճարի: «...Մայր լուսոյ և տաճար բարձրելոյ Բանին...»<sup>22</sup>:

### «ԻԲՈՒԻ ԶԼՈՒԴ» (Եսայ. ԽԹ 18)

Համախ շարականներում Աստվածամորն անվանում են «Ուրախական Զարդ խորանի»<sup>23</sup>, որը խորհրդանշում է հոգևոր զվարթություն:

### «ԳԵՂՄ(Ս) ԳԵԴԵ(ՕՆԻ)» (Դատ. Զ 37)

Աստվածամայրը որպես գեղմ ընկալեց ցողն երկային՝ Աստծո Որդուն, որը ծևվելուց հետո մարդկանց համար դարձավ հավիտենական կյանքի անձրև և աստվածային իմաստության աղբյուր<sup>24</sup>: Խորհրդանշում է նաև այն շնորհները, որոնք տրվում են հոգով կատարյալներին, ինչպիսին էր Աստվածամայրը<sup>25</sup>:

### «(ԻԲ)ՐԵՒ ԶՏՈՒԿ ՎԱՐԴՈՑ» (Սիրաք. ԽԴ 18)

Վարդու կուտության, ամոթխածության և առ Աստված ջերմ սիրո խորհրդանշիցն է<sup>26</sup>:

### «(ԱՂԲԻՒՐ) ԿՆՔԵ(ԱԼ)» (Երգ. Դ 12)

Այստեղ կրկին շեշտվում է եկեղեցու գաղափարը: Աստվածամայրը (Եկեղեցին) թեպես աղբյուր է աստվածային խոսքի, սակայն կնքված է օտար վարդապետության համար և չի սփռում յոր մարգարիտները խոզերի առջև<sup>27</sup>:

### «ՊԱՐՏԷԶ ՓԱԿԵԱԼ» (Երգ. Դ 12)

Պարտեզ նշանակում է եկեղեցի, որն է հավատացյալ ժողովուրդը<sup>28</sup> փակ մեղքի թույնի առաջ:

### «ՀԱՅԵԼԻ ԱՆԱՐՍ» (Իմաս. Է 26)

«...Եւ որպես կին յորժամ զարդարի, ոչ հարցանէ ընդ ընկերսն թէ գեղեցիկ է այլ առնու հայելի, և ինքն որոնէ զզարդ գունոյ իրոյ, այսպէս և եկեղեցի ոչ ընդ այլ ոք հարցանէ, այլ ի հայելիս սուրբ գործ յառեալ զաշ մտաց՝ զպանունան առաքինութեան իրոյ նովա ողլիք<sup>29</sup>:

Աստվածամայրը նման է խաղաղ աղբյուրի (հայելու), որովհետև Որ-

դին, որ Հոր պատկերն է, երևցավ նրա մեջ<sup>30</sup>: Խորհրդանշում է նաև հոգու խաղաղություն:

#### «ՄԱՔՈՒՐ ԱՂԱՎՆԻ» (Երգ. Ա 14, Ե 2 և այլն)

Խնչպես աղավնին գիտե սնուցանել այլոց ձագերին, այնպես էլ նկեղեցին դարմանում է նաև հեթանոսներին<sup>31</sup>:

#### «ԾԱՂԻԿ ԴԱՇՏԱՑ ԵՒ (ԾՈՒԾԱՆ ՀՈՎՏԱՑ)» (Երգ. Բ 1)

«...Սրբարք շուշան հովտաց և ծաղկի դաշտաց, որք ոչ մարդկային սովորական արթեատի մշակեալ պայծառանան, այլ ի ցողոյ և յանձրելոյ երկնից բարգաւաճեալ: Այսպէս սուրբ կոյսն արտաքրոյ բանառոր ծննդագործութեամբ մարդկան՝ երկնային օգրութեամբ երաց յամոլ արգանդ Աննայի»<sup>32</sup>:

#### «ԱՄՊ ՀՈՎԱՆՍԱԻՈՐ» (Սաղմ. ՃԵ 39)

Ծեշտվում է Աստվածամոր Բարեխոս լինելը:

#### «ԼԵԱՌԻՆ ՎԻ(ՄԱ)ԾԻ(Ն)» (Դան. Բ 45)

Լեոր՝ Աստվածամայրն է, վեմք՝ Քրիստոսը: Խորհրդանշում է անարատ նղիությունը<sup>33</sup>:

#### «ԳԱԻՆԱԶԱՆ ԾԱՂԿԵԱԼ» (Թիվք. ԺԵ 6–10)

Խոսքը գնում է Ահարոնի գավազանի մասին, որը մի գիշերում կանաչեց և ծաղկեց: Գավազանը խորհրդանշում է ստվածամորը, ծաղիկը՝ Քրիստոսին:

#### «ԱՂԲԻՒՐ ՅՈՐԴԱՌՈՍ» (Բ Օրենք. 15)

Խորհրդանշում է բխումն աստվածային իմաստության:

#### «ԻՌԻՌԻՆ ԵՐԿՆԻՑ» (ԾԱՌ. ԻԴ 17)

Աստվածամայրն անվանվում է դուռն երկնից, քանզի նրանով երկնքի Արքան (Քրիստոսը) հօավ երկիր և նրանով (եկեղեցի) մարդիկ կարող են մտնել երնային արքայություն<sup>34</sup>:

#### «ԱՇՆԴՈՒ(Ղ.Ք) (Ե)ՐԿՆԻՑ» (ԾԱՌ. ԻԸ 12)

Իմաստով նոյնանում է վերը նշվածի ներ:

#### «ԱՇՏԱՐԱԿ ԴԱՒԹԻ» (Երգ. Դ 4)

Աշտարակը եկեղեցին է (Հարսը), որի գլուխը Քրիստոսն է «Փեսան»<sup>35</sup>:

#### «ՔԱՂԱՔ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ» (Սաղմ. ԽԵ 9)

Խոսքը նոր (Վերին) Երուսաղեմի (Աստծո Արքայություն) մասին է<sup>36</sup>:

#### «ԲԱՑՈՂ ԲԱՆԱԼԻ» (Դատ. Գ 25)

Աստվածամայրը համեմատվում է բանալու ներ, որը բացում է դեպի երկնային արքայություն տանող դուռը:

#### «ԻԲՐԵՒ ԶԻԹԵՆԻ ԳԵՂԵՑԿԱԳ(Ո)ՅՆ» (Երեմ. ԺԱ. 16)

Զիթեահն հաղթանակի խորհրդանիշն է (հաղթանակ մեղքի նկատմաբ):

### «ՁՀՈՐ ՁՐՈՅ» (ԾԱԾԿ. ԽԱ. 19)

Զրիորը՝ Աստվածամայրն է, կենդանություն պարգևող չուրը՝ Քրիստոսը:

### «ՍԱՓՈՐ ՈՍԿԵՂԵՆ» (Երրա. Թ. 4)

Ուկե սափոր, որի մեջ հին հրեաները պահում էին անապատում ստացած մանանան: Աստվածամայրը մաքոր գոյությամբ ուկու է նման և լի է մանանայվ<sup>37</sup>: Այստեղ ընդգծում է հին և նոր ուժութերի կապը, նրանց լրացը: Աստվածածինն իր մեջ պահել է երկնային մանանան, Աստծո խոսքը՝ Քրիստոսին:

### «(ԻԲՐԵՒ) ԶՄԱ(ՅՐ)» (Սաղմ. ԻԸ. 5)

Աստվածամայրը (Եկեղեցին) նման է մայրի ծառին, որը միշտ կանաչ է և չի փառում<sup>38</sup>:

Աստվածամոր գլխավերնի արեգակը և լուսնի մահիկը ուռերի տակ, նոյնպես ունեն իրենց խորհրդը և առնչվում են Հռվիաննու Հայունության դրվագներից մեկին, որտեղ (Հայուն. ԺԲ 1—2) նոյն տեսիլքը խորհրդանշում է Եկեղեցից<sup>39</sup>: Միաժամանակ լուսի մահիկը և Կույսի անարատ նկատյան նշանն է, քանզի կանանց հղիությունը կապված է լուսնային ամիսների հետ<sup>40</sup>, իսկ Աստվածամոր հղիությունը գերբնական էր, վեր այդ օրինաչափությունից, ուստի մահիկը պատկերված է նրա ուռերի տակ խորհրդանշելով այդ բացադիկություններ:

Համառոտ այսպիսին է «Վերափոխումն Աստվածամոր» նկարի խորհրդարանական կողմը, որը դուրս է քերում պատկերը զուս գեղարվեստական ընկալման սահմաններից, այն դարձնելով հոգևոր արվեստի օրինակելի նույնագործություններ:

Այս մեծարժեք նկարի պատվիրատու Սիմեոն կաթողիկոսի կենսագիրները պատմում են, որ հոգևոր ճեմարանում ուսանելու տարիներին ապագա հայրապետը չէր փայլում գիտելիքներով և չերմեռան աղոթում էր առ սուրբ Աստվածածին՝ խսդրելով հոգևոր շնորհներ: Մի օր, վերափոխման տոնին, հրաշալի տեսիլքով ս. Կույսը երևում է նրան և մեկնելով ձեռքի ոսկի բաժակը ասում. «առ որդեակ զայտ բաժակ և արք և մի յուսահատիր, զի բուսով անմահութեան լցար»: Այդ օրվանից Սիմեոնն առաջինն էր ուսման մեջ<sup>41</sup>:

1771 թվականին Սիմեոն կաթողիկոսը ավարտեց Մայր տաճարի երկու խորանների և ս. Հակոբ (որտեղ և փակցված է եղել Աստվածամոր նկարը) վերանորոգումը «ի ներքուս և յարտաքստ»<sup>42</sup>: Ցավոք, մեզ հայտնի չէ, երբ է սկսվել վերանորոգման աշխատանքը, սակայն մոտավոր հաշվարկով այն պետք է տևեր մոտ երկու տարի: Հետևաբար «Վերափոխումն Աստվածամոր» պատկերը նկարվել է 1769—1771 թվականներին, որպես Սիմեոն կաթողիկոսի հոգու տուրք Աստվածամոր հիշատակին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. **Ե. Մարտիկան**, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ս., Եր. 1971, էջ 33—35:
2. Օչերքի ու պատմություն արմանական արվեստի մասին, Եր. 1979, էջ 109:
3. **Մ. Ղազարյան**, Հայ կերպարվեստը 17—18-րդ դարերում, Եր. 1974, էջ 193:
4. **Գ. Հովհաննիս**, Նորթեր և ուսումնափրություններ հայ արվեստի պատմության, Բառ, Բ., Եր. 1987, էջ 289:
5. Օչերքի... էջ 109:
6. **Մ. Ղազարյան**, Առյան տեղում, էջ 177:
7. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վալ. 1, էջ 112, 115, 118, 10: Դիվան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 275, 388:
8. Դիվան հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 106, 125:
9. Հովհաննիս ատեղագործության քննությունը տես՝ **Մ. Ղազարյան**, Աշխ., էջ 176—211:
10. Օչերքի... էջ 109:
11. Շարական հոգեւոր երգոց սուրբ և ողդափառ եկեղեցւոյն Հայաստանաց, Կ. Պօլիս, 1853, էջ 531:
12. «Դավթարուս» հայու մկարագրվում է մեր կտորվը (առանց անվանման) այսունակ նշվում մեկ այլ կուռավ՝ «մի պատմեր ևս վերափոխման Սուրբ Մատուածածին...», Գ. Հովհաննիս, Նորթեր... էջ 289:
13. **Ե. Մարտիկան**, Հայկական... էջ 33—35:
14. Օչերքի... էջ 109.
15. **Գ. Հովհաննիս**, Նորթեր... էջ 289:
16. Սրբոյ հօրեն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը, Վեճետիկ 1840, էջ 338:
17. Հակոբ Կարենցի, Մեկնութիւնը Երգ երգոց անուանուալ բանիցն Սաղոմօնի, Կալկաթա, 1820, էջ 306:
18. Մարիամ անվան թարգմանություններից մեկն է: Տաս՝ Լրումն լիակատար վարուց և վկարաբանութեանց սրբոց, Բառ, ԺԱ, Վեճետիկ, 1814, էջ 43:
19. Գիրք քարոզութեան, որ կոչի Սամասն հասոր արարեալ սրբոյ հօրեն մերոյ Գրիգորի Տարևացոց եօթնայոց վարդապետի, Կ. Պօլիս 1741, էջ 515:
20. Հակոբ Կարենցի, Մեկնութիւնը... էջ 334:
21. Նոյնը էջ 43:
22. Գրիգոր Տարեացի, Սամասն... էջ 502:
23. Հին և նոր Պարականոն կամ Ամենամեծ Շարականներ, Վաղարշապատ 1911, էջ 16:
24. Բացատրութիւն Շարականաց, Վեճետիկ 1814, Բառ, Ե, էջ 550:
25. Մեկնութիւն Սահմասաց, Վեճետիկ 1819, Բառ, Ե, էջ 550:
26. Գրիգոր Տարեացի, Սամասն... էջ 515:
27. Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը... էջ 308:
28. Գրիգոր Տարեացի, Սամասն... էջ 523:
29. Սրբոյ Ներսէսի Լամբրնանաց Տարմոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնը ի կարգ եկեղեցւ և մեկնութիւն խորհրդյ պատարագին, Վեճետիկ 1847, էջ 128:
30. Գրիգոր Տարեացի, Սամասն... էջ 526:
31. Հակոբ Կարենցի, Մեկնութիւնը... էջ 214:
32. Բացատրություն Շարականաց, էջ 12:
33. Ներսէս Լամբրնացի, Մեկնութիւն սրբոց երկուուսան մարգարեից, Կ. Պօլիս 1826, էջ 249—250:
34. Բացատրութիւն Շարականաց, էջ 101:
35. Հակոբ Կարենցի, Մեկնութիւնը... էջ 214:
36. Մեկնութիւն Սահմասաց, Վեճետիկ 1818, Բառ, Ե, էջ 508:
37. Բացատրութիւն Շարականաց, էջ 21:
38. Հակոբ Կարենցի, Մեկնութիւնը... էջ 287:
39. Գ. արք. Աղամալեան, Մեկնութիւն Տայնութեան և Ցովհաննու առաքելոց համապատասխան ի զանազան մեկնացաց, Կալկաթա, 1846, էջ 183:
40. Գիրք Հարցմանց երից երանեալ Սրբոյ Հօրեն Գրիգորի Տարեացւոյն, Կ. Պօլիս, 1879, էջ 186:
41. Դիվան հայոց պատմութեան, Բառ, Գ, Թիֆլիս 1894, էջ ԿԴ—ԿԵ:
42. Նոյն տեղում, էջ ԴԱ:



## ՀԱՆԳԻՍ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՕԾԱԿԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԼՅՇՅԱՆԻ  
(1917—1992)

1992 թվականի հուլիսի 5-ին Էլ Քինտի (Իրաք) հիվանդանոցում իր մահկանացուն կնքեց Իրաքի հայոց յեսի երկարամյա հոգևոր հովիլ արծանապատիվ Տ. Օշական ավագ քահանա Գլյշյանը:

Հանգույցական արժանապատիվ տեր հայրը ծնվել է 1917 թվականին Քերեքու (Անդր Հորդանան), ավագանի անունով՝ Գրիգոր, վաղամետիկ հոր անունով:

Նախանկան կրթությունը ստացել է Բեյրութի Սահակյան ազգային վարժարանում: Երկու տարի հետոնել է ֆրանսիական Ֆրերեների քոլեջի դասընթացներին: Ըստամիքի ծանր պայմաններից ելեկով թողել է ոսումը և անցել աշխատանքի՝ միաժամանակ գրադիվով ինքնազարգացմանը: Այնուհետև ուսուցչական պաշտոն է վարել Պուրճ Համուտի Սահակյան վարժարանում, ապա Աշանակվել նոյն վարժարանի տնօրին:

Երեք տարի եղել է Դամակոսի հայոց Ս. Սարգիս եկեղեցու դպրապետ: Դամակոսում և այլ վայրերում պատունավարելու ընթացքում արծանապատիվ տեր հայրը միաժամանակ մասնակցել է մշակութային, գեղարվեստական և մարզական գործի գարգացման աշխատանքներին:

Անապով իր կոչումի ձայնին և ընդառաջելով Քերեքուկի (Իրաք) թաղական խորհրդի հրավերին, 1966 թվականի նոյեմբերի 19-ին, ձեռամբ երշանկահիշտառակ Տ. Ասոյիկ արքապիսկոպոս Ղազարյանի, ձեռնադրվել է քահանա՝ վերանվանվելով Տ. Օշական քահանա:

Վեց տարի Քերքուկում իրեն հոգևոր հովիլ պաշտոնավարելուց հետո, 1973 թվականին տեղափոխվել է Բաղդադ:

1986 թվականին, քահանապատճեն ձեռնադրության 20-ամյակի առթիվ, Իրաքի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ Եսիսկոպոս Աստուրյանի միջնորդությամբ Նորին Սուրբ Օծովյուն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանացել է սվագության պատվի և իրավունք ստացել կրելու ծալիկա փիլոն:

Իր հոգևոր ծառայության իրքն գնահատամբ Տ. Օշական ավագ քահանա Գլըճյանը արժանիորեն վայելել է Իրաքի հայ հավատավոր ժողովրդի սերն ու հարգանքը:

1992 թվականի հուլիսի 7-ին, Երեքաբթի օրը, Կեսօրից հետո, ժամը 14-30-ին, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվեց Տ. Օշական ավագ քահանայի վերջին օծումը և հուղարկավորությունը, իսկ ազգային նոր գերեզմանատանը կատարվեց հանգուցյալի թաղման արարողությունը, որտեղ և ամփոփվեց նրա աճյունը:

Երկնային խաղաղություն տեր նոր հոգուն:





## „ЭЧМИАДЗИН“

### ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (СЕНТЯБРЬ—ОКТЯБРЬ—НОЯБРЬ 1992 г.)

1. Энциклика Католикоса всех армян Вазгена I о провозглашении самостоятельной епархии Армянской Церкви в Германии, 31 января 1992 г. (стр. 3—4).

2. Редакционное слово против циркуляра «Возвращение в Армению», написанное Патриархом Армянских Католиков Иоанном-Петром. Помещена также телеграмма Католикоса всех армян Вазгена I кардиналу Сильвестру (Рим) по этому случаю (стр. 5—6).

3. Отец Завен Аргуманян—Армянская Апостольская Первопрестольная Церковь (слово, обращенное к армянской молодежи)—(стр. 7—10).

4. Григор Зограб—Нет—католицизму (против окатоличивания армян), 16 августа 1898 г. (стр. 11—12).

5. Оправдание из первопрестольного Эчмиадзина (Объявление Канцелярии Эчмиадзинского Католикосата против статьи «Новое слово» Ерванда Азатяна, напечатанная в газете «Азг» от 4 ноября), 16 ноября 1992 г. (стр. 13).

6. Католикос Киликийского Домна Гарегин II в первопрестольном Эчмиадзине, 29 октября—4 ноября 1992 г. (стр. 14).

7. Проповедь Католикоса Килийского Домна Гарегина II в Кафедральном соборе св. Эчмиадзина, 1 ноября 1992 г. (стр. 15—19).

8. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата о хиротонии во епископа, 5 октября 1992 г. (стр. 20).

9. Хиротония во епископа в первопрестольном Эчмиадзине, 26—27 сентября 1992 г. (стр. 21—31).

10. Биографии епископа Иусика Багдасяна, епископа Тарона Джереджяна, епископа Гарегина Бекджяна и епископа Вигена Айказяна (стр. 32—39).

11. Торжественное открытие учебного года в Духовной Академии св. Эчмиадзина, 10 сентября 1992 г. Помещены также слова Католикоса всех армян Вазгена I, архиепископа Нерсеса Позапаляна и епископа Анания Арабаджяна (стр. 40—44).

12. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за сентябрь—октябрь—ноябрь месяцы (стр. 45—48).

13. Проповедь епископа Месропа Мутафяна в Кафедральном соборе св. Эчмиадзина, 11 октября 1992 г. (стр. 49—51).

14. Проповедь верховного архимандрита Вачэ Игнатиосяна в Кафедральном соборе св. Эчмиадзина, 18 октября 1992 г. (стр. 52—54).

15. Священническое рукоположение в престольном соборе св. Вардана г. Нью-Йорка, 25—26 июля 1992 г. Так же помещена биография новопостриженного иеромонаха Нарека Перперяна (стр. 55—56).

16. Съезд Европейских церквей в Праге, 1—11 сентября 1992 г. (стр. 57—58).

17. Священник Гарегин Гаспарян—Апостольство наших дней (Посещение группы армянских священнослужителей Мать—Родины из Канады под руководством предстоятеля армянской епархии Канады епископа Овнана Тертеряна)—(стр. 59—62).

18. Степан Варданян—Эчмиадзин (стихотворение)—(стр. 63—64).

19. Профессор Вараздат Арутюнян—Преданная служба первопрестольному Эч-

миадзину (по случаю 80-летия со дня рождения главного архитектора Эчмиадзинского Католикосата Арцруна Галикяна). Также помещена по этому случаю энциклика Католикоса всех армян Вазгена I, 10 сентября 1992 г. (стр. 65—73).

20. Епископ Геворг Серайдарян—Хронологическая таблица предстоятелей армянской епархии Грузии (исследование)—(стр. 74—93).

21. Сурен Даниэлян—Стезя духовного стихотворения (О поэте-священнослужитеle архиепископе Нерсесе Позапаляне. Рецензия)—(стр. 94—101).

22. Артавес Матевосян—Таргманчац евангелие (исследование)—(стр. 102—114).


23. Карен Матевосян—Армянское Патриаршество и столенный град Ани (исследование)—(стр. 115—125).

24. Г. Х. Степанян—Монастыри Ерзинской местности (исследование)—(стр. 126—137).

25. А. А. Кесеян—Основные черты древней церковной богочестивой богословии (исследование)—(стр. 138—148).

26. Авет Аветисян—Об одной заказанной картине Католикосом Семионом Ереванцы (исследование)—(стр. 149—156).

27. Кончина старшего священника Ошакана Глджяна (стр. 157—158).



„ETCHMIADZIN“  
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN  
(SEPTEMBER—OCTOBER—NOVEMBER 1992)

1. Encyclic of His Holiness Vasken I Catholicos of All Armenians on the 31st of January 1992, concerning the creation of a new Armenian Church Diocese in Germany—(pp. 3—4).

2. The editorship's word against the Armenian Catholic Patriarch Hovhannes-Petros' «Return to Armenia» circular. There has been set also the telegram of Vehapar Patriarch of All Armenians to Cardinal Silvestrini (Rome) on this occasion—(pp. 5—6).

3. Father Zaven Arzumanian—«The Armenian Apostolic Mother Church» (Word addressed to the Armenian youth)—(pp. 7—10).

4. Grigor Zohrap—«No, to catholic» (against of the Armenian catholic) 16 August 1898—(pp. 11—12).

5. Refute from Holy Etchmiadzin (The manifest of the Holy See chancery against «New Word» article of Yervand Azatian, published in the «Azg» newspaper of its 4 November 1992 issue. (16 November 1992)—(p. 13).

6. The Catholicos Karekin II of Cilicia in Holy See, 29 October—4 November 1992 (p. 14).

7. The sermon of Karekin II Catholicos of Cilicie in the Mother Cathedral on the 1st of November 1992—(pp. 15—19).

8. The communiqué of Holy See's chancery on the occasion of Episcopal Ordination on the 5th of October 1992—(p. 20).

9. Episcopal Ordination at the Holy See of St. Etchmiadzin on 26—27 September 1992—(pp. 21—31).

10. The biographies of the Most Reverends Bishop Housik Baghdasian, Bishop Taron Djeredjian, Bishop Karekin Bekdjian and Bishop Viken Aykazian—(pp. 32—39).

11. The reopening ceremony of the Spiritual Seminary, 10 September 1992. There have been set also the words of Vehapar Patriarch of All Armenians, the Most Reverends Archbishop Nerses Bozabalian and Bishop Anania Arabadjian—(pp. 40—44).

13. Ecclesiastic stage—News, descriptions of the Holy Masses, sermons and ceremonies taken place in the Mother Cathedral and Holy See during September—October—November months—(pp. 45—48).

14. The sermon of the Most Reverend Bishop Mesrop Moutafian in the Mother Cathedral of St. Etchmiadzin, 11 October 1992—(pp. 49—51).

15. The sermon of the Very Reverend Supreme Vartabed Vatche Ignatiossian in the Mother Cathedral of St. Etchmiadzin, 18 October 1992—(pp. 52—54).

16. Sacerdotal Ordination in the St. Vardan Mother Cathedral of New York, 25—26 July 1992. There has been set also the biography of recently ordained monk Reverend Narek Berberian—(pp. 55—56).

17. The Conference of European Churches in Prague, 1—11 September 1992—(pp. 57—58).

18. **Priest Karekin Kasparian**—«A modern mission» (The visit of a group of Canadian Armenian clergymen to fatherland with Diocesan Primate of Canadian Armenians, the Most Reverend Bishop Hovnan Derderian)—(pp. 59—62).
19. **Stepan Vardanian**—«Etchmiadzin» (poem)—(pp. 63—64).
20. **Professor Varazdat Haroutiunian**—«Devoted service to Mother See» (on the occasion of the 80th birthday of the Chief Architect of the Holy See Ardzroun Galikian). There has been set also Vehapar Patriarch's of All Armenians pastoral-letter on this occasion, 10 September 1992—(pp. 65—78).
21. The Most Reverend Bishop Gevorg Seraidarian—«Gavazanagirk» (History of successive Diocesan Armenian Bishops of Georgia) (study)—(pp. 74—93).
22. **Souren Danielian**—«The Road of Spiritual Poesy» (about poet-clergyman, the Most Reverend Archbishop Nerses Bozabalian), (Bibliography)—(pp. 94—101).
23. Artashes Mathevossian—«The Bible of Translators» (study)—(pp. 102—114).
24. **Karen Mathevossian**—«The Catholicos of All Armenians and the capital Ani» (study)—(pp. 115—125).
25. **G. Kh. Stepanian**—«The monasteries (convents) of Yerznka» (study)—(pp. 126—137).
26. **H. H. Keoseian**—«The basic traits of the old ecclesiastical pious theology» (study)—(pp. 138—148).
27. **Avet Avetissian**—«About a painting ordered by Simeon Catholicos of Yerevan», (study)—(pp. 149—156).
28. Rest to Reverend Father Oshakan Glendjian—(pp. 157—158).



## “ETCHMIADZINE”

### ORGANE OFFICIEL DU SAINT SIEGE D'ETCHMIADZINE (SEPTEMBRE—OCTOBRE—NOVEMBRE 1992)

1. Encyclique du 31 janvier 1992 de Sa Sainteté Vasken Ier concernant la création d'un nouveau diocèse de l'Eglise arménienne en Allemagne (pp. 3—4).

2. Réponse de la Rédaction de la revue «Etchmiadzine» à la lettre-encyclique du patriarche arménien catholique Jean-Pierre XVIII intitulé «Retour vers l'Arménie» (télégramme de Sa Sainteté adressé à cette occasion au cardinal Silvestrini à Rome)—(pp. 5—6).

3. **Pere Zaven Arzoumanian**—«L'Eglise Apostolique Arménienne» (message adressé à la jeunesse arménienne)—(pp. 7—10).

4. L'article de l'écrivain Grigor Zohrap rédigé le 16 août 1898 contre le catholicisme arménien (pp. 11—12).

5. «Démenti du Saint Siège d'Etchmiadzine» (déclaration de la Chancellerie de Saint-Etchmiadzine concernant l'article de M. Yervande Azatian paru le 4 novembre 1992 dans le quotidien «Azg» (p. 13).

6. Visite de Sa Sainteté Garéguine II, Catholicos de la Grande Maison de Cilicie, au Saint-Siège d'Etchmiadzine (du 29 octobre au 4 novembre 1992)—(p. 14).

7. Sermon de Sa Sainteté Garéguine II prononcé le 1er novembre 1992 dans la cathédrale de Saint-Etchmiadzine—(pp. 15—19).

8. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion du sacre d'évêques (5 novembre 1992)—(p. 20).

9. Sacre d'évêques dans la cathédrale de Saint-Etchmiadzine (26—27 septembre 1992)—(pp. 21—31).

10. Biographies des évêques Houssik Baghdassian, Taron Djérédjian, Garéguine Bekdjian et Viguen Aïkazian (pp. 32—39).

11. Solennités au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion de la rentrée des classes (10 septembre 1992). Allocutions de Sa Sainteté Vasken Ier, de l'archevêque Nersès Bozabalian et de l'évêque Anania Arabadjian prononcées à cette occasion (pp. 40—44).

12. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois septembre—octobre—novembre 1992 (pp. 45—48).

13. Sermon de l'évêque Mesrop Moutafian prononcé le 11 octobre 1992 dans la cathédrale de saint-Etchmiadzine (pp. 49—51).

14. Sermon du Père Vatché Ignatiossian prononcé le 18 octobre 1992 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 52—54).

15. Ordination sacerdotale dans l'Eglise arménienne St. Vartan à New York (25—26 juillet 1992). Biographie du Père Narek Berbérian récemment ordonné (pp. 55—56).

16. L'Assemblée de la Conférence des Eglises Européennes tenu à Prague du 1er au 11 septembre 1992 (pp. 57—58).
17. **Père Garéguine Gasparian**—«Une nouvelle mission» (la visite d'un groupe d'écclesiastiques arméniens du Canada à la mère patrie dirigé par l'évêque Hovnan Tertérian, prélat du diocèse des Arméniens du Canada (pp. 59—62).
18. **Stepan Vartanian**—«Etchmiadzine» (poème dédié à Saint-Etchmiadzine (pp. 63—64).
19. **Varazdat Haroutiounian**—«Travail inestimable au service de Saint-Etchmiadzine» (à l'occasion du 80e anniversaire d'Ardzroun Galikian, architecte en chef du Saint-Siège d'Etchmiadzine. (Texte de l'encyclique du 10 septembre 1992 de sa Sainteté publiée à cette occasion)—(pp. 65—73).
20. **Eveque Guevorg Seraidian**—«Les prélates du diocèse arménien de Géorgie et leurs activités par ordre chronologique»—(pp. 74—93).
21. **Souren Danielian**—«Le chemin de la poésie spirituelle» (compte rendu des récueils de poèmes de l'archevêque Nersès Bozabalian)—(pp. 94—101).
22. **Artaches Matevossian**—«L'évangile des Traducteurs» (étude)—(pp. 102—114).
23. **Karen Matevossian**—«Le catholicossat de tous les Arméniens et la capitale Ani» (étude)—(pp. 115—125).
24. **G. Kh. Stepanian**—«Les monastères d'Erzincan» (étude)—(pp. 126—137).
25. **H. H. Keusseyan**—«Les lignes principales de la théologie de l'Eglise primitive relatives à la piété» (étude)—(pp. 138—148).
26. **Avet Avetissian**—À propos d'un tableau commandé par le catholicos Siméon Yérevantsi (étude)—(pp. 149—156).
27. Nécrologie de l'archiprêtre Ochakan Gueledjian (pp. 157—158).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵԽԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Գերմանիայում հայ եկեղեցու ինքնուրույն թեմ բոշակելու մասին . . . . .	3
Խմբագրույթան խոսքը . . . . .	5
ՀԱՅՈ ԶԱՅԵՆ ԱՐՁՈՒՄՄԱՆԵԼԻՆ—Հայատանեաց Սուաբելական Մայր Եկեղեցին . . . . .	7
ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՄ—Ոչ-կաթոլիկէ . . . . .	11
Հերքու Սուրբ Էջմիածնից . . . . .	13
Մնի Տաճա Կիլիկիի Գարեգին Բ Կաթողիկոսը Մայր Աթոռում . . . . .	14
Մնի Տաճա Կիլիկիի Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Մայր տաճարում . . . . .	15
Հայորհացրություն . . . . .	20
Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . . . .	21
Տ. Հովհիկ Եպիսկոպոս Բաղդապան . . . . .	32
Տ Տարոս Եպիսկոպոս Ծերենյան . . . . .	34
Տ Գարեգին Եպիսկոպոս Բերճյան . . . . .	36
Տ. Վիճակ Եպիսկոպոս Մյաքազյան . . . . .	38
Հոգևոր Ընմարանի Վերաբացման հանդիսաբարձունք . . . . .	40
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր . . . . .	45
Տ Մերուկ Եպս. Մոլոքաֆյանի քարոզը Մայր տաճարում . . . . .	49
Տ. Վաչէ ծ. Վրդ. Խճանտիպանի քարոզը Ա. Էջմիածնի Մայր տաճարում . . . . .	52
Քահանապանական ձեռնադրություն Նյու Ցորքի Ա. Վարդան Մայր տաճարում . . . . .	55
Տ Նարէկ արեդա Պերպերյան . . . . .	56
Եղբայրի Եկեղեցիների համուտողմբ . . . . .	57
ԳԱՐԵԳԻՆ ՔՀՆՅ. ԳԱՍՊԱՐԵԱՆ—Նորօրեայ առաքելութիւն մը . . . . .	59
ՍՏԵՓՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ-Էջմիածնի . . . . .	63
ՊՐՈՖԵՇՍՈՐ ՎԱՐՍԶԴՐԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Նվիրալ ծառայություն Մայր Աթոռին . . . . .	65
Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՍՅԴԱՐՅԱՆ—Գավագանագիրք Վրաստանի հայոց թեմի . . . . .	74
ՍՈՒՐԵՆ ԴԱՅՆԻԵԼՅԱՆ—Հոգևոր քանատեղծության համապարհը . . . . .	94
ԱՐՏՈՒՐԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Թարգմանչաց ավետարանը . . . . .	102
ԱՄԵՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր ԱՅիթ . . . . .	115
Գ. Խ. ԱՏԵՓԱՆՅԱՆ—Երգմկանի վաճերը . . . . .	126
Հ. Հ. ՔՅՈՒՆԵՅԱՆ—Հյումկան ամերք . . . . .	138
ԱՎԵՏ ԱՎԵՏԻՄՅԱՆ—Սիմեոն Երևանցի կաթողիկոսի պատվիրած մի Ակարի մասին . . . . .	149
ՀԱՅԳԻՍ արժանապատիկ Տ. Զալկան ալագ քահանա Գլըճանի . . . . .	157
«Եղմանձն» օֆիցիալնալ յարական ամսագիր Եղմանձնի Կատոլիկոսաւ . . . . .	159
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin . . . . .	161
«Եղմանձն» organe officiel du Saint Siège d'Etchmiadzine . . . . .	163

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՇՄԻԱՑԻՆ  
«ԷՇՄԻԱՑԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 12.10.1992 թ.: Ստորագրված է տպագրության 22.01.1993 թ.:  
Տպագրական 10,5 մամոլ, 1 ներդիր, թուղթ՝ 70×108<sup>1/16</sup>, պատվեր 120:

Մայր Արքոս Սուրբ Էջմիածնի տպարան







ISSN 0134—5249